

9(47925)

LI-57

Տ. Ս. Անանյան

XVII դարի

ԱԶՆՏԱԳՐԱԿԵՆ ԸՆԴՈՒՄՆԵՐՆ
ԱՐԵՎՏՏԵԱՆ ՏԱՅԱՏԱՆՈՒՄ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. С. АНАСЯН

ОСВОБОДИТЕЛЬНЫЕ
ДВИЖЕНИЯ В ЗАПАДНОЙ
АРМЕНИИ В XVII ВЕКЕ

ИСТОРИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1961

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ


9(Հ)
Ղ-57

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

XVII Դ Ա Ր Ի
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1961



Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Աշխատության մեջ նոր և հարուստ նյութերի հիման
վրա քննության են առնվում հայ ժողովրդի արևմտյան
հասովածի XVII դարի պատմության հետ կապված հար-
ցերը: Յույց է արվում, որ 80-ական թվականներից արև-
մտահայության մեջ թուրքական տիրապետության դեմ
առաջ էր եկել ազատագրական շարժում, որն օրգանապես
կապված էր հույների, ասորիների և վրաստանի ժողո-
վուհիների շարժումների հետ և տեղի էր մինչև 80-ական
թվականները:

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Մենք առկավին չունենք մեր ազատագրական շար-
ժումների ամբողջական պատմությունը: Որպեսզի մեր
պատմագրությունը կարողանա կառուցել ամբողջական
պատմության այդ շենքը, անհրաժեշտ է ուսումնասիրել
ազատագրական շարժումներն օղակ առ օղակ, մենագրու-
թյուններով: Այս տեսակետից հույս ունենք, որ մի կարևոր
պակաս է լրացնելու ներկա ուսումնասիրությունը, հայտ-
նաբերելով և հաստատությունը ներկայացնելով մինչև այժմ
բոլորովին անհայտ մնացած մի դրվագ, հայկական և օտար
աղբյուրների հիման վրա:

Ուսումնասիրության մեջ աշխատել ենք ցույց ապ,
որ արևմտահայերի ազատագրման համար սխալ բան էր
հույս ցնել Եվրոպայի վրա, որովհետև պատմության հա-
մար այլևս անհերքելի փաստ է, որ Արևմուտքը միշտ էլ
նենգ քաղաքականություն է վարել Արևելքի ննշված ժո-
ղովուրդների ազատագրության խնդրում, իր շին հաշիվնե-
րով ավելի շուտ արգելակ հանդիսանալով, քան օժանգա-
կելով նրանց ինքնաբուխ շարժումներին: Այդ կապակցու-
թյամբ աշխատել ենք նաև պարզել արևմտյան դիվանագի-
տության կապերը Թուրքիայի հետ և միջազգային փոխ-
հարաբերությունները թուրքական Արևելքի կապակցությամբ՝
XVII դարում, որի մասին մենք առհասարակ մասնագիտա-
կան գրականություն չունենք:

Ինչ վերաբերում է քաղաքական կողմնորոշման հար-
ցին ընդհանրապես, ապա պետք է նկատի ունենալ, որ

գա, ինչպես նախորդ դարերում էր, այնպես և XVII դարում մնում էր արևմտյան ուղիների վրա՝ հայ ազատագրական շարժումները զեկավարող հասարակական խավերի շահերին համապատասխան, առանց բացասելու դիվանագիտական բանավարությունների մեջ Թուրքիայի դեմ զինական միջամտության գործին Ռուսաստանին ևս մասնակից դարձնելու գաղափարը, որ գոյություն ուներ թե՛ արևմտահայերի մոտ, թե՛ արևելահայերի: Համենայն դեպս XVII դարն այն շրջանն էր, երբ հայ-ուսական հարաբերություններով տակավին հոգ էր պարսաւաւում հայ ազատագրական շարժման ուսական կողմնորոշման համար և միայն XVIII դարի սկզբներին է, որ Ռուսաստանը դարձավ հայերի ազատագրական հույսերի հիմնական խարխիլը:

Հայ ազատագրական պատմության հարցերի տեսարան ակադ. Աշոտ Հովհաննիսյանի վերջերս լույս տեսած «Իրվագներ» ուսումնասիրության մեջ այս հարցը համակողմանիորեն քննվել է: Հեղինակն, օրինակ, էջմիածնի և Անգեղակոթի խորհրդածողույների մասին խոսելիս գտնում է, որ նրանց քաղաքական ակնկալությունները կապված էին «ոչ թե բացառապես կամ առաջին հերթին Ռուսաստանի, այլ Մերձավոր Արևելքում քաղաքական նպատակներ հետաձուգելու և պետությունների, և որանց քվում եսև Ռուսաստանի նկատ»¹:

Հայերի ուսական կողմնորոշման նախապատմության հարցերի եզրափակման մեջ նա դարձյալ գրում է, որ «XVII դարում Հայաստանի ազատագրման գաղափարը դեռ չէր լքել գիվանագիտական կողմնորոշման տրադիցիոն ընթացքը» և «չկար տակավին այն զիտակցությունը, թե Ռուսաստանը միակ պետությունն է, որից կարելի է իրական օժանդակություն սպասել Հայաստանի ազատագրման համար»²:

¹ Աշոտ Հովհաննիսյան, «Իրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», գիրք Բ, Երևան, 1959, էջ 216:

² Անդ, էջ 492:

Ավելացնենք, որ հայ ազատագրական շարժումների քաղաքական կողմնորոշումը XVII դարում և մինչև այդ հետևում էր հասարակական լոկ որոշ խավերի արժանագրությունների վրա:

Հարկ է նշել, որ XVII դարի արևմտահայ այս շարժումը, որին նվիրված է մեր ներկա ուսումնասիրությունը, երբ դիտում ենք հայ ազատագրական շարժումների պատմության ընդհանուր տեսագաշտի վրա՝ հարց է առաջանում, թե արդյոք օրգանական կապ գոյություն չունե՞ր արևմտահայ սույն ձեռնարկումների և արևելահայ այն ձեռնարկումների միջև, որոնք 1670-ական թվականներին սկիզբ առան Հակոբ Զուղայեցու ջանքերով: Հարցադրումը զառնում է շատ բնական, երբ նկատի ունենանք, որ և՛ մեկ կողմը, և՛ մյուսը շարժվում էին քաղաքական միևնույն ուղղությամբ:

Մենք այդ հարցը չենք շոշափել ներկա աշխատության մեջ, որովհետև չենք կարողացել տեսնել այդպիսի օրգանական կապ: Այդ պատճառով անհրաժեշտ ենք համարում որոշ պարզաբանում կատարել այստեղ այդ մասին:

Մեր կարծիքով՝ տվյալ շրջանում ազատագրական ձեռնարկումների արևմտահայ և արևելահայ մասերի միջև օրգանապես կապ գոյություն չի ունեցել և չէր կարող ունենալ այն պատճառով, որ այդ ձեռնարկումները նախ ուղղված էին տարբեր երկրների դեմ, — մի կողմում՝ Թուրքիայի դեմ, մյուս կողմում՝ Պարսկաստանի դեմ, — երկրորդ՝ նրանք կատարվում էին քաղաքական տարբեր ուղիներով, որքան էլ այդ տարբեր ուղիները կապված լինեին Արևմուտքի հետ: Թեև երկու ուղիներն էլ դեպի Հոմ էին տանում, բայց դրանք քաղաքականապես հակառակ էին միմյանց: Մի կողմից նվիրազար Այնթապցու և մյուս կողմից Հակոբ Զուղայեցու միջև տեղի ունեցած այն երկարամյա պայքարը, որ արտահայտում էր արևմտահայ և արևելահայ միջավայրերի հասարակական որոշ հոսանքների բախումը, հավանաբար իր ներքին բովանդակությամբ ընթանում էր գեր-

իշխանության այն անական ու համառ պայքարով, որը տեղի ունեցաւ Արեւմտեան Եւրոպայում Բուրբոնյան և Հաբսբուրգյան տոհմի միջև, հայկական շարժումների երկու մասերին թույլ չտալով ընդհանուր հուն գտնել և օրգանապես կապվել միմյանց հետ, որքան էլ ազատագրման իդան ու գաղափարն ընդհանուր լինեին: Գալով Վատիկանին, որը միսիոնարների միջոցով լայն կապեր ուներ հայկական երկու կողմերի հետ, այս գեպքում նա, ելնելով Եւրոպայում ունեցած իր ընդհանուր շահերից, խաղում էր երկու լարի վրա, Արևելքի կապակցությամբ իր գիվանագիտական խրախուսանքին արժանացնելով հավասարապես թե՛ Բուրբոնների և թե՛ Հաբսբուրգների: Արժե հատուկ հետազոտութեան առարկա դարձնել այս հարցերը:

Խորին շնորհակալությամբ նշենք, որ մեր աշխատանքի համար մեզ անմատչելի կամ դժվարամատչելի մի քանի աղբյուրների ընձեռումը մենք պարտական ենք հանգուցյալ պրոֆ. Կ. Հ. Բասմաջյանի, նաև Հ. Բ. Չրաքյանի և Հ. Բ. Չեփինյանի բարյացակամ օժանդակությանը:

Հնդիսակ

¹ Լատինական Արևմուտքի հետ Եղիազար Այնթապցու ունեցած հարաբերությունները հայտնի են սկսած 1664/65 թվականներից, երբ նա արևմտահայերի անջատ կաթողիկոսություն հաստատեց: Այդ մասին մենք հանդամանորեն խոսում ենք ներկա աշխատության մեջ, ցույց տալով, որ Եղիազարի և Եղիազարյանների գործունեությունը դեռևս էր Ֆրանսիայի և նրա զաշնակիցների ուղիով: Նույն թվականներից են սկսվում նաև Հակոբ Զուղայեցու հարաբերություններն Արևմտյան Եվրոպայի հետ: Ղլըմպիկ Մահակ վարդապետի կողմից 1666 թվականին Եղիազար Այնթապցուն ուղղված մի նամակում խոսվում է այն մասին, որ Հակոբ Զուղայեցին իր եղբորորդի Մանուելին թանկագին նվերներով ուղարկել է Նոտի պապի մոտ այն պատմակալով, որ պապից ստանալով բարձուրտ գանձա՝ և, իհարկե, նաև սպանովելով նրա հավանությունն ու միջնորդությունը, շնորհակալ է Վրաց տուն և զՄանուելին օժեսցել թագաւոր Հայոց» (տես Սրոն, 1940, էջ 202): Իսկ մեր պատմագիտության արդեն հայտնի է, որ Հակոբ Զուղայեցու և նրա զաղափարակիցների գործունեությունը ընթանում էր Գերմանիայի և նրա զաշնակիցների ուղիով:

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Թ Ո Ւ Բ Ք Ա Կ Ա Ն Տ Ի Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Ե Վ XVII Գ Ա Ր Ի Ա Ր Ե Վ Մ Տ Ա Հ Ս Յ Ա Չ Ա Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ Ը

Օսմանյան բուրբերը Հայաստանում.— Թուրքիայի տնտեսական զարգացման աստիճանը.— Ձիեվորա-ավատական կարգերը.— Սիփանիներն ու ենիչերիները.— Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումները XVII դարի կեսերին.— Ջալալիների ապստամբությունը.— Սոփր.— Շահ Աբբաս Ա-ի բռնագաղթը արևմտահայ գավառներից.— Կամավոր արտագաղթը և երկրի ամայացումը.— Ռայայի ստրկական դրույթները.— Կրոնական հալածանքները.— Բուհի մանկեղականացման քաղաքականությունը և XVII դարի հայ նահատակները.— Մանկածողուները.— Այլատարագության օրենքը և նրա նպատակը.— Ռայան որպես կաթիլ և տեղրիս՝ աղբյուր:— Ռայայի վեարած գլխավոր հարկերը.— Թալանը, կեղեքումներն ու հարկապահանջությունները.— Համատարած բռնությունները Հայաստանում.— Ազատագրական ձգտումների արտահայտությունը.— Ազգային շարժումների զարթումն Արևելքում.— XVII դարի խաչակրական շարժումների բնույթը.— Հայկական շարժման լատինական կողմնորոշումը.— Նրա պատմական ծագումը.— Դաշակոյցի բուրբերը.— Ներսես Գաբրիելի և Ազատյանի մարգարեությունները.— Նորոգման ժողովրդական բնույթը:

Օսմանյան թուրքերն առաջին անգամ սուլթան Բալազդեզ I-ի օրով են երևացել հայկական հողերի վրա՝ 1392 թվականին ներխուժելով Փոքր Հայքի սահմանները և զբաղվելով Սերաստիա, Եվդոկիա ու Կեսարիա քաղաքները: Հետագայում զբաղվել են Մալաթիան, Տարանտան, Տիվրիկն ու Բևհեսնին (1395/96 թթ.). և վերջապես Կամախի ու Երզնկալի:

դրավումով (1397/98 թթ.) հասել են Մեծ Հայքի սահմաններին, թեև Լենկթիմուրի արշավանքները նրանց շուտով ստիպեցին ետ նահանջել (1402/03 թթ.): Դրանից լոթանասուն տարի հետո թուրքերը Մահմեա II-ի առաջնորդությամբ միևնույն սահմաններից նորից արշավեցին Մեծ Հայքի վրա: Նրանք 1473 թ. Երզնկայի և ապա՝ Դերջանի մոտ Ալզուն-Հասանի գեմ տարած հաղթանակներով տիրացան Արևմտյան Հայաստանի մի մասին, և այնուհետև իրենց նվաճումներն ընդարձակեցին ի հաշիվ պարսիկների: Հայաստանը երկար ժամանակ կռվախնձոր դարձավ թուրքիայի և Պարսկաստանի միջև և, կարելի է ասել, որոշ չափով կայուն սահմանագիծ հաղիվ թեև հաստատվեց 1639 թվականին՝ սուլթան Մուրադ IV-ի և շահ Սեֆի I-ի միջև կնքված գաղնազարով: Այս պայմանագրով պատմական Հայաստանի արևմտյան նահանգները, որոնք նրա մեծագույն մասն էին կազմում, մնացին թուրքերի ձեռքում և կոչվեցին արևմտյան կամ թուրքական Հայաստան, իսկ արևելյան նահանգները մնացին պարսիկների ձեռքում՝ կոչվելով արևելյան կամ պարսկական Հայաստան: Սահմանադիժը կազմում էին Վանը, Կարսը և Չըլլըբը, որոնք պատկանում էին արևմտյան մասին:

Օսմանյան թուրքիան իր տնտեսական զարգացմամբ գեոևս շատ հետամնաց էր: Թուրքական ավատական հասարակության մեջ արտադրողական ուժերի զարգացումը շատ դանդաղ էր ընթանում և նույն համեմատությամբ էլ երկար էր տևում ավատատիրության քայքայումը, որ նկատելի երևույթ էր գեոևս XVI—XVII դարերում: Այդ պատճառով արտադրության կապիտալիստական եղանակի հաղթանակը շատ ավելի ուշ է հասունացել թուրքիայում, քան, օրինակ, Արևմտյան Եվրոպայի որևէ երկրում: Դրա պատճառներից մեկն, անտարակույս, օտարերկրյա կապիտալն էր, որը, հենվելով պատմական կապիտալացիաների¹ վրա, տնտեսական

¹ Այսպես էին կոչվում այն պայմանագրերը, որոնցով օսմանյան սուլթաններն իրենց երկրներում իրավունքներ ու արտո-

նակա ուժ էր դարձել թուրքիայի ներքին կյանքում: XVI դարի վերջերին կապիտալացիաների շնորհիվ Մերձավոր Արևելքում հիմնականում ավարավել էր եվրոպական առևտրական կապիտալի ներթափանցումը, որը և կավազաշտ էր դարձրել այդ երկրն Արևմտյան Եվրոպայի առևտրական պետությունների միջև, հատկապես Ֆրանսիայի, Անգլիայի և Հոլանդիայի¹: Եվրոպական առևտրական կապիտալն իրեն ենթարկելով տեղական արտադրությունը, արգելակում էր վերջինիս ազատ զարգացումը:

Արտադրողական ուժերի զարգացման դանդաղ ընթանալու ավելի հիմնական պատճառը պետք է որոնել, իհարկե, տիրող կարգի մեջ: Այդ մասին Փ. Էնգելսը գրում է.

«Թուրքական, ինչպես և ամեն մի այլ արևելյան տիրապետություն, անհամատեղելի է կապիտալիստական կարգի հետ. ստացված հավելյալ արժեքը ոչնչով ապահովված չէ սատրապների և փաշաների զիշատիչ ձեռքերից. քացակալում է բուրժուական ձեռքերման առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի և նրա սեփականության ապահովությունը»:

Թուրքական այդ զիշատիչ կարգը համապատասխանում էր երկրի տնտեսական հետամնացությունը և արգելակում Օսմանյան կայսրության ժողովուրդների ինչպես տնտեսական, այնպես և քաղաքական ու մշակութային կյանքի զարգացումը:

Թուրքիայում աիշում էին զինվորա-ավատական կարգեր, որոնք հաստատվել էին սուլթան Մուրադ I-ի (1360—

նախորդներ էին «շնորհում» եվրոպական այս կամ այն պետությանը, զիջաժողապես առևտրի համար: Առաջին կապիտալացիաները տրվել են Ֆրանսիային՝ սուլթան Սուլեյման I-ի կողմից 1535 թվականին:

¹ Ֆրանսիայի առևտրական իրավունքները թուրքիայում հենվում էին 1535 և 1581 թթ. կապիտալացիաների վրա, Անգլիայի իրավունքները՝ 1593 թ. կապիտալացիաների վրա, իսկ Հոլանդիայի իրավունքները՝ 1598 և 1612 թթ. կապիտալացիաների վրա:

² К. Маркс и Ф. Энгельс, „Сочинения“, т. XVI, ч. II, Москва, 1936, стр. 22.

1389 թթ.) օրով, կրք զինվորական կազմակերպությունն ամբարցնելու նպատակով կայսրության բովանդակ տարածություն վրա, այսպես կոչված «պետական հողերում» عرض مرده, ստեղծվել էին երկու կարգի՝ մեծ և փոքր ժառանգական ավատներ, որոնք զիամենք زعامت և քիմար تیمار էին կոչվում, և բաժանվել էին հեծելազորին: Սուլթան Սուլեյման I-ի (1520—1566 թթ.) օրով ավատական օրենսգրքությունը լրացվել էր և դեֆթերդար Մուհամմեդ Չելեբիի ձեռքով ամփոփվել հասուկ գրքի մեջ, որը կոչվում էր Կանուն-նամե کانون نامه («Օրենսգրք») (1566 թ.): Ավատատեր զինվորականները կոչվում էին սիփահիներ سپاهی (հեծյալ, հեծելազոր)¹: Նրանք իրավական իշխանություն ունեին իրենց ավատների բնակչության վրա և տուրքեր էին ստանում նրանից: Ավատական զորքը կազմում էր օսմանյան պետության զինավոր ուժը: Պատերազմների ժամանակ զայիմները زعیب (գիամեթի տեր) և թիմարատերերը պարտավոր էին իրենց եկամուտների համեմատությամբ իրենց հպատակներից որոշ թվով ձիավորներ մարտադաշտ հանել՝ անհրաժեշտ ամբողջ սարքով: Չայիմները, որոնց տարեկան եկամուտը 20,000-ից մինչև 99,999 ստակ (թուրք. ափս) էր, պարտավոր էին չուրաքանչյուր 5,000 ստակի դիմաց մեկ ձիավոր տալ, իսկ թիմարատերերը, որոնց տարեկան եկամուտը 19,999 ստակից չէր անցնում, պարտավոր էին չուրաքանչյուր 3,000 ստակի դիմաց մեկ ձիավոր տալ: Նրանք դասավորվում էին գնդերով՝ ալայ-բեգիների آلی بگی (գնդապետ) հրամանատարություն տակ: Ռալկոտի (Paul Ricaut) հաշվով՝ XVII դարի կեսերին այս զորքի բնդհանուր թիվը մտավորապես 100,000 էր²:

¹ Ճշգրտված անվանումով նրանք կոչվում էին քիմարլի (քիմարատեր) սիփահիներ سپاهلی: Ի տարբերություն ոսկավոր սիփահիների, որոնց մասին կխոսենք ստորև:

² Ricaut, «Histoire de l'état present de l'Empire Ottoman», trad. de l'anglois par Briot, IIe éd., Paris, chez Sébastien Mabre, 1670, p. 542—544.

Բացի այս ավատական զինվորականությունից՝ թուրքերն ունեին նաև ոսկավոր զորքեր: Նախ՝ հեծելազորը կամ սիփահիները, որոնց չափտի շիոթեկ վերոհիշյալ ավատատեր սիփահիների հետ: Այս զորքը, որ ընդամենը 12,000 էր և մի քանի տեսակներ ուներ, ավելի լավ էր մարզված: «Պատերազմի ժամանակ, — սուում էր Ռալկոտը, — սիփահիների այս բանակն ուրիշ բան չէ, եթե ոչ անդեկ մարդկանց մի խառնաշփոթ բազմություն. ո՛չ դասակների են բաժանված, ո՛չ գնդերի. քայլում են խմբերով ու կոչում առանց որևէ կանոնի»¹: Սիփահիներից հետո թուրքական բանակի ամենակարևոր ուժը կազմում էր ենիչերիական հետևակազորը: Ռոնկավոր զորքերի շարքին էին պատկանում նաև ենիչերիները کیکچری, որոնց ծագումը սուլթան Օրխանի (1326—1360 թթ.) օրերից էր: Նրանք սկզբներում բացառապես կազմվում էին կայսրության քրիստոնյա հպատակների զավակներից, որոնք մանուկ հասակում խլվելով իրենց ծնողներից և մահմեդական զատարակություն ստանալով, մտնում էին զինվորական կարգերի մեջ: Թուրքերն այս զորքը բանակի լավագույն մասն էին համարում: Ենիչերիները կոչվում էին խառնիխուռն և անկարգ կերպով, ինչպես սիփահիները: Նրանց թիվը 20,000-ից պակաս չէր: Յուրաքանչյուր նահանգում նրանք ունեին իրենց սերզաբները سردار, որոնք ավելի շրջանում գտնվող ենիչերիների պետերն էին²: Կալին նաև ավատատեր ենիչերիներ: Ծննդով ենիչերիները՝ ենիչերիների զավակները, սերնդական սիփահիների նման, իրավունք ունեին ավատներ ունենալու³:

Թուրքական բանակն ուներ մի քանի օժանդակ մասեր ևս⁴:

¹ Ibidem, p. 573—590.
² Ibidem, p. 590—606.
³ В. Д. Смирнов, «Кучибей Гёмюрджинский и другие османские писатели XVII века о причинах упадка Турции», С.-Петербург, 1873, стр. 88—89.
⁴ Նրանց մասին տե՛ս Ricaut, «Histoire de l'état present de l'Empire Ottoman», liv. III, chap. X.

Օսմանյան կայսրության մաս կազմող երկրները բաժանված էին կուսակալությունների, որոնք կոչվում էին էյալեթներ *ایالت* կամ վիլայեթներ *ولایت* (նահանգներ) կամ փաշայություններ, իսկ կուսակալություններն ստորաբաժանված էին սանջակների *سانجاق* կամ գավառների: Կուսակալության գլխին գտնվում էր փաշան *پاشا*, կամ բեգլերբեգին *بکلبریگی* որպես զինվորական և վարչական պետ ու ղեկավար: Ամեն մի կուսակալ պարտավոր էր իր եկամտի չորս քանդյուր 5,000 ստակի դեմ նույնպես մի զինվոր հանել, բայց նրանք սովորաբար շատ ավելի էին դուրս բերում, քան ստիպված էին՝ թե՛ ցուլցի և թե՛ սուլթանին հաճոյանալու համար¹: Նույնպես պարտավորություն ունեին նաև գավառակալները կամ սանջակբեգիները *سانجاق بیگی*:

Կուսակալներն ու գավառակալները նույնպես բաժիններ ունեին կուսակալությունում գտնվող «պետական հողերից», որոնցից ամբողջական իրավունքով նրանք օգտվում էին այնքան ժամանակ, որքան պաշտոնավարում էին: Այսպիսի կալվածները կոչվում էին խասս-ի ումերա *خاص امر*, որը հայկական աղբյուրներում կոչվում է կեր, կերուածք²: Սրանք տարեկան 100,000 ստակից ոչ-նվազ եկամուտ ունեցող ավատներն էին:

Մեծ Հայքի նահանգներն ամբողջությամբ կամ մասամբ մտնելով Օսմանյան կայսրության սահմանների մեջ, երկրի մյուս մասերի նման բաժանված էին զանազան կուսակալությունների, որոնք, ըստ Ռափտոսի, ավատների թվի և փաշաների եկամուտների հետ միասին, հետևյալ կազմն էին ներկայացնում ժեզարի կեսերին³:

¹ Ibidem, p. 179.

² Հ ա կ ո բ կ ար ն ե ց ի, «Տեղագիր Վերին Հայոց», Վաղարշապատ, 1903, էջ 24—26: Հայերեն սույն տերմինի մասին տես Հր. Ա ճ ա յ ա ն, «Հայերեն նոր բառեր հին մատենագրութեան մէջ», հտ. Բ, Վենետիկ, 1922, էջ 94—96:

³ Տախս ենք ըստ Ricaut-ի, "Histoire de l'état present de l'Empire Ottoman", liv. I, chap. XII et liv. III, chap. III. Ռափտոսի մաս

Յ. Վանի կուսակալություն *ایالت وان*.— Կազմված էր Նախկին Վասպուրական, Մոկք, Տուրուբերան և Ալբարաստ նահանգների մասերից: Ուներ 13 սանջակներ.

1. Վան *وان*.
2. Աղիլքեազ *عاد الجواز* (Արծկե).
3. Էրջիշ *ارجیش* (Արճեշ).
4. Մուշ *موش*.

Ամենները չափազանց ազդազդված են, իսկ մենք այստեղ ներկայացնում ենք ուրիշ աղբյուրների օգնությամբ մեր կատարած ստուգումների արդյունքը և ճշտումները միայն: Այս ցուցակը մենք ժամանակին հրատարակել ենք մեր «Թուրքական տիրապետությունը Հայաստանում XVII դարում» հոդվածում. Տեղեկագիր ՀՍՍՒ Գիտությունների ակադեմիայի, հասարակական գիտություններ, 1951, № 5, էջ 24—26:

Ռափտոսի տվյալների առափելությունն այն է, որ դրանք տալիս են մեր ընդգրկած ժամանակաշրջանի՝ XVII դարի 60-ական և 70-ական թվականների վարչական պատկերը: Օսմանյան վարչական բաժանումների նազույն ցուցակը համարվում է Այնի-Ալի Էֆենդիի ավանզածը, որ կազմված է XVI դարի վերջին և XVII դարի սկզբներին. այս ցուցակը հրատարակել է M. Belin-ը (տես *Journal Asiatique*, sixième série, t. XV, 1870, p. 254—288) և վերջերս, Ֆերիդուն-Բեգի տվյալներին համեմատելով, նաև Ա. Ս. Սաֆրաստյանը (տես «Արևելագիտական ժողովածու», հրատարակություն ՀՍՍՒ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորի, հտ. Ա, Երևան, 1960, էջ 285—301): Այնուհետև հայանի են, XVII դարից, Կոշի-Բեգի տվյալները, որ հրատարակել է A. C. Тверитинова-ն (տես «Ученые записки Института Востоковедения», т. VI, Москва-Ленинград, 1953, стр. 240—244), Քյաթիբ-Չելեբիի ցուցակը, որ հրատարակել է F. B. Charmois-ն (տես «Chèrenâme ou Fastes de la nation Kourde, par Chèrenâ ou'ddine, prince de Bidlis, dans l'Iâlét d'Arzeroufme», t. I, 1^{re} partie, Saint-Petersbourg, 1868, p. 126—293, որտեղ արված է քրդաբանակ շրջանների նկարագրությունը) և Էվլիա Չելեբիի տվյալները, որ հրատարակել է J. von Hammer-ը (տես «Narrative of travels in Europa, Asia and Africa, in the seventeenth century, by Evliya efendi», London, 1834, p. 90—105). Հմտ. նաև XVIII դարի սկզբներին Comte de Marsigli-ի հրատարակած տվյալները (տես նրա «L'Etat militaire de l'Empire Ottoman, ses progrès et sa décadence», 1^{re} partie, La Haye—Amsterdam, 1732, p. 104—135).

5. Բարգիբի *باركيري (Բերկրի)*.
6. Գյարգյար *كاركار (Կարկառ)*.
7. Գեսանի *كساني (Կեցան)*.
8. Իսթայիրդ *اسبایرد (Սպարկերա)*.
9. Աղաքիս *اغاكيس (Աղեգիս կամ Կարճկան)*.
10. Կոբուր *قطور (Կոտոր)*.
11. Բայազիդ *بايزيد կամ Կալե-ի Բայազիդ*.
12. Բերգա *بردع*.
13. Օվաջըկ *اووجق կամ اووجق*.

Ունեւ 185 զիամեթ և 826 թիմար, որոնք նվազագույն հաշվով 2,392 կովոզ էին տալիս: Փաշայի տարեկան եկամուտը 1,132,209 ստակ էր¹:

Բ. Էրզրումի կուսակալություն *ایالت ارض روم*. — Կազմված էր պատմական Հայաստանի Բարձր Հայք, Տուրուբերան, Ալյարատ ու Տալք նահանգների և Փոքր Հայքի մասերից: Ունեւ 12 սանջակներ և 13 բերդեր.

1. Էրզրում *ارض روم կամ ارزروم (Կարին)*.
2. Կարահիսար-ի Շարքի *قره حصار شرقی կամ Կարահիսար-ի Շարին* *قره حصار شابین (Շարին-Կարահիսար)*.
3. Գեղի *کيفی (Կեղի)*.
4. Փասին-ի Ալիա *پاسين عليا (Վերին Բասին, Հասան-Կալե)*.
5. Իսփիր *اسپر (Սպեր)*.
6. Խընուս *خنوس (Մնուս)*.
7. Թեքման *تکمان*.

¹ Այս շրջանում 80 ստակը կամ ակչեն արժեք մի սպիտակ սկուզ: Ակչե կոչվում էին արծաթե թուրքական մանր զրամները: Ակչե *اقچه* բառը թուրքերեն նշանակում է «սպիտակ» և դոյականաբար թարգմանությունն է նոր հունարեն ἀσπερ «սպիտակ» ածականի, որից և նմանապես հայերեն ստակ (զոյ.) < սպիտակ (ած.):

8. Փորթում *طورتوم*.
9. Մեջենգերդ *معنکرد կամ Փասին-ի Սուֆլա* *پاسين سفلی (Մժենկերա, Ստորին Բասին)*.
10. Մամրեան *مامروان կամ Նամրեան* *نامروان (Նամրան)*.
11. Կըզուջան *قیزوجان (Ղըզըլջան)*.
12. Մելազգերդ *ملاذکرد (Մանազկերա)*.

Կուսակալությունում գտնվում էին 123 զիամեթ և 5,548 թիմար, որոնք նվազագույն հաշվով տալիս էին 11,584 կովոզ: Փաշայի տարեկան եկամուտը 1,200,660 ստակ էր:

Գ. Կարսի կուսակալություն *ایالت قارس*. — Կազմված էր Նախկին Ալյարատ և Գուգարք նահանգների մասերից: Ունեւ 7 սանջակներ.

1. Կարս *قارس կամ قرص*.
2. Էրզնան-ի Բյուլուք *اردهان کوچک (Արտահան Փոքր)*.
3. Խոջևան *خوجوان (Պորձևան?)*.
4. Զարուշադ *زاروشاد (Զարիշատ)*.
5. Գեչևան *کچوان (Կեչ, Կեչվան, Կեչրոր)*.
6. Կաղըզման *قاغزمان (Կաղզվան)*.
7. Փասին *پاسين (Անփայտ Բասին, Կարմիր-փորակ)*.

Այս կուսակալության զինվորական սվառների թիվը չի նշված: Փաշայի տարեկան եկամուտը 820,650 ստակ էր:

Դ. Գիարբեֆիի կուսակալություն *ایالت دیاربکر*. — Այս կուսակալությունը կազմված էր կես առ կես հին Հայաստանի և Հարկական Միջագետքի գավառներից: Հին Հայաստանից նրա մեջ ընդգրկված էին Զորրորդ Հայքի նահանգը զրեթե ամբողջությամբ և մի շարք գավառներ Աղձնլաց նահանգից: Ունեւ 19 սանջակներ, որոնցից մի մասը կախերա-



կան (ստվորական կարգի) էր, իսկ մնացածը՝ ժառանգական իրավունքով քուրդ բեգերի պատկանող:

Կալսերական էին հետևյալ սանջակները.

1. Գիարբեքիք. دیار بکر կամ Ամիդ. آمد.
 2. Խարփուք. خربوت (Պարբերդ).
 3. Արդնի. ارغنی.
 4. Սիվերեք. سیوهرک (Սեպերակ).
 5. Նիսիբին. نصیبین (Մծրին).
 6. Հիսն-ի Քեյֆ. حصن کینف (Չմշկածագ).
 7. Չիմիշգեգեք. چهشکرک (Չմշկածագ).
 8. Սիիքք. سعرت (Սղերտ).
 9. Մեֆարեքին. مفارقین (Նիբրիերտ).
 10. Ակլե-Կալե. اقله قلعه.
 11. Խաբուր և Սինջար. خابور و سنجار.
- Հետևյալները ժառանգական սանջակներ էին, որոնք որպես հայրենական ստացվածք, սեփականազրկման ոչ-ենթակալության իրավունքով պատկանում էին քուրդ բեգերի և կոչվում էին օջակլիկ կամ օջակլուկ կամ Եւրդուկ Եւրդուկ.

12. Սաղման. صاعمان կամ صاعمان.
 13. Կուլբ. قولب (Պուլբ).
 14. Միհրանի. مهرانى.
 15. Թերջիլ. ترجيل.
 16. Աթակ. اتاق.
 17. Փերքեք. پرتك (Բերդիկ).
 18. Ջարակչուր. جباقچور (Ճապաղչուր).
 19. Չերմիք. چرميك (Չերմիկ).
- Կուսակալությունում գտնվում էին 106 գիւմեթ և 540 թիմար, որոնք նվազագույն հաշվով 1,504 կովոզ էին տալիս: Բրդական սանջակներից միայն Կուլբում կալին ավատներ:

Բացի վերոհիշյալ 19 սանջակներից, կալին նաև 5 հու-

սանջակներ Կոմտ (կամ Կոմտի), այսինքն հայրենական իրավունքով քուրդ բեգերի պատկանող ժառանգական իրավունքյալներ, որոնք զորք էին տալիս, ի տարբերություն սանջակների, պետության ծախսով: Դրանք հետևյալներն էին.

1. Էգիլ. اگیل (Աղլ, Անգեղտուն).
2. Փալու. پالو (Բալու).
3. Ջեզիրե. جزیره (Գեզիրա).
4. Խըզու. خزو (Պզու).
5. Գենջ. گنج.

Փաշայի տարեկան եկամուտը 1,200,660 ստակ էր:

Ե. Ջըլզըրի կուսակալություն. ایالت چلدیر. Այս կուսակալությունը կազմված էր նախկին Տալոց և Գուգարաց սանջակների մասերից: Ունեիր 10 սանջակներ¹.

1. Ջըլզըր. چلدیر.
2. Օլթի. اولتی (Ուլթիք).
3. Խարբու կամ Խըրթըզ. خرتوس (Սերթվիս).
4. Էրգենուջ. اردنوج (Արտանուջ).
5. Էրգենան-ի Բյուզուրք. اردهان بزرك (Արտահան Մեծ).
6. Խաջրեք. خچرك.
7. Փոսխու. پوسخو (Փոցխու).
8. Մախջիլ. ماخجیل կամ مخجیل (Մաջիսիլ, Մահախիլ).
9. Խալաբ-ի Փենբեք. اجاره پنبك (Փամբակ, Բամբակի-ձոր).
10. Փերքեքեք. پرتكرک (Բերդազրակ):

Ունեիր 106 գիւմեթ և 659 թիմար, որոնք նվազագույն հաշվով 1,742 կովոզ էին տալիս: Փաշայի եկամուտը 925,000 ստակ էր:

¹ Այս սանջակներից մի մասը հայկական է, իսկ մյուս մասը՝ վրացական: Մենք Ջըլզըրի կուսակալության տարրջական պատկերը պահելու համար տալիս ենք բոլորը միասին:

Մեծ Հայքից բացի՝ Փոքր Հայքը, Հայկական Կիլիկիան և սահմանակից հարթնակ շրջանները ևս օսմանյան վարչական սիստեմում վերաբաժանված էին սանջակների, մտնելով այս կամ այն կուսակալության կազմի մեջ: Այսպես, ըստ նույն Ռազմուխի,

Սիվասի կուսակալության *ایالت سیواس* մեջ՝ Սիվասի *سیواس* (Սևրաստիա), Իիվրիզի *دیوریک* (Տիվրիզ), Արար-կիի *عربکیر*, Բոզուկի *بوزوق*, Ամասիայի *آماسیه* և Ջանիքի *جانیک* (Ճանիկ, Ծանախ) սանջակները:

Կարամանիայի կուսակալության *ایالت قره‌مان* մեջ՝ Կայսերիի *قیصری* (Կեսարիա) և Նիզգեի *نیکه* սանջակները:

Մարաշի կուսակալության *ایالت مرعش* մեջ՝ Մարաշի *مرعش*, Մալաթիայի *ملاطیه* (Մելիտինե), Սեմիսատի *سیمیسات* (Սամուսատ), Այնթաբի *عینتاب*, Այնթապ (Այնթապ) և Կարս Ջյուլիպոլիսի *قارص ذوالقدریه* սանջակները:

Կիպրոսի կուսակալության *ایالت قبرس* մեջ՝ Իչ-իլի *ایچ ایل* (Կիլիկիա Տրաքլան), Սիսի *سیس* և Թարսուսի *ترسوس* (Տարսոս) սանջակները:

Հաեպի կուսակալության *ایالت حلب* մեջ՝ Ադանայի *آدنا* (Ատանա) և Բիլիսի *کلیس* սանջակները:

Փոքր Հայքի և Կիլիկիայի այս շրջաններում ևս կային գիտակիցներ ու թիմարներ, սույն շրջաններից ևս թուրքական կուսակալները ստանում էին հսկայական եկամուտներ:

Այս էր արևմտահայ զավառների վարչական պատկերը XVII դարի երկրորդ կեսում:

Արևմտյան Հայաստանի ազգաբնակչությունը բաժանում էր այն դառն ճակատագիրը, որ վիճակված էր Օսմանյան Կայսրության ընդհանրապես բոլոր ժողովուրդներին:

Թուրքերիցում իշխում էր զուրանական սկզբունքներով ամբարձրված ասիական բիրտ բռնակալությունը, բայց XVI դարի վերջերից սկսած կենտրոնական իշխանության թուլա-

յուն վաճառքի էր վառվարացրել զբուխները գինվորա-ավստական այդ երկրում, տեղի տալով բարքերի ընդհանուր անկման և ներքին անկարգությունների, որոնց թվում առաջին ներքին մի շարք գինվորական ապստամբությունների:

Սուլթան Մուրադ III-ի (1546—1596 թթ.) օրով, գինվորական կարգերի և իրավունքների մեջ մուծված զեղծումների հետևանքով, դարի վերջին տասնամյակում գինվորական անդադրում ապստամբություններ ծաղկեցին երկրի բոլոր կողմերում՝ Կ. Պոլսից մինչև Սիրիա և Եգիպտոս, Բուդայից մինչև Քավրիզ:

Ապստամբությունների գլուխգործոցն եղավ այսպես կոչված շալալիների շարժումը, որն այս նույն ժամանակակիցում սկսվելով, XVII դարի սկզբին տարածվեց կայսրության ասիական նահանգներում, մալաթադաքից մինչև Կարսը: Ապստամբներից առաջինն եղավ Կարսի գեղապետ Արդուխանը, որ կոչվում էր Կարս-Մալաթիա նահանգարական ճակատից խուլս տվող փախստականների գլուխն անցած նախ ամբարցավ Աբրֆայում (Եղեփազում), որտեղից հետո հետևող սովորացած շարքերով առաջացավ զեպի Սևրաստիա, Կեսարիա և այլ շրջաններ: Նրա օրինակին հետևեցին ուրիշներ, նրա եղբայր Դեյլի-Հասանը՝ Կարամանիայում, Բյուսե-Նեֆեր փաշան՝ Ահեղում, Ահմեդ փաշան՝ Սևրաստիայում, Կարա-Մալիզը և Ուզուն-Հասանը՝ Մարզվանում ու Կասթեմունիում: Երգրումի կուսակալությունը սեպրանների ձեռքումն էր: Քիչ հետո հանդես եկան Կալնդեր-պլի Մեհմեդ փաշան, Սաչլուն և Ուզուն-Մաֆը: Նաև Մուսելլի-Չաուշը, Ջեմշիզը, քուրդ Ջամբուլաչը, գրուզի Ֆախրեդդինը և շատ ուրիշներ: Նրանց դեմ կա-

Սովետական պատմագրության մեջ ջալալիների ապստամբությունը բնութագրվում է որպես գյուղացիական շարժում ընդդեմ թուրքական ավատական իշխանության: Այդ մասին առաջին կարծիքը հայտնել է՝ А. Ф. Миллер, «Краткая история Турции», Москва, 1948, стр. 27—28, իսկ օգուսմանիության առաջին փորձը կատարել է՝ А. С. Твeрeтiнoвa, «Восстание Кара Языджи—Деян Хасана в Турции», Москва—Ленинград, 1946.

տարված բազմաթիվ արշավանքներ պարտություն կրեցին. միայն մեծ վեզիր Մուրադ փաշան էր, որ 1607/08 թվականներին կարողացավ որոշ չափով թուլացնել նրանց ուժը¹:

Զալալիների շարժումը թուրքիայում ստեղծեց լարված դրություն: Ներքին խռովությունները հայերի առանց այն էլ ծանր վիճակը դարձրին ճգնաժամային²:

Զալալիների շարժումը, որի արմատները գալիս էին Օսմանյան Կայսրության այդ դարաշրջանի տնտեսական և սոցիալական դժբախտ իրականությունից, նրա անկման շրջանի

¹ J. de Hammer, „Historie de l'Empire Ottoman“, trad. de l'allemand par Dochez, t. II, Paris, 1844. livres XLI—XLIII.

² Հայկական հարուստ աղբյուրներ կան այս շրջանի ծանր վիճակի մասին: Այսպես՝ Ազարիա Մասնեցու «Ողբ ի վերայ հարուստոց արևելեան գաւառացն և աշխարհին Հայոց ի ձեռաց ձեղալեանց» (Հանդէս Ամսօրեայ, 1936, էջ 325—336; նաև Բ. Կյուլեհերյան, «Տնօցակ ձեռագրաց Անկիւրիոյ կարմիր վանուց և շրջակայից», Անթիլիս, 1957, էջ 240—292): Ստեփանոս Թոխաթեցու «Ողբ և ոտանաւոր սաղ ի վերայ Եւզոկիա մեծի քաղաքին որ այժմ Թոխաթ ասի, զոր անօրէն և անհաւատ Տէրու Հասան Ղաբայ Ծաղընին զալի և ձէլալի յայտնեցաւ, և զերկերս Հայոց և Հոռոմոց յՈւրնայոյ մինչ ի յՆսկուտարն՝ ծովեզերօք և բոլորօքն հանդերձ էրեց և աւերեց, թալանեց և զերեց, զբազումս սպանեց և զշատ փախոյց» և այլն (տես Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 605—608): Հակոբ Բաթուկեանցի «Ողբ ի վերայ Եւզոկիա քաղաքին՝ որ այժմ ասի Թոխաթ, զոր ոմն անօրէն Տէրու Հասան սանն որ էկաւ այրեաց և աւերեաց զաշխարհն» (տես անդ, էջ 608—610): Գրիգոր Կամախեցու «Ժամանակագրութեան» գանազան մասերը (Երուսաղեմ, 1915): Առաքել Դավրիժեցու «Պատմութեան» Ե գլուխը (Վաղարշապատ, 1896, էջ 79—92): Երեմիա Զելեբի Քյոմուրջյանի «Պատմութիւն համառոտ Դձ. տարւոյ Օսմանցոց Քաղաւորացն» աշխատության մի բանի հատվածները (Երևանի Պետական Մատենադարանի ձեռագիր № 1675, էջ 83ա, 84բ—90ա, 92բ—94ա և 98բ—99բ): Ժամանակագրական մի բանի աշխատություններ, որոնք լույս են տեսել Վ. Ա. Հակոբյանի «Մանր ժամանակագրութուններ XIX—XVIII դդ.» երկնատոր հրատարակության մեջ (Երևան, 1951 և 1956): Չեռազրերի բազմաթիվ հիշատակարաններ և այլն:

Տես նաև Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 556—561. և Ն. Մոփական, «Զալալիք կամ ձեղալիներ», Սիոն, 1958, էջ 152—156:

պատմության հետ կապված ծանրակշիռ երևույթներից մեկն էր Հատկանշական է, որ այդ շարժման մեջ իշխում էր տարրախուսությունը, որ բացասական հետևանքներ ունեցավ ինչպես Օսմանյան Կայսրության մյուս ժողովուրդների համար ընդհանրապես, այնպես էլ հատկապես հայ ժողովրդի համար: Առաքել Դավրիժեցին նրանց մասին խոսելով գրում է հետևյալը.

«Սոքա ամենեքեան Զալալիք էին որք ոչ հնազանգէին թագաւորին, և ոչ ի տեղի ուրեք զկալ առեալ բնակէին, ալ աշխարհաւերք և աշխարհակործանք. և ուր և լսէին դժբախտ շինութեան, զիմեալ անդր հասանէին, աւարեալ կորստէին և զշինուածսն հրդեհեալ այրէին: Ի մերձակայից Կասաղեղապուրի մինչև ցերեան քաղաք, ի Բաղլատայ մինչև ցԴամուրղապուրն, զՍպիտակ ծովու մէջն և զՍիաւ ծովու մէջն, այս եզերքս՝ զորս ծրագրեցի, զսոցա մէջն զայլաքան աշխարհս լաւեր և լազականութիւն զարծուցին»:

Առաքել Դավրիժեցու խոսքը վերաբերում է, ուրեմն, նաև հայկական նահանգներին: Իրոք, աննկարագրելի էին, որոնց Սերաստիայի հայության կրած տառապանքները: Մեղքեթ Սերաստացին Կարա-Յաղիջիի արշավանքի առթիվ պատմում է, թե «մատնեցաւ քաղաքն և երկիրն մարտով և անասնով, ընչուքն և ապրանաւքն ի ձեռն արեանարբու գաղանին, որ անխնայ կոտորեաց բազում քրիստոնեայս... և բազում աւուրս նստեալ լեզր քաղաքին այրեաց և աւերեաց զբնակչութիւն քաղաքն և գաւանքն, մինչ զի ամալի Մայ Սերաստիայ թեմոսն և վիճակովն բազում ժամանակս: Եւ անորքեակ պատկեր ունեցավ և Թոխաթը՝ նախկին Եվզոկիան, Դելի-Հասանի արշավանքի ժամանակ, ինչպես այդ առթիվ իրենց գրած «Ողբ»-երում երկարորեն

¹ Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», Վաղարշապատ, 1896, էջ 87:

² Երևանի Պետական Մատենադարանի ձեռագիր № 1875, էջ 229բ:

պատմում են՝ Ստեփանոս Թոխաթեցին¹ և Հակոբ Բաթուկենցը²: Այսպես եղավ և Մեծ Հայքի գավառներում, ինչպես Ազարիա Սասնեցին մի առ մի պատմում է. Բեփենեք-օղլին ավերեց Կեղիի շրջանը, Արուսեֆը քանդեց Մնուար և «ասնքան սա խեղճ բաներ արաւ, մինչ զի ճակատն եղջիւր բուսաւ». Իրրիմ բեգը երեք հազար մարդով ամբողջ վեց տարի ավերեց Մուշի գավառը և շրջակա երկրները՝ «ազգի ազգի չարիս ամեալ, զինչլսա նոցա լաիրշտակեալ, ըզբընակիչսրն փախուցեալ, գապրանք վանացն առ ինքն առեալ», և ապա մինչև Երևան սփռեց իր ավերածութիւնները. Միր Մահմեդը քարուքանդ արեց Մերզինը և Մծրինը մինչև Ամիգ. Բլտսե-Սեֆերը քսան հազար մարդով լութը տարի շարունակ զի Անթափու մինչ Արզրում, անթիւ բազում արար գաւումս. Միր Էզդինն ավերեց Դիարբեքիի գավառները, Հիանի Բեյֆից և Ամիգից մինչև Մծրին, և Ջեղիբից մինչև Սղերա, և այլն³: Իսկ Հայաստանի արեւելյան գավառներում, — Կարբի, Ապարան, Ղըրխ-Բուլախ, Ծաղկաձոր, Գառնի, Երևան, Գեղարքունիք, որոնք այլ շրջանում թուրքերի ձեռքումն էին, — շալալիների գործածած նամանորինակ արարքների մասին երկարորեն գրել է Առաքել Դավրիժեցին⁴:

Այսպիսով՝ Հայաստանի գրեթե բոլոր շրջաններն էլ հափասարապես տուժել էին այդ շարժումներից: Ավերի ընդհանուր պատկերն այսպես է ամփոփել Ազարիա Սասնեցին իր «Ողբ»-ում.

«Այս ամենաչն շարս որ գրբեալ,
Ի մեր մեղացըն գործեցեալ.
Հայաստանս ճիւղն քակեալ,

Մինչև ի սպաս զնա կործանեալ.

¹ Ստեփանոս Թոխաթեցի, «Ողբ», տես Ղ. Ալիշան, «Հայաստանում», Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 605—608:

² Հակոբ Բաթուկենց, «Ողբ», տես անդ, էջ 608—610:

³ Ազարիա Սասնեցի, «Ողբ», Հանդէս Ամսօրեայ, 1936, էջ 331—333:

⁴ Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 79—85:

Հազար քսուսուն թուին ըսկըսեալ (1591 թ.)

Մինչ ի վաթսուներն ժամանեալ (1611 թ.).

Եւս առաւել չարիք ցուցեալ,

Չաշխարհս Հայոց բընաւ ջընջեալ¹:

Արեւն՝ ամբողջ քսան տարի էր տեւել շալալիների այս արատաբութիւնը:

Սակայն այդ շարժումն ունեցավ նաև այլ հետևանքներ, որոնցից առաջինը սովի էր:

«Եւ յարմ պատճառէ, — ասում է Առ. Դավրիժեցին, — արարեց և երկրագործք՝ որք լիւրաքանչիւր տեղիս գործ, լիւրեւէ և բա՛ն սոցա փախուցեալք ի բերդս և ի դղեալս և ի փաղարս լիւրանց ամրանային, և ոչ կարէին առնել անպարտութիւն. վասն որոյ սերմանել և հնձել և կալ ու կտա յարեալ ամենին և սկսաւ լինիլ սղութիւն հացի և ամենայն ուտելի իրաց և ո՛չ գտանիւր. և թէ ուրեք ուրեք ևս գտանիւր, և այն ևս ծանր զնորս²:

Սովն ամենախուլ գազանի նման տարածվեց երկրի մինչև հեռավոր անկյունները: Մարդիկ կերան ձի, շորի, էշ, շուն, կատու. «և այլ ինչ որ ի ձեռս անկանէր վասն կարեաց կերակրեմ», շարունակում է Դավրիժեցին և գրում. «Իբրև ուղ առաւել սաստկացաւ սովն, սկսան ուտել զմեռեալս, և ոչ թաղէին՝ այլ ուտէին, քանզի զօրացեալ էր ի վերայ աշխարհի սովն: Եւ բազումք ի բազում տեղիս զկենդանի մարդս ըմբռնէին և ուտէին», «և ոչ միայն զայլ օտար մարդ ուտէին՝ այլ և արք և կանայք զղաւակս իւրեանց կերեալ են»: Եվ նույն մատենագիրը մեր աչքերի առաջ դնում է բազմաթիվ տեսարաններ այդ ողբալի կյանքից. մեղ զրվագներ է պատմում Հայաստանի զանազան կողմերից, Սեբաստիայից մինչև Կարբի և մինչև Այրարատյան աշխարհը³:

Շարժման հետևանքներից մեկն եղավ շահ Աբբաս [-ի

¹ Ազարիա Սասնեցի, «Ողբ», Հանդէս Ամսօրեայ, 1936, էջ 334—335:

² Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 87:

³ Անդ, էջ 88—90:

արշավանքի արագացումը և արևմտահայ նահանգների մի-
մասի բռնի ամալացումը ժողովրդական զանգվածներից:
Պարսիկներն օգտվելով Օսմանյան կայսրության այս ներքին
շփոթություններից՝ նախ գրավեցին Հայաստանի մի շարք
գավառները, և, ապա, երբ ստիպված եղան նահանջել օս-
մանյան բանակների առաջ, այդ գավառների ամբողջ ազ-
գարնակությունը քշեցին դեպի Ալլարատ և այնտեղից էլ,
տեղական հայերի հետ միասին, դեպի Պարսկաստանի խոր-
քերը (1605 թ.): Այսպես՝ նրանք օսմանյան Հայաստանից
գերեցին ու տարան Շարապիսանայի (կամ Ջարափիսանայի),
Շիրակվանի, Ջարիշատի, Կարսի գյուղերի մի մասի և Կազ-
զըլանի ձորի ու Ալաշկերտի շրջանի ամբողջ բնակչու-
թյունը, նաև Կարինի, Բասենի, Խնուսի, Մանազկերտի,
Արծկեի, Արճեշի, Բերկրիի և Վանի ամբողջ գավառների
բնակիչներին¹: Առաջել Դավրիժեցին, որ մեզ տալիս է
այս տեղեկությունը, պատմում է նաև, թե ինչպիսի՜ ան-
նկարագրելի թշվառություն պայմաններում է տեղի ունեցել
այդ բռնագաղթը և թե ինչպե՛ս է տասանորդվել ժողովուրդը
մինչև Պարսկաստան հասնելը²: Իսկ Հայաստանից քշված
բնակչության քանակը պատկերացնելու համար բավական է
ասել, որ միմիայն Արծկեից գերված հայերի թիվը 23,000 էր,
չհաշված սպանվածները³, թեև նրանց մեծ մասը հետագա-
յում վերադարձավ:

Չալալիների շարժման անմիջական հետևանքներից
մեկն էլ եղավ հայ ժողովրդի արտագաղթը հայրենի երկրից,
գաղթի այն մեծ հոսանքը, որն ամբողջովին ամալացրեց
հայկական նահանգները: Արեց և սովից հալածական ժողո-
վրդական զանգվածները հարյուր-հազարներով դեպի պան-
դըխություն դիմեցին, նույնպիսի աննկարագրելի պայման-
ներում: Գրեզոր Կամախեցին, իբրև ականատես, այսպես է
նկարագրում Կ. Պոլիս հասնող գաղթի կարավաններից մեկը.

¹ Առաջել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 53. ավելի
ընդարձակորեն՝ էջ 30—36:
² Անդ, էջ 38—46:
³ Անդ, էջ 33:

«Տեսաք որ Հարզուլումէն ի վայր ամենայն աշխարհի
մարդիկ երկրակոչ էին արարել ի լահէ սպանողացն և չարա-
շար տանջողացն, ի փախուստ տեղացն մազապուրծ լինելով,
Քափուր և ունայն լամենայնէ, մերկ և բոկ մուրանալով եկին
Հատամբու...»¹:

Արտագաղթը երկու գլխավոր ուղղություն էր ունեցել:
Բնակչության մի մասն ուղղվել էր դեպի արևելք՝ ապահո-
վություն որոնելով Երևանի, Գանձակի, Թավրիզի և Արտա-
շիլի շրջաններում ու մերձակա գավառներում, իսկ շահ Աբ-
բասը՝ իր վերոհիշյալ գերեվարության ժամանակ նրանց մի
մասին այդ վայրերից ևս քշեց դեպի Պարսկաստան: Երկրորդ
ուղղությունը եղել էր դեպի արևմուտք՝ Կ. Պոլիս ու շրջա-
կայքը (ամբողջ Ռումելիա), մինչև Մոլդավիա և Լեհաստան,
Կիպրոս և Հոլոսս, Կաֆա և Կոզլով (Ղրիմում), և ավելի
հեռավոր վայրեր²: Ըստ Սիմեոն Լեհացու՝ Կ. Պոլսում 1608
թվականին հազիվ 80 տուն տեղացի հայերի դեմ 40,000 տուն
գաղթականներ կային. և ըթէ հաշուես ի Պուղտանայ մինչև
Ստամբուլ, պոթլուն Ուտոմեկին մինչև մեծն Վանսատիկ, նա
չկալ քաղաք, գեղ կամ չֆուլիկ, որ հայ չլինայ. որ վասն ծովա-
ցեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի
որպէս զփոշի»³:

Այս բոլորը Չալալիների շարժման հետևանքներն էին:
Այսպիսի չարաբաստիկ տեսարանով էր բացվում արև-
մտահայ ժողովրդի պատմության վարագույրը XVII դարի
սկզբներին:

Սակայն, ինչպես ասացինք, առանց այն էլ Թուրքիա-
յում տիրում էր ասիական բիրտ բռնակալությունը, որի տակ
տառապում էին կայսրության բոլոր ժողովուրդները, այդ
թվում և թուրքերը, թեև ոչ-հավասարապես:

¹ Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», Երուսա-
ղեմ, 1915, էջ 68—69:
² Առաջել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 88 և 147—148:
Գրեզոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 51 և
322—323:
³ Սիմեոն Լեհացու, «Ուղեգրութիւն», Հանդես Ամսօրեայ,
1932, էջ 468:

Մահմեդական երկրներում թեև իրավականորեն ընդունված էր հավասարության սկզբունքը, — գոնե տեսական հողի վրա, — բայց դա միայն Մահմեդական հետեորդներին էր վերաբերում. ոչ-մահմեդական ժողովուրդները բառի բովանդակ առումով իրավազուրկ էին: Տիրող օրենսդրությունն ու ավանդությունները խիստ կերպով որոշել ու սահմանել էին «անհավատների» տեղը «հավատացեալների» հասարակության մեջ: Մահմեդական աշխարհում վաղեմի սովորություններ ընդունված խարաջը *خراج* ոչ-մահմեդականներին իրավապես տարորոշող նշանն էր հանդիսանում:

Այսպես էր և թուրքիայում: Այնտեղ ոչ-մահմեդական ժողովուրդները՝ հայերը, հույները, բուլղարները, սերբերը, ալբանացիները, ասորիները, հրեաները և այլն, խարաջ էին վճարում և ապրում կատարյալ ստրկության մեջ: Ռայան *رايان* (ոչ-մահմեդական հարկատու հպատակ) կամ գյավուրը *گياور* (անհավատ), ինչպես անվանում էին ոչ-մահմեդականներին, արհամարհված տարր էր: Մահմեդականը արտոնյալ դիրք ուներ նրա հանդեպ, իսկ դրանից բխող կրոնական մոլեռանդությունն ու անհանդուրժողությունը դուռ էին բացում բազմապիսի զեղծումների:

Թարաջը, որ իբր թե ոչ-մահմեդականին իր կրոնն ազատորեն դավանելու իրավունք էր տալիս¹, ո՛չ մի կերպ չէր ապահովում նրան կրոնական բռնությունների դեմ: 1661 թվականին Կ. Պոլսում որպես արքունի սեփականություն աճուրդի հանվեցին հունական, հայկական և հրեական ազգային սեփականությունները, այն պատճառով, որ այդ համայնքները Զուլումիյեի մզկիթի շինության համար պայմանավորված գումարները չէին վճարել: Ավազակային որոշման զոհ գնացին նախ հրեաները, և ծախեցին զամենայն տեղիս և զբնակությունս և զթաղս և զազոթանոցս վասն ճառոյն շինութեան... և առին մեծամեծ Տաճկաց՝ մզկիթս և

օտալարս, տունս և դարպասս առնելով Տաճկաստանեաց», իսկ հույներն ու հայերը, շտապելով վճարել պահանջված գումարները, կարողացան բարեփոխել հրամանը, այն տարբերությունը, որ իրենց կալվածները միայն քրիստոնյաների ծախվեն, բայց այն պայմանով, որ վերանորոգում չկատարվի, այլ միայն բնակարաններ կառուցվեն. ուրիշ խոսքով՝ նրանք թե՛ պահանջված գումարները վճարեցին և թե՛ իրենց սեփականություններն աճուրդով կրկին գնեցին²: 1662 թվականին նույնքան և այլևի ողբալի տեսարաններ պարզվեցին մայրաքաղաքում ու դավառներում: Արքունիքում շեյխ Վանիի դրդումով հրաման եղավ Կ. Պոլսում քանդել այն բոլոր եկեղեցիները, որոնք սկսել էին վերանորոգվել 1660 թվականի մեծ հրդեհից հետո: Այլ ողբերգությունն սկսվեց սոսկալի հալածանքով, բանտարկություններով ու տուգանքներով, և վերջացավ հունական ու հայկական բազմաթիվ եկեղեցիների կողոպուտով ու քանդումով³: Նույն հրամանն ուղարկվեց նաև դավառները, եկեղեցիներ քանդվեցին Կարսում, Ալանում և Շաբին-Կարահիսարում. Կարինում հայոց Ս. Ստեփանոս եկեղեցին մզկիթի վերածվեց. միայն Վանումն է, որ տեղական պաշտոնեությունն անտեսեց այդ հրամանը, իհարկե կաշառի ուժով⁴:

Թուրքիայում սովորական երևույթ էր նաև ճնշված ժողովուրդների մահմեդականացումը:

«Տաճիկք մեծ վարձք համարելով գքրխատոնէից ուրանալ զՔրիստոսս և ի Մահմէտի օրէնս և ի կրօնս դառնալ, — ասում է Գրիգոր Կամախեցին, — զխաչ և զեկեղեցի բեկանել

¹ Երեմիա 2 ելբրի, «Օրագրութիւն», Երուսաղեմ, 1939, էջ 375: Նաև նույն հեղինակի «Պատմութիւն համասոտ Դձ. տարւոյ Օսմանցոց թաղաւորացն», Երևանի Պետական Մատենադարանի ձեռագիր № 1875, էջ 159ա:

² Նույն, «Օրագրութիւն», էջ 384—392: Տե՛ս նաև Հ ա կ ո թ Կ ա թ Ե ց Ի, «Տեղագիր Վերին Հայոց», էջ 35: J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. III, p. 78.

³ Երեմիա 2 ելբրի, «Օրագրութիւն», էջ 400: Նաև նույն հեղինակի «Պատմութիւն համասոտ Դձ. տարւոյ Օսմանցոց թաղաւորացն», էջ 160ա: Հ ա կ ո թ Կ ա թ Ե ց Ի, «Տեղագիր Վերին Հայոց», էջ 35:

⁴ Michel Fevre, „L'Etat présent de la Turquie“, Paris, 1675, p. 154.

և խորտակել, և հաւատացեալք որ ոչ հաւանին Մանգէտի և շար կրօնից նորին, ազգի ազգի տանջանօք շարչարեն և հրով այրեն և համարին պաշտօն աստուծոյ մատուցանել¹:

Այս երևույթի մասին խոսում է և Ռալֆորը, ասելով թե թուրքերը բազմատեսակ բռնութիւններ և ռանթիւ անհամար մեքենայութիւններ են ի գործ դնում այլակրօններին մահմեդականացնելու համար²:

Նահատակութեան բազմաթիւ փաստեր հաստատում են համախնցու և Ռալֆորի վկայութիւնները: Մի կողմ թողնելով նախորդ և հաջորդ դարերը՝ XVII դարի կեսերին մի շարք սրտաճմլիկ զեպքերի ենք պատահում հայկական կյանքում:

Թուրքերն ըստ սովորութեան զանազան պատրվակներով այս կամ այն անճատին ստիպում էին իսլամանալ, և եթե զոհը մերժում էր՝ նրան շարչարում էին հազար ու մի ձևերով և սպանում: Այս շրջանի զոհերից բավական է հիշել հիդնացի կոշկակար Սարուխանին՝ Բաղեշում 1631 թ., տասնհինգամյա պատանի Նիկողայոսին՝ Դարբեքիրում 1642 թ., քսանամյա փականագործ Սաչաարին՝ նույն քաղաքում 1652 թ., Վանի Ալլուր գյուղացի բանվոր Սիրունին՝ 1655 թ., վանեցի Մխիթարին՝ նույն 1655 թ., ոստանցի Ավետիսին՝ 1656 թ., զալաթիացի Գարրիկին՝ Կ. Պոլսում 1662 թ., թոխաթեցի կոշկակար Բաղդասարին՝ Կարինում 1672 թ., Լուլեկի որդի Հակոբին՝ դարձյալ Կարինում 1673 թ., տաթևացի պատանի Գրիգորին՝ Մուշում 1676 թ., քսանումեկամյա վարսավիր Դավթին՝ Սերաստիալում 1677 թ., Գասպար Կովան անունով մի ծերունու՝ դարձյալ Սերաստիալում նույն 1677 թ.: Այսպես և ուրիշներ³: Եվ եթե այսքան շատ էր

զիմագրութեամբ նահատակութիւն հանձն անողների թիւը, ապա կարելի է գուշակել, թե ո՞րքան մեծ պիտի լիներ թիւը այն անձերի, որոնք չկարողանալով տոկալ խոշտանգումների, ընդունում էին մահմեդականութիւնը:

Թուրքերն ունեին նաև զանգվածային մահմեդականացման մի միջոց, որը կոչվում էր զեվլիքմե *دوشمير* (հավաքում), — չալական աղբյուրներում՝ մանկածողով, — ըստ որում քրիստոնյա հպատակներից պարբերաբար երեխաներ էին հավաքում և իսլամացնում՝ հիմնականում ենիչերիների շարքերը լրացնելու համար: Ենիչերիական կազմակերպութեան հղացող Կարա-Սալիլ Ջենդերեկին (XIV դար) ասում էր, թե «պարտվածները ստրուկներն են հաղթականների, որոնց հասնում են նրանց գուլքերը, կանալք, երեխաները՝ որպես օրինական ստացվածք. երեխաներին բռնի իսլամացնելով և նրանց որպես սագմիկ զինվորագրելով հավատի ծառայութեանը՝ կաշխատենք այս աշխարհում նրանց երջանկութեան համար, միաժամանակ և նրանց հավիտենական փրկութեան համար¹:

Մանկելով ենիչերիական շարքերի մեջ, նրանք անգամ էին զառնում բեզթաշինների ուխտին, ուստի՝ միաժամանակ զինվորական ու կրոնավոր էին, ինչպես էին Եվրոպայում, օրինակ, տաճարական սպաները: Այս հավաքվածներից էին կազմված նաև իլ-օղլանիներն *ایچ اوغلانی* ու աջեմի-օղլանիները *عجمی اوغلانی*, որոնցից առաջինները սահմանված էին կայսրութեան բարձրագույն պաշտոնատարներ դառնալու (գալատական պաշտոնյաներ ու կուսակալներ, ենիչերի-աղասի *یکبجری آغاسی*, սիֆահի-աղասի *سپاهی آغاسی* և այլն), իսկ երկրորդները՝ պալատական սպասավորներ²: Մեր տարեգրութիւնները շատ անգամներ են հիշատակում Հայաստանում տեղի ունեցած մանկածողովներ, սկսած 1464 թվականից:

¹ Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 467—468:

² Ricaut, „Histoire de l'état present de l'Empire Ottoman“, p. 335—336.

³ Վերոհիշյալ փաստերի մասին տե՛ս Հ. Մանանգյան և Ն. Անառյան, «Հայոց նոր վկաները (1155—1843)», գիտական հրատարակութիւն, Վաղարշապատ, 1903, էջ 437—441, 449—487, 490—501, 503 և 504—519:

¹ J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. I, p. 45.

² Ricaut, „Histoire de l'état present de l'Empire Ottoman“, p. 83—86 et 129—130.

նից¹, և չի կարելի պատկերացնել, թե ի՞նչ խղճալի տեսա-
բաններ էին պարզվում, երբ երեխաներ էին խլում մայրերի
դրկից, դեռ չխոսելով այն թալանի մասին, որն ընկերա-
նում էր այդ բարբարոսական տեսարաններին: Մեզ ժանոթ
աղբյուրներում վերջին մանկաժողովը հիշատակվում է 1622
թվականին՝ «լամենայն աշխարհն Հոռոմոց և Հալոց», երբ «ոչ
թէ գողայք միայն առնուին, այլ շատ գրամ խնդրէին ընդ տղա-
լսոցն», բայց բարերախտարար էրգրումի Արագա փաշան, որ
ապաստմբ էր, չթուլատրեց իր կուտակալութլունում, իսկ
Դիարբեքիբի կուտակալութլունում և մոտակա շրջաններում
արգելք հանդիսացավ Հալեբ Էֆենդին²: Սակայն, ըստ
երևուլթին, XVII դարի երկրորդ կեսին ևս շարունակվում էր
մանկաժողովը³: Երբևմն որոշ շրջաններում սուլթանները
որպես ընոր՝ թուլատրում էին մանուկների փոխարեն հա-
փաքել գրամական հարկ, որը կոչվում էր օղլանջի սաախ⁴:

Բռնի կրոնափոխութլան այս երևուլթները մեր ժողո-
վուրդն անվանում էր «տանկացում», որ նշանակում էր մահ-
մեղականացում և բուրբացում, և որը թուրքական տիրա-
պետութլան տակ երևան կկած բունակալական նողկալի
երևուլթներից մեկն էր:

Սրան ավելացնենք նաև ալլատարագութլան օրենքը:

Ոչ-մահմեդականները պարտավոր էին մահմեդականնե-
րից զանազանվել իրենց տարագով, որովհետև, ինչպես

¹ Լ. Ս. Սաչիկյան, «Ժե դարի հայերն ձեռագրերի հի-
շատակարաններ», մասն Բ, Երևան, 1958, էջ 216:

² Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութլուն», էջ 2 Օ—211:

³ Տես «Աշխարհագրութլուն չորից մասանց աշխարհի», Եվրոպայի
հտ. Ե, Վենետիկ, 1804, էջ 63: Հմմտ. I. H. Uzuncarşili, «Os-
manlı devleti teşkilâtından Kapukulu ocakları», c. I, Ankara, 1943,
s. 66—67.

Մանկաժողովների մասին տես նաև հետևյալ ուսումնասիրու-
թլունը. Մ. Կ. Չուլալյան, «Դեվլեթիբեն (մանկահավաքը) Օսմանյան
Կայսրութլան մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների»,
Պատմա-բանասիրական Հանդես, 1959, № 2—3, էջ 246—256:

⁴ Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութլուն», էջ 340:

ասում է Ռայկոսը,

«Թուրքերի մոտ գլխապանից ևն ճանաչում, թե մար-
զիկ ո՞ր կրոնին կամ ի՞նչ դիրքի ևն պատկանում, ինչ որ
ձառայում է իմանալու. թե ո՞ւմ կարելի է թշնամանել ան-
պատիժ կերպով»¹:

Լրացնելու համար պիտի ասել, որ օրենքը միայն
գլխապանին չէր վերաբերում, այլ ամբողջ տարագին՝ մինչև
կոշիկները:

Այս մասին նմանապես բազմաթիվ դեպքեր ևն հիշա-
տակում մեր տարեգրութլունները XVI դարի վերջերից
սկսած: Օրինակ՝ 1662 թվականին Կ. Պոլսում սուլթանը փողո-
ցում տեղնուտեղը գլխատել տվեց մի հալի, որը համարձակվել
էր իր ստներին դեղին մետա (մուլկ) հագնել, և այս առթիվ
արգելքի ընդհանուր հրամանները վերանորոգվեցին, ինչպես
պատմում է Երեմիա Չելեբին:

«Իսկ լալզուցն մունետիկ աղաղակեալ լամենայն քա-
ղաքս՝ եասաղ արարին զփակեղս քրիստոնէից պխալա և
զկապուտն՝ զի քնաւ մի՛ երեեսցի: Եւ ի մեծամեծաց մինչև
ցփոքունս եղին գտակ ի գլուխ և զալփաղ, և զհանդերձս ի
վառ և ի տգեղս ամենեւիմբ»²:

Միևնուրն հրամանը ուղարկվեց նաև կուտակալութլուն-
ներին³:

Այս բոլորը ցույց ևն տալիս, որ Օսմանյան Կայսրու-
թլան մեջ «անհավատի» ֆիզիկական գոյութլունն իսկ ինքնին
անբաղձալի երևուլթ էր նկատվում տիրող տարրի կողմից⁴,

¹ Ricaut, «Histoire de l'état present de l'Empire Ottoman»,
p. 264.

² Երեմիա Չելեբի, «Օրագրութլուն», էջ 399—400:

³ Հակոբ Կարնեցի, «Տեղագիր վերին Հայոց», էջ 35:

⁴ Ահա թե ի՞նչպես է նկարագրում Ղուկաս Կեղեցին նրանց
անտանելի վերաբերմունքը.

«Ժանիք ունին չար գազանի,
Նըման կաբճի և բարբ օձի,
Արեան արբու քրիստոնէի,
Եւ մանուանդ ուղափառի»:

Հանդէս Ամսօրեայ, 1937, էջ 127:

և թուրքերը պարզապես «հանդուրժում» էին: Իսկ թե ի՞նչ հարկադրիչ պատճառ կար հանդուրժողություն, այդ մեզ շատ զեղեցիկ ու ճիշտ կերպով բացատրում է Միքայել Ֆեբուրը (Michel Fébure կամ Febvre, կամ Fèvre, իսկական անունով՝ Père Justinien de Tours), հետևյալ տողերով.

«Իրենց երկրում քրիստոնյաներին ու հրեաներին հանդուրժում են այն պատճառով, որ նրանցից ավելի են օգուտ քաղում, քան իրենց կրոնակիցներից. և նրանց թողնում են ապրել [ճիշտ] ախպես, ինչպես այդ արվում է ոչխարներին ու մեղուներին՝ նրանց կաթի ու մեղրի համար»¹:

Իսկպես որ ուսյան կաթի և մեղրի մի անսպաս աղբյուր էր Օսմանյան պետության և տիրող տարրի համար նա պիտի տար ու շարունակ տար, թե՛ պաշտոնապես և թե՛ անպաշտոն կերպով:

Պաշտոնապես նրա ուսերին ծանրանում էին պետության կեղեքիչ հարկերը:

Ժամանակակից Միքայել Ֆեբուրի վկայությամբ XVII դարում Օսմանյան կայսրության մեջ քրիստոնյաները, թուրքերի հետ միասին, վճարում էին հինգ տեսակ հարկեր, որոնցից երեքը՝ սուլթանին, իսկ երկուսը՝ կուսակալ-փաշային²:

Սուլթանին վճարվող հարկերն էին՝

1. Սուրսաթ سورسات, որը պատերազմական տուրք էր ըստ անների՝ անասունների, պարենի և փայտեղենի ձևի տակ:

2. Ավարիզ عوارض (զիպվածային տուրք), որն օրենքով վճարելի էր միայն պետության արտակարգ կարիքի ղեկավարում, ինչպես պատերազմների ժամանակ, բայց սովորություն էին դարձրել ամեն տարի դանձել այդ: Սա նմանապես ըստ անների էր վճարվում:

3. Ջեյբ ալչեսի جيب آچسی (զբպանի դրամ), որը հպատակների կողմից պարտադիր նվեր էր սուլթանին, երբ նա պատերազմի էր շարժվում:

¹ Michel Febvre, „L'Etat présent de la Turquie“, p. 217.

² Ibidem, p. 235—236.

Իսկ փաշային վճարվող հարկերն էին՝

4. Թիրք կամ քերն تيرك (հարդի տուրք), որը վճարվում էր կուսակալ փաշայի ձիերի պահպանման համար:

5. Օրդու اردو (բանակի տուրք), որը տրվում էր ամեն անգամ, երբ փաշան կովի էր մեկնում:

Վերոհիշյալներից բացի՝ արևելյան քրիստոնյաներն ու հրեաները սուլթանին ու փաշային վճարում էին երեք տեսակ ուրիշ հարկեր ևս, որոնցից ազատ էին թուրքերը³: Դրանք էին՝

6. Խարաջ خراج, որ տալիս էին 14 տարեկանից սկսած բոլոր ազամարդիկ՝ իրենց կրոնն ազատորեն զավանդու իրավունքի համար:

7. Շաշաթ آعشاش (շքեղության տուրք), որը տրվում էր փաթթոց կրելու իրավունքի համար, թեև այդ փաթթոցը գույնով միշտ պետք է տարբերվեր մահմեդականների կրածից:

8. Շիրա شیرا (խազմդի տուրք), որը տրվում էր զինի խմելու կամ տանը զինի ունենալու իրավունքի համար և անխտիր դանձվում էր զինի ունեցողից ու չունեցողից, խմողից ու չխմողից:

Սակայն Ֆեբուրի հաղորդած այս տեղեկությունները կրում են խիստ պատահական բնույթ և շատ հեռու են այդ ժամանակվա տիրող հարկային դրություն իրական պատկերը ներկայացնելուց⁴: Հայտնի է, որ հին թուրքիստանում հարկերը բազմաթիվ ու բազմատեսակ էին՝ բաժանվելով երկու հիմնական կարգերի, որոնք կոչվում էին՝ շեքիաթայիև հարկեր

¹ Ibidem, p. 375—376.

² Վերոհիշյալ հարկերից մի քանիսը՝ խարաջ (carach), բիրք (taben), շաշաթ (cherchat) և օրդու (hardy) հիշատակվում են նաև 1653 թվականին տես „Mémoires du Chevalier d'Arvieux, envoyé extraordinaire du Roy à la Porte, Consul d'Alep, d'Alger, de Tripoli et autres Echelles du Levant“, t. VI, Paris, 1735, p. 439—440.

تكاليف عر فيه و تكاليف نشر عيه

Հարկերի ժանրութեան տակ առաջին անօրինակ կերպով ճշգրտում ու հրատարակում էր, մանավանդ որ խիստ կամայականութուններ էլ էին կատարվում հարկերի գանձման գործում:

Բացի պետական հարկերից՝ առաջին ենթակա էր նաև մի շարք անպաշտոն կեղեքումների և թաղանուսների: Երկրում արդեն վատ վարչակարգի հետևանքով ապահովություն չկար հնքներին Պետական և զինվորական պաշտոնեականներ թալանով էր գրավվում. և այսպես ևս բնութագրումներին զոհ գնացողը առավելագույն առաջին էր: Օրինակ՝ էրզրումի կուսակալ Ջուլֆիկար փաշան, որը 1610—11 թվականներին վախճանից ոչ պակաս հեծյալ խմբով ապստամբում էր երկրի ամեն կողմերում, կոչույալում ու հարստահարում էր հայ գյուղացիներին. «և լցաւ հրկիրն վախից և աղաղակօք ի բնութենէ անօրէն նեղչացն», ասում է Դրիգոր Կամախեցին¹:

Ռայաչի պարտականութունն էր, ուրեմն, աշխատել, վատտակել և արդյունքը առաջ պաշտոնական ու անպաշտոն հափշտակիչներին:

Հարկապահանջութուններն ու հափշտակումները, միացած կրոնական հալածանքներին, անտանելի էին դարձնում կյանքը սուլթանական իրավակարգում:

Հակոբ Կարնեցին այսպես է նկարագրում թուրքական բարբարոս կարգը.

«Ձի ցեղ ու ցեղ և ազգի ազգի սուտ պատճառաւ հարկապահանջութիւնն և կեղեքելն անասելի է և անպատմելի, անողորմ առնուլն ի քրիստոնէից. զի ինձ այսպէս թուի, թէ Դանիէլ վասն սոցա մարգարէացաւ վասն չորրորդ գահին, թէ անկէ էր և զարմանալի: ուտէր և զմնացեալսն առ ռան կոխէր»²:

¹ Մանրամասնորեն տես «تكاليف و فتيق» عبد الرحمن و فتيق، «عثمانلى تاريخى»، قواعدى، در سعادت، ۱۲۳۸. — احمد راسم. «عثمانلى تاريخى»، اوچنجى جلد، استانبول، ۱۳۲۹، صحيفه ۱۱۵۴ — ۱۱۶۴، ۱۲۳۰ — ۱۲۱۹.

² Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 158:
³ Հակոբ Կարնեցի, «Տեղագիր Վերին Հայոց», էջ 36:

երան ձայնակցում են ժամանակակից հիշատակարանները: Մի անանուն հեղինակ 1646 թվականին գրում է թուրքական փաշաների կեղեքումների մասին.

«Ամենայն ապրանք թուրքացն բնութեամբ է և անիրաւութեամբ. ուստի փաշայքն պարարտանան կար զօրութեամբ քրիստոնէից և հրէից, իսկ թագաւորն զիրանայ ընչօք փաշայիցն, զոր օրինակ առաքն ընուն և առատացուցանեն զգետս, իսկ գետքն հուսկ լետոյ իջանին ի ծովս և կորուսանեն զգոլն ևս իւրեանց և զհամբաւ ջրոյն ևս»¹:

Այսպիսին էր և զորքը: Օրինակ՝ այսպես էին գանգատվում 1623 թվականին Կարինի շրջանի հայ գյուղացիները ներշնչիչների կեղեքումներից.

«Մեք զերի եմք ի ձեռս նոցա ամենայն ընդանովք մերովք վասն անվճար սուտ պարտուց նոցին. անճարակութենէ մեկ քանի զուրուշ ի փոխ եմք առել և ի հարկապահանջութիւնն եմք տուել, մէկին տասն շահ վճարել եմք՝ չկարացաք աղատիլ, այնչափն շատուցին, զարտ և զանդաստան և զամենայն արջառ և զտունքն իւրեանցն եմք տուել և իւրեանց մարապութիւն կաննեմք, և զիհաց մի գնալու ճարակ չունիմք»²:

Միմեռն կհնացին իր ուղեգրութունում այսպես է նկարագրում հայ ժողովրդի տառապանքը.

«Եւ լայնմ ամի (1613 թ.), լորում ևս էի Թօխաթ, ել հրաման չար, թէ եկեղեցիս և վանորայս մի՛ վառեցեն մոմեղէն ճրագ, այլ եղէ. և թէ ուրեք գտանէին՝ սուգանէին: Եւ այսպիսի տառապանք և նեղութիւն էին ի ձեռս Տահկաց, վասն որոյ լոյժ աղքատ և չքաւոր են, զի միշտ զրկեն, զըզվեն, սուգանեն, զբաբարտեն և առաւել հարկս պահանջին. և թէ տասն որդի ունիցի ոք, ամէնէն խարսճ առնուն. և թէ հեռանալ, զարձեալ առնուն: Եւ Ստամբուլայ գաւառօք ձի, ջորի հեծնուն. և անդի Սևաստ մինչ լլմիթ էլ և ուղտ. իսկ

¹ Երևանի Պետական Մատենադարանի ձեռագիր № 1496, էջ 309բ:
² Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 216:

Սկստալին տան էջ ալ տէկմա չէրէի, ամէնն եզ կու բա-
նեցնեն, ազ և բեռն բառնան, ալ և հեծնան»¹:

Սիմեոն Անհային խոսում է նաև Հայաստանում ենթիշ-
րինքի կատարած համատարած բռնութիւնների մասին.

«Եւ աչնպէս շար էին հանչարիքն, որ քրիստոնէից չի
տալին ձի հեծնալ, ոչ ջորի, ոչ լաւ չուխալ ագանիլ, ոչ ալգի,
ոչ տուն մեծ, ալլ զամենալն յափշտակէին ի ձեռաց: Նաև առաջ-
նորդաց չտալին քննել հաս-չհաս կամ օրէնք պահել. զի թէ
ոք կամէր կին աւնուլ և չհասութք լինէր, չերթալին առ հո-
վիւ կամ առաջնորդ, ալլ [երթալին առ] հնչարի մի և
տալին կաշառ, և նա զայլ իրիցուն թօփուզով պակ տալլ
առնել. և նա ահամալ պիտէր խօսիցն չեղնէր, ապա թէ ոչ
բազում չարիս անցուցանէր ի զլուխն և վնաս և տուգանք
ձգէր գնտա, ալլ և կեղեցեցաց և վանօրէից: Եւ թուրքաց աշ-
խարհն ամենալն ալլպէս են»²

Շատ երկար է շարանը նման վկայութիւնների: Ծըն-
շումների և հարստահարութիւնների բազմաթիւ տեսակ-
ներից մի քանիսը թվելով Երեմիա Չելեբին ասում է, որ
թուրքերը զանազան սուտ մեղադրանքներով առապեցնում
էին հայերին: Օրինակ՝ ասում էին, թե այսինչ հայը կամ
հայերը թուրք են թաղել քրիստոնեական ծեսով, և կամ
նրան խողի միս են կերցրել: Իրենց ուղեորութիւնների ըն-
թացքում նրանք պատուհաս էին դառնում հայ գյուղացինե-
րին, ամբողջ կարավաններով ապրելով նրանց հաշվին. ո՛չ
միայն իրենք էին ուտում ու լիանում, ալլև նրանց անասուն-
ները: Տան մեջ թուրքերը Ալիւմ էին աղջիկներին ու տղա-
ներին. ոչխար էին պահանջում ու իրենց համար մորթում,
և տանտիրուջից մորթելու վարձն էլ էին ստանում, և ալլն³:

¹ Սիմեոն Անհայի, «Ուղեգրութիւն», Հանդէս Ամսօրեայ,
1934, էջ 159:

² Անգ, էջ 158:

³ Տե՛ս Ա. և Ռ., «Հայոց պատմութիւն», հտ. Գ, Երևան, 1946,
էջ 128:

Տեսեալիան ու բարոյական ճնշումների այս անտանելի
միջավայրի մեջ էր ապրում արևմտահայ ժողովուրդը: Նա
տալալտում էր և արլուճաքամ լինում թուրքական բռնակա-
լութիւն ճիրանների մեջ¹. և շատ բնական է, որ այսպիսի
պայմաններում ճնշվող, տառապող ու շահագործվող ժողո-
վրդական զանգվածների մեջ զարթնէր ազատութիւն պա-
հանջը և առաջ գալին ազատագրական ձգտումներ:

Իրոք՝ մենք տեսնում ենք, որ XVII դարում այդ պա-
հանջն ու ձգտումները կոնկրետ երևույթներ են դառնում:
Դրա արտահայտութիւններից մեկը, օրինակ, գտնում ենք
Սարգիս Հիզանցու հիշատակարանում: Նա իր ընդօրինակած
ձեռագրի վերջում, արձանագրելով ժամօնակի վիշտն ու նե-
ղութիւնները, 1610 թվականին գրում էր.

«Ի դառն և ի նեղ և ի վշտաշատ ժամանակի, յորում
նեղիմք ի հարկապահանջութիւնէ անաւրիւնաց, քանզի ևս քան
զկս սաստկանալ բռնութիւն և նեղութիւն ի վերայ աշխար-
հիս, ևս առաւել ազգիս Հայոց: Զոր յուսամք և խնդրեմք և
հայցեմք յամենաուտ քաղցրկամք մարդասիրէն աստուծոյ,
որ վերստին նորոգեսցէ, կանգնեսցէ և հաստատեսցէ զաթոռ
և զգաւազան իշխանութեան զհայրապետին մերոյ և զթագա-
ւորին՝ յառաջին սէր և ի միաբանութիւնն, և աւերկելոյ, ան-
վնաս պահեսցէ զազգս Հայոց յամենայն հէնից և հնարից

¹ Մենք գեւ շխտեցինք Հայաստանում հաստատված քրդական
մի շարք կիսանկախ իշխանութիւնների՝ Բաղեշի, Քոշաբի, Ջուլիսի,
Քիզանի, Սպարկերտի, Մոկիսի, Ծիրվանի, Լզուի և այլ ամիրայութիւն-
ների մասին, որոնք օսմանյան ավատական սիստեմի մասն էին կազմում
և լիովին լրացնում պետական հարկահանութիւն, փաշաների, ենթիշ-
րինքի, սիֆահիների պակաս թողածը: Օրինակի համար՝ Դավիթ Բա-
ղեշեցին 1650-ական թվականներին, խոսելով Բաղեշի ամիրա Ավդալ
խանի մասին, գրում է. «Եւ այս ՔՊ (43) ամ է՝ որ ամիրայ է Բաղշու
քաղաքին. և զանբաւ շարիս զոր անցուցանէ, ո՞ կարէ ծրել ի բարտիդի՝
զհարկապահանջութիւն, զկեղեքել, զթալանել, զտուգանս, որ հատու-
ցեալ է զմեզ ի յետին չքաւորութիւն...: Զի քսան բէկդատայ [ուճի]
մեծամեծք, թող զաղջուսն և զմանր տղայք, տե՛ս Դիվան Հայոց Պատ-
մուրեան. զիրք ժ, Թիֆլիս, 1912, էջ 53:

աստանայի, ի պէսպէս շար(ե)աց և փորձանաց, ներքոյ և արտաքոյ, ամէնս¹:

Նույն արտահայտութիւնը տեսնում ենք նաև թոխաթեցի Հակոբ Բաթուկենցի մոտ, որը 1608 թվականի մի հիշատակարանում, ողբալով հայ ժողովրդի թշվառ վիճակը, գրում էր.

«Ողորմելի և աւազելի եզեր, մեծանուն ազգ Հայոց Մեծաց, վասն է՞ր փոքրկացար, տառապեցար և նուազեցար.— վասն այն՝ զի մեզար: Այդի Հայկազուն առնմիզ, ոչ տուեր խողող, այլ փուշս բուսուցեր, վասն այն խոպանացար. ցանկ քո քակեալ եղև, և եղեր կոխան ամենայն ազգաց: Այժմ գի՞նչ առնելոց ես, զի որբ մնացիր ի հօրէ և ի մօրէ, ալ սինքն ի թագաւորէ և ի հայրապետէ: Այլ լուսա՛ առ աստուած, խոստովանեա՛ նմա, զի փրկիչ քո նա է. թէպէտ և եհար վասն մեզաց՝ դարձեալ նոյնինքն ողորմեցի ըստ մեծի ողորմութեան իւրում, և ժողովեցէ որպէս հաւ զձագս իւր ընդ թեօք և սեպհականեցէ ի հայրենի աշխարհն, և հաստատեցէ թագաւորաւ և հայրապետիւ»²:

Այս շրջանում հայ քաղաքական գիտակցութիւնն հասել էր այնտեղ, որ Հայաստանի գրութիւն թշվառութիւնն արդեն սկսել էր իսկապես գիտվել որպես սեփական պետականութիւն բացակայութիւն հետեանք, ինչ որ նշանակում էր, թե՛ այդ ժողովուրդն այլևս անցկացրել էր իրեն շրջապատող, իրեն ճնշող երևույթներին կրավորական հանդիսատես լինելու շրջանը: Ազարիա Սասնեցին շալալիների ավերածութիւնների աթիւղ նշում էր այն միտքը, թե՛ դրանք օտարի տիրապետութիւն, մեր ժողովրդի անտերութիւն արդիւնքն են, մի միտք, որի մեջ, կարելի է նկատել, ամփոփված էր հայոց թագավորութիւն վերականգնման գաղափարը.

¹ Ե. Լալայան, «Յուշակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ Ա, Թիֆլիս, 1915, էջ 839—840: Երևանի Պետական Մատենադարանի ձեռագիր № 5234, էջ 338ա—338բ:

² «Կամենից», Վենետիկ, 1896, էջ 169:

«Այս ամենայն մեղքն է արևի,

Որ անօրէնքն են մեզ տիրել:

Մեր թագաւորքն են խափանել,

Զմեզ ի լաշխարհս անաէր թողել»¹:

Հետագայում կտեսնենք, որ այս արամաղորութիւնը դարի 30-ական թվականներին կենսավորվում է արևմտահայ բուրժուազիայի ներդասակարգային խլրտումների և հոգևորականութիւն ներքին կոիվների մեջ, իսկ 60-ական թվականներին դառնում է շարժում՝ առևտրական բուրժուազիայի ղեկավարութիւնը, ժամանակի հասարակական շարժիչ ուժերի ազդեցութիւն տակ:

Արևմտահայ ազատագրական շարժման գրոշակիրն, ուրեմն, մեծ ուժ ներկայացնող հայ բուրժուազիայի առաջավոր թևն էր, այլ խոսքով, շարժման մղիչ ուժը՝ արևմտահայ առևտրական բուրժուազիան էր, որը մերձարեւելյան առևտրի ընդհանուր վերելքի այս դարաշրջանում պետք է լուսավորեր ազգային զարթոնքի և ազատագրական ճիգերի ուղին Արևմտյան Հայաստանում:

Արդեն XVI դարի վերջերից սկսած, ազատագրական ուժեղ շարժումներ էին ծալր առել Օսմանյան Կայսրութիւն մեջ: 1595—1601 թվականներին ապստամբութիւն մեջ էին վալաքները Միքայել Քաջ վոյեվոդը անկախութիւն էր հռչակել Վալաքիայում՝ իր իշխանութիւն տակ միացնելով նաև Մուլապիան ու Տրանսիլվանիան²: 1602 թվականին այրանացիները պատրաստ էին սերբերի հետ 100.000 կովոզներ ոտի հանելու՝ թուրքերի դեմ արշավելու համար և այս ծրագրով ամբողջ առանձնակու տարի բանակցութիւն մեջ էին Վենետիկի հետ³: 1606 թվականին Կիպրոսում 80.000 հուլներ

¹ Ազարիա Սասնեցի, «Ողբ», Հանդէս Ամսօրեայ, 1936, էջ 226:

² Th. Lavallée, «Histoire de l'Empire Ottoman», Paris, Garnier frères, 1855, p. 275—278.

³ П. Кулишъ, «Восточный вопрос и задунайская славянина перед глазами Московского царя Михаила Феодоровича, 1626», Журнал Министерства Народного Просвещения, ч. СХСV, 1878, отд. 2, стр. 238.

ապստամբությունն զրոշ պարզեցին, բայց շուտով ճնշվեցին¹: նույն միջոցներին բուլղարներն պատրիարք Աթանասը բալկանյան ժողովուրդների ազատագրման գործն ուսումնասիրելով շրջեց ամբողջ Սերբիան, Բոսնիան, Դալմատիան, Ալբանիան, Վերին և Սառին Մակեդոնիան, Հունաստանը, Թրակիան, Բուլղարիան և Արշիպելագը, որից հետո թուրքերին Եվրոպայից արտաքսելու իր ծրագրով դիմեց նախ Վենետիկին և ապա Միկելիայի սպանական փոխարքա Գ. Օստոնային (1613 թ.), ուղեորվեց նաև մինչև Գրե՛ որպես Թուրքիայի հունադավան ժողովուրդների ներկայացուցիչ, Կիևյան երկրի բնակչությունը ոտի հանելու համար թուրքերի դեմ²: Կրետիկ 25-ամյա պատերազմը (1645 - 1669 թթ.), որ տեղի էր ունենում Վենետիկի և թուրքերի միջև, ավելի ևս հրահրեց ազատագրական շարժումները: Պատերազմի հենց սկզբից շարժվեցին Վալաքիան և Մոլդավիան, որոնք սուլթանին հարկատու երկրներ էին: Վալաքիայի վոյեվոդ Մաթեյ Բեսարաբը Պետրոս Պարչևիչ անուն գեսպանի միջոցով Լեհաստանի Վլադիսլավ IV թագավորին զինակցություն էր հրավիրում թուրքերի դեմ³: Մոլդավիայի վոյեվոդ Վասիլ Գալչնայա ժամանակ թուրքերի դեմ կնքվող սուս-լեհական զինակցությունն ընդլայնելու և քրիստոնեական մի նոր խաչակրություն վերածելու նպատակն էր հետապնդում⁴: Վերոհիշյալ

¹ Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրություն», էջ 98—100:

² В. Макушев, „Болгария под турецким владычеством, преимущественно в XV и XVI веках“, Журнал Министерства Народного Просвещения, ч. CLXIII, 1872, отд. 2, стр. 37—329. Տե՛ս նաև նույն հեղինակի „Восточный вопрос в XVI и XVII веках, по неизданным итальянским памятникам“, Славянский сборник, т. III, С.-Петербург, Изд. Славянского Комитета, 1876, отд. I, стр. 15—25.

³ G. Bousquet, „Histoire du peuple bulgare, depuis les origines jusqu'à nos jours“, Paris, 1909, p. 125.

⁴ Ըստ Նիկոլա Յորդայի, տե՛ս Т. G. Djuvara-ի մոտ, „Cent projets de partage de la Turquie“, Paris, Libr. Félix Alcan, 1914, p. 209—210.

Պետրոս Պարչևիչը, որ բուլղար էր, նույն ժամանակներում դիմել էր գերմանական կայսրին ու Վենետիկի դոժին, նրանց հայանելու համար, որ կարող են հույս դնել Շրուպարական առյուծի զարթոնման վրա. դրանից հետո նա 1655 թվականին նորից էր դիմել Ֆերդինանդ III կայսրին, հազորակա համար, որ բուլղար երեկելիների միջև զաղտնի համաձայնություն էր կնքվել ապստամբության համար, և այնտեղից նույն նպատակով անցել էր կազակների հեթման Բոգդան Խմելնիցկոյ մոտ¹: Այնուհետև նա իր կյանքն անցկացրել էր Եվրոպայում՝ խաչակրություն քարոզելով: 1673 թվականին նա հանձնարարական նամակներով ներկայանալով Վենետիկի դոժին՝ Մոլդավիայի, Վալաքիայի, Բուլղարիայի և Սերբիայի ժողովուրդների անունից օգնություն էր խնդրում, հայանելով, որ նրանք պատրաստ են ոտի կանգնելու՝ Վալաքիայի և Մոլդավիայի իշխանների առաջնորդությամբ²: 1651 թվականին Կ. Պոլսում հունաց Պարթենիոս II պատրիարքը թուրքերի կողմից զաղտնի կախվել ու ծովն էր նետվել՝ ուսսաց ցարի հետ գաղտնի հարաբերություններ ունենալու պատճառով³. Իսկ 1657 թվականին նույնը կրկնվել էր ավելի հանդիսավոր ձևով: Կ. Պոլսի պատրիարք Պարթենիոս III-ը կախվել էր մայրաքաղաքում, որովհետև դրագրություն մեջ լինելով ուսսաց ցարի և Մոլդավիայի վոյեվոդի հետ՝ նրանց գլղում էր զինակցելու լեհերի հետ և հարձակվելու թուրքերի վրա: Նա իր նամակներից մեկում գրում էր, թե «մոտեցել է իսլամի վախճանը. քրիստոնեական հավատը տիրապետելու է տիեզերքին. ըստ շուտով քրիստոնեաները տեր կդառնան աշխարհին. Իսպանիա և իսպի իշխանները կզրավեն կայսրությունը և արև. և Պարթենիոս III-ի կախվելու հետ միասին՝ ընդհանուր հարձանք էր սկսվել հույների դեմ և Երուսաղեմի հունաց պատրիարքը, որ նույնպես մասնակից էր այդ գործին, հա-

¹ G. Bousquet, „Histoire du peuple bulgare“, p. 125.

² В. Макушев, „Восточный вопрос в XVI и XVII веках“, стр. 25—26.

³ J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. II, p. 573.

հիշ
միտ

գիվ էր ազատել իր կյանքը¹: Այս ժամանակներս եկել էր և հրեաների մեծամասն, որը կոչվում էր Սարեթայ-Սեի: Նա 1666 թվականին հայտնվելով Չմյուռնիայում, ասում էր, թե «Մեհեթյան զոր գուշակեցին մարգարեքն, թէ գալոց է և փրկելոց է զԻսրայէլ, այն ես եմ, որ եկեալ եմ փրկել զԻսրայէլ»: հրեական աշխարհը ստի էր կանգնել՝ երկրի բոլոր կողմերից և մինչև հեռավոր երկրներից ուխտի գալու և երկրբայակելու իր թագապորին, և հովատում էր, թե նա շուտով թագ էր կապելու, քրիստոնյաներին բնաջնջելու էր և մահմեդականներին հարկատու էր անելու և այլն, բայց թուրքերը կարողացան ճնշել այս շարժումը՝ մահվան սպառնալիքի տակ խլամացնելով մեծամասին²: Մոտավորապես այս ժամանակներում Սալմեիկի ճփարթամ և հարուստ, ընչաւէտ և մեծատուն» հրեաներն իրենց ազգից մեկին գաղանի թագապոր էին բնաբեւ և օծել՝ Մայեքիմ Սոլոն (Սողոմոն թագապոր) անունով, և պատրաստվում էին ամբողջ Թուրքիայում ապստամբութուն բարձրացնելու, երկիրը գրավելու և Կ. Պոլիսն ի-

¹ Երեմիա 2 և 1 Երբ, «Օթրագրութիւն», էջ 233—235: J. de Hammer, «Histoire de l'Empire Ottoman», t. III, p. 44.

² Առաքել Դավրիժեցին մի ամբողջ գլուխ է նվիրել Սարեթայի պատմութեանը հետևյալ վերնագրով. «Պատմութիւն անցից չրէից ազգին և Սապեթայ անուն ջհտին, որ ասէր թէ ես եմ քրիստոսն փրկիչ չրէից ազգին» և այլն, տե՛ս «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ», էջ 651—665: Սարեթայի մասին իր ժամանակին, — թեև անթիվական, — հայերեն լեզվով լույս է տեսել և մի անունը գրքույկ, որը Երեմիա Չելեբիի հեղինակութունն ու հրատարակութունն է, այսպիսի խորագրով. «Տեորակո այս որ կոչի Սապեթայի Սեու համբուսալի չրէից: Ոմ խարեբայ Սապեթայ անուն կամէր կրկին մոլորել զմոլորեալան՝ չայր Ալեքսանդր Դր Վինյոն (P. A. de Vignau), որ ժամանակակից էր Սարեթային, նույնպես գրել է նրա մասին, տե՛ս հետևյալ ժողովածուի մեջ. «Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient», t. I, Paris, A. Picard, 1907, p. 495—497. Տես նաև J. de Hammer, «Histoire de l'Empire Ottoman», t. III, p. 105—106.

Սարեթայի 1666 թվակիր մի շրջաբերական նամակի, որն ուղղված է հրեա ժողովրդին, հայերեն ժամանակակից թարգմանութունը գտնվում է Երուսաղեմի Մուրր-Հախորի Մատենադարանի № 186 ձեռագրում, էջ 38ր:

րենց մայրաքաղաք գարձնելու. բայց այս շարժումն արլան մեջ խեղդվեց¹:

Այստեղ աչքի է ընկնում այն փաստը, որ ազգային շարժումով խլրավող այս ժողովուրդները բոլորն էլ ոչ-մահմեդականներ էին: Դա հասկանալի է, եթե նկատի ունենանք, որ նախ մահմեդական թեոկրատիայի մականի տակ ամենից շատ նրանք էին տառապում. երկրորդ՝ առևտրական լայն հարաբերությունների մեջ լինելով եվրոպայի հետ, նրանք էին հանդիսանում գործուն տարրը երկրի տնտեսական նոր ձևավորման մեջ, որովհետև տեղական առևտրա-վաշխատական կապիտալը եվրոպական կապիտալի ազդեցութեամբ ու օգնութեամբ էր զարգանում²:

Այս տառապող, բայց ստաջադեմ ժողովուրդների շարքին էին պատկանում նաև հայերը:

Պետք է նաև նշել, որ Արևելքի ազատագրական ինքնաբուխ շարժումները միաժամանակ թեևավորվում էին Արևմուտքից փչող խաչակրական հոգմերով, իսկ այս շրջանի խաչակրական ծրագրերը բխում էին բացառապես ֆրանսիական արքունիքի և պապական դիվանագիտութեան Արևելքում հետապնդած շահերից:

Ինչպես ասացինք արդեն՝ կապիտուլյացիաների հաստատումով XVI դարի վերջերում եվրոպական առևտրական կապիտալի ներթափանցումն արդեն ավարտվել էր Մերձավոր

¹ Այս պատմութունը տալիս է Զաքարիա Գանաքեցին, նրան նվիրելով մի գլուխ, «Անդգամութիւն չրէից» խորագրով, տե՛ս «Զաքարեայ Սարեթայի Պատմագրութիւն», հտ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 113—116:

² Այս երկու տեսակետներից ոչ-թուրք մահմեդական ժողովուրդները (արաբ, բուրջ և այլն) շատ էին տարբերվում սույա ժողովուրդներից, այսինքն՝ նախ ազատ էին կրոնաբարոյական ճնշումներից, որոնք փոխաբերվում էին ազգային ճնշումներին, և հետո գուրկ էին շահաժատ» եվրոպայի հետ տնտեսական ու մշակութային հարաբերություններից: Նրանց մոտ էլ տնտեսական ընդհանուր ճնշումների ազդեցութեան տակ ընդլուծումներ պատահում էին հաճախ, ինչպես բուն թուրքերի մոտ, բայց գրանք հետև էին ազգային շարժումներ լինելուց և առատավելն ազանգավորական գունավորում էին ունենում:

Արեւելքում և դրանով Արեւելքի շուկան կովադաշտ էր դարձել Արեւմտյան Եվրոպայի ասիտրական պետութիւնների միջև, որոնց գլխավորները Ֆրանսիան, Անգլիան և Հոլանդիան էին: Սրանց տիրապետութեամբ վեներական և գենովական վաճառականութիւնը, որ շատ ավելի հին էր Արեւելքում, կորցրել էր իր առաջնահարգ նշանակութիւնը: Մրցակից երեք պետութիւնների մեջ առաջին տեղը գրավում էր Ֆրանսիան, որի առևտրական արտոնութիւններն Արեւելքում հենվում էին 1593 թվականի կապիտուլացիաների վրա, իսկ 1581 թվականի կապիտուլացիաներով վենետացի, գենովացի, անգլիացի, կատալոնացի և եվրոպական մի շարք այլ ազգութիւնների պատկանող վաճառականներ հարկազրկած էին Ֆրանսիական գրողի տակ միայն մտնել Արեւելքի նավահանգիստները¹: Անգլիան իր կարգին 1593 թվականին ստանալով իր առաջին կապիտուլացիաները, իր առևտրի համար ձևաք էր բերել նույն արտոնութիւնները, ինչ որ ունեւ Ֆրանսիան²: Դրանից հետո հրապարակ էր եկել և Հոլանդիան՝ 1596 թվականին ձևաք բերելով իր առաջին արտոնութիւնները³, իսկ 1612 թվականի կապիտուլացիաներով՝ նույն հավասար իրավունքները, ինչ որ ունեին Ֆրանսիան և Անգլիան⁴:

Սակայն Ֆրանսիան, որի արեւելյան առևտուրն այսպիսով տուժել ու նվազել էր XVII դարի սկզբին, պայքար էր սկսել մրցակից Անգլիայի և Հոլանդիայի դեմ, պայքար, որն իր գագաթնակետին հասավ Կոլբերի օրով, դառնալով նրա մտահոգութեան գլխավոր առարկան⁵, թեև, հարկ է նշել, նույնինքն Կոլբերի պայքարի ուղին շեղվում էր ընդհանուր

¹ Ch. Périgot, „Histoire du commerce français“, Paris, G. Delarue, s. d., p. 149—151.

² Հմմտ. G. Noradounghian, „Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman“, t. I, Paris, Libr. Cotillon, 1897, p. 37.

³ Ibidem, t. I, d. 397.

⁴ J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. II, p. 348.

⁵ M. Herbette, „Une ambassade persane sous Louis XIV, d'après des documents inédits“, Paris, Perrin et Cie, 1907, p. 234—235.

գծից, որը մարտական էր, հակադրորեն հենվելով թուրք-ֆրանսիական բարեկամութեան սկզբունքի վրա, ինչպես կրտսեանք հետագայում: Իսկ Ֆրանսիայի այդ պայքարին լրծվել էր և Հոտմեական Եկեղեցին, որի շահերը, վերանորոգութեան (Ռեֆորմացիայի) դեմ մղած իր պայքարում, նույնպես պահանջում էին անգլիական և հոլանդական ազդեցութիւնների վտարումն Արեւելքից:

Սա էր XVII դարի սկզբից Հոտմի պապերի կողմից վերաբարձիւղ խաչակրական շարժումների բովանդակութիւնը՝ զենքով գրավել Մերձավոր Արեւելքը: Եվ պապերը, մի կողմից աշխատելով հանուն քրիստոնեական շահերի ուրիշ կաթողիկ պետութիւնների աջակցութիւնն էլ ապահովել, մյուս կողմից Ֆրանսիական զենքի գովքն էին անում Արեւելքի քրիստոնյա ժողովուրդներին, նրանց ևս ներգրավելու համար պապականութեան և Ֆրանսիական կապիտալի ձեռնարկած նվաճողական այդ մեծ կովին: Այսպես, օրինակ, Ուրբան VIII պապը 1630 թ. Ֆրանսիացի միսիոնարներ ուղարկելով դեպի Լիբանան, Անտիօքի մարոնիտների պատրիարքին գրած իր նամակում վառաբանում էր Ֆրանսիան, «որտեղից [մի ժամանակ] դուրս եկավ լեգեոններով զինված կրօնը՝ Ամենաքրիստոնյա Թագավորներին առաջնորդելով Սիոնի զբերիների շղթաները սրով խորտակելու և վերանորոգելով Երուսաղեմի պարիսպները»¹: Իսկ Հեղինի մարոնիտ արքեպիսկոպոսին ուղղած նամակում ասում էր, թե այդ միսիոնարները «քահանայապետական ողորմածութեան խնդրանքով Ֆրանսիայից են գալիս դեպի Սիրիա, Պաղեստին և Եգիպտոս, երկրներ, որոնք մի ժամանակ երկնքի օգնութեամբ իշխող

¹ „Onde uscì la religione armata di legioni, conducendo i Re Christianissimi a spezzare colla spada le catene dei captivi di Ston e riparando le mura di Gerusalemme“, տե՛ս P. Rocco da Cesinale, „Storia delle Missioni dei Cappuccini“, t. III, Roma, Tip. Barbera, 1873, p. 214.

Ամենաքրիստոնյա Թագավոր (Roi Très-Chrétien) էին անվանվում Ֆրանսիայի Թագավորները: Նրանց տիտղոսն էր՝ Ամենաքրիստոնյա Վեհափառություն (Majesté Très-Chrétienne):

էին ու հրաշափառ, իսկ այժմ սարուկ են օտար լծի տակ՝: Նույնը կրկնվում էր և Սիրիայի ու Լիբանանի եկեղեցիների գեկավարներին ուղղված հանձնարարականում, որտեղ ասվում էր, թե այդ միսիոնարներին «Հոռմը կանչում է Ֆրանսիայից, որտեղից մեկից ավելի անգամներ երջանկութունն ու հաղթանակը նավարկել են դեպի գերի Արևելքը, Ամենաքրիստոնյա նավատորմով»²:

Այսպիսի պրոպագանդա էր մղվում ամբողջ Արևելքում: Նույն իմաստով գրգիռ էր արվում և հայերին:

Թեատինյան կրոնավոր հայերին ապետ Կլեմենտ Գալանուսը (Clamens Galanus), որ Հռոմի Պրոպագանդայի (Propaganda Fide) քարոզիչն էր հայերի մեջ, կոչ անելով նրանց Հռոմեական Եկեղեցու հետ միանալու, հռոմեացիներին կամ Ֆրանկներին ձեռքով շուտով ազատութուն գտնելու խնդիրն էր դնում նրանց առաջ:

«Ո՛վ աշխարհ Հայաստանեաց, — գուցե էր նա սրտագին, — որքա՞ն երանելի լառաջն էիր, որքա՞ն հզորագոյն տէրութեամբ և փառաւորագոյն վայելչութեամբ զարգարէիր, յորժամ զարգն քո և զայլծառութիւն և զիշխանութիւն ի Պետրոսի սուրբ աթոռոյն ընկալայիր: Աւա՛ղ, եղո՛ւկ, զիա՛րդ իշխանդ զաւտաց եղեր ընդ հարկիւ, զիա՛րդ ոսկին քո փոփոխեցաւ լերկաթ, զիա՛րդ ամենայն բարեգարդութիւնքն քո ոչինչ եղեն: Բայց՝ ես զի՞նչ արարից առ ի քեզ օգտելոյ. առ ո՞վ կարդացից լինել քեզ օգնական՝ մանտանդ ի մնացորդն վշտաց, որ վերակալ չարագոյն քան զառաջինն: Արդ՝ ի ձեզ ապաւինիմ, և առ ձեզ աղաղակեմ, և զձեզ աղաչեմ բազկատարած,

¹ „In Siria, Palestina ed Egitto, paesi una volta dominanti per favori del cielo e gloria di miracoli, ora schiavi sotto il giogo straniero, vengono dalla Francia, chiesti dalla pontificia carità“, Ibidem, p. 214.

² „Roma chiama dalla Francia, onde non una volta la felicità e la vittoria navigò al captivo Oriente colla flotta Cristianissima“, Ibidem, p. 215.

Flotta cristianissima՝ Ամենաքրիստոնյա նավատորմ նշանակում է Ֆրանսիական նավատորմ:

ո՛ւ Հայոց սուրբ հարք և հայրապետք: Դուք, որ ստույգ զիրն գիտէք, և որ կարողք և պարտական էք պղանց և անձանց ձերոց օգնել, ողորմեցարո՛ւք վշտաց և նեղութեանց ձերոց, բժշկեցէ՛ք զվէրս ձեր, կանգնեցէ՛ք զկոխեալ անուն և զհամբան ազգիդ ձերոյ, շատագո՛վ լերուք փրկութեան տառապեալ հայրենեաց ձերոց... Ապա թէ ես, որ ոչ եմ հայ և ոչ լոյժ հայերէն բարբառով տեղեկացեալ և ոչ զայլ ինչ ի ձերում միջի կարող աննել, բայց միայն թլուտ լեզուով աղաղակել և ասել թէ՛՝ Ես ձայն բարբառոյ ի Հայո, պատրաստ արարէք զհանուպար տեսն և ուղի՛ղ արարէք զշաւիղս հաւատոց եորա: Թէպէտ և արարի զայդ առատապէս գրով և անգիր, սակայն տակաւին երկնչիմ չարգարագատ դատաւորէն. և օր ըստ օրէ ինձ թուի լսել զձայնն զհաւուրն թէ՛՝ Տուր զհամար տնտեսութեան քո: ... Ահա տեսիք արդէն իսկ լցեալ զմարգարէութիւնսն սրբոց նահապետացն ձերոց Գրիգորի, Ներսէսի և Սահակայ յաղաթս աւերման թագաւորութեան և եկեղեցւոյդ ձերոյ պատճառաւ հերձուածոց: Եւ արդէն լուսլք զձայնսն ողբականս հետեեալ հայրապետացդ, որք լացին զպատճառս լուէտ քան զգործս վշտաց ձերոց. ընթերցալք զնզովս և զանէծս զարհուրելիս, զոր և ինքեանք ժողովքն ձեր կանոնեցին ընդդէմ հերձուածող աղանդոցացն այլր աշխարհիդ: Այլ ես զգոյշ եղէք, եթէ զճմարիտ հաւատս և զառաջնորդութիւնն Հռովմայ սուրբ աթոռոյս, և զխարէութիւնսն հակառակորդացն վիային և բացայալտեն ինքեանք սուրբ հարքդ և վարդապետք, զիրքդ, մատենիք և ճառընտիրք եկեղեցւոյդ ձերոյ: ... Այլ աղերսանք և ժողութիւնն իմ առ ձեզ է միայն վասն ձերոյ հոգևոր և մարմնաւոր օգտութեան, որպէս զի ի ձեռն միաբանութեանդ փրկեսցիք ոչ միայն հոգւով ի տէրութենէ սատանայի, այլ և մարմնով ի լծոյ անհաւատից. և զի որպէս կատարեցան այլ բանքն գուշակութեան մեծին ձեր Ներսէսի, նոյնպէս և կատարեսցի վերջինն, որ ասէր թէ՛՝ Յետ այսորիկ փրկութիւն ամենայն աշխարհաց և քրիստոնէից ի լորիական ազգէն Հռովմայեաց եղիցի, որք են Ֆրանկք: ... Ուրեմն զայոց են Հռովմայե-

ցիքն փրկել զաշխարհն և զազգն ձեր: Բայց զի՞րոչ ձեր ազինքն պատրաստ արարին նոցա զճանապարհ, կամ յո՞րժամ համարեն առնուլ ի նոցանէ զհանգիստ և զբարեբարութիւն զայս մեծ: Մի՞թէ լորժամ պղծեալ զգաշինս հնազոյն միաբանութեանն, ընդէմ զիննն Պետրոսի և Սեղբեսարոսի սուրբ աթոռոյն: ... Ընդ այսքան լիմար, որ զայլզպիսի թշնամական պատրաստութիւն պատերազմի համարիցէ գոյ լարմար օգնակոչ հրաւիրուին Հոռովայեցւոցն առ ի փրկել զաշխարհս զայլոք¹:

Պապերի և Արևելքում գործող լատին միսիոնարներէ ալս ուժեղ ու ճարպիկ պրոպագանդան ևս թե էր տալիս արևելեկան քրիստոնյա ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումներին, մանավանդ Կրեոտի պատերազմի շրջանում, երբ կարծում էր, թե անխուսափելի էր օսմանյան տիրապետութեան վերացումը: Քրիստոնեական խաչակրութեան վրա էին հուշա դնում նույնիսկ հրեաները՝ օգուտ քաղելու համար թուրքերի անկումից: Այլ հույսի վրա էին հենվում և բաղկանյան երկրների հունադասիան ժողովուրդները, որոնց մտա ընդհանրապես իշխում էր կրոնակից Ռուսաստանի թեկադրութեան տակ մտնելու բաղձանքը, որովհետև նրանք իրենց ազատութունը ձեռք բերելու համար հավասարապես պատրաստ էին նաև կաթոլիկ եվրոպային անձնատուր լինելու:

Այսպես, ուրեմն, XVII դարի արևմտահայ շարժման գեկավարները դրսի օգնությունն Արևմտքից էին սպասում և հաջողութեան հույսեր կապում խաչակրական շարժումներին:

Սակայն լատինական կողմնորոշումը նոր չէր հայ հասարակական կյանքում: Նա ուներ ավելի խոր՝ պատմական արժատներ, որովհետև կազմվել էր Կիլիկյան թագավորութեան շրջանում, երբ հայերն անմիջական ու երկարատև շրջման մեջ էին գտնվել խաչակիր բանակների ու լատինադասիան ժողովուրդների հետ, XI—XIII դարերում:

¹ Կլեմենտ Գալանոս, «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հոռմայ», հտ. Բ, մասն Բ, Հոռմ, 1661, էջ 363—370:

Այլ շրջանում երևան եկած մի գրական ստեղծագործութեան, որը «Դաշանց թուղթ» էր կոչվում², «վկայում էր» հայ-հոռմեական հին բարեկամութեան մասին, որպես պատճենը հանդես գալով նույնինքն այն քաղաքական ու կրոնական զաշնադրի, որն իբրև թե IV դարի սկզբներին կնքվել էր մի կողմից Հոռմի Կոստանդիանոս Մեծ թագավորի ու Սեղբեսարոս պապի, իսկ մյուս կողմից հայոց Տրդատ թագավորի ու Գրիգոր Լուսավորիչ հայրապետի միջև: Այս «վավերագիրը», որն իր հայտնի քննադատի կողմից անվանվում է հայերի և լատիններին մերձեցումն ու փոխադարձ համակրանքը գործնելու համար հնարված մի «բարեկազմական խաբէութիւն»³, բայց որն ավելի ճիշտ կլինէր անվանել կիլիկյան շրջանում լատինասեր հոսանքի կողմից եվրոպական ազդեցութունն ամրապնդելու նպատակով հնարված մի գրական կեղծիք, մեծ ժողովրդականություն էր շահել հետագա դարերում՝ քարեկամութեան և արտաքին օգնութեան կարիքն զգացող հայ քաղաքական շրջաններում և այդ պատճառով բաղձաթիվ օրինակներով ողողել էր հրապարակը⁴:

² Դաշանց թղթի առաջին տպագրութունը եղել է 1683 թվականին վենետիկում, այսինքն բնագրով և հովհաննես Հոյովի կատարած իտալերեն թարգմանութեամբ:

Փուղք սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի և սրբոյն Սեղբեսարոսի վեհագունի փափին և Տրդատայ Հայոց արքայի, և սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին: Ետարգրեցեալ յամի տետուն երեք հարիւր և տասն և վեց, և տպագրեցեալ ի բաւի փրկչին 1683, ի վեհեափի քաղաքի. Lettera dell'Amicitia e dell' Vntone di Costantino gran Cesare e di San Siluestro Sommo Pontefice, e di Tridade Rè dell'Armenia, e di S. Gregorio Illuminatore della Nazione Armena, scritta nell' Anno del Signore 316. In Venetia, M.DC.LXXXIII. Appresso Nächst' Angelo Barboni. Con Licenza de' Superiori.

³ Դաշանց թղթի այս առաջին տպագրութունը (20×14 սմ. ծավալով) մինչև հիմա անհայտ էր: Մենք Երևանի Պետական Մատենադարանի № 2272 գրչագիր ժողովածուի կազմի մեջ հայտնաբերել ենք նրա առաջի միակ օրինակը, որ անթերի է և շատ մաքուր:

⁴ Կ. Շահնապարյանց, «Դաշանց թղթոյ բնութիւնն ու ներքումը», Փարիզ, 1862, էջ 86:

⁵ Դաշանց թղթի օրինակներ բազմաթիվ են Երևանի Պետական Մատենադարանի ձեռագրերում: Նրանց մեջ հնագույնը № 732-ն է

Նույն շրջանի ստեղծագործություններ էին նաև ներսես Պարթևին և ոմն Ազադուն փիլիսոփային վերադրված «մարգարեությունները», որոնց համաձայն հալ ժողովուրդը հոռմեացիների կամ ֆրանկների օգնությամբ պիտի ազատվեր ստրկությունից:

Գրանցից առաջինը, այսպես կոչված ներսեսի «տեսիլը»¹, իբր թե դեռևս IV դարում նախատեսել էր, որ մի օր նեոսոգների ազգը, Վի մնացորդաց Իսմայիլեան ազգէ, ի ծնընդոց Հազարայ և ի զաւակէն Եղեմայ», նվաճելու և ստրկացնելու էր Հայաստանը և ամբողջ աշխարհը, իսկ թուրքական տիրապետության օրով հայերն հաժատում էին, որ այդ ցեատղները նույնինքն թուրքերն էին², որոնց նաև սովորաբար իսմայելացի կամ հազարացի անունն էին տալիս: Իսկ հայոց ապագայի մասին ներսես Պարթևն ասել էր, թե մի օր

(էջ 260—282)³ 1322 թվից Մանոթ ևն նաև նետեյալ օրինակները մինչև XVII դարը ներառյալ. № 539 (էջ 88ա), № 1878 (էջ 46բ), № 4135 (էջ 331ա), № 1920 (էջ 181ա), № 1868 (էջ 222բ), № 1869 (էջ 302), № 1326 (էջ 293բ), № 3078 (էջ 203ա), № 1325 (էջ 270ա), № 2748 (էջ 432), № 7014 (էջ 162ա), № 516 (էջ 8բ), № 1327 (էջ 316ա), № 1865 (էջ 71ա), № 3461 (էջ 87բ), № 1390 (էջ 318բ), № 1484 (էջ 209բ), № 1863 (էջ 415ա), № 3526 (էջ 190բ), № 3825 (էջ 209ա), № 2639 (էջ 135ա), № 1889 (էջ 369ա), № 1482 (էջ 243բ), № 2268 (էջ 14բ), № 1495 (էջ 2ա), № 1881 (էջ 121ա), № 3072 (էջ 326բ), № 4384 (էջ 165ա), № 7098 (էջ 280ա) և № 8365 (էջ 181ա):

¹ Ներսեսի մարգարեությունը մուծված է IX դարի մատենագիր Մեսրոպ Երեցի գրած ներսեսի կենսագրության մեջ, որը մեզ հասել է կրկու խմբագրությամբ: Առաջինը հրատարակված է Սովինթ Հայկական մատենաշարի 2 հատորում, «Պատմութիւն սրբոյն Ներսեսի Պարթևի Հայոց հայրապետի», Վենետիկ, 1853: Իսկ երկրորդը կազմում է Մեսրոպ Երեցի 1775 թ. Մազրատում հրատարակված «Պատմութիւն Յնացորդաց Հայոց և Վրաց»-ի երկրորդ մասը, «Յնագոս վարուց սրբոյ Մեծին Ներսեսի» Հայաստանեայց հայրապետին²:

² Այսպես, օրինակ, կարգապետ գրիչը 1542 թ. Քլավթի Սողոմ գլուղում մի ձեռագիր էր ընդօրինակել, ինչպես ինքն է ասում, Վի կայսերական բունակալութեան ազգին նետողաց, Սուլթան Սուլեյմանին, որ խոնարար ասի», տե՛ս F. C. Conybeare, «A Catalogue of the Armenian manuscripts in the British Museum», London, 1913, p. 34.

ֆրանկները պիտի զորանային, բնաջինջ անեին նետողների ազգին, և ամբողջ աշխարհում կարգը վերահաստատելով պիտի վերականգնեին նաև հայոց թագավորությունը: Համաժամոր էր կրավորական-սպասողական տրամադրությունների սնունդ սովող այդ մարգարեությունը հայոց մեջ և, ինչպես Դաշանց թուղթը, նույնպես և սա բազմաթիվ ընդօրինակություններով տարածված էր երկրի ամեն կողմերում³: Միքայել Ֆերուրը, որ մանրամասնորեն խոսում է նրա բովանդակության մասին, ասում է, թե այդ մարգարեությունը, որ ոտանավորի էին վերածել, հայերը նախանձախնդրությամբ իրարից անդիր էին սովորում և հուզմունքով արտասանում²:

¹ Ներսես Պարթևի կենսագրության բազմաթիվ օրինակներ կան Երևանի Պետական Մատենադարանի ձեռագրերում: Նրա առաջին խմբագրության նախադասյն օրինակն է № 5980 (էջ 14ա—122բ)՝ 1297 թվականից, իսկ մյուս ծանոթ օրինակները, մինչև XVII դարը ներառյալ, նետեյալներն են. № 581 (էջ 75բ), № 3429 (էջ 1ա), № 1665 (էջ 1ա), № 1770 (էջ 230ա), № 1732 (էջ 161բ), № 3072 (էջ 399ա), № 1731 (էջ 4ա), № 487 (էջ 145ա), № 5631 (էջ 250ա), № 1779 (էջ 195ա), № 7029 (էջ 1ա), № 702 (էջ 4ա), № 1784 (էջ 1ա), № 1976 (էջ 85ա), № 3069 (էջ 24բ), № 3520 (էջ 1ա), № 6047 (էջ 1ա), № 6632 (էջ 81բ) և № 8232 (էջ 2ա): Երկրորդ խմբագրության նախադասյն օրինակներն են. № 1912 (էջ 240ա—301բ)՝ 1320 թվականից, և № 1328 (էջ 178ա—241բ)՝ 1278 թվականից, իսկ մյուս ծանոթ օրինակները, մինչև XVII դարը ներառյալ, նետեյալներն են. № 5599 (էջ 178ա), № 1886 (էջ 58ա), № 5349 (էջ 277բ), № 8301 (էջ 13ա), № 3854 (էջ 222բ), № 4231 (էջ 85ա), № 2079 (էջ 251ա), № 1920 (էջ 194ա), № 7050 (էջ 83ա), № 2939 (էջ 245ա), № 1482 (էջ 247ա), № 1458 (էջ 193բ), № 4584 (էջ 167ա) և ուրիշներ:

² Michel Febvre, «L'Etat présent de la Turquie», p. 407—408. Մ. Ֆեբրըն այսպեղ նաև ասում է, որ ներսեսի մարգարեության ազդեցությունը շեղանակում էր ուրիշ մեծ անձնավորությունն էլ: Գարեթի է մասնել, թե զուցե խոսքը վերաբերում է ներսես Ենոքյանին, որն իբ Վղր Եղեսեյոյ չափածա աշխատության վերջում շարադրում է ֆրանկների ապագա արշավանքի հույսը արտացոլող տողեր՝ ըստ ներսես Պարթևի (տե՛ս Վղր Եղեսեյոյ, ասացեալ սրբոյ տեսուն Ներսեսի Ենոքյանայ Հայոց կաթողիկոսի», Փարիզ, 1827, էջ 83—87): Բայց պետք է նկատի ունենալ, որ Ենոքյանը տողերը ոչ մի ակնարկություն չեն պարունակում Հայաստանի մասին, այլ վերաբերում են միայն

Ո՛ր են առաջին իշխանքն՝
 Քաջ Մուշեղ և Գալլըն Վահան,
 Պատերազմին մեղ համար,
 Ի ազատեն զգերեալքն ամենայն:
 Վրիպեալ են հայրապետքն:
 Եւ ուխտիւք մըխիթարական՝
 Լինի ձեզ ազատութիւն
 Ի յագգէն այն արիական»¹:

Արդ, քաղաքական այն կողմնորոշումը, որն ընդգրկված էր այս շրջանում, ո՛չ թե ժամանակի հանգամանքների բերած անհրաժեշտությունն էր լուրի, այլև, միաժամանակ, արտահայտությունը հայերի մեջ դարերի ընթացքում կազմված դադախարական մի ձևավորման, որը տիրող էր XVII դարում, ինչպես երևում է և Կլեմենտ Գալանոսի մի վկայությունից, թե «Հայք հանապազ խնդիր պահանջեն ի Ծառնկացն ասելով, թէ ե՞րբ գայցեն Հոռվմայեցիքն առ ի վերկութիւն ազգիս և աշխարհիս մեքուլ»²:

Այսպիսով՝ դարապար լծի տակ հեծող արևմտահայտությունը XVII դարի կեսերին արդեն բավականին ուժ էր հավաքել ու որակ կազմել, և տրամադրված էր, առևտրական դասի ղեկավարությունը և բախտակից ժողովուրդների հետ գինակցարար, պայքարի դուրս գալու թուրքական թունակալ տիրապետության դեմ, նրա ստրկացնող շղթաները խորտակելու և ազգային վերածնության թվական բանալու իր պատմություն մեջ: Պետք է ընդգծել, որ արևմտահայոց այդ շարժումը ընդգրկել էր ժողովրդական զանգվածներին: Արևմտահայ վաճառականական ստվար դասը թեև զինվորական ուժ չունի իր ձեռքի տակ, ինչպես Արևելյան Հայաստանի մելիքները, բայց ժողովուրդը իսպառ անդեն չէր, մանավանդ լեռնային շրջաններում: Ազատագրական ծրագիրը հիմնված էր

լուրի ժողովրդական ապստամբության գաղափարի վրա, և այդ շարժման ու պայքարի հաջողության համար արտաքին օգնությունն ապահովելու նպատակով հայ վաճառականության ու հողերականության ներկայացուցիչները ջանքեր էին թափում Եվրոպայում, որտեղ խաչակրական շարժումներ էին ծրագրվում դեպի Արևելք: Հայ գործիչներն սկզբում իրենց հույսերը կապում էին Կրեաեի պատերազմի, իսկ հետո՝ Լուդովիկ XIV-ի հետ, ինչպես կտեսնենք հետագա գլուխներում:

¹ «Տաղ արարածոց, Կարապետ վարդապետի ասացեալ» (Դրատն. Ակինյան), Հանդէս Ամսօրեայ, 1937, էջ 337:

² Կլեմենտ Գալանոս, «Միարանութիւն Հայոց սուրբ նկեղեցւոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցւոյն Հոռմայ», հտ. Ա, էջ 59:

Գ Լ Ո Ւ Խ Ա .

ԱՐԵՎՄՏԱԶԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ԵՎ ՆՐԱ
ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ՝ ԱՐԵՎՄՏԱԶԱՅ
ԽՈՋԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտահայ բուրժուազիայի ծագումը.— Ներդասակարգային պայքարը արևմտահայ բուրժուազիայի մեջ XVII դարում.— Արևմտահայ բուրժուազիայի չլիբերական հատվածը կամ հայկական արիստոկրատիան.— Արևմտահայ բուրժուազիայի խոջայական հատվածը և նրա պայքարը չլիբերականի դեմ՝ արիստոկրատական իրավունքների համար.— Ղալաթիայի Ս. Փրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ պոլսահայ խոջայության միջնաբերդ.— Պայքարի սրումն ու ծավալումը դեպի գալաթացիները և հայ ժողովրդի տարբեր խավերի մեջ.— Գիմումները և միաձուլման Փիլիպպոս Աղբակեցի կարգիկոսին և նրա միջամտությունը 1652 թվականին.— Պայքարի նշանակությունը.— Հայ չլիբերության ուժի աղբյուրը.— Պայքարի ազետայի հետևանքները.— Խոջայության պարտությունն ու վտարումը հասարակական ասպարեզից և դժգոհության այլ պատճառներ, որոնք մղում են նրան բուրժուական տիրապետության դեմ քմբուսացման:

Հայկական հին նախարարական ազնվականության մնացորդները շատ ցանցառ էին Արևմտյան Հայաստանում և հետևաբար շատ սահմանափակ էր նրանց վիճակված հասարակական դերը XVII դարում: Արևմտահայության մեջ քաղաքականապես ամենահասուն և ամենազործուն դասակարգը բուրժուազիան էր:

Արևմտահայ բուրժուազիան XVII դարում ներքին սուր հակասությունների շրջան էր ապրում:

Օսմանյան կայսրության դեռ վաղ շրջանից, նրա սպանիչ լծի տակ, հայկական հին քաղաքաված ազատականության բեկորները, տեսնելով իրենց սաների տակ հայրենի ժառանգական հողերի արագ հարկերը, ապավինել էին շարժուն կապիտալին, որպես փրկության ապահով լաստի: Բայց այս նորածին բուրժուազիայի զարգացումը տարբեր հուններով էր զննացել. հանգելով հակասությունների: Մի մասը, դրամի ուժով, գալաթական ծանոթ փաշաների և պալատական բարձր պաշտոնեությունների հովանավորությունը ձեռք բերելով, կարողացել էր պահպանել հայկական զանգվածների վրա իր ունեցած ազդեցությունը, միաժամանակ դիրքեր ձեռք բերելով արքունական շրջապատում: Մյուսը կոչվում էին չլիբերներ¹: Բայց չլիբերների մեջ, բացի այս նախկին-ազատական տարրերից, կային և քաղաքային տարրեր, — արհեստավորական խավերից, — որոնք նույնպես գալաթական փաշաների միջոցով սուսը քաշվելով հասել էին մինչև արքունի արհեստագետության պաշտոններին: Չլիբերների գլխավոր ասպարեզը սարրաֆությունը կամ սեղանավորությունն էր: Նրանք զերազանցապես նվիրված էին բանկային գործառնությունների, ի սպաս օսմանյան պալատական պաշտոնեություն: Սա՛ չլիբերական կապիտալի էությունն էր: Զիշտ է, նրանք երբեմն խոշոր առևտրով էլ էին զբաղվում, սակայն գա տիրող կրե-

¹ Չլիբերն (چلبی) ազնվականական դույն ունեցող մի մակդեր էր, որը հին ժամանակ Թուրքիայում տրվում էր սուլթանագույն իշխաններին և բառացի նշանակում է «առավաճառու», «դիցազուր», Թուրքերեն չլիբ (چلب) «զիբ» բառից: Այս մակդերը կրել է և սուլթան Մամուդ I-ը (1413—1421 թթ.): Հետագայում այդ կրել են նաև արքայական որոշ շնորհների արժանացած մարզիկ և բարձր դասի ժողովրդականությունը, ինչպես օրինակ՝ բանաստեղծ Իսհակ Չլիբերին՝ կոչված և Ուսկուրի (մեռ. 1542 թ.), Աշրկ Չլիբերին, որ մահանումն էր ծանոթ հեղինակ Սեյիդ Մահմեդ-Ալիի (մեռ. 1571 թ.), Մուլլա Հասան Չլիբերին, մականվանյալ Կընալըզադե (մեռ. 1603 թ.), և ուրիշ շատեր: այնպես որ չլիբերը ինչու է. Գ. Մրմրյանը կարծում է, թե չլիբեր մակդերը ֆրանկություն է ենթադրում, տես Վասանական պատմություն հայ մեծատուններու», Կ. Պոլիս, 1909, էջ 25:

վույժ չէր: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ XVII դարի հայ շեկերինը հաջորդ դարի պոլսահայ ամիրաների նախահայրերը կամ նախատիպերն էին:

Իսկ հայկական նախկին ավատականության շատավիդների մյուս մասը միջազգային խոշոր առևտրի ոլորտների մեջ էր նեակվել գլխավորն և կապված էր համաշխարհային շուկաների հետ: Սրանք էլ կոչվում էին խոջաներ¹:

XVII դարի կեսերում շահերի աններդաշնակությունը աչքի էր ընկնում արևմտահայ բուրժուազիայի այս երկու հատվածների միջև, և նրանք սուր պայքարի մեջ էին իրար հետ, հատկապես 30-ական թվականներից սկսած:

Արհեստագետությունը ու սեղանավորությունը պինդ կապված օսմանյան արքունիքի և ավատական միջավայրի հետ՝ արևմտահայ բուրժուազիայի շեկերիական հատվածը XVII դարում արդեն որոշ չափով ազնվականական նկարագիր էր ընդունել և այլասերվել, քաջվելով դեպի հայկական պահպանողականության հետադիմական դիրքերը: Նա մեծ ազդեցություն ուներ մայրաքաղաքում ու գավառներում, մանավանդ մայրաքաղաքում, որը արևմտահայ հասարակական կյանքի կենտրոնն էր: Չեղբերները կազմում էին հայկական արիստոկրատիան², և, հենվելով արքունիքում իրենց ունեցած ազդեցություն վրա, նրանք իրենց ձեռքի մեջ էին առել հայ հասարակական կյանքի օրգանները: Նրանց իրավունքն էր ազ-

¹ Խոջա-ն պարսկերեն բառ է (خوجا): Նշանակում է «տեր», «իշխող», նաև «տանուտեր» և «հարուստ»: Այս վերջին իմաստներով Պարսկաստանում խոջա մակդիրը կրում էին մեծ տանուտերներն ու հարուստ վաճառականները: Նույն իմաստով անցել ու տարածվել էր նաև թուրքերի մոտ, և այստեղ հայերի մեջ խոջա էին կոչվում ոչ-միայն արևելահայ (չուղայեցի և այլն) վաճառականները, այլև տեղացի հայ վաճառականները:

² Ժամանակի հայ հայտնի շեկերներից էին ամթեցի Մաղաբեա Չեղբերին, Իսքենդեր Չեղբերին (Դիւան Լայոց Պատմութեան, զիբ Ժ, էջ 84: Ն. Գ. Մ ր մ ր յ ա ն, «Մասնական պատմութիւն հայ մեծատուններու», էջ 25), հայեցի Սանոս Չեղբերին (Գր. Կ ամ ա խ ե ց Ի, «Ժամանակագրութիւն», էջ 580: Հ ա կ ո ր Կ ար ն Ե ց Ի, «Տեղադիր Վերին շայոց», էջ 32), բուրսացի Անտոն Չեղբերին (Ա. Դ ավ ր թ Ե ց Ի,

գային-կեղեցական մեքենայի ղեկավարումը, հողոր-մշակութային խնդիրների անօրինումը, հայ ժողովրդի և օսմանյան պետության հարաբերությունների կարգավորումը և այլն: Իսկ բուրժուազիայի խոջայական հատվածը, որի ուժն ու ազդեցությունը ավելի մեծ էր գավառում, քան Կ. Պոլսում, մրցակից էր հանդիսանում շեկերիականին, աշխատելով հետզհետե տեղ գրավել ու ամրանալ մայրաքաղաքում¹, և ձգտելով ներթափանցել արիստոկրատիայի շարքերի մեջ: Կ. Պոլսում, որտեղ նրանց կենտրոնն էր Սոջա-խանը², 50-ական թվականներին հայաբնակ վեց թաղերից Ղալաթիայի առևտրական թաղամասը նրանց իշխանություն տակ էր իր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիով. 1654 թվականին «այնմ գահին», այսինքն՝ Ա. Լուսավորչի, մեծաշուք իշխաններն ու երեսփոխաններն էին Սոջա Դանիելը, Սոջա Մկրտիչը, Սոջա Սողոմոնը, Սոջա Քրիստոսուրը, Սոջա Եղորտարը, Սոջա Մուրատը և Սոջա Եղիան³:

¹ Պատմութիւն», էջ 338), Ապրո Չեղբերին (Ղ. Ա յ ի շ ա ն, «Հայ-Վենետիկ», էջ 178), տրապիզոնցի Շահին Չեղբերին (Երեմիա Չեղբերի, «Ստամբուլի պատմութիւն», Վիեննա, 1913—32, էջ 534—536 և 340. Revue des Etudes Arméniennes, t. II, 1922, p. 59—60).

² Կ. Պոլսում երեկել խոջաներից հիշվում էին Բուրոյի Սոջա Առավածատուրը, ակնեցի Սոջա Վահրատը, տիվրիկցի Մահաեսի Վահրատը, Մահաեսի Կարապետը, Մահաեսի Աղազարը, ակնեցի Մահաեսի Բուլաֆը, Սոջա Կիրակոսը, Բակաջի Մահաեսի Ղաղարը, Քիրաջի Սոջա Հովհաննեսը, Սոջա Պարոնյուսը, Սոջա Փամբուխը, Սոջա Նահապետը (Բաճաւեր, 1602, էջ 223: Հ մ մ, նաև Ն. Գ. Մ ր մ ր յ ա ն, «Մասնական պատմութիւն հայ մեծատուններու», էջ 27), երզնկացի Սոջա Հովսեփը և որդիք՝ Սոջա Հովհաննեսը (Գր. Կ ամ ա խ ե ց Ի, «Ժամանակագրութիւն», էջ 261), վանեցի Սոջա Ռուհիջանը (Ա. Դ ավ ր թ Ե ց Ի, «Պատմութիւն», էջ 242—245 և 493) և այլն:

³ Սոջա-խանի մասին Գր. Կ ամ ա խ ե ց Ի ն ասում է, թե «ամենայն վաճառականը հայերը շատը կան անդ յամենայն աշխարհաց», տե՛ս «Ժամանակագրութիւն», էջ 168—169:

Սոջա-խանը, որ 1660 թվականին Կ. Պոլսի մեծ հրդեհին այրվեց, կիսաքանդ վիճակում գոյություն ունի և այժմ, բյուզանդական հին շենք է, Լայսատանի Կոչնակ, 1927, էջ 845:

⁴ Բ. Կ յ ու լ Ե ս Ե ր յ ա ն, «Յովհաննէս Կոլոս պատրիարք», Վիեննա, 1904, էջ 120:

Խոջաներն առավել կամ նվազ չափով միջամուխ էին լինում նոս և յուս թաղամասերի գործերին և որոշ ազդեցութիւնն ի գործ դնում հասարակական խնդիրներն վրա:

Այսպիսով խոջաները լուրջ մրցակիցներ էին դարձել իրենց բնիկ համարող չեղերներին: Բայց վերջիններս չէին ուզում տեղի տալ և այստեղից ծալր էր առել տարիներ տեղով մի խոջոր պալքար պոլսահայ «ժողովրդականներն» (ժողովրդի երեւելիներն) կամ իշխանավորներն միջև:

Առաքել Դավրիժեցին մեզ պատմում է, թե չեղերներն ինչպէս էին համառում դռները պինդ փակված պահել խոջաների առջ:

Եւ ժողովրդականացն որք բնիկ բնական տեղացիք էին ի քաղաքէն Կոստանդնուպոլսէ, բարձրամիտ, բարձրալօն պոնծանօք հարստահարեալ թեւ ամէին ի վերայ եկամուտ ժողովրդոցն, և իբրև զգոհիկ ի շմարդի ունէին զնոսա: Եւ դամենայն իշխանական իրակութիւնս, զգործս և զբանս ի ձեռս իւրեանց գրաւեալ ունէին և գործէին. և զեկամուտսն ի լաց քեցեալ անհաղորդս պահէին»¹:

Սակայն խոջաներն անհաշտ կոխի էին հալտարարել այս դրութիւնն զեւ, մի կատաղի պալքար, որը, քանի դնացել, խորացել էր.

«Վասն որոյ և նոքա (խոջաները) հոգով չափ վշտանալին ընդ քամահանս իւրեանց, և հանապազ խոցոտիչ և ատելութեան բանիւ զիմագրաւ լեալ ընդ միմեանս մաքառէին, և հաստատեալ արձանացեալ էր խոտութիւնն ի մէջ նոցա անհաշտ և արեամբ չափ ատելութեամբ»²:

Բուրժուազիայի այս ներքին հակամարտութիւնն չարազեւտ հետեանքները, որոնք զլիսավորապէս ազգային պարտքերի նշանակալի և անհամեմատելի արձամբ էին արտահայտվում, ա՛յնքան զգալի դարձան, որ ներդասակարգային այս պալքարը հալիական կյանքում վերածվեց հասարակական խոտութիւնների:

¹ Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 334:

² Անդ:

Պատմադիրը կենդանի գուշներով նկարագրում է, թե ի՛նչպէս բարձրացավ խոտութիւնների ալիքը մայրաքաղաքում.

«Եւ յայսմ պատահաւ լցաւ խոտութեամբ մեծաւ ի քաղաքն Կոստանդնուպոլիս, և իբրև զխոտեալ ծով անդնդալուտոյտ յատակաւն, լեռնանման կոհակաւ՝ շարժամբ՝ շաչմամբ՝ շառաչմամբ՝ և բարձրածայն գոչմամբ. և իբրև գորտառն կաթընկէց և հրացան ամպոց գողացուցանէր դամենայն մտեղիս»³:

Իսկ այսքան հուզմունք, այսքան ալիկոծութիւնն էր կարող անշուշտ պարփակվել սուլթանական մայրաքաղաքում: Հասարակական նշանակութիւնն ունեցող այս խնդիրները հուզում էին ամբողջ հայութիւնը: Եվ ահա, թե ի՛նչպէս էին խոտութիւնները ծավալվել դեպի գալականները.

«Եւ համբաւ խոտութեանս այսմիկ ծաւալեալ տարածեցաւ լամենայն քաղաքս և ի գիւղս, ընդ արեւելս և ընդ արեւմուտս, և ամենայն ոք զայն ի բերան առեալ խօսէր»⁴:

Բուրժուազիայի ներսում ծագած խոտութիւններն, ուրիմն, հորդել էին զեպի դուրս և վարակել հալ ժողովրդի լայն խավիրին, զլիսավորապէս, ինչպէս ասացինք, պարտքերի պատահաւով: Արեւմտահայ ազգային կյանքի համակարգը Կ. Պոլսի պատրիարքութիւնն հետ էր կապված, իսկ պոլսահայ «ժողովրդականներն» հիշյալ երկու թեւերը, աշխատելով իրենց թեկնածուներին նստեցնել պատրիարքական աթոռին, այդ աթոռի վեղերներին և ուրիշ թուրք մեծամեծների կաշառտրված հսկայական գումարները որպէս պարտք Կ. Պոլսի եկեղեցիներին վրա էին արձանագրում, ի հաշիվ ժողովրդի. և ո՛չ միայն այս, այլև ուրիշ՝ իրենց ներքին կոիվներէ առիթով տրված կաշառներն էլ էին ավելացնում նրանց վրա, ազգային պարտքերի բեռներ զիգելով⁵: Այս պատճառով բազմաթիվ դիմումներ էին ուղղվել Էջմիածնի Փիլիպպոս Աղբակեցի

³ Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 336:

⁴ Անդ:

⁵ Անդ, էջ 335—336:

կաթողիկոսին, որպես Հայկական Եկեղեցու գերագույն պետին, նրա հեղինակավոր միջամտությունը խնդրելով, ինչպես ասում է պատմագիրը շարունակության մեջ.

«Եւ ի պատճառս այսմիկ բազում անգամ արք երեկելք և անուանիք, երիցունք և երեցփոխանք և այլք ի Կոստանդնուպոլսէ ելեալք երկարածից ճանապարհաւ եկին ի սուրբ աթոռն էջմիածին առ կաթողիկոսն, առ ի հնարել ինչ վասն բառնալոյ խոսվութեանցն և վճարելոյ պարտուցն: Եւ կաթողիկոսն լամենալն զօրութենէ ջան եղեալ հնարէր, երբեմն թղթով, և երբեմն մարդ ուղարկելով, և այլ կերպիւ հնարս հնարելով, և ոչ եղև խաղաղութիւն խոսվութեանց ժողովրդեանն»¹:

Փիլիպպոս Աղբակեցին այս ապարդիւուն ջանքերից հետո 1652 թվականին անձամբ Կ. Պոլիս էր գնացել՝ հաշտեցնելու համար իշխանավորներին և, այսպես կոչված, «Ենթակցի-դրսեցի»-ի այդ վեճը² նրանց միջև վերացնելու համար:

«Իսկ ի դալ կաթողիկոսին Փիլիպպոսի անդ,— շարունակում է Առաքել Դավրիժեցին,— և ալնպէս տեսանել զնոսա, կարևոր քան զամենայն գործոց իւրոց՝ վասն նորին տարաւ հոգս. ի բազում աւուրս բազմազան կերպիւ, երբեմն հասարակ, և երբեմն առանձին առանձին խրատելով և ուսուցանելով, զամենեցուն զսիրտս և զկամս շահեալ էած ի հաւանութիւն բանից իւրոց, և հաշտեցուցեալ արար միարան զնոսա, համապատիւ եղբարս լինիլ, և զամենայն զգործս և զբանս ի միասին հոգալ և կատարել»³:

¹ Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 336: Պոլսահայ երեկելիներից կազմված այդպիսի մի պատվիրակության էջմիածին գնալը հիշատակվում է, օրինակ, 1647 թ. առև Ն. Գ. Մրժբյան, «Հին օրեր ու այդ օրերուն հայ մեծատունները, 1550—1870», Վենետիկ, 1901, էջ 13:

² Կաթողիկոսն իշխանավորներից խնդրում էր, «որ ի քաղաքիս մէջն ներսեցի և դրսեցի շասէք ժողովրդականքդ», տե՛ս Երեմիա Չելեբի, «Օրագրութիւն», էջ 37:

³ Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 334—335:

Իհարկե սրանով չէր կարող վերջանալ այդ կատարել կոչվել: Արեւմտահայ խոշալութեան հիմնական ձգտումն էր՝ ձուլել չեկերիական-վաշխառուական կապիտալը առևարականի հետ և ստեղծել հասարակական մի հսկա ուժ, որը դուցե կարող լիներ հեղաշրջող դեր կատարել դեռևս միջնադարյան խափարի մեջ թարթափող և օսմանյան զինվորական ավատատիրութեան կրնկի տակ հեծող հայութեան կյանքում:

Սակայն հայ չեկերիութեան հետ չափվելը դյուրին չէր: Նա վաշխառուական կապիտալի ուժով իր՝ տրամադրութեան տակ ուներ օսմանյան պետական պաշտոնեությունը, սկսած վեզիրներից: Խոսելով, օրինակ, XVIII դարի հայ սեղանավորների և թուրք կուսակալ փաշաների փոխհարաբերությունների մասին, Լեոն գրում է.

«Արդեն հիշատակեցինք, որ նահանգների կառավարիչ նշանակվող փաշաները կաշառ տալու համար փող վերցնում էին հայ սառաֆներից: Այժմ ասինք, որ փաշան այն պաշտոնը ստանալու համար պիտի ունենար սեղանավոր հալի հաճութունը, առանց դրան թուրք կառավարությունը չէր հավատա փաշային... Արդ՝ մինչև որ հայ սառաֆը չասեր, թե ինքը երաշխավոր է, որ այդ հարկերն ու տուրքերը ողջամբ և անփասս կհասնեն կառավարության ձեռքը, ոչ ոք չէր կարող վստահություն արժանացնել փաշային: Այսպիսով, պաշտոնյան ստով ձեռքով վաշխառուի կամքին էր հպատակեցվում: Դրամի հաճութունն ու երաշխավորությունը փաշան ձեռք էր բերում շատ թանկ գնով, հանձն առնելով վճարել սեղանավորին նրա պահանջած բարձր տոկոսները: Միանգամից ընկնելով այդ գրութեան մեջ, այնուհետև դրամատիրոջ ճարպիկությունն ու տաղանդին էր մնում իր ցանցերի մեջ փաթաթել իր պարտականին մինչև նրան կատարելապես իր ձեռքն առնելը, նրա բոլոր անտեսական գործերին տեղ դառնալը: Այս բոլորը՝ հլուժները դուրս ծծելու մի բարդ ու նուրբ սիստեմ էր, որի շատ մանրամասնությունները հայտնի են մեզ եվրոպական հեղինակների նկարագրություններից»¹:

¹ Լեոն, «Հայոց պատմութիւն», նորագույն շրջան, մասն Ա, Երևան, Պետական Համալսարանի ապակետիպ, 1920, էջ 53:

Այս էր և XVII դարի հալ վաշխաւուների դիրքը:

Արդ, որովհետեւ չեւերիական կապիտալի գործունեութեան զլիսավոր ասպարեզը փաշայական ու արքունի միջավայրն էր և, հետեւաբար, չեւերիների շահերը սերտորեն կապված էին թուրք բյուրոկրատիայի հետ, այդ պատճառով ընդդիմութիւնն ու պայքարը կատաղի բնույթ էին ստացել՝ հրակայական աղետների հասնելով: շատ-շատերը չարաչար սուժել էին. ոմանք տնանկացել էին՝ կորցնելով ամեն ինչ. ոմանք բանտերում էին մահացել, քանի որ թուրքական պետութեան բիրտ միջամտութիւնը կար այս գործի մեջ. իսկ ոմանք էլ դարձել էին վտարանդի՝ ցմահ պանդխտութեան դատապարտվելով:

«Եւ լայսմ պատճառէ,— շարունակում է Առաքել Դավրիժեցին,— ժողովրդականաց քաղաքին բազմաց եղև վիշտ և վաւանգ և վիսաս, դի ոմանք եղին տնանկք և աղքատք, գրրկեալք լընչից և լապրանաց, ի տանց և ի հայրենիաց, և ոմանք ի բանաս և ի կալանս մեռան. և ոմանք վտարական լեալ՝ ի հեռաւոր քաղաքս նժդեհութեամբ շրջէին, հեռացեալք չընտանեաց և ի ծանօթից, և ախպէս դաւուրս կենաց վճարէին»¹:

Սակայն այս բոլորի մեջ հաղթանակն իհարկեւ մնացել էր պահպանողական հատվածին՝ չեւերիներին, որոնք շատ ավելի կշիռ ունեին Բարձրագույն Դռան սլորտում²:

¹ Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 336:

² Լեւոն սխալ է հասկացել այս պայքարի բնույթը, նրա մեջ տեսնելով պոլսահայ բնիկութեան արեւմտարեւելքը դեպի զավառացի պանդուխտ աշխատավորութիւնը, և սոցիալական անհաշտութեան արտահայտութիւնը՝ պոլսահայ ունեւորութեան ու զավառահայ պրոլետարիատի միջև, տե՛ս «Շալոյց պատմութիւն», նորագույն շրջան, մասն Ա, էջ 88:

Լեւոն մոտ այս շփոթութիւնն առաջ է եկել այն բանից, որ նա չի կարողացել զանազանել ժողովրդական և ժողովուրդ բառերի իմաստը, մինչդեռ նրանք որոշակի տարբերում են մեր պատմչի մոտ: Այսպէս՝ կաթողիկոսը հանրային պարտքերը մաքրելու համար առաջիններին, ինչպէս հարկն էր, անձամբ էր դիմում՝ առանձին-առանձին, «ժողովրդ»

Առաքել Դավրիժեցին, որ էջմիածնի միաբան էր և ձեռնասուն աշակերտը Փիլիպպոս կաթողիկոսի, որի հրամանով գրել էր իր «Պատմութիւն»-ը, բացահայտորեն չի ասում, թե ո՞ր կողմն էր եղել տուժողը կամ պարտավորը, չուզելով կողմերից որևէ մեկին վերավորել՝ ըստ իր ուսուցչի քաղաքականութեան, և թողնում է կարծել, թե երկու կողմերը հավասարապէս տուժել էին: Բայց հայտնի է, որ ժողովրդականներից (իշխանավորներից) հետավոր քաղաքներում (արտասահմանում) ճճճներով շրջողներն ազատամիտ խոջաներն էին: Այդպիսի չեւերիների մենք չենք պատահում որևէ տեղ¹:

զականացն ամենեցուն՝ իւրաքանչիւր ուժեք ըստ իւրում կարողութեան հրամայէր օգնական լինել առ ի վճարել պարտանք: մինչ՝ այդ նպատակով ժողովուրդի լուսմաները հալաքելու հոգսը նա հանձնել էր հոգաբարձուներին, շուրջ բազում զանիւ և աշխատութեամբ ժողովեցին զնուէրս ժողովրդեանն, տե՛ս Ա. Դ. Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 336—337:

¹ Չեւերի և խոջա մակդիրների գործածութիւնը թեև որոշակի կատեգորիաներ էր ցույց տալիս աքեմենական բուժուսդիայի մեջ, բայց չեւերիւրյանը, որպէս մայրաքաղաքի արեստոկրատիային հատուկ մակդիր, դիրք ու պատիվ, կարծես սրոշ գրավչութիւն էր ներկայացնում, և այդ պատճառով խոջաները սերում էին հաճախ չեւերի ախտորոշի փառավորվել, իրականում մեայով միշտ նույն վաճառական-խոջաները: Այդպիսիներից էին, օրինակ, 1646 թվականին Լիվոնոյի հայ խոջաներից կեսաբացի Յոջա Հայսայիի որդի Բայրամ Չեւերին, գաղտնացի Յոջա Բայրամչահի որդի Հակոբ Չեւերին և կեսաբացի Յոջա Քովմայի որդի Սիմոն Չեւերին (Մ. Ուզուրյան, «Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան կենդեցոյ նոցա ի Լիւոնոյ բազմաթիւ», Վենետիկ, 1891, էջ 50): Այսպիսիներից էին զարձայ աղիցի Յոջա Երեմիայի որդի Մաղաքիա Չեւերին (Երեմիա Չեւերի, «Ստամբուլոյ պատմութիւն», էջ 51), վանեցի Յաննեց Յոջա Թումայի որդի Մաքիա Չեւերին (Առ. Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 513): Նաև Յոջա Սանոսի որդի և Յոջա Պետիկի կորորոզի Պետրոս Չեւերին (Պար. Սրվանձայանց, «Թորոս աղբար», մասն Բ, էջ 440: Հանդէս Ամսօրեայ, 1934, էջ 324), հայեպցի Յոջա Մարտինի որդիներ Պեկի Չեւերին ու Պեկար Չեւերին, և թոռները՝ Եղիա և Հակոբ Չեւերիներ (Հանդէս Ամսօրեայ):

Այսպիսի խոջա-չեւերիներին կարելի է անվանել նոր-չեւերիներ:

Առաջել Դավրիժեցիին որոշապես ճշտում է նաև արևմուտահայ բուրժուազիայի այս ներդասակարգային պաշարի սկզբնավորութիւնն ժամանակը շիշլալ խոտվութիւնների տեղութիւն մասին խոսելով նա ասում է, թէ

«Յամոս ութ և տասն երկարեցաւ այս գործ գառնութեան, մինչև գնաց անդ (Կ. Պոլիս) ծառայն աստուծոյ տէր Փիլիպպոս կաթողիկոսն»¹:

Փիլիպպոս կաթողիկոսը 1652 թվականին էր գնացել Կ. Պոլիս. ուրեմն նշանակում է՝ խոտվութիւնների սկիզբը մոտավորապես 1634 թվականին է լինում և զուգադիպում է նրա գահակալմանը²:

Հետաքրքրական է Դավիթ Բաղիշեցու այն վկայութիւնը, որի համաձայն երկպառակութիւնն ծագումը կապվում է նախնինքն Փիլիպպոսի ընտրութիւն հետ:

«Եւ լառաջին ամին Փիլիպպոսի կաթողիկոսի, — գրում է նա, — հակառակ կացին ոմանք սուրբ Էջմիածնալ աթոռոյն. զի կամէին զՀոռոմոց տուն անշատել ի գրկաց մօրն լուսոյ՝ անշատեցան և ինքեանք ի փառաց լուսոյ նորա. զի ոմանք լանկարծամահ եղին, և ոմանց լեզուք տրորեցան, ոմանք ի հաւատոց ընդ մէջ կտրեցան, և մեք ազատեցաք ի թիւնից նոցա...»³:

Այսպիսով՝ Դավիթ Բաղիշեցու վկայութիւնն էր երևում է նաև, որ այդ խոտվութիւնները միաժամանակ Էջմիածնի աթոռի հանդեպ եկեղեցական անջատողական շարժման բնույթ էին կրում, մի երևույթ, որը հանդես էր եկել նաև Փիլիպպոսի նախորդի՝ Մովսէս Տաթևացու ընտրութիւնն առիթով 1629

¹ Առաջել Դավրիժեցիի, «Պատմութիւն», էջ 336:

² Փիլիպպոս Ազրակեցին Էջմիածնի կաթողիկոս է ընտրվել 1633 թ. մայիսի 21-ին և օծվել է 1634 թ. հունվարի 13-ին. տես ն. Ակինյանի հաշվուցները, Հանդէս Ամսօրեայ, 1933, էջ 208—209:

³ «Դավիթ բանասիրի Բաղիշեցոյ ծաղկաբաղ արարեալ ի բազում պատմագրաց զազգն Յաբեթի և սուղ ինչ զՍեմայ և զԳամայ, ըստուղ գտակաւ բազում աշխատութեամբ, ընդրելով զլուսն և զգիտանին», Երևանի Պետական Մատենադարանի ձեռագիր № 7589, էջ 38ա:

թվականին՝ ժամանակավորապես հանգելով Թուրքիայի հպատակ հայերի անջատմանն Էջմիածնի իրավասութիւնին⁴:

Կանգ առնելով արևմտահայ խոջայութիւնն վրա, հարկ է նկատել, որ նրա կրած հարվածն անշուշտ վճռական դեր պիտի ունենար նրա մարտական տրամադրութիւնների սրման մեջ, որովհետև պետք է հաշվի առնել, որ, առանց այն էլ, արգեն նա դժգոհ տարր էր զինվորա-ավատական Թուրքիայի խեղճող իրականութիւնն մեջ:

Տիրոջ կարգերն ուժեղ կերպով արգելակում էին հայկական բուրժուազիայի զարգացումը, հատկապես առևտրական բուրժուազիայի, որին անհրաժեշտ էր առևտրական ճանապարհների ապահովութիւնն և ամեն կարգի բնութիւնների ու կեղեքումների վերացում. մինչդեռ նա չունէր ո՛չ մեկը և ո՛չ մյուսը: Օրինակ՝ հաճախ էր պատահում, որ մի ո՛րեւէ դժգոհ բեզի կամ ազայի մարդկանցից մի քանի հարյուր հոգի անառանքն ու լիոնները քաշվելով հարձակվում էին կարավանների և ուղևորների վրա⁵: Այս կամ այն ապստամբ փաշան իրեն նյութական միջոցներ ապահովելու համար իր սահմաններից անցնող առևտրական կարավաններն էր թալանում⁶: Կուսակալներն արդեն ընդհանրապես միաբանելով ավազակների հետ, թույլ էին տալիս կարավաններ կողոպտել մեծ ճանապարհների վրա, ավարը կիսելու պայմանով, իսկ փոքր կողոպտումներից որոշ տուրք գանձելով⁷: Նրանք նաև հաճախ կշիռներն ու չափերն էին փոխում՝ կամայակաճորեն մեծացրելով կամ փոքրացնելով, և նորերը կնքել ու կիրառել տալու պատրվակով խոշոր գումարներ էին կորցում վաճառա-

⁴ Մ. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, Կ. Պոլիս, 1914, § 1655:

⁵ Ricaut «Histoire de l'état present de l'Empire Ottoman», p. 219.

⁶ Առաջել Դավրիժեցիի, «Պատմութիւն», էջ 573:

⁷ Michel Fevre, «L'Etat present de la Turquie», p. 159—160.

կաններէց, ինչպես և արհեստավորներէց¹: Նույնպիսի շահադիտական նպատակով նրանք երբեմն տեղական գրամներ էին կտրում իրենց սեփական կնիքով²: Քրիստոնյա և հրեա վաճառականներին նրանց ուղևորութիւններին ընթացքում անցած ամեն մի քաղաքում խարաջ էին վճարել տալիս, մինչդեռ օրենքով տարեկան մի անգամ և միայն մի տեղում պէտք է վճարվեր արդ³: Հաճախ դերեղմաններէց գիական հանելով և անճանաչելի գարձներու համար գլուխը կտրելուց հետո մի որեւէ հարուստի դուռն առաջ նետելով նրանից մեծագումար սուգանք էին պահանջում իբր «արջան դին», որպէս թե նրա տան առաջ սպանված լինելը⁴: Եվ վերջապես գինավորականութիւնը, որ երկրի արտոնյալ և իրանպէս ախրող դասն էր, իր բարբարոսական և կեղեքողական շահատակութիւններին մեղ ո՛չ մի տարբերութիւնն չէր դնում «ամիկի և Վեժմամեծներին» միջև Գրիգոր Կամախեցին պատմում է, օրինակ, որ ենիչե-րինները նարինի շրջաններում «առնէին սճրագործութիւնս և անիրաւութիւնս գրկանաց. լափշտակէին, կեղեքէին և որ սակաւ մի ընդդէմ դառնայր, սպաննէին և զտունքն կոխել ջանային, ոչ թէ զոսմկացն միայն, այլ զմեծամեծացն ևս»⁵: Բնութիւններն սարսափից ոչ ոք չէր համարձակվում ունեւոր երևալ, կամ շքեղ աներ ունենալ, կամ գեղեցիկ պարտեզներ և կամ զբոսավայրեր. պատահում էր, որ չէին հա-

մարձակվում նույնիսկ չուխա հագնել, վախենալով ծանր սուրքերից¹:

Այսպիսով, հայ խոշան զգալի չափով բաժնեկից էր հայ ժողովրդի դառն ճակատագրին սուլթանական բռնակալ կարգերի տակ, մինչպես հայ չեղբիութիւնը, գլխավորապես մալբաքաղաքում ապրելով, համեմատական ապահովութիւն էր վայելում:

Այժմ, ուրեմն, եթե հայ խոշալութիւնն այս արդեն իսկ անտանելի դրութիւն վրա ավելացնենք նաև ազգային հասարակական սոսպարեղում նրա կրած ծանր հարվածն ու հալածանքը, մենք կտեսնենք, թե ի՞նչպէս հանձին նրա թուրքական ավատատիրութիւնն ճնշող միջավայրի դեմ գլուխ է բարձրացնում հայ բուրժուազիան՝ ազգային ապստաղրական պայքարի ուղիներ որոնելով:

¹ Michel Febvre, „L'Etat présent de la Turquie“, p. 166—167.

¹ Michel Febvre, „L'Etat présent de la Turquie“, p. 161.

² Օրինակ՝ Վանի Օմար փաշան 1683 թվականին «հրամայեաց պլիկ կտրել պղնձէ. և սահմանեաց զգրամն տաղմայ գարնել», Գիւան Հայոց Պատմութեան, գիրք Ժ, էջ 108:

³ Michel Febvre, „L'Etat présent de la Turquie“, p. 154.

XVII դարի մի ուրիշ հեղինակի վկայութիւնը ոչ-մահմեդական վաճառականները խարաջ էին վճարում ամեն մի նահանգում. Pevliet, „Nouvelles relations du Levant“, partie II, Paris, Louis Billaine, 1668, p. 56.

⁴ Michel Febvre, „L'Etat présent de la Turquie“, p. 151.

⁵ Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 212—

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԽՈՁԱՅՈՒԹՅԱՆ ՓՈՒՆՎԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ ԵՎ
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտահայ խոջայության փոխհարաբերությունների նշանակությունը.— Երկպառակությունը հոգևորականության մեջ. էջմիածինը և Մխար.— Կ. Պոլիսը որպես բառերաբեմ Միս-էջմիածնական պայքարի.— «Պատրիարքական կոիվները» որպես զրոհումն արևմտահայ բուրժուազիայի ներդաստակարգային պայքարի.— Բուրժուա-կղերական երկու հակառակները՝ խոջայական-սասկան և չելեբիական-էջմիածնական.— Սասկանությունը՝ գաղափարախոսական դպրոց և վերանորոգչական շարժում.— Սասկանությունը արևմտահայ ազատագրության գրոշի տակ.— Խաչատուր Գաղասացին՝ սասկանության նշանավոր ներկայացուցիչ.— Նրա հասարակական գործունեությունը և հարաբերությունները Արևմուտքի հետ.— Եղիազար Այնրապետի.— Եղիազարյան շարժումը որպես մի օղակը հակա-էջմիածնական շարժման, զուգորդված աբեմտահայ խոջայության հասարակական պայքարին.— Արևմտահայ խոջայության դիրքը ժողովրդական և ազգային կարիքների հանդեպ. Խոջա Ալիսան ու Խոջա Խաչատուրը, ամդեցի Մաղաթիան.— Խոջայության և գանգվածների փոխհարաբերությունների բնույթը.— Արևմտահայ խոջայության նոր ուղեգիծը և Հայաստանի ազատագրման գաղափարի ու ծրագրի առաջաշումը.— Արևմտահայ ազատագրական շարժման տեղը հայ ազատագրական ընդհանուր շարժման մեջ:

Արևմտահայ ազատագրական շարժման մասին խոսելիս անհրաժեշտ է խոսել նաև հայ առևտրական բուրժուազիայի փոխհարաբերությունների մասին՝ հասարակական մյուս խա-

վերի հետ: Հարկ է պարզաբանել նրա ունեցած կապերը նախ հայ հոգևորականության, ապա՝ ժողովրդի հետ, որպեսզի հնարավոր լինի պատկերացնել, թե ինչպիսի՛ հանգամանքներ էին նպաստում արևմտահայ խոջայությունը՝ ազգային ազատագրական շարժման զուլս կանգնելու:

XVII դարում բուրժուազիայից հետո արևմտահայ իրականություն մեջ տիրական դիրք ունեցող դասը հոգևորականությունն էր, հեռևաբար՝ նրան ևս վիճակված էր դեր ունենալ մեզ զբաղեցնող շարժման մեջ:

Ինչպես բուրժուազիայի, այնպես և հոգևորականության շարքերում տիրում էր հատվածական ուժեղ պալքար:

Պատահական սկիզբը շատ հին էր եկեղեցու մեջ, բայց XVII դարում այն զրոհորվեց ավելի ցայտուն կերպով: Մի կողմում կանգնած էր պատմական էջմիածինը, Հախիական եկեղեցու ինքնուրույնություն, նրա զավանանքի և հնամենի ավանգուծությունների պաշտպանության դիրքերի վրա, իսկ մյուս կողմում՝ Մխար, Արևմուտքի ազգեցություն այս վաղեմի հենարանը, որ անհաշռելի պալքարի մեջ էր մտել էջմիածնի հետ այն օրվանից, երբ «Ամենայն Հայոց Կաթողիկոսություն» աթոռը այնտեղ էր տեղափոխվել (1441 թ.), և այդ պալքարի մեջ նա ուղղակի կամ անուղղակի միջնաբերդ էր գարծել մարտնչող հոռմեականություն:

Միս-էջմիածնական պալքարի գլխավոր թատերաբեմը Կ. Պոլիսն էր, որը կենտրոնն էր արևմտահայ հասարակական կյանքի: Հայ իրականությունը և հատկապես պոլսահայությունը հուզող, այսպես կոչված, «պատրիարքական կոիվներ» ուսումնասիրությունը այդ պալքարի ելեկենտրոն էր ցույց տալիս: Պատրիարքական աթոռի համար այս կամ այն թեկնածուի գահակալությունը կամ տապալումը, որ այնքան հաճախագեղ էր մանավանդ XVII դարում, սասկան և էջմիածնական հոսանքների փոխնիփոխ հաղթանակումը կամ պարտությունն էր նշում:

Սակայն այդ պալքարը լոկ զավանական-գաղափարական տեսությունների վրա չէր հենվում: Այդ պալքարի մեջ առա-

վելապետս դրսևորվում էին արևմտահայ բուրժուազիայի ներքին այնպիսի վիճակները, նրա ներսում գոյացած ներհակ ուժերի միջև տիրող շեշտված հատվածականությունը:

Ժամանակակից Առաքել Դավրիժեցու վկայությունը Կ. Պոլսի պատրիարքները ազդեցիկ խմբակների շահերը ներկայացնող անհաաներ էին: Ահա թե ի՞նչ է գրում նա այդ մասին.

«Սաղմասէրքն և խոռվարարքն ի ժողովրդականաց (իշխանավորներից), որք վասն փառասիրութեան և վասն նախանձու և վասն մարմնաւոր շահուց ակնկալութեան գումարտակ լինէին ոմանք ի վերայ այսմ առաջնորդի և ոմանք այնմ առաջնորդի, և սուտակասպաս արբանեակք և գորավիզք լինէին նոցա, և առաջ գնացեալ առ զավթարդար և առ վէպիր և առ թաղաւորն, տալին կաշառս լուովս նոցա և վանէին զախոյեանն, և առնուին զիշխանութիւնս սոսկ անուն պատրիարկութեան և առաջնորդութեան»:

Այսպիսով պատրիարքներն այս շրջանում ուրիշ բան չէին, եթե ոչ հայ քաղաքական հակամարտ հոսանքների կողմից հրապարակ քաշված խամաճիկներ¹:

¹ Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 335.

² Պատմագրութեան մեջ տակավին չի լուսարանված Կ. Պոլսի պատրիարքական կոնֆլիկտի հարցը, չի տրված երևույթների բանավոր մեկնարանությունը: Օրինակ՝ Գր. Գալեմբյարյանը գրում է. «Կ. Պոլսոյ եօթներորդ պատրիարք Ստեփանոս Վ-ի 1550—1561) մահուանէն ետև, սոյն աթոռը ձեռքէ ձեռք սկսան յափշտակել եկեղեցականներ, որոնց յետոյ ընկերացան նաև աշխարհականներ: Ասիկա տեկց իբրև այլ ևս հաստատեալ սովորութիւն մը՝ մինչև 1715 զրեթէ անընդհատ, և նոյն տարին Յովհ. Կոլոտի պատրիարքութեամբ իր կողմն ու սաստկութիւնը կորնցուց: Այս մրցման սկզբնապատճառներն էին Սոյոյ, Էջմիածնի, Երուսաղեմի աթոռներէն հեացուցուած կաթողիկոսներ ու պատրիարքներ, և Էջմիածնի գրամահաւաք նուիրակներ, որոնց հետ սկսան սաստկութեամբ մրցիլ տեղական վարդապետներ, նաև պարզ քահանաներ, և նոյն իսկ զերձակ հացագործ, ջրկիր և բաղնիքան աշխարհականներ: Ընդ գեր կը խաղային նաև անձնական, տեղական և կրօնական կուսակցութիւններ, որոնք կարգու սոյն աթոռին առջեւէն կ'անցնէին, երբեմն և ոչ իսկ շարաթ մը նստելու միջոց ունենալով նաև

Բուրժուազիայի երկու հատվածներից ամեն մեկն իր պալքարի ընթացքում զինակցել էր կղերական դասի մեջ նույնպես գոյություն ունեցող հակամարտ երկու հոսանքներից մեկին, և այսպիսով առաջ էին եկել միաձուլված բուրժուա-կղերական երկու ուժեղ ճակատներ, որոնցից յուրաքանչյուրի ձեռք բերած հաջողություններն արտահայտվում էին պատրիարքների հաճախակի փոփոխություններով, պատրիարքական կոնֆլիկտով»:

Արևմտահայ բուրժուազիայի խոշալական հատվածը, չեղքիականի հետ ունեցած իր պալքարում, իրեն նեցուկ ու զինակից ուներ սասկաններին, մինչև չեղքիական հատվածը հենվում էր էջմիածնականների վրա:

Իհարկե՝ սասկան անվան տակ անպայման Սսի միաբանության կամ Սսի (Կիլիկիայի) կաթողիկոսության պատկանող անհատներին չէ որ պիտի հասկանանք: Սասկանությունը հայ եկեղեցու մեջ, կարելի է ասել, մի հոսանք էր, կամ զաղափարախոսական մի դպրոց, որին կարող էին պատկանել հայ հողերականները անկախ այն բանից, թե Հայկական (Լուսավորչական) եկեղեցու ո՞ր կաղմակերպություն անգամ էին և կամ ո՞րտեղ էին գտնվում. և ընդհակառակն՝ Սսի միաբանության և կաթողիկոսության կաղմում կային անհատներ, որոնք սասկան չէին, այսինքն՝ գաղափարապես այդ դպրոցին չէին պատկանում: Սասկանությունը մի տեսակ վերանորոգչական շարժում էր, որը ձգտում էր բարենորոգում և հեղաշրջում մտցնել Հայկական եկեղեցու գաղափարական հասկացողությունների մեջ՝ Հռոմեական եկեղեցու հետ մերձեցման սկզբունքի հիման վրա, առանց սակայն

1684—1680 էջմիածնի Յակոբ և սոսր հակառակաթու Եղիազար կաթողիկոսներու կուսակիցներուն արիւնահեղ ճակատամարտերուն հանդիսովայն էր Կ. Պոլիս, ուր պատրիարքական աթոռոյն կոնիւնքուն հետ՝ կաթողիկոսական աթոռոյ կոնիւնքն ալ միաժամանակ կը մղուէին սաստկութեամբ՝ մահացու զէնքերով, տես հեղինակի հետևյալ գործը. «Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու և տասն կախկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկեայք», Վիեննա, 1915, էջ 68—69:

խախտելու Հայկական Եկեղեցու օրգանական միասնությունը և նվիրապետական անկախությունը: Այս իմաստով «սասական» էին նաև էջմածնի մի շարք կաթողիկոսներ, որոնք Հոռոմի հետ մերձեցման փորձերի էին դիմել, առանց երբեք հոռոմեական կամ լատինազգական լինելու¹:

Արգ, սասական հոռոմքն իր ջանքերն ու միջոցներն աճվերապահորեն ի սպաս էր դրել հայ առաջադիմական բուրժուազիայի գլխավորած ադատադրական շարժմանը՝ իր ձեռքի տակ ունենալով արևմտահայոց եկեղեցական աթոռները, որոնք թվով չորս էին: Առաջինը՝ Սսի կամ Կիլիկիայի կաթողիկոսությունն էր՝ հաստատված կիլիկյան իշխանության շրջանում՝ XIII դարի վերջերին, իսկ 1441 թվականից ի վեր իրրև էջմածնից անջատ և «ապստամբ» աթոռ համարված. երկրորդը՝ Երուսաղեմի պատրիարքությունն էր, հաստատված 1311 թվականին. երրորդը՝ Կ. Պոլսի պատրիարքությունն էր, հաստատված 1461 թվականին. իսկ չորրորդը՝ Աղթամարի կաթողիկոսությունն էր, հիմնված 1113 թվականին:

Սասական հոռոմքի նշանավոր ներկայացուցիչներից մեկն էր Սսի կաթողիկոս Սաչատուր Գաղատացին, — մականվանյալ Մինդերջի, — որը հռչակավոր լատին միսիոնար՝ թեատինյան կրոնավոր Կիմենա Գալանոսի աջակերտն էր: Նա թովմաս Բերիացու, Պողոս Տիվրիկցու և Կիրակոս Արևելցու հետ, որոնք նույն Գալանոսի աջակերտներն էին, 1642—43 թվականներին Կ. Պոլսում լատինասեր ուղղության հայտնի դեմքերից էր հղել և այդ միջոցներին նաև շատ կարճ ժամանակով մալրաքաղաքի պատրիարքությունն էր վարել, դրա համար

շնորհավորություններ ստանալով տեղի ֆրանսիական դեսպան Ժան Դը Լա Հելլից և Հոռոմի Պրոպագանդայից¹:

Հակոբ Զուղայեցու կաթողիկոսության սկզբներին նա դարձյալ աչքի էր ընկնում պոլսահայ հասարակական կյանքում (1656—57 թթ.). հաճախակի քարոզում էր մալրաքաղաքի եկեղեցիներում, և գործուն մասնակցություն ուներ ազգային-եկեղեցական գործերում՝ իրրև հակառակորդ մուղնեցիական կամ էջմածնական հոռոմքի, և, ըստ երևույթին, հենց այդ հանգամանքին էլ պարտական էր նա Կիլիկիայի աթոռը ձեռք բերելու հաջողությունը: Թորոս կաթողիկոսի մահից հետո (1657 թ. ապրիլ) Սաչատուր Գաղատացին Կ. Պոլսի աթոռակալների հայանությունամբ թագավորական հրովարտակ էր հանել Սսի կաթողիկոսություն՝ որպես հաջորդ Թորոսի, հակառակ էջմածնականների հարուցած խոչընդոտներին.

«Յաւուրս յայտոսիկ (1657 թ. մայիսին) պատրաստութիւն ետես Սաչատուր վարդապետն աշակերտ տեառն Ռհաննու եզեսացոյ՝ վասն կաթողիկոսութեան Տանն Կիլիկեայ, և ոմանք ի շարեաց առաջնոցն ազմուկս հանեալ չկամելով զայն: Այլ առաջակալք քաղաքիս ասացին. Տացես մեր եկեղեցիացս ձ-ական դուռուշ և գնացեալ աոցես. և նա զտայն լանձն էառ հանդերձ ձեռագրաւ, բայց և կրկին շարքն զայն խտփանցին և ոչ տվին կամս՝ սահմանեալ զադմուկն, բայց նա ի լուռ լեալ գնաց եհան հրաման ի թագաւորէն որպէս օրէն էր, և գնացեալ անդ ի Կիլիկիոս»²:

Ձեռագրվում է 1657 թ. հուլիսի 17/27ին³:

Սաչատուր Գաղատացու մասին ընդհանրապես տեսնել՝ Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, էջ 693 և 697—700: Մ. Օրմանյան, «Ազգապատմւմ», մասն Բ, §§ 1693—1696: Բ. Կյուլեյե սերբյան, «Պատմութիւն կաթողիկոսայ Կիլիկիոյ (1441—էն մինչև մեր օրերը)», Անթիլիաս, 1939, էջ 377—410:

Չամչյանը, Օրմանյանը և ուրիշներ Սաչատուր Գաղատացուն շփոթել են նրան ժամանակակից Սաչատուր Սերաստացու հետ, որը Հայկաի առաջնորդն էր: Այդ շփոթությունն առաջին անգամ պարզել է Բ. Կյուլեյե սերբյանը:

¹ Երեմիա Չելերի, «Օրագրութիւն», էջ 244—245: Հմմտ. նաև նույնի «Ստամբուլոյ պատմութիւն», էջ 371:

² Երեմիա Չելերի, «Օրագրութիւն», էջ 266:

¹ Հայ-կաթողիկոսությունը կամ հայ-հոռոմեականությունը սակա-նությունից տարբերվում էր այն բանով, որ նա ուղղակի անջատողական նկարագիր ուներ, ինչպես XIV դարում Հովհաննես Քանեղու ձեռքով նախիջնանում ծնունդ առած ունիտորական (կամ միաբանող-ների) շարժումը և 1742 թ. Լիբանանում «Պատրիարքութիւն Տանն Կիլիկիոյ» տիտղոսով հաստատվող հայ-կաթողիկ նվիրապետության ընդգրկված շարժումը:

Բայց, ինչպես երևում է, նա իր աթոռի համար ստիպված էր եղել շարունակական մաքառման մեջ լինել հակառակորդներին հետ, որոնք նրան տապալել էին հաջորդ տասնամյակի ընթացքում, թեև հայտնի չէ՝ ո՞ր թվականին: Միայն գիտենք, որ նա 1669 թվականին կրկին անգամ գրավել էր իր աթոռը¹:

Սաչատուր Գաղատացին իր այս պաշտոնի ասպարեզում սերտ հարաբերության մեջ էր Հռոմի և Փարիզի հետ, լրջորեն աշխատելով հող պատրաստել ազատագրական ձեռնարկումների համար, ինչպես կոնսենսը հետո. իսկ այդ ծրագրի հաջողության համար նույնիսկ չէր վարանել պայել գերիշխանությունը «ճանաչելու»²:

Սասկանությունների կայացուցիչներից էր նաև հռչակավոր Եղիազար Այնթապցին, որը վերոհիշյալ Սաչատուր Գա-

¹ Բաղատար Երեցը 1669 թվականին զբուծ էր Այնթապում իր արտագրած ձեռագրի հիշատակարանում. «Ի թվ. Հայոց ՌժժԷ ամին ի Բ-ի կաթողիկոսութեան կիլիկիոյ տէր Սաչատուրին զոր այսմ յամի կրկին նստու յաթոռն», Հանդես Ամսօրեայ, 1938, էջ 109:

² Սաչատուր Գաղատացին 1662 թվականին մի նամակ էր գրել Ալեքսանդր VII պապին, որով, ասում է լատինական աղբյուրը, «նրան հպատակություն է հայտնում և Տիեզերական Եկեղեցու որպես գլուխ է ճանաչում նրան», տե՛ս «Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient», t. I, p. 467. Մի ուրիշ աղբյուրի համաձայն Սաչատուրի նամակն ուղարկված էր 1662 թ. հունվարին՝ Հալեպի ֆրանսիական նախկին հյուպատոս Ֆր. Պիկեի միջոցով, որը Հռոմ էր մեկնում. հմմտ Fr. Tournebize, «Le Catholicisme à Alep au XVII siècle (1625—1703)», «Etudes» (revue fondée en 1856 par des Pères de la Compagnie de Jésus), t. 134, № du 5 février 1913, p. 363. Լատինական մի քանի ուրիշ աղբյուրներ ևս հաստատում են այդ, սակայն, որ նա պապին «գաղափարության գիր» էր ուղարկել, հմմտ. P. Rocco da Cesinale, «Storia delle Missioni dei Cappuccini», t. III, p. 200. Հայկական աղբյուրներում էլ է հիշատակվում գաղափարի առաքույժը. այսպես՝ ըստ Ստեփանոս Լեհացու, 1664 թվականին, տե՛ս Ա. Պալճյան, «Աթոռ Ս Գետրոսի առաքելագետի», Վիեննա, 1863, էջ 274. իսկ ըստ Վարդան Հունանյանի՝ 1665 թվականին, տե՛ս Հ. Տալճյան, «Յուդեական հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895, էջ 112. նաև Մ. Չամչյան, «Պատմություն Հայոց», հտ. Գ, էջ 698:

ղատացու ձեռքով ներգրավվել էր ազատագրական շարժման մեջ: Նրա կողմից հարուցված՝ արևմտահայ առանձին կաթողիկոսություն ունենալու խնդիրը, որ այդ ժամանակաշրջանի ամենախոշոր և ուշագրավ երևույթն է եղել, ուրիշ բան չէր, եթե ոչ ազատագրական ձգտումների կամ շարժման մի արտահայտությունը եկեղեցու և հոգևորականության մեջ: Մենք Եղիազար Այնթապցու մասին ավելի մանրամասնորեն կխոսենք վերջում. բայց այստեղ միայն նշենք, որ եղիազարյան շարժումը, որ 1664 թվականին է սկսվել՝ իբրև հակա-էջմիածնական «անջատողական» շարժում, ինքնին մի օղակն էր միայն մի ընդհանուր շարժման, որի շարունակողն ու որոշ հանգրվանի հասցնողն էր եղել Եղիազար Այնթապցին, որովհետև անջատողական շարժումը երկարժամանակյա պատմություն ուներ՝ սկսած նույնիսկ 1620-ական թվականների վերջերից³, և հատկապես 30-ական թվականներից գուգահեռաբար կապ ուներ արևմտահայ բուրժուազիայի ներսում գոյացած առաջադիմական խմորումների հետ, ինչպես տեսանք արդեն: Արևմտահայ հոգևորականության այդ շարժումների մեջ դրսևորվում էին արևմտահայ բուրժուազիայի ներքին խլրտումները:

Արդ, Կ. Պոլսի պատրիարքության և արևմտահայ «անջատ» կաթողիկոսության խնդիրներում քաղաքական մղիչ ուժը արևմտահայ խոջալույթյունն էր, թափանցած՝ սասկան հոսանքի մեջ: Դրա դեմ, իհարկե, ծառանում էր հոգևորականության պահպանողական՝ էջմիածնական հատվածը, — որի շահերը լծորդվում էին չեչևբության շահերի հետ, — հանդես գալով որպես հավատարիմ պաշտպան Հալեպական (Լուսավորչական) Եկեղեցու վարդապետության և ավանդությունների, որպես թշնամի կրոնական նորմուծությունների, և, իր գոյություն ասպարեզումը գտնելով քաղաքական առկա իրավիճակի պահպանման մեջ, հակառակ էր արևմտահայերի ազատագրման գաղափարներին, գաղափարներ, որոնց իրագործումը կնխա-

³ Տե՛ս Գլուխ ԺԳ:

² Տե՛ս վերևում էջ 68—69:

դրում էր կաթողիկե եվրոպայի միջամտութիւնը՝ ի գին դավանա-
կան ծանր գիշտ մնելի, և նկատի ունենալով մանաւանդ այն, որ
նմանօրինակ պարագաներում Արեւմտյան Հայաստանի ազա-
տագրումը հայ ժողովրդի այդ հատվածին փաստորեն կան-
ջառեր պարսից իշխանութիւն տակ գտնվող էջմիածնի աթո-
ռի իրավասութիւնից¹: Ընդհակառակն, սասկան հատվածը
կրօնա-գաղափարական սկզբունքների մերձեցման միջոցով
ձգտում էր ապահովել Հոռոմի պապերի և արեւմտյան մի քա-
նի պետութիւնների աջակցութիւնը՝ հայ առեւտրական բուր-
ժուազիայի ձեռնարկումների հաշտութիւն համար:

Իսկ ինչպիսի՞ փոխհարաբերութիւններ գոյութիւն ու-
նենին առաջավոր դիրքերում գտնվող բուրժուազիայի և ժո-
ղովրդական դանդախների միջև:

Բաղմաթիվ փաստերի լույսի տակ հնարավոր է ճիշտ
պատասխանել նաև այս հարցին:

Սոցալութիւնը իր ձեռքում ունենալով ազդային կյան-
քի դիկայարութիւնը, անմիջական շփման մեջ էր հայիական
գավառների լայն խավերի հետ և ազդեցութիւն էր ձեռք
բերել շնորհիվ այն բանի, որ գիտեր իր տնտեսական ուժեղ
դիրքն ու անսահման կարողութիւններից որոշ տոկոս ի
ապաս դնել հայ հասարակական կյանքին²: Նրա ներկայացու-

¹ Արեւմտայ իրականութեան մեջ գործող այս՝ էջմիածնական հոռոմներ, որին մասնակցում էր էջմիածնի կաթողիկոս չակոբ Զուղա-
յեցին, պէտք չէ շփոթել արեւելահայ իրականութեան մեջ գործող քա-
ղաքական այն հոռոմների հետ, որը Հայաստանի սլաւոնական մասի
ազատագրման խնդիրը նույնպէս կապում էր լատինական եվրոպայի
հետ՝ նույն չակոբ Զուղայեցու գլխավորութեամբ: Զուղայեցին Արե-
ւմտայան Հայաստանում գործում էր էջմիածնի աթոռի շահերի պաշտ-
պանութեան համար, իսկ Արեւելայան Հայաստանում՝ սլաւոնական լուծը
թիթափելու համար:

² Հայ խոջայութեան հասարակական դերի այս առարկայական
գնահատման գործում Յշոտ Հովհաննիսյանի վերջին ուսումնասիրու-
թեան մեջ արված գնահատականը հաստատում է մեր կարծիքը: Սե-
բաստիայի հայ խոջաների մասին խոսելիս, հեղինակը հետևյալ տողե-
րով է բնութագրում խոջայութեան հասարակական հարաբերութիւն-
ները. «XV—XVI դարերից ի վեր այստեղ (Սեբաստիայում) խոջանե-
րը նշվում են որպէս ազդեցիկ հայ սեաներ ու տանուտերներ, եկեղե-

ցիչներն իրենց ազդեցութեան շնորհիվ կարողանում էին,
օրինակ, օգնութեան հասնել ժողովրդին, երբ տեղական ճնշում-
ների շարին ու սահմանն անցնում էր: 1671 թվականին վա-
նեցի խոջաներ Ալիսասն ու Սաչատուրը Կ. Պոլիս գլխավոր,
ժողովրդի սուրբերի մի մասը թեթեւացրին, իսկ մի մասը
բոլորովին վերացնել տվին: Ահա թե ի՞նչ է գրում այդ մա-
սին Սալիֆա գրիչը.

«Ի թվականութեան Հայկազ[ե]ան տոմարիս Ռ. Ճ. Ի. ...
ի վան քաղաքի ի դառն և ի նեղ ժամանակիս, որ այսմ ամի
Ալիսաս [և] Սաչատուր անուն քրիստոնեակք՝ գնացին թագա-
ւոր[էն] ամբ դափուշի հանին բերին, տեղս ինչ զազար կարգ
սահման կէր ամէն թեթեւացուցին. ոչխարին քառասունից
մէկ արին, հաց եօթնէն մէկ, այգեստարաց ծառին չկալ,
թիփին հազարին կէս դուռ, ծառի տկի խոտից ուշուր չկայ,
փանջ կէս եղաւ, գլխախոտ կշլախ վերուցին. ըրիաթից գուլմ
վերուցին, բայց միայն խարաչն է մնացեր, աստուած աշոգէ
էն էլ կու լինի. աստուած զիւրեանց մէկն հազար անէ. աս-
տուած զլուրեանք լերկար ամօք պահեցէ. աստուած զիւր-
եանք վերինն Երուսաղեմայ արժանի անէ՞՞»:

Երախտագիտութեան արժանի նման գործեր՝ փողի
քսակի ուժը վախկող հեռատես խոջաները կատարում էին
երբեմն ըրիաթի (աւայլի) համար. բայց նման պատճառնե-
րով այնքան էին սրվում նրանց և փաշաների հարաբերու-
թիւնները, որ օրինակ, Բաքըր փաշան 1678 թվականին
կախել տվեց հիշյալ խոջաներից Ալիսասին: Մի անանուն
ժամանակագրութեան մեջ կարգում ենք.

ցու և վանքի վերանորոգողներ ու նվիրատուներ, զըշաղբերի պատվի-
քատուներ և այլն: Իրենց ձեռքն անելով հանրային գործերի զեկը՝
հաճախ նրանք մեծարվում են որպէս խնամակալք բնդղէմ այլազգեսց:
Հավանորեն նրանց մեջ կային այնպիսիները, որոնք իրօք անդրա-
դաւանում էին եկեղեցու և ժողովրդի նվաստացած վիճակին և երազում
նրանց բարվոք ապագան, տե՛ս Աշոտ Հովհաննիսյան,
«Փրկագնէր հայ ազատագրական մտքի պատմութեան», զիրք Բ, էջ 33:

Երեւանի Գեոսական Մատենադարանի ձեռագիր № 5838,
էջ 253ա—253բ:

«ՌՃԻԷ (1678 թ.) Բաքըր փաշան Վանայ... զՊօշալ Ալխասն կախնաց ի փայտէ սրոյ (փաշայի) մականունն Լէշկէր ասէին. և ոչ ետ հրաման թաղել զնա. այլ զազանք և թռչունք կերան զմարմինն նորա. այլ Ալխաս բազում բարութիւնս արար Հայոց, և բարի անուն եթող յետ իւր, որ և տէրն իւր ողորմեացի»¹:

Այսպէս նաև ժամանակի նոր-չեղեքիներից (խոշաներից)՝ ամզեցի Պօշա Երեմիայի որդի Մաղաքիա Չելեբին 1649 թվականին վեղիր Մելեք-Ամեղ փաշայի մոտ ունեցած իր ազդեցութեամբ շնչել էր ավել Կ. Պոլսի եկեղեցիներէ վրա ծանրացող թիավարական աուրքի (քլուրեք ակչեսի كورك اچدهسى) մի մասը, ինչպէս կարդում ենք դարձյալ մի անանուն ժամանակագրութեան մեջ.

«Մաղաքիա Չելեպի որդի երևելի իշխանին Երեմիայի Համթեցուլ՝ այլ պիտանի ի բազում գործս ազգիս Հայոց առ մեծամեծ իշխանաւորս Հապարացոց, որ ի ժամանակս Մէլիկ վեղիրին պակասեցոյց ԻՆ (25) քիւրեքճիի վարձ ի վեց եկեղեցեացն, որոյ վասն բազում լինէր աղմուկ շփոթի յազգս մեր»²:

Հայ խոշաները գիտեին նաև հաճախ օգնութեան հասնել ժողովրդին՝ մեծ աղետների ժամանակ և հասարակական կարիքների դեպքում, ինչպէս էին, օրինակ, հաճախակի կրկնվող թուրք-պարսկական պատերազմների առիթով գերեվարվող հայերի գնումն ու ազատագրումը³, երկրաշարժերից

¹ «Անցք Վասպուրական աշխարհի», Դիւան Հայոց Պատմութեան, գիրք Ժ, էջ 107:

Այս դեպքը հիշատակում է և Գրիգոր Վարդեցին. «Ի թուին ՌՃԻԷ (=1678) Բաքըր փաշան Վանայ գիւղայ Ալխասն կախնաց անմեղ և ոչ եթող թաղել. սորա մականունն Լեշկեր ասէին. սա բազում հարկս վերացոյց ի Հայոց», Դիւան Հայոց Պատմութեան, գիրք Ժ, էջ 84:

² «Ինչ ինչ ժամանակագրութիւնք», Դիւան Հայոց Պատմութեան, գիրք Ժ, էջ 84: Այս մասին խոսում է և Երեմիա Չելեբի Քյոմուրջյանը, «Ստամբուլոյ պատմութիւն», էջ 51—52:

³ Հակոբ Կարնեցի, «Տեղագիր Վերին Հայոց», էջ 341:

ավերվող վանքերի և եկեղեցիների վերանորոգումը¹, ժողովրդի բոլոր դասերի վրա ծանրացող ազգային պարտքերի, — ինչպէս էին, օրինակի համար, Երուսաղեմի վանքի անհատնում պարտքերը, — պարբերաբար մաքրումը² և այլն:

Արևմտահայ բուրժուազիայի առաջավոր հատվածը՝ խոշալութունը գիտակցում էր հայ զանգվածների մեջ հեղինակութուն վաստակելու և իրեն հենարան ստեղծելու անհրաժեշտութունը, քանի որ դրանով նա հող էր նախապատրաստում, որպէսզի անհրաժեշտութեան դեպքում ժողովրդական լայն խավերը ոտի կանգնեն իր դրոշի տակ:

Արդ՝ առևտրական բուրժուազիան, զարգացման համար չափազանց կաշկանդված լինելով թուրքական տիրապետութեան պայմաններում, առաջ էր քաշել նոր ուղեգիծ, նպատակ ունենալով ընդմիջա դուրս գալ օսմանյան ավատականութեան խեղդող մթնոլորտից և ուրիշների նման ունենալ իր շահերն ապահովող հարազատ իշխանութուն: Հենարան ընտրելով կայսրութեան մեջ ապրող երիցս դժգոհ տանջվող ու կեղեքվող հայ աշխատավորական տարրը, նա իր քաղաքական ծրագիրը հիմնում էր արևմտահայ ժողովրդի ազատագրման և Հայաստանի անկախութեան վերակոնստիտուցիան գաղափարի ու ծրագրերի վրա:

Արևմտահայ խոշալութունը, հրապարակ գալով հայրենիքի ազատութեան նշանաբանով, 1666 թվականից սկսած հանդուգն քայլ էր անում: Նա դիմում էր արտաքին աշխարհին, հալտնելով, որ հայերը, բախտակից ժողովուրդների հետ, պատրաստ են ոտի կանգնելու և թոթափելու օսմանյան թուրքիայի ժանր լուծը:

Հայկական այս շարժումը, իհարկե, ընթանում էր ուրույն ձևով, որքան ուրույն կերպարանք ուներ XVII դարի հայ իրականութունը. օրինակ՝ հայ ժողովրդի բաժանվածու-

¹ Առաքել Գալբիժեցի, «Պատմութիւն», էջ 493—494:

² Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 325—

թյունը երկու թշնամի բռնապետութիւնների միջև, չեղբիութան և էջմիածնականութան բռնած պահպանողական՝ հակառակ դիրքը և այլն:

Այս էր սկզբնավորութիւնը արևմտահայութեան մեջ XVII դարի կեսերին գոյութիւն ունեցող ազատագրական շարժման, որի կերպավորումը կամ կազմավորումը սկսում էր 30-ական թվականներից, այսինքն այն ժամանակից, երբ բուրժուազիայի ներքին խլրտումներն սկսել էին արդեն հասարակական երևույթ դառնալ, ուժեղ արձագանք գտնելով նաև հոգևորականութեան շրջանում:

Այժմ տեսնենք, թե այս շրջանում արևմտահայ խնդիրն ի՞նչպես դուրս եկավ միջազգային դիվանագիտութեան բեմի վրա և ի՞նչ ընթացք ունեցավ այն:

ԳՆՈՒՆ Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՐՈՊԱՅՈՒՄ
1645—1666 թթ.

Կրետեի կամ Կանդիայի պատերազմը և նրա նշանակությունը.— Վատիկանի դիրքը Կրետեի պատերազմի նանդեպ.— Իճնեկեճ X և Ալեքսանդր VII պապերը.— Ֆրանսիայի արևելյան քաղաքակառուցումը.— Քուրքերը՞ դեպի կենտրոնական Եվրոպա և Սեն-Գորարդի նակատամարտը (1664 թ.).— Սեն-Գորարդը որպես ցուցանիշ Լուզովիկ XIV-ի արևելյան քաղաքակառուցման Եվրոպայում.— Ֆրանսիան և Միջերկրականի տիրապետությունը.— Ֆրանսիայի դիրքը բուրբ-վենետական պատերազմի նանդեպ.— Կարլ V-ի և Ֆրանսիական օգնությունները Կանդիային մինչև 1660 թ.— Դեսպան Ժան Գր Լա Հեյլի միջոցով.— Ֆրանսիացիների՝ Արշիպելագը գրավելու ծրագիրը.— Խաչակրական այլքը Եվրոպայում:

Ժամանակաշրջանի քաղաքական ամենախոշոր խնդիրը, որ լայն իմաստով միջազգային նշանակություն էր ներկայացնում, այսպես կոչված Կրետեի կամ Կանդիայի պատերազմն էր:

Սկսած 1645 թվականից՝ այս պատերազմն ամբողջ 25 տարի, մինչև 1669 թվականը, իր վրա բեռնած պահեց քաղաքական աշխարհի ուշադրությունը: Դա մղվում էր Օսմանյան Կայսրության ու Վենետական Հանրապետության միջև Կրետեին տիրանալու համար¹:

¹ Կրետե կղզին, որը Վենետիկին բաժին էր ընկել խաչակիրների կողմից Գ. Պոլսի առումից հետո (1204 թ.), հանրապե-

Այս պատերազմը Օսմանյան Կայսրության համար Միջերկրականում գերիշխանություն և ընդհանրապես Եվրոպայում գերակշռություն ձեռք բերելու հարցն էր, այդ պատճառով այս կամ այն չափով շահագրգռում էր եվրոպական գրեթե բոլոր պետություններին, — բացառությամբ հյուսիսայինների, — որովհետև, օսմանյան բանակների հաղթանակի պատ-

սություն կարևոր զազուկներին մեկն էր, թե՛ ռազմագիտական և թե՛ մտնաման, առևտրական տեսակետից:

Թուրքերը XVI դարից սկսած հեղուզակալին ստատակուսություններ էին կատարում Կրետեի ափերին, իսկ 1645 թ. հունիսին օսմանյան բանակները ափ հանվելով իրար ետևից սկսեցին զրավել մի շարք շրջաններ:

Կրետե կղզին վենետական տիրապետության շրջանում կոչվում էր նաև Կանդիա, իր դիտավոր քաղաք Կանդիայի անունով, և այս պատճառով էլ Կրետեի սուլթան Նշանավոր պատերազմը պատմության մեջ ծանոթ է նաև Կանդիայի պատերազմ անվան տակ: Կանդիա քաղաքն այժմ կոչվում է Հերակլեոն: Կրետեի երկրորդ դիտավոր քաղաքը Կանա նավահանգիստն էր: Թուրքերը 1645 թ. օգոստոսի 22-ին զբաղեցին այս քաղաքը և այստեղ էր նստում սուլթան պատերազմի ընթացքում Կրետեի թուրքական փաշան: Իսկ Կանդիան հանդիսացավ վենետական պաշտպանության միջնաբերդը և միայն նրա անկումով էլ (Յ սեպտ. 1669 թ.), որ վերջ գտավ պատերազմը:

Սկսած XVII դարից՝ Կանդիայի պատերազմի մասին լույս են տեսել բազմաթիվ աշխատություններ, թե՛ վավերագրական, թե՛ ուսումնասիրական: Հետաքրքրվողներին հանձնարարում ենք, ի միջի այլոց, հետևյալները. G. Brusoni, „Historia dell'ultima guerra tra Veneziani e Turchi“, Bologna, 1674; և Venezia, 1676. A. Valiero, „Storia della guerra di Candia“, Venezia, 1679; և Trieste, 1859. V. Marchesi, „Andrea Valiero e la sua Storia della guerra di Candia“, Udine, 1889. A. A. Bernardy, „Venezia ed il Turco nella seconda metà del secolo XVII, con documenti inediti“, Firenze, 1902. Chev. Chardin, „Voyages“, t. I, Paris, Le Normant, 1811, p. 92—101. J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. II et III, liv. L—LV. P. Rocco da Cesinale, „Storia delle Missioni dei Cappuccini“, t. III, p. 111—135.

Ընթերցողները մի շարք ուրիշ աղբյուրներին նշումներ կգտնեն նաև ներկա աշխատության համապատասխան տեղերում:

քաղաքին, վերջիններս Եվրոպայում կզանալին մի անպարտելի ուժ, մի աղետարեք սպառնալիք անխտիր բոլորի համար: Այդ պատճառով վենետական փոքրիկ հանրապետությունը օժանդակություն էր գտնում այդ քրիստոնյա պետությունների կողմից:

Հարկ է, սակայն, առանձնապես ընդգծել պապական արքունիքի ինչպես ուղղակի օգնությունները, այնպե՛ս և դիվանագիտական հզոր դերն ու ջանքերն ի նպաստ վենետիկյան դատին, որի միջոցով, և կաթողիկ պետությունների զինքների ուժով, նա հռոմեականության շահերի հաղթանակն էր հետապնդում Արևելքում:

Իննուհինգ X-ը, 1645 թվականից սկսած, բացի դրամական օգնությունից, որ արեց վենետիկյան զինքի հազոդության համար, նաև Կանդիա ուղարկեց ո՛չ միայն ռազմաժիկերք ու զորամասեր, այլև իր նավատորմը: Պապական ռազմանավերը 1647 թվականին դործոն մասնակցություն ունեցան թուրքական նավատորմի դեմ կատարված գործողությունների մեջ: Նրա հաջորդ Ալեքսանդր VII-ը (1655—1667 թթ.) հրավեր կարգաց քրիստոնյա իշխանություններին՝ Վենետիկին օգնություն ցույց տալու, թեև ապարդյուն: Սրա օրով պապական նավատորմը մի քանի անգամ կովի մտավ վենետիկյան հետ կողք կողքի թուրքերի դեմ և բացի այդ՝ ջանքեր գործադրեց նյութական օգնություն հասցրելու: Իր կյանքի վերջին շրջանում նա դարձյալ աշխատում էր զորավոր լինել թուրքերի դեմ մղվող այդ կովին: Նա 1666 թ. դեկտեմբերին մի կոչ ուղղեց կաթողիկ թագավորներին, որոնց թվում նաև Լուդովիկ XIV-ին¹:

¹ Ivan Dujčev, „Avvisi di Ragusa. Documenti sull'Impero Turco nel sec. XVII e sulla guerra di Candia“, Roma, 1935, p. XXXV (=Orientalia Christiana Analecta, 101).

Կանդիայի պատերազմի ընթացքում Իննուհինգ X-ի և Ալեքսանդր VII-ի, ինչպես և Կլեմենտ IX-ի, ցույց տված ջանքերի, իսկ հատկապես պապական նավատորմի կատարած դերի մասին ընդարձակ տե-

Վերջինս, Լուզովիկ XIV-ը, այս շրջանում ամենակարևորուն զեմքն է հվրոպական միապետների մեջ: Նրա օրով Ֆրանսիան ներքին և արտաքին ճակատների վրա ձեռք բերած հաջողություններով առաջնակարգ դիրք էր գրավում Եվրոպայում: Պետք է ասել, որ Ֆրանսիական քաղաքականությունը չէր կարող անտարբեր հանդիսատես լինել առաջխաղացման այն ճիգերին, որոնք համառորեն տարվում էին թուրքերի կողմից տարիներից ի վեր ո՛չ միայն ծովում, այլև ցամաքում զեպի Եվրոպայի կենտրոնը:

Եվրոպայում 60-ական թվականներին թուրքերը Տրանսիլվանիայի խնդրով վերսկսել էին պատերազմը գերմանացիների դեմ և մի շարք հաղթանակներով նրանց բանակները հասել էին Ռաար դեռին, առաջանալով զեպի Վիեննա՝ գերմանական կայսրության մայրաքաղաքը¹: Եվ Լուզովիկ XIV-ը, չնայելով այն բուռն հակամարտությանը, որ տիրում էր Բուրբոնյան և Հաբսբուրգյան տների միջև, չնայելով, որ Հենրիկ IV-ի (1589—1610 թթ.) օրերից սկսած Ֆրանսիական քաղաքականության հետապնդած նպատակը գերմանական կայսրության նսեմացումն ու քայքայումն էր եղել զիվանագիտության և զենքի միջոցներով,—մի բան, որի իրագործումը լիուլի ապահովել էր Ֆրանսիան 1648 թվականի Վեստֆալյան դաշնագրով,—չնայելով ուրեմն այս բոլորին, Լուզովիկ XIV-ն իրեն հարկադրված էր զգացել, մի կողմ զնեղով նաև թուրքերի հետ ավանդական բարեկամության պարտադրած նկատառումները, նրանց զեմ գերմանացիների օգնության ուղարկել 6.000-անոց մի բանակ, որը Սեն-Գոթարդի

զեկություններ գտնվում են P. A. Guglielmotti-ի մոտ, „Storia della marina pontificia“, vol. VIII, Roma, Tip. Vaticana, 1893, lib. I—VI.

¹ Հուսանատությունը տիրել էր ամբողջ Գերմանիայում. տես E. Lavisse, „Histoire de France des origines à la Révolution“, t. VII, part. II, Paris, Librairie Hachette, 1911, p. 272.

հայտնի կալում (1664 թ. օգոստ. 1), Ռաարի ափերին, հաղթանակն ապահովել էր զորավար Մոնտեկուկուլլիին¹:

Այսպես, ուրեմն, հվրոպական մայր ցամաքում թուրքական առաջխաղացումների կասեցումը Ֆրանսիայի արեւելյան քաղաքականության կարևոր խնդիրն էր, որովհետև թեև «Ֆրանսիան նոր էր վերակշռություն ձեռք բերել Ավստրիական տան նկատմամբ, բայց նա շահ չունեիր թողնելու, որ սուլթանը նրան ոչնչացներ, նրա տեղն ինքը զբաղվելու համար»²:

Այսպես և Միջերկրականում, որտեղ Ֆրանսիան նույն դիրքն էր բռնում թուրքերի հանդեպ, ինչ որ մայր ցամաքում, այսինքն թուլլ չտալ, որ նրանք իրենց տիրապետությունն ուժեղացնեն Միջերկրականի ավազանում: Այստեղ թուրքերի ազդեցությունը գլխավորապես կազմում էին սուլթանի գերիշխանության տակ գտնվող հյուսիս-աֆրիկյան մահմեդական իշխանությունները (Ալժիրը, Թունիսը և Տրիպոլիտանան), որոնք ելուզակալին անդադրում արշավանքներով սարսափի տակ էին պահում ծովերը, հաճախակի նեղելով նաև Ֆրանսիական ափերը: Նրանց զեմ արդեն գործում էին Ֆրանսիացի անվանի կորսարներ (corsaires), սակայն 1664 թվականին կազմակերպվեց մի նոր արշավանք, նպատակ ունենալով, որպես լավագույն միջոց, «Աֆրիկայում

¹ Ibidem, p. 273. J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. III, p. 91—93.

Հարկ է նշել և այն, որ Լուզովիկ XIV-ը, որպես գլխավոր անդամը սրբազան Լիգայի, սկզբից պատրաստակամություն էր հայտնելու առևտրային 30.000 զուտ ֆրանսիական զորք և նույնքան էլ իր պաշտպանության տակ հզոր չեռնոսյան Լիգայի գերմանացիներից, սակայն Լեոպոլդ կայսրը, երկյուղ կրելով այդ հսկայական ուժից, մերժել էր համաձայնվելով ընդունել միայն վերոհիշյալ 6.000-ը, որոնք չեռնոսյան Լիգայի 24.000 զորքի հետ վճեցին Սեն-Գոթարդի բախաշտե՛ս E. Lavisse et A. Rambaud, „Histoire générale“, t. VI, Paris, Armand Colin, 1895, p. 835. Th. Lavalée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 310.

² N. Rocca, „La France en Orient depuis les rois francs jusqu'à nos jours“, Paris, Chalmel Aîné, 1876, p. 95.

դրավել մի կայուն տեղ՝ մեծ և զեղեցիկ նավահանգստով», որպեսզի այնտեղ գումարվող զորքերը «կարողանան երկուդի տակ պահել նրանց», և եթե հաջովի ալս, Ֆրանսիայի համար ապահովված կլինեն «Միջերկրականի տիրապետությունը»¹։ Այս նպատակով նույն տարվա հուլիսին կատարված արշավանքը թեև հաջողություն բեր պատվել, Ջիզելլեի դրավումով (Ալժիրում), բայց Ֆրանսիացիները երկար չէին կարողացել պահել այդ վայրը, որովհետև թուրքերը ներքին պատակտումներից օգտվելով շուտով նրանց դուրս էին քշել այդ տեղից²։

Այս բոլորից հետո կարելի էր անշուշտ գուշակել, թե ինչ պետք է լիներ Ֆրանսիայի դիրքը նաև թուրք-վենետական պատերազմի նկատմամբ։

Հակառակ նույնիսկ այն բանին, որ վենետիկը Ֆրանսիայի մրցակիցն էր Արևելքի վաճառականություն մեջ և հետևաբար «Մազարինին (Card. Jules Mazarin) անվրդով էր նախընտրված վենետացիների տագնապի վրա», այնուամենայնիվ Ֆրանսիական առաջին մինիստրը չէր կարող ցանկանալ, որ թուրքերը «Միջերկրականի տիրապետությունը ձեռք բերեն»՝ Կանդիային տեղ դառնալով, ուստի նա որոշում էր մի կողմից բացահայտորեն պահպանել իր դաշինքը Բ. Դոան հետ, որպեսզի Ֆրանսիական վաճառականությունն «օգտվի վենետացիների շփոթությունից», իսկ մյուս կողմից քուղարկված միջոցներով «խափանել թուրքերի հաջողությունները»³։

Կրետի պատերազմի հենց սկզբից Ֆրանսիացիները սկսել էին օժանդակություն ցույց տալ վենետացիներին՝ Կանդիա ուղարկելով դրամական նպաստներ, մարտական նավեր (վենետական դրոշի տակ), և Սենատին թույլ տալով Ֆրանսիայում զինվորագրություն կատարել նույն նպատակի

համար, իհարկե բոլորը զաղտնի կերպով¹։ Սրանից հետո հայտնի է և այն միջադեպը, որ ունեցավ 1659 թվականին Կոստանդինուպոլսի Ֆրանսիական դեսպան Ժան Դը Լա Հեյը (Jean de la Haye, seigneur de Vantelet)։ Այս դեսպանը զաղտնի հարաբերություններ ուներ վենետական ընդհանուր կապիտանի (նավատորմի պետի) հետ և վենետիկյան կառավարությանը տեղեկություններ էր հաղորդում թուրքական ծրագրերի վերաբերյալ, իսկ այդ մասին մի քանի ժածկագիր նամակները բռնվելն այնքան խոր դալուլթ ու կատաղություն էր պատճառել մեծ վեղեր Գլոփուլի Մահոմետ փաշային, որ դեսպանն ու նրա որդին՝ այդ բանի հետևանքով ծանր խոշտանգումների էին ենթարկվել²։

Սակայն եթե սկզբնական շրջանի օգնություններից հետո մինչև այս թվականները չէր խոսվում Ֆրանսիացիների օժանդակության մասին, պատճառն այն էր, որ Սպանիայի հետ տեղի ունեցած շարունակական պատերազմները ժամանակ չէին տալիս Ֆրանսիայի ղեկավարներին՝ հարկ եղած ուշադրությունը նվիրելու Արևելքի խնդիրներին։ Պիրենյան դաշնագրությունը (1659 թ.), սակայն, վերջ դնելով երկու պետությունների թշնամություններին, հնարավորություն էր տվել դարձյալ մտածելու Կանդիայի մասին։ Եվ այսպես՝ 1660 թվականի ամառը Ֆրանսիացի 4.000 վետերան մարտիկներ, պապական դրոշի տակ քողարկված, — միշտ նույն նկատառումով, ինչ որ նշեցինք վերևում, — և պապի կողմից

¹ E. Lavisse, „Histoire de France“, t. VII, part. II, p. 272.
² J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. III, p. 96—97.
³ Th. Lavalée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 303.

¹ Th. Lavalée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 304.
² C. Cantu, „Histoire universelle“, t. XVI, Paris, 1865, p. 402.
³ Chev. Chardin, „Voyages“, t. I, p. 30—33. Marquis de Bonnac, „Mémoire historique sur l'ambassade de France à Constantinople“, Paris, Ernest Leroux, 1899, p. 19—22.
⁴ Այդ միջոցին Լուզովիկ XIV-ը դեռ անշահապաս էր։ Պետությունը ղեկավարում էր առաջին մինիստր կաբլը Մազարինին, որը շարունակադն էր իր նախորդի՝ կաբլը Ռիշելիուի (A.-J. du Plessis, duc de Richelieu) արտաքին քաղաքականությունը։

կարգված իշխան Ալմերիգո Դ'Էստեի (Almerigo d'Este) հրամանատարություն տակ տեղափոխվեցին Կանդիա¹:

Այս իրողությունները ցույց են տալիս, թե Ֆրանսիան ինչ դիրք էր որդեգրել Կրետեի պատերազմի դեռ սկզբնական շրջաններից ի վեր:

Արևմտյան, առանց դեռ հաշվի առնելու այն, որ Ֆրանսիական առևտրի Արևելքում ունեցած շահերը, անգլիկոսական առևտրի դեմ ունեցած պայքարում, Ֆրանսիային հարկադրում էին նվաճողական քաղաքականություն մշակելու Մերձավոր Արևելքի նկատմամբ, կարող ենք ասել, որ Կրետեի այս երկարատև պատերազմում նա, որպես մեկը քրիստոնյա Արևմուտքի մեծ պետություններից, մեծապես շահագրգռված էր: Լուդովիկ XIV-ն ու նրա մինիստրը՝ Մազարինին (մեռ. 1681 թ.) ծրագրեր էին մշակում Օսմանյան Կայսրության աժեղացող թափը կտարելու համար և այդ ծրագրերի խնդիրներից մեկն էր՝ դրավել Եգեական Արշիպելագի կղզիները և փակել Միջերկրականը թուրքերի առաջ²:

Մենք չենք խոսում այն մյուս պետությունների մասին, որոնք նույնպես խանդավառ տրամադրություն էին ցույց տալիս պապական կոչին՝ Կանդիայի նկատմամբ, ինչպես օրինակ՝ Սպանիան, թեև ժլատ՝ իր խոստումների կատարման մեջ, իտալական պետությունները, գերմանական մի քանի իշխանապետություններ, և այլն: Նրանք գրեթե բոլորն էլ առավել կամ նվազ հետաքրքրություն էին ցուցաբերում Կանդիայի պատերազմի հանդեպ, բայց, իհարկե, առաջին տեղը գրավում էր Ֆրանսիան, Հռոմեական Եկեղեցու այս «անդրանիկ դուստրը»:

Այսպիսին էր XVII դարի երկրորդ կեսի սկզբներում քաղաքական իրադրությունը Եվրոպայում:

Պաշակությունը թուրքերի դեմ:

Այս էր լսվում ամեն կողմից: Այս էր վերաաուսթրոնյան այն գրոշի, որ պարզել էր Հռոմի պապը «հանուն վտանգված քրիստոնեության պաշտպանության» և այդ գրոշի առաջապահ կրողն էր Լուդովիկ XIV «Արև-Արքան»՝ Ֆրանսիայի «Ամենաքրիստոնյա թագավորը»:

¹ P. A. Guglielmotti, „Storia della marina pontificia“, vol. VIII, p. 247—248 e 250.

² Revue d'Histoire Diplomatique, t. XVII, p. 365.

ԽԱԶԱԿՐՈՒԹՅԱՆ ԱՀԱԶԱՆԳԸ ԵՎ ՀՈՒՅՆ-ՀԱՅԿԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄԸ

Խաչակրությունը և Արևելքի քրիստոնեությունը.— Հռոմեական պրոպագանդան.— Պապական և ֆրանսիական աբուլեիֆների հառարկությունները Սիրիայի քրիստոնեական եկեղեցիների պետերի հետ.— Անտիոքի հունաց պատրիարք Մակարի, Կիլիկիայի հայոց կաթողիկոս Խաչատուր Կաղատացու և ասորի հակոբիկյանների կաթողիկոս Անդրեասի դիմումները Լուզովիկ XVI-ին (1662-63 թթ.)— Հայեպի ֆրանսիական հյուպատոս Ֆրանսուա Բարոնի վկայությունը նրանց մասին.— Ֆրանսիայի բազմադրեներին հատկացվող դերը XVII դարի խաչակրական մի քանի ծրագրերում. Սյուլիի ծրագիրը (1607 թ.), Գրեթի ծրագիրը (1620 թ.), Տյուրենի ծրագիրը (1663 թ.)— Խաչակրական աղմուկների ազդեցությունը Արևելքի ժողովուրդների վրա.— Հույն-հայկական պատասխանության ծրագիրը և պատվիրակությունը Փարիզում (1666 թ.)— «Հայ ազնվակաճը» և Կոզմա Մավրիկ Պալեոլոգը.— Շարժման ծավալն ու տարողությունը՝ հունական շափանչով:

Եթե Եվրոպայում ամենուրեք շեփորում էին խաչակրական նոր արշավանքի մասին գեպի Արևելք, այդ նույն ժամանակ Արևելքում գործող լատին միսիոնարներն առանձնապես մեծ եռանդ էին ի գործ դնում արևելյան քրիստոնյա ժողովուրդների մեջ ազդեցիկ տանելու՝ նրանց ազատազրբման հույսերը բորբոքելով, միաժամանակ շմոռանալով և հոգևոր նվաճումներ կատարելու հոգսը՝ ի նպաստ Ս. Պետրոսի աթոռին: Քաջ տեղյակ լինելով արևելյան ժողովուրդներին

դժգոհ տրամադրություններին՝ նրանք ջանում էին Օսմանյան կայսրության մեջ ներքին խլրտումներ ու ապստամբական շարժումներ առաջացնել հոգուտ Կանդիալի ժանր պատերազմին:

Օսմանյան լայնածավալ կայսրության մեջ, որն իր հրակայական թևերը տարածել էր երեք աշխարհամասերի վրա, ապրում էին բազմամիլիոն քրիստոնյա ժողովուրդներ,— դրանց շարքում՝ հայեր ու հույներ,— որոնք տառապում էին արևելյան բունակալության լծի տակ: Միսիոնարները՝ Հոմի գործակալները, օգտվելով առիթից, Արևելքի այդ բազմացեղ ու բազմազույն քրիստոնեությունը դեպի հռոմեական փարախն առաջնորդելու համար ասում և հավատացնում էին, թե Արևմուտքի քրիստոնեությունը, Հոմի պապի առաջնորդությամբ, շուտով գալու է և նրանց ազատագրելու մահմեդական տիրապետությունից, եթե նրանք ընդունեն Վատիկանի գերիշխանությունը: Եվ քիչ հաջողություն չէին գրտնում միսիոնարները: Այս միջոցը նրանք կիրառում էին՝ սկսած նույնիսկ վաղ շրջաններից և այս էր պատճառը, որ հաճախ և շատ հաճախ ենք հանդիպում պատմության մեջ Արևելքի քրիստոնյա համայնքների (հայ, հույն, ասորի և այլն) պետերի կամ նրանց ներկայացուցիչների ուղևորման դեպի Եվրոպա, Հոմի պապերին «դավանություն» տալու, նրանց միջնորդությամբ կաթողիկ միապետներից օգնություն ապահովելու հույսով: Այս կարգից էր, օրինակ, XVI դարում հայոց Ստեփանոս Մալմաստեցի և Միքայիլ Սերաստացի կաթողիկոսների ու դեռ նրանցից հետո էլ ուրիշների ցույց տված «հպատակությունը» Հոմի պապերին:

Այժմ, երբ Կրետեի պատերազմի առիթով նորից էին հրապարակ հանվել խաչակրական աղմուկները, Ալեքսանդր VII-ի և Լուզովիկ XIV-ի գործակալները կարողացել էին 60-ական թվականներին որոշ շարժում առաջ բերել Արևելքում: Նրանք սերտ կապեր էին հաստատել Սիրիայում քրիստոնեական երեք եկեղեցիների ղեկավարների հետ, որոնք էին Անտիոքի հունաց պատրիարք Մակարը, Կիլիկիայի հայոց

Հաթողիկոս Սաչատուրը և Հալեպի ասորի հակորթիկյանների հաթողիկոս Անդրեասը՝ Վերջիններս գլխավորն անձնատուր էին եղել միսիոնարներին, ուղղակի հոռմեական պրոպագանդ էին վարում իրենց համայնքներում և «հպատակության» ու դավանության գրեթե ուղարկում Ալեքսանդր VII պապին (1662 թ.)¹։ Միևնույն ժամանակ նույնպես սերտ հարաբերության մեջ էին նրանք Հալեպի ֆրանսիական հյուպատոս Ֆրանսուա Բարոնի (François Baron) հետ², որը նրանցից դիմումներ էր ընդունում և ուղարկում Լուզովիկ XIV-ին։

Դժբախտաբար մեզ չեն հասել Ֆրանսիայի թագավորին ուղղված նրանց առաջին նամակները կամ դիմումները, որոնք գրված էին 1662 թվականի մոտավորապես հոկտեմբեր ամսի սկզբներին³։ Բայց ապահովաբար նրանց բովանդակությունները նույնն էին երկրորդ նամակների հետ, որոնք գրված են 1663 թ. փետրվարին, Հալեպից, և որոնց ֆրանսիերեն թարգմանությունները,—գուցե նաև հայերեն սկզբնագրերը,—պահված են Ֆրանսիայի Արտաքին Գործերի Մինիստրության գրվածներում։

¹ «Մեծարգո Հայր Սիլվեստր Սենտ-Էնյանցին Հոռմ Ալեքսանդր VII պապին տարավ ասորիների պատրիարք Անդրեասի, հույների պատրիարք Մակարիոսի և հայերի պատրիարք Թաշատրի դավանադրերը» («Le R. Père Sylvestre de St.-Aignan porta à Rome au pape Alexandre VII la profession de foi du patriarche syrien André, celle du patriarche grec nommé Macarius, celle du patriarche arménien nommé Cachadour»), տե՛ս P. Rocco da Cesinale, «Storia delle Missioni dei Cappuccini», t. III, p. 200.

² Միսիոնարների և ֆրանսիական հյուպատոսի հետ հիշյալ պատրիարքների հարաբերությունների մասին տե՛ս «Briève Relation de la Mission d'Alep en 1662, adressée d'Alep aux Ames dévotes par les Supérieurs des Missions des RR. PP. Capucins, Carmes et Jésuites», հետևյալ ժողովածուի մեջ. «Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient (XVI—XIX siècles)», publiés par le Père Antoine Rabbath, t. I, Paris, A. Picard, 1907, p. 450—468.

³ «Հայերի, հույների և ասորիների երեք պատրիարքները [նամակներ] գրեցին թագավորին . . . : Պրն. Բարոնը նրանց նամակները Պապին ուղարկեց, որպեսզի նա նվիրակի միջոցով դրանք հանձնել

Այդ նամակներում հեղինակներից լուրաքանչլուրը, հիշեցնելով Արևելքի քրիստոնյաների անտանելի դրություն մասին, հույս էր հայտնում, որ իրենք շուտով կազատագրվեն «Նորին Ամենաքրիստոնյա Վեհափառության» ձեռքով։ Լուսնաց Մակար պատրիարքը գրում էր (15 փետր. 1663 թ.).

«Եվ այժմ ձեզ հայտնում ենք քրիստոնյաների կացության մասին, ձեր այն եղբայրների, որոնք այս երկրում են։ Նրանք փաշաների ու պաշտոնատարների կողմից ենթարկված են ամենադառն աղետների, անիրավությունների ու վշտերի։ Նրանց դեմ կիրառված բռնությունը ավելի մեծ է քան երբեք։ Նրանք հարկադրված են իրենց զավակներին վաճառելու հեթանոսներին՝ չքավորության և հետին կարողության ծալրահեղությունից մղված։ Այն հալածանքները, որոնց ենթարկված են այսօր նրանք, թերևս գերազանցում են Դիոկլետիան և Մաքսիմիան ամբարիշտ թագավորների նրանց դեմ կատարածները»¹։

Այսպիսի մռայլ գույներով նկարագրելուց հետո կացությունը, Մակար պատրիարքն անցնում էր բուն խնդրին.

«Նկատի ունենալով, որ մենք ճշմարիտ աստվածապաշտության կապված այդ զարմից ենք, ուզում եմ ասել՝

ուս թագավորին» («Les trois patriarches des Arméniens, Grecs et Syriens ont écrit au Roi . . . M. Baron a envoyé leurs lettres au Pape, afin qu'il les fasse rendre au Roi par le Nonce»), տե՛ս «Lettre du P. Sylvestre de St.-Aignan à M. Fermanel, 7 oct. 1662», նույն ժողովածուում, «Documents inédits», t. I, p. 465. Տե՛ս նաև Ֆ. Բարոնի նամակը Լուզովիկ XIV-ին, Վաղերագիր № 2:

¹ «Et maintenant nous vous faisons connaître l'état des chrétiens, vos frères, qui sont dans ce pays. Ils sont dans les calamités, les injustices et les épreuves les plus douloureuses de la part des pachas et des gouverneurs. La tyrannie exercée contre eux est la plus grande que jamais. Ils ont été réduits à vendre leurs enfants aux nations, à cause de l'excès de leur pauvreté et de leur détresse. Les persécutions qui les accablent aujourd'hui dépassent, peut-être

ձեր գտարյուն զարմից¹, սպասում ենք մեր ցավերի թեթևացումը և մեր ազատումն այն ստրկութունից, որի մեջ զրտնըվում ենք, և որը մեր մեծ մեղքերի պատճառով է ժանրացել մեր վրա. [սպասում ենք, քանի որ] ինչպես հայտնի է ձեր ազնվական նախնիների՝ հին թագավորների տարեգրութուններից, նրանք ժամանակին ազատեցին Սուրբ-Երկիրը և քրիստոնյաներին՝ հազարացիների ստրկութունից²:

Հայոց Սալառուր Գաղատացի կաթողիկոսը հետևյալ սրտահուլզ սողերն էր գրում իր նամակում (12 փետր. 1663 թ.).

«Բացի այդ, բարձրալն աստված թող ձեզ օրհնի այնպիսի օրհնութամբ, որ ոչ ոք չկարողանա խել ձեզանից, և ձեր սրտի մեջ ներշնչի հավատի զգացումները՝ ազատելու համար բոլոր քրիստոնյաներին և հատկապես մեր խեղճ ազգին, որպեսզի կարողանանք երջանկութունն ունենալ ճշմարիտ հավատի և հոգու անդորրութան մեջ փակելու մեր աչքերը»:

Եվ շարունակության մեջ ասում էր, թե

«Հույս և հավատ ունենք, որ ձեր օրհնյալ ձեռքերով կկատարվի մեր փրկութունը»³:

Նույն շեշան էր տիրում և Անդրեաս կաթողիկոսի նամակում (11 փետր. 1663 թ.).

«Արդ, իմացած լինելով, որ ձեր ազնվական հրամանն իր մեռ է կանչում իր հյուպատոս Փրանսուա Բարոնին, հարկը ստիպեց մեզ կրկին անգամ գրելու ձեզ՝ վերհիշեցնելով կացութունը Արևելքի քրիստոնյաների, այն հոտի, որին Հիսուս Քրիստոսն ազատեց իր փրկարար արյունով, և շարժելու համար ձեր սիրտը, որպեսզի նա պատճառը լինի իրենց փրկության և հիշյալ [թուրք] ազգի ստրկութունից ազատման, որովհետև անհնար է այլևս դիմանալը»¹:

Այս նամակներն ինքնին ցույց են տալիս, թե արևելյան երեք եկեղեցիների ներկայացուցիչներն ի՞նչ տրամադրութուններից մղված ընկել էին պապական ու ֆրանսիական արքունիքների դիվանագիտության ցանցի մեջ: Նրանք իրենց ժողովուրդների ազատագրման հույսերը միամտորեն կապելով կաթոլիկ Եվրոպայի հետ՝ կաշվից դուրս էին գալիս արտահայտելու համար իրենց «կրոնական անկեղծութունը»՝ հանդես Ալեքսանդր VII պապի և իրենց «անվերապահ սերը»՝ դեպի Լուդովիկ XIV թագավորը:

Այս մասին սակայն հետաքրքրական են նաև վերոհիշյալ հյուպատոս Փրանսուա Բարոնի նամակները:

Նա ի միջի այլոց գրում է իր թագավորին, 23 հուլ. 1663 թվակիր նամակում.

«Այս առաքինի անձնավորութունները, Տեր, շատ մեծ սեր ու հարգանք ունեն Ձեր Վեհափառության հանդես և հուսով են, որ Ձեր իշխանության օրով կազատվեն այն բռնակալութունից, որի տակ հեծում են նրանց ժողովուրդն»:

¹ «Or quand nous avons appris que votre noble commandement appelait son consule, François Baron, auprès de soi, la nécessité nous a obligé de vous écrire une seconde fois et vous remettre en mémoire l'état des chrétiens du Levant, troupeau que Jésus-Christ a racheté de son sang libéral, et pour exciter votre coeur, en sorte qu'il soit la cause de leur salut et de la délivrance de leur esclavage sous la dite nation; car il n'y a pas moyen de plus supporter», տե՛ս «Documents inédits», t. I, p. 469.

celles qu'ont exercées contre eux les rois impies Dioclétien et Maximien», տես «Documents inédits», t. I, p. 474.

² Ուզում է ստել՝ «Հոռոմեական Եկեղեցու հարազատ զավակներ ենք, ինչպես դուք»:

³ «Comme nous sommes de cette race attachée à la vraie piété, je veux dire votre race pure, nous espérons le soulagement, et la délivrance de l'esclavage où nous sommes, qui ne nous accable qu'à cause de nos grands péchés, comme il est évident par les annales de vos nobles aïeux, les anciens rois, qui ont autrefois délivré la Sainte-Terre et les chrétiens de l'esclavage des Agariens», տե՛ս «Documents inédits», t. I, p. 475.

³ Սալառուր Գաղատացու այս նամակը տե՛ս Վավերագիր № 1:

բը մի քանի դարերից ի վեր: Այդ բանի համար նրանք արդթում են անգագար»¹:

Նույն թվականով մի ուրիշ նամակում, որն ուղղված է մինիստրին (Կոլբերին), Բարոնը նույն անձերի մասին ասում է.

«Այս բարձրաստիճան հոգևորականները, Տեր, Նորին Վեհափառություն հանգեց արտակարգ եռանդ ու սեր ունեն. նրանք կաթողիկե և առաքելական հուսման դավաններ են. և որովհետև այս և ուրիշ շատ շնորհներ նրանք թագավորի բարությունն են պարտական, այդ պատճառով իրենց ամենախորին երախտագիտությունը նրան արտահայտելու համար օգտվում են ամեն մի առիթից, երբ տեսնում են, թե իրենց նամակներին բռնվելու վտանգ չկա»²:

Պարզ է, որ Մերձավոր Արևելքի տառապող ժողովուրդների առանց այն էլ դեպի ազատություն ձգտող արամադրությունների վրա ուժեղ կերպով ազդում էր արևմտյան պրոպագանդան՝ միանալով ժամանակի խաչակրական ադմոսկներին հետ, որոնք այնքան սովորական էին Եվրոպայում Կ. Պոլսի անկումից (1453 թ.) ի վեր:

Պաշակրական շշուկներին, մանավանդ Լիպանիոյի նավալին նշանավոր ճակատամարտից (7 հոկտ. 1571 թ.) ի վեր, որտեղ չարաչար պարտություն էին կրել թուրքերը Արևմուտքի միացյալ ուժերից, մեծ տեղ էր սրվում հիբոպական պետությունների քաղաքականության մեջ և ամեն անգամ, երբ թուրքերն այս կամ այն ուղղությամբ սպառնում էին նրանց, խաչակրության հարցը մեջտեղ էր գալիս:

¹ Տեսնել նամակն ամբողջությամբ, Վավերագիր № 2:

² „Ces prélats, Monseigneur, ont un zèle et un amour pour sa Majesté très particulier; ils sont catholiques et apostoliques romains; et comme ils tiennent cette grâce et beaucoup d'autres de la bonté du Roi, ils profitent des occasions où ils croient que leurs lettres ne courent pas risque d'être interceptées, afin de lui en témoigner leurs très humbles reconnaissances“, տե՛ս „Documents inédits“, t. I, p. 478.

XVII դարի ընթացքում հրապարակ եկած բազմաթիվ ծրագրերից հատկապես մի քանիսը ուղղակի վեր էին հանում այն միտքը, թե Ֆրանսիայի թագավորները ղեկավարող զեր պիտի ունենային խաչակրական շարժումների մեջ: Այսպիսիներից էր, օրինակի համար, այն մեծ ծրագիրը, որ մեզ թողել է Մյուլին (Maximilien de Béthune, duc de Sully) իր «Թագավորական տնտեսություն» („Economies royales“) աշխատության մեջ՝ Օսմանյան Կայսրությունը նվաճելու և բաժանելու մասին (1607 թ.). և այդ ծրագիրը, որի նախատեսած հիբոպական տասնհինգ պետությունների համազաշնակցությունը 273,800 զինվոր ու 117 ռազմանավ պիտի տրամադրեր թուրքերի դեմ արշավելու համար, շատերի կարծիքով նույնինքն ֆրանսիական թագավոր Հենրիկ IV-ի ծրագիրն էր¹: Նմանապես Դը Բրեվի (François Savary de Brèves) ծրագիրը, որ գտնվում է նրա «Համառոտ զրույց օսմանյան թագավորների միապետությունը տապալելու և կործանելու ապահով միջոցների մասին» („Discours abrégé des asseurez moyens d'anéantir et ruiner la Monarchie des Princes Ottomans“) աշխատության մեջ (1620 թ.), նպատակ ուներ քրիստոնյա թագավորների ձեռքով թուրքական կայսրությունը քայքայելու և տապալելու միջոցների հետ միասին ցույց տալ նաև Լուզովիկ XIII-ին՝ «նրա փառքն ու տիրապետությունն անեցնելու հնարավորությունը»²: Իսկ 1663 թվականին լույս էր տեսնում ֆրանսիացի նշանավոր մարշալ-գեներալ Տյուրենի (Henri de la Tour d'Auvergne, vicomte de Turennes) ծրագիրը, որ չէր կարող ազդու արավորություն չթողնել այն օրերին, երբ ամբողջ աշխարհն արդեն պատերազմի հայտարարության էր սպասում Լուզովիկ XIV-ի կողմից սուլթանի դեմ:

Տյուրենը, հիշեցնելով քրիստոնյաների ազդեալի դրությունը թուրքական լծի տակ՝ կոչ էր անում Արև-Արքային՝

¹ T. G. Djuvara, „Cent projets de partage de la Turquie“, p. 163—171.

² Ibidem, p. 202—208.

անցնել քրիստոնեական բանականների գլուխը և դիմել «ազատարար» արշավանքի: Այս շարժմանը պիտի մասնակցեին Կայսրը, զերմանական Լիգան, Սպանիայի թագավորը, հունգարացիները, տրանսիլվանացիները, շվեյցարացիները, խորվաթները, իտալական պետությունները, ասպետական կարգերը, պիտի հրավիրվեին նաև հոլանդացիներն ու անգլիացիները, պորտուգալացիներն ու լեհերը, կազակներն ու մուկոմցիները, և մինչև իսկ սլավոնները: հույս էր դրվում նաև շվեդացիներին, դանիացիներին և Հանդեսական լիգայի դրամական օժանդակության վրա և այլն¹:

Արիշ հարց է այս ճառի վավերականությունը, որպես Տյուրենի հեղինակություն: Տ. Ջուվարան իրոք կասկած է հայտնում այդ մասին, Տյուրենի այս ճառն համարելով գրական այն նմանագրություններից (pastiche), որոնք շատ սովորական էին XVII դարում. բայց մեզ համար կարևորն այն է, որ «այս գործը եթե նույնիսկ Տյուրենի սեփական աշխատությունը չէ, համենայն դեպս հատկանշում է այն դարաշրջանը, երբ նա լույս է տեսել»²:

¹ Ibidem, p. 215—220.

Տյուրենի ճառը հրատարակված է գերմաներեն լեզվով. «Heinrichs von Tour Vice-Comtes von Tourenne Rede so er gegen dem aller Christlichsten König über den Türkischen Krieg zu Marsal den 31 Augusti lauffenden 1663 Jahre soll gehalten haben; Gedruckt in diesem Jahr». Հազվագյուտ հրատարակություն, որից մի օրինակ գրուելով է Բրյուսելի Արքայական Մատենադարանում:

Հոլանդացի զինական չեմբան Կոնրինյը նույն թվականին այս ճառը թարգմանել է լատիներենի. «Henrici Turrii vicecomitis de Tourenne ad Regem Christianissimum de bello turcico oratio habita Marsalii 31 Augusti 1663», որը գտնվում է հետևյալ ժողովածուի մեջ. «De bello contra Turcas prudenter gerendo libri varii selecti et uno volumine editi cura Hermanii Conringii», Helmstadt, 1664, p. 431—438.

² Տե՛ս T. G. Dj uvara, «Cent projets de partage de la Turquie», p. 220.

Ծիշո է, այս ծրագիրը միմիայն եվրոպական Թուրքիայի մասին էր խոսում, ինչպես նման ծրագրերից շատերը, բայց այդ էլ բավական էր սարկուսթյան շղթաների տակ հեծող բոլոր սրտերը մի անգամ ևս թունդ հանելու համար. մանավանդ այնպիսի ժամանակ, երբ մի կողմից Կայսրը Հունգարիայում, իսկ մյուս կողմից Վենետիկն ու նրա դաշնակիցները Միջերկրականում կռվի մեջ էին թուրքերի հետ և այս դրուսթյան մեջ արդեն խաչակրության անազանքն ավելի քան երբեք բարձր էր հնչում Եվրոպայից: Մանավանդ Կանդիայի պատերազմը, որն անընդհատ շարունակվում էր 1645 թվականից իվեր, Արևելքի քրիստոնեությունն աչքին մի փաստ էր թվում, թե Եվրոպան արդեն գործնականորեն ու վճռականորեն մաքառում էր թուրքերի դեմ: Վատիկանյան դոկտրինա տակ քրիստոնյա թագավորներն ու իշխանները նոր դրոհ էին պատրաստվում և, ըստ տիրող կարծիքի, Լուդովիկ XIV-ը, եթե նույնիսկ չշարժվեր տյուրենյան այս նոր ծրագրով, արդեն շուտով մտնելու էր թուրքերի դեմ մղվող այդ կռվի մեջ, ու... տասյալելով օսմանյան բռնապետությունը... ազատելու էր Արևելքի տառապող քրիստոնյաներին:

Այս բոլորը կարծես ասում էին թե մոտայուտ է «խաչի հաղթանակը» և քրիստոնեություն փրկությունը:

Այս կարծիքն ու համոզմունքը տիրում էին արևելքի ճնշված ժողովուրդների մոտ: Եվ արևելյան քրիստոնեությունն սկսում էր շարժվել՝ քայլեր առնելով ազատագրության հարցը գաղափարականից փոխադրելու գործնական հողի վրա:

Շարժումն արդեն փաստ էր 1666 թվականին:

Դոմինիկյան կրոնավոր Հայր Օտտոմանի (Padre Ottomano) կենսագիր Հայր Հ. Բուլգարինին (P. Ottaviano Bulgaringini) ավանդում է, որ այս թվականին մի հայ ազնվական (gentil'huomo armeno) հայ-հունական միացյալ ապստամբության ծրագրով որպես պատվիրակ հասել էր Փարիզ, Հայր

Օտտոմանին հրավիրելու, որ նա Արեւելքի դժգոհ քրիստոնեութեան գլուխն անցնէր Մատթեոս IV-ի բանակների դեմ կռիւլու համար:

«Այս միջոցներին, — գրում է նա, — Փարիզում մի հալ ազնւական, որը հանճարեղ և մեծ հաստատակամութեան տեր մարդ էր, եկեղ շալր Օտտոմանի մոտ՝ նրան խրախուսելու համար Արեւելքան Կայսրութիւնը վերականգնելու գործում, հանձնարարական նամակներով, որոնք գրված էին Ալեքսանդրիայի հունական պատրիարքի և նրա ընդհանուր տեղապահ Կողմա Մալբրիկ Պալեոլոգի կողմից, որը Արեւելքի քրիստոնյա վերջին կայսրերի արքայական զարմից էր: Նա (հալը) անկարելի չէր համարում արդ բանի հաջողութիւնը, եթէ զբանում օգնէին լատինական զինված ուժերը, հունածես պատրիարքների և եպիսկոպոսների անունից նրան վստահեցնելով, որ Հունաստանի նահանգները և Հայաստանի մեծագուլն մասը, որոնք առավելագին քրիստոնյա բնակչութիւն ունեն և թուրքական փոքրաթիւ գորքով են պահպանված, կթոթափեն օսմանյան լուծը և թագավոր կոռակեն նրան (Շալր Օտտոմանին): Նա հայտնում էր, որ Ալեքսանդրիայի պատրիարքի դիտումն էր, եթէ կարողանար համաձայնութեան գալ հունածես ուրիշ եպիսկոպոսների հետ, շարժման մեջ զնել մոսկովցիներին, վալաքներին, եթովպացիներին, [ալսինքն] մի ամբողջ կիսաշխարհ, Օսմանյան Կայսրութեան զանազան կողմերից ներխուժելու համար»¹:

Քիչ հետո այս խնդրով անձամբ Փարիզ էր մեկնել նաև հիշյալ պատրիարքական տեղապահն ինքը:

Ուրեմն Օսմանյան Կայսրութեան մեջ 60-ական թվականներին, երբ Կրեաեի պատերազմի առթիւ նոր խաչակրութեան ալիք էր բարձրացել, հուլն-հակական միացյալ ապրս-

տամբութեան ծրագիր էր ստեղծվել և ապստամբական արք-ծրագրին կլանք տալու համար պատվիրակութիւն էր ուղարկվել զեպի Եվրոպա, օգտվելու համար ժամանակի քաղաքական հանգամանքներից:

Այդ պատվիրակութեան գործունեութեան մասին մենք կտեսնենք հետզհետե հաջորդ գլուխներում:

Իսկ ինչ վերաբերում է շարժման ընդհանուր ծավալին, պետք է նկատել, որ այդ շարժումը սահմանափակված չէր Միջինի սահմաններում, այլ ընդհանուր բնութք էր կրում թէ հուլների և թէ հայերի մոտ:

Այսպես՝ հունական շարժմանն արձագանքել էր ո՛չ միայն Անտիոքի պատրիարքը, որի մասին տեսանք վերևում, այլ նաև Ալեքսանդրիայի պատրիարքը: Ավելի ուշ՝ Վատիկանի վենետական դեսպան Անտոն Գրիմանիի (Antonio Grimani) մի նամակից, որը Շալր Օտտոմանի ծրագրերի մասին է խոսում, տեսնում ենք նաև, որ շարժման այս սահմանափակի լայն էր, ընդգրկելով «հունական մի քանի պատրիարքներին»²:

Ալեքսանդրիայի նշանակութիւնն ու զերը տվյալ դեպքում շատ մեծ էր, որովհետև հունական չորս պատրիարքութիւնների³ մեջ Ալեքսանդրիայի աթոռը, որպես առաջինը և ամենահինը, բացառիկ զիրք ու հեղինակութիւն ուներ հունական և ամբողջ հունադավան աշխարհում³: Այս է պատճառը, որ Ալեքսանդրիայի պատրիարքը հուլների ազատագրական այս կազմավորվող, բայց ծավալուն, շարժման մեջ առաջնորդողի դերում էր հանդես գալիս և Պալեստինա պատրիարքն ինքն

¹ Revue d'Histoire Diplomatique, t. XVII, p. 372—373.

² Հուլներն ունէին չորս պատրիարքութիւններ. 1. Ալեքսանդրիայի, 2. Երուսաղեմի, 3. Անտիոքի, 4. Կ. Պոլսի:

³ Chev. Ricaut, Histoire de l'Eglise Grecque et de l'Eglise Arménienne, Amsterdam, chez Jaques Desbordes, 1710, p. 119.

¹ P. O. Bulgarini, Vita del Padre maestro F. Domenico di S. Tommaso dell' Ordine de Predicatori, detto prima Sultan Osman Ottomano, figlio d'Ibraim, Imperatore de Turchi, Napoli, 1689, p. 285.

այս միջոցներին Մոսկվա գնալով, Փարիզ էր ուղարկում իր տեղապահ Կողմա Պալեոլոգին:

Սակայն մենք անցնենք հայոց պատվիրակին:

¹ Պայտիոսը, Անտիոքի պատրիարք Մակարի հետ միասին, Փոքր Ասիայով, Պարսկաստանով, Վրաստանով ու Ասորիսանի վրայով Մոսկվա էր հասել 1666 թ. նոյ. 12-ին, հին տոմարով՝ նոյ. 2-ին, տե՛ս Н. И. Костомаров, „Русская история в жизнеописаниях ее главнейших деятелей“, отд. II, вып. IV, Петербург, 1874, стр. 202—203. Հմտ. և И. Ю. Крачковский, „Избранные сочинения“, т. I, Москва-Ленинград, 1955, стр. 263.

Իրողություն է, որ Ալեքսանդրիայի և Անտիոքի պատրիարքները 1666 թ. դեկտեմբերին Մոսկվայում մասնակցում են Նիկոնի դատապարտման համար զուգարված ժողովին, սակայն և կասկածից վեր է, որ նրանց այս ուղևորության մեջ կար նաև քաղաքական նպատակ, որը և գուցե զլխավորն էր, այն է՝ ցարական արքունիքի հետ բանակցություններ վարել՝ սուսներին թուրքերի դեմ ոտքի հանելու ուղղությամբ. այս մասին տես ներկա աշխատության է. զլուխը: Մոսկովյան դիվանների հետագա ուսումնասիրությունը լույս կսփռի այս հարցի վրա:

ԳՆՈՒՆ Ե.

ՀԱՅՈՑ ՊԱՏՎՈՐԱԿԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՈՅՒԱՎԱԿԱՆ ԴԻՐՔԸ

«Հայ ազնվականի» ինքնությունը.— Կողմա Պալեոլոգի մի նամակը Կոլբերին.— «Հայ ազնվականի» անունը Հայի Մուրատ կամ Մանտեպի Մուրատ էր.— Սա բաղիջեցի էր և կոչվում էր նաև Շանմուրատ.— Հայոց պատվիրակը Բաղեշի մեծ վանատկաններից էր և արևմտահայ առևտրական բուրժուազիայի (խոշայության) ներկայացուցիչն էր:

Ո՞վ էր արդյոք Հ. Բուլգարինիի հիշատակած «հայ ազնվականը» (gentil'huomo armeno):

Դժբախտաբար սակավաթիվ և աղքատ են հայոց պատվիրակի անձնավորության մասին մեր ունեցած տեղեկությունները, ինչպես և սահմանափակ են մեր միջոցները՝ նրա ինքնությունն ու հասարակական դեմքը կամ դիրքը լրիվ կերպով պարզելու համար: Այնուամենայնիվ մենք պիտի ջանանք հարավորության սահմաններում լուսաբանել այդ հարցերը, աշխատելով պատռել այդ խորհրդավոր անհատի շուրջը պատռել մշուշի բոլորը:

Հ. Բուլգարինին, ինչպես տեսանք, հայ ազնվականի անունը չի տալիս, բայց այդ հարցի վրա բավական լույս է սփռում Փարիզի Ազգային Մատենադարանում պահվող մի անտիպ վավերագիր¹, որի գյուտը պարտական ենք «Դիվանա-

¹ Bibliothèque Nationale, Mélanges Colbert, vol. 142, fol. 175.

գիտական Պատմության Հանդես»-ի թղթակից Լ. Միսաքին։
Վերջինս Կողմա Պալեոլոգի մասին խոսելիս գրում էր.

«Մեր կատարած պրպտումների ընթացքում մեզ հաջող-
վեց Փարիզի Աղգային Մատենադարանում գտնել հիշյալ
պատրիարքական տեղապահի 25 նոյ. 1666 թվակիր մի նա-
մակը, ուղղված Կոլբերին (Jean-Baptiste Colbert), մի նա-
մակ, որը շահեկանություն չի ներկայացնում մեզ համար և որը
սակայն գոնե ապացուցում է, որ հիշյալ անձնավորությունն
խսկապես Փարիզ է եկել այդ ժամանակ՝ Chazi Murat անուն
մի հայի հետ, որը իրոք կարող է լինել Լ. Բուզգարինի վերև
հիշատակածը»¹:

Այսբանով սահմանափակվում էին Լ. Միսաքի հաղոր-
դած տեղեկությունները հիշյալ նամակի մասին և մենք դրա-
նով թեև որոշ լուսարանություն էինք ստանում հայազգի ազ-
նրվականի մասին, սակայն վերջինիս անվան ձևը այնքան էլ
պարզ չէր: Նկատի ունենալով, որ Լ. Միսաքի հոդվածը ֆրան-
սերեն լեզվով էր գրված, մենք Chazi Murat-ը կարող էինք
կարգալ Ծաղի Մուրատ, և սկզբնական շրջանում մեր կար-
ծիքն այն էր եղել, թե Ծաղի Մուրատ-ը ուրիշ բան չէր, եթե ոչ
աղավաղումը Ծահմուրատ-ի²: Սակայն հետագայում, երբ
մենք հնարավորություն ունեցանք այդ անտիպ նամակի
պատճենը ձեռք բերելու³, պարզվեց ուրիշ բան:

¹ Revue d'Histoire Diplomatique, t. XVII, p. 372.

Մաթորեզը միանում է Միսաքի կարծիքին՝ Բուզգարինի հիշատա-
կած հայազգի ազնվականի և Chazi Murat-ի նույնության մասին.
տե՛ս J. Mathorez, «Notules sur quelques Arméniens ayant vécu en
France avant 1789», Revue des Etudes Arméniennes, t. II, 1922, p. 34.

² Տես Լ. Ս. Անասյան, Շնչաստ մը հայոց ազատագրական պատ-
մութեան, Մահոտի Շահմուրատ և Յովհաննէս Քիւթիւնջի, Երկուեր
(ամսագիր), Փարիզ, Ե տարի, № 6—8 (1934 թ. հոկտ.-դեկտ.):

³ Վաստակավոր բանասեր Կ. Լ. Բասմաջյանը, ընդառաջելով մեր
խնդրանքին, 1938 թվականին մեզ ուղարկեց այդ նամակի պատճենը,
որ հայերեն թարգմանության հետ հրատարակում ենք սույն աշխա-
տության վերջում, Վավերագիր № 3: Նամակը իտալերեն լեզվով է,
բայց որպես իտալերեն, և միաժամանակ խմբագրման տեսակետից էլ:

Նամակը գրված էր իտալերեն լեզվով, որը ժամանակի
առևտրի և դիվանագիտության միջազգային լեզուներից մեկն
էր, որով հայ ազնվականի անունը գրված էր իտալական ուղ-
ղագրությամբ ու պետք էր կարգալ Խաձի Մուրատ¹, այսինքն՝
Հաջի Մուրատ: Եթե նկատի ունենանք, որ նամակի հեղինակը
կամ խմբագրողը հուլյն է, մեզ հասկանալի կդառնա, թե հաջի
բառը ինչպիսի է դառնում խաձի: Թուրքիայի հուլյները տեղա-
կան լեզուն խոսելու իրենց յուրահատուկ արտասանությունն
ունեն: Նրանք և հնչյունը արտաբերում են խ, իսկ ջ հնչյունը՝
ձ: Ուրեմն՝ հուլյների բերանում հաջի-ն անույնաբան խաձի է,
որի հարազատ արտահայտիչն է իտալական chazi ուղղա-
գրությունը²:

Հաջիությունը պատվավոր մակդիր էր, որը կրում էին
ժահմեղականների մոտ՝ դեպի Մեկկա ուխտի գնացած մար-
դիկ, իսկ քրիստոնյաների մոտ՝ դեպի Երուսաղեմ: Հաջի-ն
արբերեն բառ է (حاجی), որ նշանակում է «ուխտավոր»:

Հայերի մոտ նվազ գործածական էր հաջի բառը: Նրանց
մոտ ավելի էր ընդհանրացած նույն իմաստով գործածել մուղ-
տեսի, մղտեսի կամ մահուեսի, որ նույնպես գալիս էր արա-

շատ անգրագետ ձեռքի գործ է, այնպես որ մեզ մեծ գովարտություն
դատուանց նրա վերծանումը: Այդ գովարտության բարդացման իհար-
կն որոշ շաբոթ նպատակ էր և այն պարագան, որ արտադրողն անձա-
նաթ էր իտալերեն լեզվին: Աշխատելով բնագրում ուղղել միմիայն
արտադրողի վրիպումները, որքան որ նկարագր է եղել նկատել, հե-
ղինակի լեզվական, բնութագրական և շարանյութական անհարթու-
թյունը թողնել ենք անփոփոխ. այդ բոլորի օրինական ու արամարանական
կարծուրը կատարելով Մարզմանության մեջ:

¹ Տարագրման օրենքով իտալ. կամ լատ. ch=հուլ. x, որ է
խ- իսկ ı տառը իտալերենում հնչվում է ձ:

² Լ. Միսաքը ապիս էր chazi ձևը, իսկ նամակի մեզ ուղարկված
ընդօրինակության համաձայն chadzi է, բայց երկու դեպքում էլ ար-
դյունքը նույնն է, որովհետև բառի արտասանությունը չի փոխվում:

բերենից՝ մուկլիսի (مقلسى), որը ծագում է Կուլս (قلس) «Երուսաղեմ» բառից¹:

Մի խոսքով 1666 թվականին հուլյն-հայկական միացյալ պատամբույթյան ծրագրով որպես պատվիրակ Փարիզ գնացող «Տայ ազնվականը» կոչվում էր Հաջի Մուրաա կամ Մահտեաի Մուրաա:

Նրա մասին Կողմա Պալեոլոգն իր հիշյալ նամակում ասում է, թե նա «ամբողջ Թուրքիայում հանրածանոթ մարդ է. կանեայում նա ազատել է ֆրանսիացի բազմաթիվ գերիներ և սուլթանը նույնպես ճանաչում է նրան»: Ուրեմն աննշան մարդ չէր նա: Իսկ իր՝ Մահտեաի Մուրաաի 1683 թվականը կրող մի ինքնագիր հիշատակարանից, որ կտեսնենք հետո, տեղեկանում ենք, որ նա բաղիշեցի էր և կոչվում էր նաև Շահմուրաա²:

Ավելի ավյալներ մեզ բացակայում են նրա ինքնության վերաբերյալ:

Հայոց պատվիրակի ինքնության վերաբերող այս դիտողություններին ղուզընթաց մեզ անհրաժեշտ է աշխատել նաև մեր ժրատ աղբյուրներից ղուլս բերել նրա սոցիալական դեմքի գոնե ընդհանուր գծերը:

Այս տեսակետից մեզ համար արժեք ունի Կողմա Պալեոլոգի ծանոթ նամակի բովանդակությունը, որ պատվիրակների անհատական գործերին է վերաբերում:

Նամակագիրը Կուլբերին հայտնում է, որ իրենք կողոպտվել են ֆրանսիական կորսարներից, և օժանդակություն է խնդրում:

¹ Հ. Աճառյան, «Հայերէն արձատական բառարան», հտ. 7, Երևան, հրատ. Միլլոնյան ֆոնդի, 1930, էջ 760—761:

Թուրքերեն լեզվի բառարանները مقلسى բառի արտասանությունը դնում են՝ մուկաղլեսի կամ մակտեսի. նշանակում է «երուսաղեմացի»: «Երուսաղեմական», տես J. D. Kieffer et T. X. Bianchi, «Dictionnaire turc-français», t. II, Paris, 1837, p. 976. J. Th. Zénker, «Dictionnaire turc-arabe-persan», t. II, Leipzig, 1876, p. 871.

² Տես Վավերագիր № 12:

Միջերկրականը XVII դարում ծովային շահատակությունների նշանավոր ասպարեզներից մեկն էր, որտեղ վխտում էին ծովահենները (պիրատներ) և կորսարները: Իրականում դժվար էր տարբերություն դնել նրանց միջև, որովհետև նրանք հավասարապես ավազակությամբ էին զբաղվում: Երեմիա Չելեբին 1649 թվականին ասում էր, թե Կ. Պոլսից Երուսաղեմ երկար տարիներից ի վեր նաև չէր գնում նրանց երկյուղից¹:

Այս ժամանակ Կանդիայի պատերազմի հետևանքով եվրոպական կորսարները մեծ գործունեություն էին սկսել և նրանց մեջ հետին տեղը չէին զբաղում ֆրանսիացիները, որոնք իբր թե միայն հյուսիս-աֆրիկյան շրջաններում էին գործում բարբարական ծովահենների դեմ կռիվում անվան տակ, որովհետև Լուդովիկ XIV-ը գաղտնորեն հակաթուրքական քաղաքականություն վարելով հանդերձ, պաշտոնապես իր բարեկամական հարաբերությունները պահում էր Բ. Դուան հետ. բայց իրականության մեջ բոլոր տեսակի ֆրանկ կորսարների հետ ամեն տեղ էին նրանք, մինչև Դարդանելի սահմանները:

Արդ, ֆրանսիական այս կորսարների հետ խնդիր ունեին մեր պատվիրակները: Ֆրանսիացի ավագ կորսար Կրիվիլին կողոպտել էր Մահտեաի Մուրաաին և Պալեոլոգի սպասավոր երկուսին, իսկ կորսար ասպետ Պոլլին՝ Պալեոլոգի հոր մի նազն էր պահել: Եվ այժմ սրանք իրենց կորուստները հետ չէին պահանջում, անշուշտ այն հիման վրա, թե իրենք թշնամի պարտքյան չէին պատկանում²:

¹ Յիզմա Չելեբի պոեմ է. «Յուզ Յուսկին, որ ի ծովն Սպիտակ գրաբում ամ ոչ երթայր ուխտաւորաց նաւ», տես «Օրագրութիւն», էջ 7:

² Նման մի խնդիր հայ վաճառականներն ունեցել էին նաև անգլիական կորսարների հետ, որոնք նրանց կողոպտել էին Ջոյուսիայի մոտ մի Թուրքական նավի վրա. բայց Հայր Օտտոմանի միջնորդությամբ, 1665—67 թվականներին, Անգլիայի թագավորը հրամայել էր վերադարձնել նրանց ասպարեզները, Revue d'Histoire Diplomatique, t. XVII, p. 372.

Այս պարագան ցույց է տալիս, որ Մահտեսի Մուրատը վաճառական էր. և ո՛չ փոքր վաճառական, եթե նկատի ունենանք, որ նա «ամբողջ Թուրքիայում հանրածանոթ մարդ» էր: Պաշեղուզը նրան Կուրբերին հանձնարարելիս խեղճ է անվանում այն պատճառով, որ նրա կրած կորուստները շատ մեծ էին, որովհետև այլապես նա խեղճ որակվելիք մարդ չէր, ինչպես կարելի է դատել նույն նամակի մյուս արտահայտություններից:

Մահտեսի Մուրատը մեկն էր անշուշտ բաղիշեցի այն անվանի վաճառականներից, որոնց մասին Գրիգոր Կամախեցին ասում է, թե «խելացիք և իմաստուն վաճառականք և անուանի հոչակաւոր տանուտեարք» էին¹, և որոնց մեջ կային, որ «յոյժ փառաւորք էին և պատուականք»²: Գեղևս XVI դարի վերջերին ու XVII դարի սկզբներին բաղիշեցի վաճառականներ կային հաստատված Վենետիկում³ և Հոմմում⁴, ինչ որ ցույց է տալիս, թե դանազան կողմերի հայ վաճառականների հետ՝ բաղիշեցի վաճառականները լայն երթևեկություն ունեին միջազգային առևտրի ճանապարհների վրա, և նրանցից մեկն էր նաև Մահտեսի Մուրատը, որ այդ նույն ճանապարհների վրա կողոպուտվել էր կորսարներից:

Մենք դեռ հաջորդաբար կտեսնենք նաև, որ նա Հայաստանի խոջա-«իշխանների» պատգամավորն էր⁵:

Այսպիսով, ուրեմն, հայոց պատվիրակ Մահտեսի Մուրատը մեզ ներկայանում է որպես մեկը հայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներից:

Ինչպես տեսանք՝ արևմտահայ խոջայությանը դեպի ազատագրական դիրքերն էին մղել թուրքական զինվորական ավատատիրության կաշկանդող մթնոլորտը, որն ուժեղ կեր-

պով արգելակում էր նրա զարգացմանը, և հայ շեկերությունից կրած ծանր հարվածները: Այս կրկնակ ազդակների ճնշման տակ նա ասպարեզ էր իջել սուլթանական լուծը թութափելու, սեփական հայրենիքում սեփական իշխանություն ստեղծելու համար:

Ուստի արևմտահայ խոջայությունը թուրքիայի ահեղի ուժի դեմ հրապարակ գալով հայ ժողովրդի ազատագրության անունով, իր ծրագրերն իրագործելու համար հարկադրված էր դաշնակիցներ որոնել արտաքին աշխարհում. որով, պապական զիվանագիտության և ֆրանսիական կապիտալի Արևելքում ունեցած դյութիչ ազդեցության տակ, մի կողմից առաջ էր մղում զինակից հոգևորականության պարագլուխներին, որպեսզի նրանք կրոնական զիջողության ճանապարհով նպաստավոր հող ստեղծեին կաթոլիկ եվրոպայում, մյուս կողմից իր ծրագրերի ուղղակի հետապնդման համար հրապարակ էր քաշում խոջայական դասի երևելի ներկայացուցիչներից մեծ վաճառական բաղիշեցի Մահտեսի Շահմուրատին, այն «հայ ազնվականին», որը 1666 թվականին Փարիզ էր գնացել, հայտնելու համար, որ հայերը, հույների հետ միասին, պատրաստ էին ապստամբություն սկսելու Օսմանյան Կայսրության մեջ, եթե Հայր Օտտոմանը գլուխ կանգնեք այդ շարժմանը: Ո՛վ էր սակայն Հայր Օտտոմանը:

¹ Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 325:

² Անդ, էջ 389:

³ Ղ. Ալիշան, «Հայ-Վենետ», Վենետիկ, 1896, էջ 314, 359 և 363:

⁴ Անդ, էջ 363:

⁵ Տե՛ս նույն աշխատության Թ՝ գլուխը, հատկապես էջ 159—160:

ՀԱՅՐ ԳՈՄԻՆԻԿ ՕՏՏՈՄԱՆԸ

Ո՛վ էր Հայր Օտտոմանը.— նա նախորդները՝ Կալիքստ Օտտոմանը (XV դար) և Ալեքսանդր Օտտոմանը (XVII դարի սկիզբ)։— Հայր Գոմինիկ Օտտոմանը Սուլթան Իբրահիմի (1640—1648 թթ.) «որդին» և Մանոնա IV-ի (1648—1687 թթ.) «եղբայրն» էր.— Քուրթական նավի գերումը Մալտայան ռապեռտների կողմից (1644 թ.)։— Սուլթանուհի Զաֆիլուան և մանուկ Օսմանը Մալտայում։— Կրետեի պատերազմի ծագումը։— Օսմանի դաստիարակումն ու անդամակցումը Գոմինիկյան միաբանության՝ Padre Ottomano (Հայր Օտտոման) անվամբ։— Հայր Օտտոմանը Հռոմում (1660—1664 թթ.)։— Հայր Օտտոմանը և կաթոլ. Անտոն Բարբերինի։— Մազարինիի և Լուզովիի XIV-ի ֆաղափական հեռանկարները։— Հայր Օտտոմանի ուղեորությունը Հռոմից դեպի Փարիզ և ընդունելությունը ֆրանսիական մայրաքաղաքում ու աբուլեիֆում (1665 թ. հունվար)։— Ասպետ Գր ժանը ջատագովում է նա աբուլեիֆան ծագումը։

Մի շատ հետաքրքրական դեմք էր գոմինիկյան կրոնավոր Հայր Օտտոմանը, որն այս շրջանում մեծ ազմուկ էր հանել քաղաքական աշխարհում։ Նա սուլթան Իբրահիմի կարծեցյալ որդին էր և իբրև այդպիսին՝ հավակնություն ունեիր իր «եղբայր» Մանոնա IV-ի գահին տիրանալու՝ գործիք ծառայելով Օսմանյան Կայսրության թշնամի պետությունների ձեռքին։ Նրա մեջ ներդաշնակորեն ի մի էին շաղափավել արևելյան դիվանագիտության և եզվիտական կեղծավոր քրիստոնեության զույգ հատկանշերը, որոնցով նա անձնատուր էր

եղև սուլթանների գահը գրավելու սին երազներին։ Նա օրվա միջազգային հերոսն էր։

Չմոռանանք հիշել, որ այս տիպն իր նախորդներն ունեցել էր պատմության մեջ։ XV դարի կեսերին, երբ Կ. Պոլսի անկումով հուզմունքի մեջ էր ընկել Եվրոպան, արևմտյան դիվանագիտությունը հրապարակ էր բերել մի քաղաքական արկածախնդրի, որն իբրև թե սուլթան Մանոնա II-ի (1451—1481 թթ.) եղբայրն էր և օսմանյան գահի օրինավոր տերը. նա մկրտված էր Կալիքստ III պապի ձեռքով և կոչվում էր Կալիքստ Օտտոման։ XVII դարի հրկրորդ տասնամյակին հրապարակ էր եկել մի ոմն Ալեքսանդր Օտտոման, որն իրեն համարում էր սուլթան Ահմեդ I-ի (1603—1617 թթ.) եղբայրը։ Նա 1615/16 թվականներին Փարիզում էր ապրում. և ապա, Թուրքերի դեմ խաշակրություն կազմակերպելու ծրագրով, շրջել էր մի շարք երկրներ՝ անցնելով Իտալիա (Մազոլիա, Ֆլորենցիա, Հռոմ, Վենետիկ), Գերմանիա, Մալտոսիա, և հետո Ռուսաստան։ Գրագրության մեջ լինելով գանազան արքունիքների հետ, նա հայտարարություններ էր ուղարկում Օսմանյան Կայսրության աշխարհիկ և հոգևոր իշխանավորներին, նրանց մեջ իրեն անվանելով «Սուլթան Յահյա, օսմանյան մեծ իշխան և օրինավոր ժառանգորդը թուրքական գահին», և կոչ էր անում՝ ապստամբել ապօրինի կառավարության դեմ, խոստանալով շուտով ասպարեզ գալ եվրոպական մի ուժեղ բանակով²։

¹ J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. II, p. 521.

² В. Макушев, „Болгария под турецким владычеством, преимущественно в XV и XVI веках“, Журнал Министерства Народного Просвещения, 1872, ч. CLXIII, отд. 2, стр. 324.

Ալեքսանդր Օտտոմանի նամակները պահված են իտալական (Վենետիկի, Տուրինի և Ֆլորենցիայի) դիվաններում։ Ֆլորենցիայի դիվանում գտնվում է նրան վերաբերող մի ամբողջ թղթապանակ՝ այս խորագրով. „Sultano Jachia figlio di Mehemet, gran Signore de Turchi, e suoi negoziati con il gran Duca in diversi tempi“, որի մեջ՝ „Compendio della vita del Sultan Jachia fino all'anno 1630, fatto dal conte Gasparo Scioppio“.

Կիևի և Մոսկվայի հետ նրա ունեցած հարաբերությունների մա-

Այս տիպի քաղաքական մի արկածախնդիր էր և Հայր Դոմինիկ Օտտոմանը, որի մասին շատ են խոսել նրա ժամանակակիցները թե՛ առանձին հատորներով և թե՛ ի միջի այլոց, և շատ բան են անել թեր ու դեմ նրա ծագման ու անձնավորության մասին¹:

սին տե՛ս П. К у л и ш ь, „Восточный вопрос и задунайская славянщина перед глазами Московского царя Михаила Феодоровича, 1626“, Журнал Министерства Народного Просвещения, 1878, ч. СХСVI, отд. 2, стр. 4—56 С. Ж и г а р е в, „Русская политика в восточном вопросе“, т. I, Москва, 1896, стр. 82—87. Նաև՝ „Воссоединение Украины с Россией; документы и материалы в трех томах“, т. I, Москва, Изд. Академии Наук СССР, 1953, стр. 52—53.

¹ Հայր Օտտոմանի մասին խոսող ժամանակակից աշխատություններից գլխավորներն են.

ա) Vita del Padre maestro F. Domenico di S. Tommaso dell'Ordine de Predicatori, detto prima Sultan Osman Ottomano, figlio d'Ibrahim, Imperatore de Turchi. Disposta in dieci libri del Padre Baccelier B. Ottaviano Bulgarini della Congregazione di S. Maria della Sanità di Napoli. In Napoli, presso Giuseppe Roselli, 1689.

Այս շատ հետաքրքրական հրատարակության բովանդակության մասին բավականաչափ գաղափար տալիս է Ն. Միսաբը՝ Հայր Օտտոմանին նվիրած իր հոդվածում (տե՛ս ստորև). Իսկ Հայր Օտտոմանի հետ Մահմետի Մուրատի և Կոզմա Պալեոլոգի ունեցած հարաբերություններին վերաբերող մասերի արտադրությունը մենք ձեռք ենք բերել Ն. Բ. Չեֆինյանի միջոցով, հոռմի Կասանատյան Մատենադարանի օրինակից (Biblioteca Casanatense, Z. IV. 8).

բ) L'Histoire du Prince Osman, fils du Sultan Ibrahim, Empereur des Turcs, et frère de Mahomet IV. à présent régnant, depuis nommé le P. Dominique-Othoman, de l'Ordre des Frères Prescheurs etc... A Paris, chez Estienne Loyson, 1670.

Նեղինակն է Chevalier de Jant-ը, որ չի նշված դրքի նախառուժ: Այս գրքի առաջին տպագրությունը եղել է 1665 թվականին:

գ) Vie du P. Dominique de St. Thomas, fils d'Ibrahim, empereur des Turcs, par le P. Jacques Bullet, dominicain, gd. pénitentier à Naples, né à Besançon dans le XVII^e siècle. Besançon, 1719.

դ) Histoire des trois derniers empereurs des Turcs, depuis 1623 Jusqu'à 1677. Traduite de l'Anglois de Ricaut. Tome II. Paris, chez

Հոգոսի մոտ Մալտայան նավերը 1644 թվականին բռնում են թուրքական մի նավ, որով սուլթան Իբրահիմի ներքինապետ Սյումբուլ աղան Կ. Պոլսից Ալեքսանդրիա էր գնում: Սյումբուլ աղան իր հետն էր առել իր ամբողջ հարստությունը, տունը, ծառաներին և աղախիններին: Վերջիններս թվով երեսուն էին և նրանց մեջ գտնվում էր նրա ստրկուհի Զաֆիրան, որը սուլթան Իբրահիմի անդրանիկ որդի թագածուսանգ Մահմետի դայակն էր: Այս ստրկուհին, որին Սյումբուլ աղան իր սեփական հարեմի համար էր գնել, գնվելուց վեց ամիս հետո ունեցել էր մի երեխա, որի անունը Օսման էին դրել: Իրողություն է, սակայն, որ սուլթան Իբրահիմը այնքան էր սիրում այս ստրկուհուն ու նրա որդուն, որ հետզհետե խանդն էր գրգռել գահածառանգ իշխանի մոր՝ տեղի տալով գայթակղալից զեղաբերի, որից հետո ներքնապետը, վտանգ զգալով ստեղծված դրություն մեջ, իր առաջացած տարիքը պատրվակելով սուլթանից թուլատվություն էր ստացել տնով-տեղով քաշվելու Կահիրե: Այս ուղևորության ընթացքին է, որ պատահել էր հանդիպումը մալտացիների հետ 1644 թ. սեպտ. 28-ին: Սյումբուլ աղան մեռել էր զինքը ձեռնի՝ կռվելով թըշնամիների դեմ, իսկ Զաֆիրան գերի էր ընկել իր երեխայի հետ:

la Veuve Louïs Billaine, 1682, p. 61: „Histoire du Père Ottoman et origine de la guerre de Candie“.

Ժամանակակից ճեղքակներից դեռ հիշվում են Ֆրանսիացիներ՝ Mezeray („Annales des Turcs“), Verdier („Abrégé de l'Histoire des Turcs“), Parival („Histoire du Siècle de Fer“); իտալացիներ՝ Vianoli („Storia Veneziana“), G. Brusoni („Historia dell'ultima guerra tra Veneziani e Turchi“), Bart. dal Pozzo („Storia dei Cavalieri di Malta“), նաև Gualdo, Lochi, G. Sagredo և ուրիշներ:

Հայր Օտտոմանի մասին տե՛ս նաև H. Missac, „Le Père Ottoman (1644—1676)“, Revue d'Histoire Diplomatique, t. XVII, p. 350—378. Ch. Terlinden, „Le Pape Clément IX et la Guerre de Candie (1667—1669), d'après les archives secrètes du Saint-Siège“, Louvain-Paris, 1904, p. 122, 133, 185—187 (=Université de Louvain, Recueil de Travaux, fasc. 13). P. A. Guglielmotti, „Storia della maritima pontificia“, vol. VIII, p. 293—295. J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. II, p. 521.

Այս դեպքը, ինքնին աննշան, իր հետևանքներով շատ նշանավոր է դառնում, որովհետև սա է առիթ ծառայում Կրետեի հայտնի պատերազմին:

Մալտայան ասպետները Մալտա վերադառնալուց առաջ թուրքական նավը առաջնորդել էին Կրետեի Կալիսմենա փոքրիկ նավահանգիստը: Եվ որովհետև Կրետեն այս շրջանում վենետացիներին էր պատկանում, դեպքը տեղի էր ավել դիվանագիտական միջադեպի: Կ. Պոլսում ճնշման էր ենթարկվել վենետական դեսպան Սորանցոն, այն մեղադրանքով, որ նրա կառավարությունը թերացել էր շեզոքության պարտավորությունների մեջ, և ի վերջո այն էր դուրս եկել, որ թուրքերը, փոխանակ դեպի Մալտա դիմելու, հանկարծակի Կանդիայի վրա էին արշավել (1645 թ.), սկիզբը դնելով այն նշանավոր պատերազմի, որը ամբողջ 25 տարիներ զբաղեցրեց Եվրոպան:

Մալտայան ասպետների կարծիքով գերված երեխան սուլթան Իբրահիմի անդրանիկ որդին պետք է լիներ, որով և նրանք առանձին ուշադրության առարկա են դարձնում Ջաֆիրային և մանուկ Օսմանին: Լուրը տարածվում է ամեն կողմ: Սուլթանածին իշխանի կենդանագիրը տպագրվում է Եվրոպայի զանազան քաղաքներում:

Մալտայան ասպետները մանուկն Օսմանին, իբրև արքայազն իշխանի, մեծ խնամք են տանում Ջաֆիրայի մահից հետո, որը տեղի է ունենում գերումից երեք ամիս անց: Հետագայում նա դաստիարակվում է Մալտայի վանքերից մեկում, 1656 թվականին մեծ հանդիսավորությամբ մկրտվում է և կոչվում Գոմինիկ Սուրբ-Թովմասյան (Domenico di San Tommaso): Երկու տարի հետո նա անդամ է դառնում Գոմինիկյան ուխտին և հետագայում ծանոթ լինում Padre Ottomano (Հայր Օտտոման) անունով:

Հայր Օտտոմանը 1660—1664 թվականներին Հռոմում էր, որպես իմաստասիրության ուսանող, և այդտեղ սկսվել էր նրա համար հորիզոն բացվիլ քաղաքական ասպարեզում: Կարգ. Անտոն Բարբերինին (Card. Antonio Barberini), որը

Գոմինիկյան ուխտի հովանավորն էր, հետաքրքրվում էր նրանով և ուզում էր Փարիզ ուղարկել՝ Լուդովիկ XIV-ին ներկայացվելու համար¹. Ուստի երբ նա իր ուսումն ավարտում է, ուխտի առաջնորդը որոշում է բավարարություն տալ Բարբերինիի այդ փափագին: Բուլգարինին պատմում է, որ երբ Բարբերինին կրոնավոր եղած այս օսմանյան իշխանի դոյուքյան մասին իրազեկ էր դարձրել կարգ. Մազարինիին, վերջինս թիտք էր հղացել Լուդովիկ XIV-ին առաջարկելու՝ սույն իշխանին օգտագործել այն պատերազմի մեջ, որ նա՝ Լուդովիկ XIV-ը մտադիր էր անելու սուլթանի դեմ: Եվ այսպես՝ այս ժամանակ, երբ մանավանդ Կանդիայի պատերազմը նորից թափ էր առել, խաչակրական տրամադրությունները բարձրացնելով, որոշվել էր Հայր Օտտոմանի մեկնումը դեպի Փարիզ:

Նա 1664 թ. օգոստոսի 30-ին Հռոմից մեկնում է դեպի Ֆլորենցիա, որտեղ արժանավոր պատիվներով ընդունվում է Մեծ Դքսի և նրա արքունիքի բարձրաստիճան անձնավորությունների կողմից: Նույնպիսի պատիվների է արժանանում նա ճանապարհին ամենուրեք՝ Բոլոնիայում, Մոդենայում, Պարմայում, Պլաչենցիայում, Միլանում և այլ քաղաքներում՝ մինչև Տուրին: Այստեղից Հայր Օտտոմանը նույնմբերի սկզբին մեկնում է դեպի Լիոն, իսկ այնտեղից Փարիզ հասնում 1665 թ. հունվարի 27-ին:

Ֆրանսիայի մայրաքաղաքում նա ընդունվում է մեծ աղմբով: Նրան դիմավորելու են դնում մի ահագին բազմություն ու բազմաթիվ երեկի անձնավորություններ, և նա մեծ պատիվներով առաջնորդվում է Հակոբյանների (Ֆրանսիական

¹ Կարգ. Ա. Բարբերինին, որ Ուրբան VIII-ի կորորդին էր ու նրա ճրով մեծ դեր էր խաղացել, Ֆրանսիական կուսակցության ներկայացուցիչներից էր պապական արքունիքում և կարգ. Դ'Էստեի, կարգ. Գրիմալլիի և ուրիշների հետ Ֆրանսիական շահերի հզոր պաշտպանն էր Հռոմում: Մինչև անգամ նա երևակայել էր Մազարինիի հաջորդը դառնալ. տես Le Comte Charles de Moüy, «L'Ambassade du Duc de Créqui 1662—1665», t. I, Paris, 1893, p. 59—61.

Գոմինիկյանների) վանքը: Նա փետրվարի 7-ին իշխանավա-
յել ընդունելութիւն է ունենում Լուգովիկ XIV-ի մոտ, որի
հետ հրավիրվում է և պատարագի ներկա լինելու Լուգրի մա-
տուռում. հետո առաջնորդվում է դեպի մայր թագուհու բնա-
կարանը. իսկ հաջորդ օրը ունկնդրութեան է ընդունվում թա-
գուհու կողմից: Այցելութիւններ է տալիս Օսլեանի դքսին՝
արքայեղբայր Ֆիլիպին: Օտար պետութիւնների դեսպան-
ները և պապական նվիրակը նրան այցելում են իր վանքում:
Փարիզի արքեպիսկոպոսը բազմաթիւ անգամներ այցելու-
թիւն է տալիս նրան: Նա անդադար շրջապատված էր Մալ-
տայան ասպետներով:

Այսպես, ուրեմն, մի փառավոր ուղի էր կտրել Հայր
Օտտոմանը Հռոմից մինչև Փարիզ: Նա օրվա հերոսն էր: Նա
այն անձնավորութիւնն էր, որին խնամքով փապիպայում ու
հրապարակ էր քաշում եվրոպական դիվանագիտութիւնը՝
իր քաղաքական հաշիվների համար: Օսմանյան բռնապետու-
թեան դեմ պայքարի հաջողութեան համար մի խոստմնալի
միջոց էր համարվում Հայր Օտտոմանը, որի երակների մեջ
սուլթանների արշունն էր շրջան անում: Գոնն այդպես էին
ասում:

Հայր Օտտոմանի պատմիչներից Դը Ժանը (De Jant),
պատասխանելով նրա ծագման հարազատութեան դեմ եղած
առարկութիւններին, իր երկի առաջարկում գրում էր.

«Ինչ էլ կամենան ասել այդ մարդիկ, ամեն պարագայի
իրողութիւն է, որ Հռոմի արքունիքը նրան արեց այնպիսի՝
մի ընդունելութիւն, որը բավականին դատել է տալիս, թե
ինքը (Վատիկանը) բավարարչափ համոզված է նրա տոհ-
միկ ծագմանը: Միայն նրա ընդգրկած կրոնավորական
կարգն է պատճառը, որ Նորին Սրբութեանը թույլ չտվեց նրան
տալ այն պատիւները, որոնք անկ են այդպիսի աստիճանի
մի անձնավորութեան: Այսուհանդերձ Նորին Սրբութեանը
առանձնութեան մեջ նրա հետ վերաբերվեց մեծարանքի այն
բոլոր զգացումներով, որ կարելի է ունենալ այդքան ազնվա-
տոհմ մի անձնավորութեան հանդեպ, նրան առաջարկելով

Հռոմ քաղաքը՝ հանգստյան համար, կամ, եվրոպական թա-
գավորների արքունիքները, որպեսզի այդ տեղերում ընդուն-
վելով իբրև այնպիսին, որ ինքն է, կարողանա ազատ մնալ
այն որոգայթներից, որ թուրքական բարբարոս քաղաքակա-
նութիւնը կարող է լարել նրա դեմ» և այլն¹:

Եվ այսպես այժմ նա գտնվում էր Փարիզում:

Ահա այս էր այն անձը, որին դիմում էր հայ պատմի-
րակը ճիշտ այս միջոցներին, նրան խրախույս տալու համար
«Արևելյան Կայսրութիւնը վերականգնելու գործում» և վրս-
տահեցնելու, որ Օսմանյան Կայսրութեան հույներն ու հայե-
րը, եթե նրանց օգնութիւն տրվի, «կթոթափեն օսմանյան լու-
ծը և թագավոր կհռչակեն նրան»՝ Հայր Օտտոմանին:

Քաղաքական աշխարհը նրա վրա էր սեւեռել իր ամբողջ
ուշադրութիւնը, ուրեմն և զարմանալի չէ, որ Օսմանյան
Կայսրութեան հպատակ քրիստոնյա ժողովուրդների ուշա-
դրութիւնն էլ առինքնողը նույնինքն այս Հայր Գոմինիկ Օտ-
տոմանն էր:

¹ „Quoy que ces gens-là veüillent dire, il est toujours vray
que la Cour de Rome luy a fait un accueil, qui donne assez à con-
naître qu'elle est suffisamment persuadée de sa haute naissance.
Le seul motif de la Religion qu'il a embrassée, a dispensé Sa Saint-
eté de luy faire rendre les honneurs qui sont deus à une Person-
ne de son rang. Elle l'a neantmoins traité dans le particulier, avec
tous les sentiments d'estime que l'on peut avoir pour une Personne
de qualité si éminente, en luy proposant la Ville de Rome pour sa
retraite, ou les Cours des Princes de l'Europe, afin qu'y estant re-
connu pour tel qu'il est, il y pût demeurer à couvert des embusches
que la Politique barbare des Turcs luy peut dresser”, *«ibid»* De Jant,
„Histoire du Prince Osman, fils du Sultan Ibrahim“.

ՀԱՅՐ-ՕՏՏՈՄԱՆՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ: ԿԱՆԳԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՏԸ: ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ:

Հայր Օտտոմանին օգտագործելու ձևերի որոնումը.— Հայ պատվիրակի բերած ծրագրի դերն այդ խնդրում.— Մարկ Անտոնի Ջիուստինիանին և «Հայր-օտտոմանյան ծրագիրը».— Հայր Օտտոմանի վեճերի մասին և Հոտմում.— Կլեմենտ IX-ի ծրագիրը.— Պապական նվիրակների դիվանագիտական գործունեությունը.— Հայր Օտտոմանի մեկնումը դեպի Կանդիա և ծրագրի մանրամասնությունները.— Մրագրի ձախողումը.— Մահտեսի Մուրատը և նրա կապը Հայր Օտտոմանի հետ.— Կանդիայի անկումով փակվում է արևմտահայ շարժման առաջին շրջանը.— Հայոց հարաբերությունները Կրետեի վեճետական ղեկավարության հետ.— Կանդիայի ճշմարտությունն արևմտահայ ղեկավարների աշխույժ և հայերի օժանդակությունը պատերազմին.— «Քրիստոնեական դատը» և «Հայկական դատը».— Ռուսաստանի և Վրաստանի մասնակցության հարցը.— Կոզմա Պալեոլոգի նամակագրությունը Հայր Օտտոմանի հետ.— Հույն-ռուսական և հայ-ռուսական հարաբերությունների հարցը:

Հայր Օտտոմանը Փարիզում մնաց հրկու տարի և վեց ամիս: Այս ընթացքում նա լրջորեն ուսումնասիրեց այն խնդիրը, որի իրագործման էին մղում նրան և ինքն իսկ չափից դուրս ոգևորված ու տարված էր այն փառասիրական երազով, թե շուտով բազմելու էր օսմանյան կայսերական գահի վրա:

Մրագրեր էին մշակվում նրա շուրջը և նրա հետ, բայց որոշակի պլան դեռ գոյություն չուներ: Ծիշտ է, թե Հայր Օտտոմանին օգտագործելու գաղափարը իշխում էր ֆրան-

սիական մայրաքաղաքում, որովհետև, ինչպես տեսանք, արդեն նրա Փարիզ ուղարկվելու ուղղակի դրդապատճառը եղել էր նրան օգտագործել Արև-Արքայի ծրագրերի համար թուրքերի դեմ, բայց տակավին մտքերը չէին կողմնորոշված օգտագործման ձևի վերաբերյալ: Այս տեսակետից հայ պատվիրակի բերած ծրագիրը որոշ դեր ունեցավ:

«Արևելյան Կայսրությունը վերականգնելու գործը», ինչպես երևում է Բուլղարիայի վկայությունից, հույն-հայկական ծրագրում պատկերանում էր երկու հենարանների վրա, ներսից՝ հույն և հայ ժողովուրդների ապստամբությամբ և դրսից՝ զինված ուժերի հարձակմամբ. այսինքն՝ զինված ապստամբությունն ու խաչակրությունը պատկերացվում էին որպես միավորվող՝ միասնական մի շարժում, որը Հայր Օտտոմանի գլխավորությամբ ու ղեկավարությամբ պետք է տապալեր Օսմանյան Կայսրությունը և նրա ավերակների վրա վերականգներ նախկին Արևելյան Կայսրությունը:

Մեզ հայտնի չեն, իհարկե, արևելցիների ծրագրում Հայր Օտտոմանին հատկացվող այս դերի իրացման համար նախատեսված մանրամասնությունները, բայց հայտնի է, որ Փարիզի վեճետական դեսպան Մարկ Անտոնի Ջիուստինիանին (Marco Antonio Giustiniani) գործնականություն է մտցրել այդ ծրագրի մեջ՝ ըստ օրվա քաղաքական պահանջի: Հայ պատվիրակի և Հայր Օտտոմանի առաջին բանակցությունների մասին խոսելիս՝ Բուլղարիայի ավելացնում է այս մասին.

«Հայի զրույցը կարող էր այնքան մեծ տպավորություն չգործել Հայր Օտտոմանի նուրբ դատողության վրա, հաշվի առնելով, որ նման մատուցումներ խոսքի սահմանից չեն անցնում. բայց այն խիստ ազդեցիկ նամակները, որ նա (հայր) նրան մատուցեց պատրիարքի ու նրա ընդհանուր տեղապահի անունից, և քրիստոնեության անվան ու նրա բարձրացման համար գործելու բուռն ցանկությունը, — նույնիսկ եթե հարկ լիներ արյուն թափել և կյանք զոհել, — նրան մղեցին տեսակցություններ ու բանակցություններ ունենալու այդ ուղղությամբ, այնքան լավ հույսերով, որ նա (Հայր Օտտո-

մանը) ամեն ինչ վստահեց Վենետիկի պարոն զեսպան Մարկ Անտոն Զիուստինիանին, որը գտավ, թե այդ հուշերի առաջարկներն անգնահատելի են և թե այսպիսի դժնդակ ժամանակների մեջ մի ո՛րևէ ձեռնարկ փորձելը կարող է միայն օգտակար լինել Հանրապետությանը և քրիստոնեությանը: Ուստի՝ նրան հորդորեց ամենայն արագութեամբ շարունակել բանակցությունները, ասելով, թե երբ դրանք իրական հողի վրա կդրվեն, ինքը կպարտավորեցնի Հանրապետությանը՝ նրանց օգնելու¹:

Մարկ Անտոն Զիուստինիանին կոնկրետ հնարավորությունների հիման վրա զարգացնում է արևելյանների ծրագիրը՝ այն կապելով Կանդիայի պատերազմի հետ: Այս ուղղությամբ նա բանակցելով կարգ. Ռոսպիլիոզիի (Հոտոմում) և իր կառավարության հետ՝ անաջարկում էր այս երիտասարդին (Հայր Օտտոմանին) զնել նավատորմի վրա՝ փոփոխիչ հարված փորձելու համար Արևելքում՝ հօգուտ Կանդիայի և ամբողջ քրիստոնեության²:

Այսպիսով, Հայր Օտտոմանի կատարելիք դերի պլանը Արևելքից բերված ծրագրի հիման վրա ստանում է մի գործնական ձև, Վատիկանի և Վենետիկյան Սենատի հավանություններ: Հայր Օտտոմանի հետ կապված այս ծրագիրը, որի հետզհետե ստացած ընդլայնումներն ու մանրամասնություններն ամփոփված են Անտոն Գրիմանիի մի նամակում³, մենք անվանում ենք «Հայր-օտտոմանյան ծրագիր»:

Մրանից հետո Զիուստինիանին անհրաժեշտ է գտնում, որ Հայր Օտտոմանը «փոխադրվի Վենետիկ և կենդանի ձայնով ամեն ինչ հաղորդի Պերճափայլ Սենատին... մանավանդ որ ինքը լայն խոստումներ էր ստացել Հանրապետությունից, որը բավականին տրամադիր էր ընդառաջելու նրա ղեկավար-

րությունը»¹: Այսպիսով, Հայր Օտտոմանը 1667 թ. հուլ. 27-ին Փարիզից մեկնում է Վենետիկ, որտեղ Սենատն իր հերթին նրան հանձնարարում է անցնել Հոտմ՝ Կլեմենտ IX պապից հաստատություն ստանալու համար՝ արևելյանների կողմից նրան տրված առաքելության մեջ:

Հայր Օտտոմանն այսպիսով 1668 թ. հունվարին Հոտմում էր:

Այնտեղ նորընտիր պապ Կլեմենտ IX-ն արդեն ոչ միայն պատրաստություններ էր տեսնում աշխուժորեն մասնակցելու պատերազմին², այլև ծրագիր էր պատրաստել քրիստոնյա պետությունների ուժերից կազմելու 20.000-անոց հետևակազորից և 1.000 հեծելազորից բաղկացած մի բանակ, գարնանը Կանեայի վրա արշավելու համար:

Պապական նվիրակները գործի էին լծվել եվրոպական արքունիքներում, հատկապես Փարիզում և Մադրիդում:

Փարիզում բանակցությունները վարում էր նվիրակ Բարջելլինին (Bargellini): Լուդովիկ XIV-ը մեծ պատրաստակամություն էր ցույց տալիս, բայց պահանջ էր դնում, որ քրիստոնյա բոլոր պետություններն էլ մասնակցեին, հատկապես Սպանիան: Սակայն Մադրիդը տատանվում էր՝ դժվարության մատնելով նվիրակ Բարրոմեոսին (Barromée), որը գործում էր այնտեղ: Մադրիդի տատանման գլխավոր պատճառն այն երկյուղն էր, թե երբ ինքը իր ուժերի մի մասը Կանդիա կուղարկեր, ֆրանսիական բանակները կարող էին հանկարծ արշավել սպանական հողերի վրա: Այս խնդիրն, իհարկե, լուծվում է ի վերջո նրանով, որ Լուդովիկ XIV-ը հանձնառու է լինում մի տարվա միջոցում շահարձակվել սպանական սահմանների վրա³ և ինքն իրապես շոշափելի օգնություն հաս-

¹ P. O. Bulgarini, „Vita del Padre maestro F. Domenico di S. Tommaso“ ecc., p. 285.

² P. A. Guglielmotti, „Storia della marina pontificia“, vol. VIII, p. 294.

³ Տես Վավերագիր № 8:

¹ P. O. Bulgarini, „Vita del Padre maestro F. Domenico di S. Tommaso“ ecc., p. 288.

² P. A. Guglielmotti, „Storia della marina pontificia“, vol. VIII, p. 291—192.

³ Կլեմենտ IX-ի ծրագրի և նրա շուրջ կատարված բանակցությունների մասին երկար է խոսում հետևյալ աշխատությունը, հիմ-

ցրնում է Կանդիային. բայց մինչև այդ՝ Հոսմի արքունիքը գործի է ձեռնարկում:

Մալիսի վերջին՝ պապական տորմիզը զորավար Վիկենտ Ռոսպիլիոզիի (Vicenzo Rospigliosi) հրամանատարությունում մեկնում է Չիլիտա-Վեքքիայից և, ըստ ընդունված որոշման, դրան միանում է նաև Հայր Օտտոմանը:

Վերջինս, Հոսմից դեռ չմեկնած, նամակ էր գրել տեղի վենետական ղեսպան Անտոն Գրիմանիին (Antonio Grimani), որպեսզի նա խնդրեր Սենատից (Մերակուլտից)՝ անհրաժեշտ հրահանգներն ուղարկել Կանդիայի իր ներկայացուցիչներին, կազմված ծրագրի մասին: Իսկ այդ ծրագիրը բավականին մանրամասնորեն ամփոփված ենք գտնում հիշյալ ղեսպանի՝ իր կառավարությանն ուղղված մի նամակում (14 ապր. 1668 թ.), ըստ որի Հայր Օտտոմանը հույս ունի, որ վենետական նավատորմի վրա երևալով, օսմանյան բանակի առաջ հանդես գալով ու նրա ղեկավարներին զրելով, կկարողանա դիվերսիա առաջ բերել Կանդիայի պատերազմի մեջ և կարծում է, որ բավական է իր թեկնածությունը դնել՝ օսմանյան գահին՝ Մահմեդ IV-ի դեմ շարժում առաջ բերելու համար. թե նա «հարաբերություններ ունի հունական մի քանի պատրիարքների հետ» և հույս ունի, որ «հույները, քրիստոնյաները և լավ թուրքերը կմիանան իրեն» և թե «անելիք լավագույն բանը՝ զենքեր հայթայթելն է այն ժողովուրդներին, որոնք պատրաստակամություն ունեն աջակցելու իր գահակալները» և այլն¹:

Այս էր հիմնականն այն ծրագրի, որի իրագործմանն էր լծվել Հայր Օտտոմանը և այժմ նա, Վենետիկի համաձայնությամբ, պապական նավատորմի հետ տեղափոխվում էր Կանդիա, որտեղ պիտի տեղի ունենար պատրաստվող քաղաքական այդ բախտախնդրությունը:

Նրվելով վատիկանյան դիվաններում պահված նվերակական և իշխանական թղթակցությունների վրա. Ch. Ter Linden, „Le Pape Clément IX et la guerre de Candie (1667—1669), d'après les archives secrètes du Saint-Siège“, p. 135—157.

¹ Տես Վավերագիր № 8:

Կրետեում ընդունելությունը լինում է շատ հանդիսավոր՝ թեղանոթի համազարկով, որպեսզի թուրքերն իմանային իրենց «հարազատ» վեհապետի ժամանումը. մինչ մյուս կողմից նոր հասած գորքը գիշերով էր ցամաք հանվում ջահերի լույսի տակ՝ շփոթություն պատճառելու համար թշնամուն խորհրդակցություններ են տեղի ունենում ղեկավարների հետ, որոնց հիշատակագիր է ներկայացնում Հայր Օտտոմանն իր պլանների մասին և որոշվում է, որ նա իր թեկնածությունը դնի: Այսպես, նախ նամակներ են ուղարկվում Կանեսայի փառային ու մեծ վեզիրին, նրանց ներգրավելու համար այս գործին, բայց ապարդյուն. ընդհանուր հրամանատար Ֆրանչեսկո Մորոզինին (Francesco Morosini) ստիպված է լինում հաղորդել իր կառավարությանը, թե Հայր Օտտոմանը «հակառակ իր բոլոր ջանքերին՝ ոչ մի պատասխան չկարողացավ ստանալ ուղարկված նամակներին և պատգամավորներին»: Նրանից հետո թուրքական բանակի մեջ նետերի միջոցով նետվում են հայտարարություններ, որոնցով կոչ էր արվում զորքին՝ ապստամբել և ընդունել իր հարազատ վեհապետին, հանձին Հայր Օտտոմանի: Սակայն այս ևս, և ուրիշ ձեռնարկումներ, նույնպես ապարդյուն են մնում. ընդհակառակն՝ ավելի են կատաղեցնում թուրքերին և դրությունն ա՛յնքան է ծանրանում, որ խոհեմություն է համարվում փակել այս վտանգավոր արարը, հեռացնելով Հայր Օտտոմանին Կանդիայից¹:

Մի խոսքով շատ անփառունակ վախճան են ունենում Հայր Օտտոմանի ձեռնարկումները Կանդիայում և հետևաբար նրա ամբողջ ծրագրերն ու հետագայի պլանները տապալվում են: Նրա շինած սպանական դոյակներն արդեն չքացել էին, և հետաքրքրականն այն է, որ ինչպես նրա անունը կապված էր Կրետեի պատերազմի ծագման հետ, կապվել էր նաև նրա տխուր վերջավորության հետ:

¹ Հայր Օտտոմանն այնուհետև մի քանի տարի զանազան կողմեր դեղերելուց հետո մեռնում է Մալտայում, 1676 թվականին:

Իսկ դրանից հետո ի՞նչ եղավ արևելյան պատվիրակների կապը Հայր Օտտոմանի հետ:

Այդ կապի մասին մեր ունեցած վերջին տեղեկությունները հասնում են միայն մինչև հիշյալ դեկտեմբերի նախօրյակը: Գրիմանիի 14 ապր. 1668 թվակիր այն հաղորդումը, թե Հայր Օտտոմանը «հարաբերություններ ունի հունական մի քանի պատրիարքների հետ», ցույց է տալիս, որ հունական ներկայացուցիչ Կոզմա Պալեոլոգը շարունակում էր կապ պահնել նրա հետ:

Հայոց պատվիրակ Մահտեսի Մուրատի մասին ունենք ավելի բացահայտ տեղեկություն:

Հայր Օտտոմանը, Հոմից մեկնելուց առաջ, ստացել էր Փարիզի վենետական դեսպան Մարկ Անտոն Զիուստինիանիի մի նամակը (10 մայ. 1668 թ.), որի մեջ նա հայտնում էր, թե «հայազգի իշխանը» (seigneur arménien) շարունակում է խոսել ու գրել, բայց դեռ չեն երևում նրա գործունեության արդյունքները», իսկ նամակի վերջում ասում էր, թե «Ձերդ Թարձրության ուղարկում եմ հայ իշխանի մի նամակը»¹:

Սա է այս շրջանում միակ տեղեկությունը Մահտեսի Շահմուրատի գործունեության մասին:

Ուրեմն Մահտեսի Շահմուրատը 1668 թ. մայիսի 10-ին պեռես Փարիզում էր: Զիուստինիանիի միջոցով կապ պահելով Հայր Օտտոմանի հետ՝ նա հետևում էր գործին, այն համոզումով, թե Կանդիայի պատերազմի հաջող ելքը օգուտ էր բերելու իր հետապնդած գործին և կարելի է վստահորեն ասել, որ նա այս նույն հետևողական դիրքում մնաց մինչև Կանդիայի անկումը, որ տեղի ունեցավ 1669 թ. սեպտեմբերի 6-ին, ոչ միայն վերջ դնելով հայերի և հույների ազատագրման հույսերին, որոնք հայր-օտտոմանյան ծրագրերի հետ էին կապված, այլև հուսահատության մատնելով Սվրոպան, որն ամբողջ քսանհինգ տարիներ հեփհե հետևել էր պատերազմին և տրամադիր չէր եղել բնավ ականատես լինելու նրա տիտղոս վախճանին:

¹ Revue d'Histoire Diplomatique, t. XVII, p. 374—375.

Այսպիսով՝ Կանդիայի անկումով ու պատերազմի հաշվեհարդարով փակվում է արևմտահայոց ազատագրական այս շարժման առաջին շրջանը, երբ հույսերը կապված էին, ինչպես ասացինք, Կրետեի այս պատերազմի և Հայր Օտտոմանի ծրագրերի հետ:

Պետք է սակայն ասել նաև, որ Կանդիական պատերազմի ընթացքում հայկական դատի հետապնդումը միայն Փարիզում չէ որ կատարվում էր: Հայերը միաժամանակ հարաբերության մեջ էին նաև Կրետեի վենետական իշխանությունների հետ, և քանի որ այդպես է, նրանք անպայման հարաբերության մեջ պետք է եղած լինեն նաև ուղղակի վենետիկի կառավարության հետ, թեև այս մասին փաստեր չեն հասել մեզ: Փաստն այն է, որ Կլիկիայի հայոց իսաշատուր Գաղատացի կաթողիկոսը 1668 թվականին Կանդիա էր գնացել վենետիկյան ընդհանուր հրամանատար Ֆրանչեսկո Մորոզինիի մոտ, զմյուռնացի Կիրակոսենց Գրիգոր քահանայի հետ, և այս առիթով Մորոզինիին Կիպրոսից նվեր էր տարել Ս. Մամասի մարմինը¹: Նշանակում է՝ իսաշատուր Գաղատացին, որը, ինչպես տեսանք արդեն, 1662/63 թվականներին նամակներ էր ուղարկում Լուդովիկ XIV-ին և Ալեքսանդր VII պապին, այն նույն միջոցին, երբ Շահմուրատը Փարիզում էր աշխատում, գործում էր Կանդիայում, որը օրվա դեպքերի թատերավայրն էր և որտեղ գտնվում էր նաև Հայր Օտտոմանը: Իսաշատուր Գաղատացու նմանօրինակ մի այցելությունը հիշատակվում է նաև 1657 թվականին, երբ Կանդիայում նա հանդիսավորապես պատարագել է հիշյալ Մորոզի-

¹ «...գոր (Ս. Մամասի մարմինը) տուեալ է յընծայ Փրանկիսկոսի Մաւրոկենայ սպարապետի և գրսի վենետիկացոյ՝ տէր Սաշատուր կաթողիկոս Սոոյ ի Կրետե կղզւոջ, ի գալ առ նա յամի տեսան 1668 ի Կիպրոսե ընդ Գրիգորի քահանայի Կիրակոսենց Զմիւռնացւոյ», տե՛ս Մ. Ա Վ գ եր յ ա ն , «Լիթակատար վարք և վկայարանութիւն սրբոց», հտ. 2, վենետիկ, 1813, էջ 19:

Հաս երևույթին այս տեղեկությունը Փլամինիոս Կունելիոսից է առնված:

նիի և Մարկիզ Վիլլայի (Villa) ներկայութեամբ ու վերջինիս նվիրել Սեբաստիայի Քառասուն-Մանուկներից Ս. Նիկողայոսի աշը¹. Ինչ որ ցույց է տալիս, թե հայերն արդեն երկար ժամանակից ի վեր կապեր ունեին Կանդիայի վենետական ղեկավարութեան հետ, դեռ Մահտեսի Մուրատի 1666 թվականի առաքելութունից առաջ:

Մի խոսքով՝ Կանդիայի քսանհինգամյա պատերազմը՝ իր ժամանակին թվացել էր մի հուսատու փարոս, որին ձգտել էին ազատագրութեան ծրագրեր մշակող արևմտահայ ղեկավարները: Սուլթանական բռնակալ պետութեան դեմ տարվող օրհասական այդ կռիվը հայերի և առհասարակ արևելյան ստրկացված քրիստոնյա ժողովուրդների կողմից վճռական հանգրվանն էր համարվել այն դարավոր պայքարի, որ քրիստոնյա Արևմուտքը, ինչպես հավատում էին նրանք, մղում էր մահմեդական Արևելքի դեմ «հանուն քրիստոնեության հաղթանակի» և «հանուն Արևելքի քրիստոնեության ազատագրութեան»: Հետևաբար, Կանդիայի պատերազմին օժանդակելը համարելով իրենց սեփական դատը պաշտպանել, հայերը գործուն վերաբերմունք էին ունեցել այդ պատերազմի հանդեպ, ինչպես երևում է այն հիշեցումից, որ 1672 թվականին Մահտեսի Մուրատն արել էր Լուզովիկ XIV-ին.

«Ձեր Վեհափառությունը դիտի, թե մենք որքան ենք նվիրված քրիստոնեական դատին, ինչպես ապացուցել ենք բազմաթիվ անգամներ այն պատերազմի ընթացքում, որ վենետացիները և ամբողջ քրիստոնեությունը մղեցին անհավատների դեմ»²:

Հայոց ղեկավարները, այդ «քրիստոնեական դատի» մեջ տեսնելով և հայկական դատը, նվիրված են եղել այդ դատին և իրենց նվիրվածությունն «ապացուցել են» պատերազմի ընթացքում «բազմաթիվ անգամներ», բայց մեզ հայտնի չէ՝ թե ի՛նչպես էր արտահայտվել այդ գործունեությունը:

¹ Ղ. Ալիշան, «Հայ-Վենետ», էջ 179:

² Տես Քոջա Մուրատի հուշը, Վավերագիր № 9:

* * *

ԻՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Կանդիայի պատերազմի և հայր-օտտոմանյան ծրագրի էություն մասին մենք կտեսնենք հաջորդ գլուխներից մեկում¹, բայց այստեղ այդ ծրագրի կապակցությամբ շարտի մոռանալ նաև Ռուսաստանի մասնակցության հարցը, որ թեև գործնականորեն հանդես չի եկել, բայց, արևելցիների առաջարկով, Հայր Օտտոմանի ծրագրի մեջ եղել է, գոնե սկզբնական շրջանում:

Հուլյն-հայկական ազատագրական շարժումը որքան էլ Կանդիայի պատերազմի առիթով Արևմուտքից թմրկահարվող խաչակրական արշավանքների վրա էր դրել իր հույսերը, այնուամենայնիվ, ինչպես պարզվում է մի շարք փաստաթղթերից, միաժամանակ Ռուսաստանի և Վրաստանի մասնակցությունն ազատագրության այդ գործին՝ անհրաժեշտ էր համարվել, մանավանդ Ռուսաստանի: Հայր Օտտոմանը պիտի գլխավորեր խաչակրական արշավանքը, իսկ այդ արշավանքին պետք է անսպասման մասնակցեին Ռուսաստանի և Վրաստանի թագավորները:

Խաչակրական շարժման համար պատկերացվող այս ծրագիրը, որ հայ ազնվականը Փարիզ էր տարել, ավելի բացահայտ կերպով մենք գտնում ենք պարզաբանված մի քանի նամակների մեջ:

Ալեքսանդրիայի պատրիարքական փոխանորդ Կոզմա Պալեոլոգը, որի անձնավորության վրա մեծ հույսեր էին դրված, քանի որ նա բյուզանդական Պալեոլոգների սերնդից էր համարվում և դրանով էլ ավելի մեծ դեր կարող էր կատարել գործի հաջողության համար, քան հայազգի ազնվականը, նրանից քիչ հետո ուղղակի հարաբերության մեջ էր մտել Հայր Օտտոմանի հետ և հուլյն-հայկական միացյալ ապստամբության հարցի շուրջ բանակցություններ էր վարում:

¹ Գլուխ ԺԲ:

Ահա թե ի՛նչ էր գրում Կողմա Պալեոլոգը՝ Հայր Օտտոմանին ուղղած իր նամակներից մեկում.

«Այն վատահոլությունը, որ ինձ շնորհել է Ձեր Վեհափառությունը, ինձ խրախուսում է ո՛չ միայն քարոզություններ նվիրվելու Ձեր ծառայությանը՝ հորդորելու համար ամբողջ Հունաստանը, որպեսզի նա Ձեզ ճանաչի որպես թագավոր, որպես թագավոր և ազատարար, այլև, եթե կամենաք, անձամբ դեսպանության գնալու Մոսկովիայի և Իբերիայի թագավորների մոտ, որոնք միմյանց հարեաններ են, և Ձեզ հայթայթելու այնքան մարդ, որքան Դուք կուզեք»¹:

Մրանից երևում է, որ ուսաց և վրաց թագավորներին խաչակրական արշավանքին մասնակից դարձնելու համար հատուկ դեսպանություն դիմում ու հրավեր պետք է արվեր նրանց և դեսպանության պաշտոնն անձամբ պետք է կատարեր Կողմա Պալեոլոգն ինքը, որը և սույն նամակով ուզում էր Հայր Օտտոմանի համաձայնությունն ստանալ այդ մասին: Հայր Օտտոմանը նրա հետ ունեցած անձնական տեսակցությունների ընթացքում ո՛չ միայն իր համաձայնությունն է տալիս, այլև նրան մի շարք հանձնարարություններ է անում այդ կապակցությամբ: Պալեոլոգի կատարած այս բանակցությունները երևում են այն նամակից, որ նա գրել էր Հայր Օտտոմանին՝ Փարիզից մեկնելիս, 1666 թ. նոյեմբերի 25-ին.

«Արդեն լիովին խանդավառված Ձեր Վեհափառության ծառայության մեջ՝ ես Ձեր կողմից գրել եմ մեր պատերազմին ավելի քան ինչ որ Դուք ինձ հանձնարարել էիք, նրան թեղադրելով, որ Ձեր մասին գրի Մոսկովիայի, Իբերիայի և Եթովպիայի թագավորներին, Վալաքիայի և Մոլդավիայի երկու իշխաններին, որպեսզի [վերջիններս] Ձեզ օգնեն ու Ձեզ ընդունեն որպես իրենց թագավորը»²:

Մի ուրիշ անթվական նամակից էս, որը հավանաբար 1667-ի առաջին ամիսներին և Կահիրեից է գրված, մենք գործերի հետագա ընթացքի հետ միասին տեղեկանում ենք,

¹ Տես Վավերագիր № 4:

² Տես Վավերագիր № 5:

որ դեպի Ռուսաստան և Վրաստան գնալիք դեսպանության խնդիրն աչքի առաջ էր միշտ: Կողմա Պալեոլոգը հետևյալն էր գրում Հայր Օտտոմանին.

«Դուք գործեցեք և սկսեք տնօրինել իրերը՝ խորագիտությամբ: Հավանական է, որ այս ամառ ես Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի երեք պատրիարքների կողմից նամակներ տանեմ Մոսկովիայի և Վրաստանի թագավորներին [և] այդ տեղերից նամակագես [նամակներ] ուղարկենք Եթովպիայի թագավորին, որպեսզի հետո նա գրավի Եգիպտոսը»¹:

Մենք տեսնում ենք, որ հույն-հայկական ապստամբության ծրագրի դաշնակիցների մեջ ևս համակրանք էր վայելում Ռուսաստանին դիմելու հարցը: Հայ պատվիրակի գրույցից և Կողմա Պալեոլոգի առաջին նամակից երևում էր, որ Վալաքիան և Մոլդավիան, որոնք սուլթանին հարկատու երկրներ էին, նույնպես պիտի միանային այդ շարժմանը, և այդ երկու հունադավան երկրները, որոնք հունական եկեղեցու անմիջական ազդեցության ենթակա և առհասարակ հույների հետ քաղաքական ու տնտեսական սերտ կապերով կապված երկրներ էին, այս կապակցությամբ հարաբերությունների մեջ էին Ալեքսանդրիայի պատրիարքության հետ: Այսպես՝ Վալաքիայի վոյեվոդի որդի Գրիգոր Վասիլի մի նամակից, որ նա 1666 թ. դեկտեմբերի 8-ին Մարսելից գրել էր Հայր Օտտոմանին, տեղեկանում ենք, որ նա ևս մտադիր էր Կողմա Պալեոլոգին ընկերանալու՝ Ռուսաստան գնալու համար:

Գրիգոր Վասիլը գրում էր հետևյալը.

«Ես այս կողմերն եմ եկել Հոռոմ գնալու դիտավորությամբ, բայց Ալեքսանդրիայի Տեղապահը փոխեց իմ մտադրությունը: Այժմ ես ստիպված եմ մի գործով գնալ Բարսելոնա: Պատրիարքից լուրերի եմ սպասելու և հիշյալ Տեղապահի հետ գնալու եմ Մոսկովիա»²:

¹ Տես Վավերագիր № 6:

² Տես Վավերագիր № 7:

Այս նամակից նաև երևում է, որ այս միջոցին Ալեքսանդրիայի Պալիսիոս պատրիարքը, որի ներկայացուցիչներն էին Կողմա Պալեոլոգն ու Հայ ազնվականը, ինքն արդեն նախնական բանակցություններ վարելիս էր ցարական արքունիքում, որովհետև նա այդ ժամանակ Մոսկվայում էր գտնվում: Արդ՝ ծրագրվող դեսպանությունը Պալիսիոս պատրիարքից ազդեկությունների էր սպասում՝ Մոսկվա մեկնելու և առաջադրված կարևոր խնդիրները կատարելու համար:

Պետք է նշել, որ հուլյները մեծ նշանակություն էին տալիս Ռուսաստանի մասնակցությանը Հունաստանի ազատագրության գործին: Պրավոսլավ (օրթոդոքս) Ռուսաստանի միջամտությունը նրանց համար փայլալաված երազ էր: Չ. Սորանցոն, ցարի և սուլթանի հարաբերությունների մասին խոսելիս, 1576 թվականին գրում էր, որ հուլյները, ինչպես բուլգարները, սերբերը, և այլն, «միշտ պատրաստ են գեներալ ձեռք առնելու և ապստամբելու՝ թուրքական ստրկությունից ազատվելու համար, և ենթադրվելու նրա (ռուսական ցարի) իշխանությունը»¹: Իսկ մեր դեպքերին ժամանակակից Ռայկոտն ասում էր, թե «հուլյներն առանձին համարում և սերունեն դեպի մոսկովցիները, որոնք մի քանի հին մարգարեությունների համաձայն կոչված են այս ժողովուրդը դուրս բերելու այն բռնակալությունից, որի տակ գտնվում է նա»², և այդ մղումով նրանք միշտ գաղտնի հարաբերությունների մեջ էին ռուսական արքունիքի հետ ինչպես տեսանք արդեն մեր նե-

րածություն մեջ: Հակառակ, սակայն, այդ հիմնական ձգտումին՝ եթե հուլյները երբեմն իրենց աչքերը դեպի կաթոլիկ Եվրոպան էին շուտ տալիս, ինչպես այժմ էր, պատճառն այն էր, որ քաղաքական հանգամանքների բերումով թվում էր, թե այդ կողմից էր ժպտում ազատության աստղը: Այս հուլյսը, իհարկե, սնանկ էր: Մյուս կողմից պետք է նաև հիշել, որ լատինական Արևմուտքի ուժն օգտագործելու նպատակը հետապնդող հունական կեղծ լատինասիրությունը ծանոթ էր դեռևս Բյուզանդական Կայսրության վերջին շրջաններում, Պալեոլոգների օրով, երբ թուրքական վտանգն ուժեղ կերպով սպառնում էր պետության գոյությունը:

Հուլյն ժողովրդի կապերը Ռուսաստանի հետ՝ հիմնված էին քաղաքական փոխադարձ շահերի վրա: Այն օրվանից, երբ Իվան III ցարը ամուսնացել էր բյուզանդական վերջին կայսրի եղբոր դուստր Սոֆիայի հետ (1472 թ.), Ռուսաստանի կայսրերն իրենց համարում էին Արևելյան Կայսրության ժառանգներն ու նրա վրեժխնդիրները¹, և դրանով էլ քաղաքական անխախտ կապ էր ստեղծվել հուլյների հետ: Այդ օրվանից ռուսական ցարերը նաև հուլյն ժողովրդի հովանավորը դարձան. թուրքիայում գտնվող ցարական դեսպանները պաշտպանում էին նրանց շահերը², իսկ Ռուսաստանն իր կարգին իրեն հավատարիմ տարրեր ուներ Օսմանյան Կայսրության մեջ՝ հանձինս հուլյների: Ֆ. Էնգելսը, իր «Ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականությունը» աշխատության մեջ, խոսելով այն գերիշխող դերի մասին, որ Ռուսաստանը ձեռք էր բերել Եվրոպայում նապոլեոն I-ի վրա տարած հաղթանակից և նրա տապալումից հետո, նշում է, որ հուլյները հանդիսանում էին այն տարրը, որի վրա ռուսական զիվանագիտությունը կարող էր ամենից ավելի հենվել՝

¹ „Relatione del Clarissimo Signor Giacomo Soranzo K. P. ritornato d'Ambasciatore a sultan Amurat, Imperatore de Turchi, et commissario alli confini della Dalmatia, fatta in senato alli 8 di Novembre 1576“ (Միլանի Ամբրոսյան Մատենադարանի ձեռագիր): Տես նաև՝ „Relatione delle cose di Constantinopoli et disegni del signor Turco per l'anno futuro 1576, fatta al Signor Don Gioan d'Austria da un cavalier di Malta, mandato a questo fine da S. E. a quella Porta et partito da Constantinopoli a di 7 Settembre 1575“ (հուլյն մատենադարանի ձեռագիր):

² Chev. Ricaut, „Histoire de l'Eglise Grecque et de l'Eglise Arménienne“, Amsterdam, chez Jaques Desbordes, 1710, p. 93.

¹ E. Lavissee et A. Rambaud, „Histoire générale“, t. IV, Paris, Armand Colin, 1894, p. 669—670.

² «Երեմիա Չելչեպի Քեօմուրճեան Ստամբուլոյ պատմութիւն», Վիեննա, 1913, էջ 8:

դեպի Կ. Պոլիս հետագա առաջխաղացման համար¹: Սա մե
իրողություն է, որը, իհարկե, միայն XIX դարին չէր վերա-
բերում:

Այստեղ հույն-ռուսական հարաբերությունների հարցին
զուգորդվում է հայ-ռուսական հարաբերությունների հարցը:
Կարելի՞ է արդյոք հայ(արևմտահայ)-ռուսական հարաբերու-
թյունների հարց տեսնել այստեղ: Մեր կարծիքով չի կարող
տարակույս լինել այդ մասին: Քանի որ տվյալ դեպքում հույ-
ների շարժումն ու ձեռնարկումներն անջատ չէին, այլ միաս-
նություն էին կազմում հայկականի հետ, քանի որ Ռուսաս-
տանի մասնակցությունը որոնելու և ապահովելու գործում
հույների անբաժան ուղեկիցներն էին հայերը, ապա չի կա-
րելի անտեսել այստեղ հայ-ռուսական հարաբերությունների
առկայությունը:

Պատահական չէ, որ հենց այս ժամանակը զուգահի-
սում է նոր-Ջուլայի Հայկական Առևտրական Ընկերության և
ռուսական պետության միջև առևտրական հայտնի պայմա-
նագրի կնքմանը (1667 թ.), պայմանագիր, որով մինչև այդ
Ռուսաստանի հետ գոյություն ունեցող պատահական կա-
պերը փոխարինվեցին առևտրական ամուր, տեական ու ծա-
վալուն հարաբերություններով, որոնք «պետք է զուգորդվին
քաղաքական կապերի հետ և նպաստեին նրանց զարգաց-
մանը»²: Մեղ հայտնի է, թե ի՞նչպես ընթացավ այնուհետև
այդ կապերի զարգացումը, հասնելով հայերի ռուսական
կողմնորոշմանը (XVIII դ.): Ճիշտ է, թե հայ-ռուսական հա-
րաբերությունները Պարսկաստանից են սկսվում և հիմնակա-
նում այդպես էլ մնում են երկար ժամանակ, քայքայ և փաստ
է, որ Ռուսաստան երթևեկող հայ վաճառականների թիվում

կային և արևմտահայեր¹, այնպես որ արևմտահայերը նույն-
պես առևտրական հարաբերություններ ունեին Ռուսաստանի
հետ:

Ռուսաստանի համար 1667 թվականի պայմանագիրն
ունեն ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նշանակու-
թյուն, նրանով, որ այդ երկիրը գտնվում էր թուրքական ագ-
րեսիայի ու ռազմական ծավալման զարգացմանը դիմա-
դրավելու անհրաժեշտության առաջ²: Հատկապես այս շրջա-
նում «Ռուսաստանի համար առաջնահերթ խնդիր էր դառնում
հակաթուրքական ուժերին համախմբելը և միացյալ ջանքե-
րով թուրքական ագրեսիայի դեմ պայքարելը»³. այնպես որ
այդ պայմանագիրը եթե մի կողմից «հաստատուն հիմքերի
ու լայն ուղիների վրա դրեց հայ-ռուսական տնտեսական
կապերը», մյուս կողմից «ամուր հող պատրաստեց նրանց
քաղաքական կապերի համար»⁴:

Ռուսաստանի քաղաքական շահերի, թուրքիայի հանդեպ
նրա հաշիվների տեսակետից հայ ժողովուրդը հանդիսանում
էր ոչ-նվազ կարևոր տարր, քան հույները, թե՛ թուրքիայի
ներսում, թե՛ նրանից դուրս, նրա անմիջական սահմանների
վրա՝ Անդրկովկասում: Այս շրջանում Ռուսաստանի կովկաս-
յան քաղաքականության հետապնդած նպատակներից մեկը և
գլխավորը թուրքիայի դեմ կովկասում ռազմական հենատեղ
ստեղծելն էր՝ նկատի ունենալով, առաջին հերթին, վրացի-

¹ Է. Տեր - Աստվածատրյանց, «Հայ վաճառականությունը
Ռուսիայում», Փարիզ, 1906, էջ 47:

² XVI—XVII դարերում ռուսական պետության դեմ թուրքիայի
կողմից Արևելյան Եվրոպայում, կովկասում և Պարսկաստանում տար-
ված հարձակողական բացահայտ քաղաքականության մասին տես Մ. Ա.
Սմիրնով, «Россия и Турция в XVI—XVII вв.», т. I, Москва, 1946,
стр. 4—6 и т. д.

³ Վ. Պարսամյան, «Հայ-ռուսական հարաբերությունները
պատմությունից», Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
հասարակական գիտություններ, 1952, № 7, էջ 69:

⁴ Անդ, էջ 78:

¹ К. Маркс и Ф. Энгельс, «Сочинения», т. XVI, ч. II,
Москва, 1936, стр. 22.

² Վ. Ռուկանյան, «Հայ-ռուսական հարաբերությունները XVII
դարում», Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, հասարակա-
կան գիտություններ, 1948, № 1, էջ 60: Տես նաև «Армяно-русские
отношения в XVII веке. Сборник документов; подготовили к печа-
ти В. А. Парсамян, В. К. Восканян, С. А. Тер-Авакимова», Ере-
ван, Изд. Академии Наук АрмССР, 1953.

ներին ու հայերին, և այդ քաղաքականության արտահայտություններից մեկը հայկական առևտրական կապիտալի միջոցով Անդրկովկասը Ռուսաստանին ավելի սերտորեն կապելու փորձերն էին¹:

Այսպիսով պարզ է, թե Թուրքիայի ներսում, նրա արևելյան նահանգներում՝ Արևմտյան Հայաստանում խիտ բնակչություն կազմող հայերի նշանակությունը ի՛նչ պետք է լիներ ուսական դիվանագիտության այդ քաղաքականության տեսակետից: Իսկ արևմտահայ ժողովուրդը, տառապելով թուրքական տիրապետության անտանելի լծի տակ, իհարկե, ինքն էլ չէր կարող անտարբեր լինել դեպի Ռուսաստանի այդ քաղաքականությունը, և այդ պատճառով էլ թուրքական բռնակալության դեմ ուղղված իր շարժման մեջ դաշնակցելով արդեն ձևավորված ուսական կողմնորոշում ունեցող հույն ժողովրդի հետ, նա անհրաժեշտ էր գտել ուսական հզորացող պետության մասնակցությունը որոնել իր ազատագրման գործին:

Գնա՞ց արդյոք առաջադրված դեսպանությունը ինչպես դեպի Ռուսաստան, այնպես էլ դեպի Վրաստան, պարսկական Վրաստան՝ Քարթլինա, որի մասնակցությունը նույնպես կարևոր դեր կունենար Թուրքիայի դեմ ծրագրվող այդ ընդհանուր շարժումների մեջ, և որը, իր հերթին, քաղաքական սերտ կապեր ուներ Ռուսաստանի հետ²: Դա մեզ հայտնի չէ առայժմ: Բայց ամեն պարագայի կարևոր է դեսպանության խնդրի քաղաքական նշանակությունը այն տեսակետից, որ դա որոշ լույս է սփռում հայ-ուսական քաղաքական հա-

րաբերությունների նախնական շրջանի պատմության վրա: Որ Ռուսաստանի մասնակցության դադափարն իրոք օտար չէր արևմտահայերին՝ այդ երևում է նաև 1672 թվականին Լուզովիկ XIV-ի առաջ նույն հայ պատվիրակի արած մի հայտարարությունից, ըստ որի՝ խաչակրական արշավանքի դեպքում ուսաները կհարձակվեին Տրապիզոնի վրա¹:

¹ Տես Վավերագիր № 9:

¹ М. А. Полиевктов, «Проект Бругемана и русская оккупация прикаспийских областей в 20-х годах XVIII века», стр. 37. Հմմտ. Վ. Ոսկանյան, «Հայ-ուսական հարաբերությունները XVII դարում», էջ 63:

² Ի միջի այլոց տես А. А. Цагарели, «Сношения России с Кавказом в XVI—XVIII столетиях», С.-Петербург, 1891. Ш. А. Месхиа и Я. З. Цинцадзе, «Из истории русско-грузинских взаимоотношений X—XVIII вв.», Тбилиси, 1958.

Փրմ.

ԳՒՈՒՆ Ը.

**ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԵՏԿԱՆԴԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ**

Ֆրանսիայի արևելյան քաղաքականությունը Կանդիայի պատերազմից հետո.— Լուդովիկ XIV-ը և Կոլբերը.— Գրեի Գր ևա Հեյի դեսպանությունը (1665 թ.).— Կապիտուլյացիաների վերանորոգման անհրաժեշտությունը.— Կապիտուլյացիաները՝ ֆրանսիական քաղաքների «փառքի քաղաքականություն» Արևելքի հենարան.— Կապիտուլյացիաները՝ ֆրանսիական առևտրի հենարանը Արևելքում.— Եգիպտոսի և Կարմիր ծովի հարցը.— Գնազան Գր Եուանտելը (1670 թ.).— Կապիտուլյացիաների վերանորոգման սպառնական պահանջը և մերժումը.— Վանառականների ժողովը Մարսելում.— Խաչահրահան ոգու վերագարքումը ֆրանսիական արևուտիքում.— Բուսլոն.— Լայքնիցի Հիշատակագիրը.— Լուդովիկ XIV-ի շահագրգռությունը արևելյան ժողովուրդների նկատմամբ.— Հալանդիայի պատերազմը.— Ասպետ Գ'Արվիոյի Հիշատակագիրը.— Հակաբուրժուական մրցույթը և հայկական խնդրի նոր ուղղությունը:

Կանդիայի պատերազմի ընթացքը նշելիս մենք տեսանք, թե ի՞նչ դիրք էր գրավել Ֆրանսիան, որը շահագրգռված պետություն էր թուրքերի դեպի Կենտրոնական Եվրոպա ու Միջերկրական ծավալումը կասեցնելու խնդրում: Այդ քաղաքականության բնույթը, կարելի է ասել, հիմնականում պաշտպանողական էր:

Կանդիայի պատերազմից հետո, մինչև 80-ական թվականների սկզբները, Լուդովիկ XIV-ի արևելյան քաղաքականությունը տարբեր՝ ուղղակի հարձակողական բնույթ է կրում: Այս վերջին խնդրի լուսաբանումը հնարավորություն կտա տեսնելու, թե ի՞նչքան բնական էր, որ արևմտահայ ղեկավարները, Կանդիայի պատերազմից հետո, ֆրանսիական քաղա-

քականության հետ կապելին հայ ազատագրական շարժման բախտը:

Կանդիայի հարվածը հարված էր նաև հայկական ակընկալություններին:

Կանդիայի անկումով հրապարակից քաշվում էր Հայր Օտտոմանը, բայց Մահտեսի Մուրատը իր հետապնդած գործից չէր նահանջում: Նա 1666 թվականից ի վեր Փարիզում էր, ծանոթ անձնավորություն էր ֆրանսիական արքունիքին՝ հայկական ասպտամբություն սարքելու իր ծրագրով. իսկ նմանօրինակ տրամադրությունների կամ շարժումների խրախուսումը համապատասխանում էր Թուրքիայի հանդեպ այս շրջանում ֆրանսիական արտաքին քաղաքականության որդեգրած գծին:

Դեսպան Ժան Դը Լա Հեյի (Jean de la Haye, seigneur de Vantelet) 1659 թվականի ծանոթ միջադեպից ի վեր Լուդովիկ XIV-ի հարաբերությունները լարված էին Բ. Գոան հետ, հանգելով այն բանին, որ նա իր դիվանագիտական հարաբերություններն ընդհատել էր՝ հաջորդ տարվա վերջերին ետ կանչելով իր դեսպանին¹: Բայց եթե այս առթիվ երիտասարդ արքան պատերազմ չէր հայտարարել թուրքերի դեմ, այդ բանը պետք է վերագրել գլխավորապես Կոլբերի հզոր դերին, Կոլբերի, որը թուրքերի դեմ պատերազմը համարում էր «մի աղետ, որից պետք էր խուսափել ամեն գնով»: Ենույնիսկ Կոլբերտյան քաղաքականության հաղթանակով, ի շահ Արևելքի վաճառականության, 1655 թվականին որոշվել էր կանոնավորել դիվանագիտական հարաբերությունները և դեսպան էր ուղարկվել հենց հիշյալ դեսպանի որդի Գրեի Գր Լա Հեյը (Denys de la Haye, seigneur de Vantelet), հրահանգ ստանալով պահանջել կապիտուլյացիաների վերանորոգումը և ֆրանսիացի վաճառականների համար եգիպտոսի ու Կարմիր ծովի անցուղու բացումը դեպի Հնդկաստան²:

¹ Marquis de Bonnac, „Mémoire historique sur l'ambassade de France à Constantinople“, p. 23.

² Th. Lavallée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 313—314. Chev. Chardin, „Voyages“, t. I, p. 37, 38, 43.

Բայց Դը Լա Հեյ որդին, որը ժամանակին իր հոր հետ միասին առարկա էր դարձել թուրքական նախատինքներին, չէր կարող արդարացնել իր վրա գրված հույսերը՝ իր ընդունած խրոխտ դիրքի, իսկ մեծ վեզիրի ցույց տված սկզբում թշնամական և մինչև վերջն էլ դժկամակ վերաբերմունքի հետևանքով. այնպես որ Լուզովիկ XIV-ը հարկադրվել էր ի վերջո ետ կանչել նրան¹: Եվ դա առիթ էր եղել, որ Արև-Արքան, ի վրեժ դրան, ուժեղացներ Կանդիայի օգնությունները: Այսպես՝ 1668 թվականին շարժումը վերսկսվել էր Ֆրանսիայում ղեկավարությամբ մարշալ Լա Ֆոյլյազի (François d'Aubusson, vicomte de La Feuillade), որը 1.200 ազնվական կամավորներով ղեկավար Կանդիա դիմելով ուզում էր «վերջ տալ արևելյան պատերազմին և ազատել Եվրոպան թուրքական ճնշումից»²: Իսկ հաջորդ 1669 թվականի մայիսին Կանդիա էին հասնել 6.000 ֆրանսիացիներ՝ մարշալ Դը Նավայի (Philippe de Montaut de Benac, duc de Navailles) հրամանատարությամբ³:

Այսպիսով, Դընի Դը Լա Հեյի ղեսպանությունը ոչ միայն չէր կարողացել բարելավել հարաբերությունները, այլև ավելի էր բարդացրել:

Մակայն կանդիական պատերազմը Ֆրանսիայի համար փոխվրեժի գործողությունների բեմ չէր եղել միայն: Մենք տեսանք, որ Ֆրանսիայի դիրքը սկզբից իսկ ճշտորոշված էր այս պատերազմի հանդեպ⁴: Նույնիսկ ծրագիր կար Արշիպելագը գրավելու, բայց Մազարինիի մահը խափանել էր դրա գործադրությունը, և մինչև անգամ Մազարինին կտակով

¹ Chev. Chardin, „Voyages“, t. I, p. 38—45. Th. Lavallée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 313—316.

² P. A. Guglielmotti, „Storia della marina pontificia“, vol. VIII, p. 312.

³ Th. Lavallée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 315—317. E. L'avisse et A. Rambaud, „Histoire générale“, t. VI, p. 837.

⁴ Տե՛ս էջ 90 և շար.:

200.000 սկուզ էր թողել թուրքերի դեմ մի պատերազմի օգնելու համար¹:

Այժմ, սակայն, գոյություն ունեցող այս տրամադրությունների վրա ճնշում էր և կապիտուլացիաների վերանորոգման անհրաժեշտությունը:

Կապիտուլացիաները նախ Լուզովիկ XIV-ի «փառքի քաղաքականություն»² Արևելքի հենարանն էին: Նախկին կապիտուլացիաների ուժով Ֆրանսիայի թագավորը Բ. Դուան կողմից ընդունվելով որպես «քրիստոնյա թագավորների և իշխանների մեջ ամենատոհմիկը», նրա ղեսպաններն առաջնության իրավունք էին վայելում մյուս քրիստոնյա պետությունների ղեսպանների նկատմամբ. վենետացիներից և անգլիացիներից բացի, առհասարակ արևմտյան մյուս բոլոր ազգերը ֆրանսիական զրոշով միայն իրավունք ունեին թուրքական սահմանները մտնելու, առևտուր անելու և շրջելու. Ֆրանսիայի թագավորի հովանավորության տակ էին գրված Պաղեստինում և կայսրության բոլոր կողմերում գտնվող լատին կրոնավորները, և այլն: Այս բոլորը «Արև-Արքայի» փառքն էին կազմում³:

¹ A. Vallero, „Storia della Guerra di Candia“, t. II, Trieste, 1859, p. 166. Հմտ. T. G. Djurava, „Cent projets de partage de la Turquie“, p. 212.

² Ըստ Լավիսի՝ Լուզովիկ XIV-ի «փառքի քաղաքականությունը» կազմում էր այն հետևողական դիմք, որով նա ձգտում էր կիրովական պետությունների, հատկապես դերժանական կայսրի և նույնիսկ պապի, նկատմամբ հեղինակավոր դիրք ունենալու, իր թագավորությունն «աներկրայորեն» համարելով «այն գլխավոր առանցքը, որի շուրջ պտտվում են քրիստոնեական աշխարհի և նրա բոլոր իշխանավորների բոլոր շահերը», հմտ. E. L'avisse, „Histoire de France“, t. VII, part. II, p. 225—229.

³ 1604 թվականի կապիտուլացիաների բնագիրը և լրացուցիչ սկազմեսն Baron F. de Testa, „Recueil des traités de la Porte Ottomane“, t. I, Paris, Amyot, 1864, p. 141—154. G. Noradounghian, „Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman“, t. I, p. 93—102 et 108—110.

Սյնուհետև՝ կապիտուլացիաները Ֆրանսիայի համար հենարանն էին նաև Արևելքի առևտրի։ Արևելքի առևտուրը Կոլբերի գլխավոր մտահոգություններից մեկն էր. այդ պատճառով նա 1669 թվականին Մարսելը հայտարարել էր ազատ նավահանգիստ, որտեղ արևելքի վաճառականները կարող էին թափել կամ բռնել իրենց ապրանքները՝ առանց մաքսի, որպեսզի գյուրանար ֆրանսիական արդյունաբերության անհրաժեշտ նախանյութերի ներմուծումը, ինչպես և ֆրանսիական արդյունաբերական ապրանքների արտահանումը՝ դեպի թուրքական շուկաները¹։ Այս նպատակով նաև նույն թվականին հիմնվել էր «Արևելքի Ընկերությունը» (Compagnie du Levant), որ կազմված էր Փարիզի, Լիոնի և Մարսելի գլխավոր վաճառականներից²։ Կոլբերտյան առևտրական քաղաքականությունը անհրաժեշտ էր գտնում կանոնավոր հարաբերությունների վերահաստատումը 1604 թվականի կապիտուլացիաների հիման վրա, որպեսզի ֆրանսիական առևտուրն Արևելքում ունեցած իր նախկին դիրքը վերագրավեր և ֆրանսիացի վաճառականներն ի միջի այլոց օգտվեին մաքսային այն նվազագույն դրույթից, որից օգտվում էին այժմ անգլիացի, հոլանդացի և գենովացի վաճառականները, այն է՝ 3%, մինչ ֆրանսիացիները վճարում էին 5%, և մինչև իսկ Եգիպտոսում՝ 10%³։

Կապիտուլացիաների վերանորոգմանը մեծ նշանակություն էր տրվում նաև Հնդկաստանի առևտրի համար։ XVI դարից սկսած ֆրանսիացի վաճառականներն առևտուր էին անում Աֆրիկայի արևմտյան ափերի վրա՝ հետզհետե առա-

¹ Ch. Périgot, „Histoire du commerce français“, Paris, G. Delarue, p. 207—208. M. Herbet, „Une ambassade persane sous Louis XIV d'après des documents inédits“, p. 237.

² N. Rocca, „La France en Orient depuis les rois francs jusqu'à nos jours“, p. 103. Ch. Périgot, „Histoire du commerce français“, p. 225.

³ Marquis de Bonnac, „Mémoire historique sur l'ambassade de France à Constantinople“, p. 24.

ջանալով դեպի հարավ։ Այս գծով ֆրանսիական առևտրին դեպի Հնդկաստան ճանապարհ բանալու համար Ռիշլիոն, հոլանդացիների և անգլիացիների օրինակով, 1642 թվականին հիմնել էր «Արևելյան Հնդկաստանի ֆրանսիական Ընկերությունը» (Compagnie Française des Indes Orientales), որ սակայն Ռիշլիոյի մահով զրկվել էր իր գոյությունից¹։ Կոլբերը 1664 թվականին վերականգնել էր այդ ընկերությունը², բայց Հնդկաստանի ճանապարհը, որ Բարեհուստ հրվանդանով էր անցնում, շատ երկար էր, այդ պատճառով նա ուզում էր փոխել գիծը և մի ավելի կարճ ճանապարհով, այն է՝ Եգիպտոսի վրայով ու Կարմիր ծովով, ուղղակի գուրս գալ դեպի Հնդկական օվկիանոսը. «Նա Եգիպտոսը համարում էր Հնդկաստանի իսկական ճանապարհը և նրանով ուզում էր տապալել անգլիացիների և հոլանդացիների առևտուրն Ասիայում»³։ Այս ծրագրով էր, որ նա Գրենի Գը Լա Հեյին հրահանգել էր կապիտուլացիաների վերանորոգման հետ աշխատել ձեռք բերել նաև Եգիպտոսի ու Կարմիր ծովի անցուղին, բայց, ինչպես տեսանք, չէր հաջողվել այդ։

Այդպիսով՝ կապիտուլացիաների վերանորոգման անհրաժեշտությունն ու ձախողումն այս շրջանում նույնպես ազդում էին ֆրանսիական արքունիքում արդեն տիրող հակաթուրքական տրամադրությունների վրա։

Կապիտուլացիաների պահանջման առթիվ ուղղակի սպառնական դիրք էր ընդունվել։

Նոր դեսպան Գը Նուանտելը (Ch.-F. Olier, marquis de Nointel), որ շորս ռազմանավերով ու մարտական սպառնալիքով էր Կ. Պոլիս հասել 1670 թվականին, — և քիչ էր մնացել, որ նախամարտ տեղի ունենար այդ առթիվ օսմանյան մայրաքաղաքի նավահանգստում, — չէր կարողացել ավելի

¹ Ch. Périgot, „Histoire du commerce français“, p. 195—196.

² Ibidem, p. 227.

³ Th. Lavallée, «Histoire de l'Empire Ottoman», p. 319.

այլ
գրքի
գրքի

լավ ընդունելություն գտնել, քան իր նախորդը: Երբ նա իր տիրոջ մեծությունից և հզորությունից էր ճառում, մեծ վեզիրը նրան ասել էր հեգնանքով. «Ֆրանսիայի կայսրը մեծ վեհապետ է, բայց նրա սուրբ տակավին նոր է»: Նույնպիսի հեգնանքով էր նա արտահայտվել, երբ դեսպանը հայտնել էր, թե հրահանգ ուներ Կարմիր ծովի վաճառականության մասին բանակցելու. «Ի՛նչպես կարելի է, որ մի այնպիսի՝ մեծ կայսր, ինչպիսին դուք եք ներկայացնում ձերը, այդքան եռանդով զբաղվի վաճառականների մի գործով»: Եվ այս դրություն մեջ Դր Նուանտելը կապիտուլացիաների վերանորոգումն էր պահանջում նոր հիմքերի վրա, մոտ երեսուն նոր հողավածներով, որ նա ուզում էր պոկել թուրքերից սպառնալիքի ուժով. սակայն նրանք, մերժելով այդ բոլորը, հայտարարել էին, որ եթե դեսպանը չի համաձայնվում 1604 թվականի կապիտուլացիաների նույնությամբ վերանորոգմանը, կարող է վերադառնալ Ֆրանսիա՝:

Կարելի է պատկերացնել, թե այս պարագան ինչպիսի՞ զայրույթ առաջացրեց Ֆրանսիայում: Դեպքերին ժամանակակից Շարդենը հազորդում է, թե ի՛նչպես Մարսելյում Արևելքի բոլոր վաճառականներին ու թուրքական գործերին իրազեկ մարդկանց ժողովի հրավիրեցին իմանալու, թե նրանց կարծիքով առևտրի համար ի՛նչ հետևանք կարող էր ունենալ հարաբերությունների խզումը. և ժողովի կարծիքն այն եղավ, թե Պրովանսում կար այնքան ապրանք, որ կարող էր տասը տարով բավարարել Ֆրանսիային, և թե, եթե թագավորը միայն տասը ուղղմանով ուղարկեր դեպի հունական ծովերը և Դարդանելը, սովը շուտով կտիրեր Կ. Պոլսում և այնտեղ բնակչությանը: Սուրբ Ֆրանսիացիներին²: Մյուս կողմից արտաքին գործերի մինիստր Դր Լիսնը հազորդում էր

¹ J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. III, p. 135—137.

² Ընդարձակորեն տես նաև Chev. Chardin, „Voyages“, t. I, p. 50—60. Chev. d'Arvieux, „Mémoires“, t. IV, Paris, 1735, p. 254—279.

³ Chev. Chardin, „Voyages“, t. I, p. 61.

օսմանյան վեզիրին (16 օգոստ. 1671 թ.), թե Ֆրանսիայի թագավորը հրամայել է իր դեսպանին՝ «անմիջապես վերադառնալ այն նավով, որը ուղարկված է այս առթիվ»¹:

Վերջապես արամադրությունները վերին աստիճանի հուզված էին և խաշակրական ոգին վերազարթնում էր Ֆրանսիական արքունիքում: Թուրքական կայսրության դեմ արշավանք կատարելու գաղափարն իշխում էր և զորեղ կերպով արձագանքում դեպի Արևելք: Մարսելից ուղարկվող տեղեկություններ և բազմաթիվ նամակներ ասում էին, թե Լուդովիկ XIV-ը հիսուն ուղղմանով էր պատրաստել տալիս թուրքերի դեմ արշավելու համար, և այս լուրը, որ տարածված էր Կ. Պոլսում, Ադրիանուպոլսում և Արևելքի բոլոր նավահանգիստներում, շփոթության էր մատնել օսմանյան մինիստրներին²:

Տիրող այս գաղափարներից ներշնչված՝ արքունի բանաստեղծ Թուալոն (Nicolas Boileau) ոգում էր Լուդովիկ XIV-ին.

«Քեզ կսպասեմ ես վեց ամսում
Հելլենպոնտի ափերում»³:

Հրապարակ էր գալիս գերմանացի հռչակավոր իմաստասեր Լայբնիցը (Gottfried Wilhelm Leibnitz), որ 1672 թվականի հունվարին Լուդովիկ XIV-ին ուղղված մի Հիշատակագրով նրա ուշադրությունն էր հրավիրում այն հեռանկարների վրա, որոնք կապված էին Եգիպտոսի նվաճման հետ. իսկ առաջին հերթին՝ դա, Լայբնիցի կարծիքով, «Արև-Արքային» հնարավորություն կտար սուլթանների իշխանության հաշիվը տեսնելու: «Եգիպտոսի նվաճումով՝ թուրքական կայսրության կյանքը վերջացած է. նա ամեն կողմից փուլ կգա», որովհետև «ո՛չ միայն Եգիպտոսը, այլև ամբողջ

¹ Դր Լիսնի նամակը տես Chev. d'Arvieux, „Mémoire“, t. IV, p. 300—301. Հմտ. նաև J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. III, p. 137.

² Chev. Chardin, „Voyages“, t. I, p. 62.

³ „Je t'attends dans six mois sur les bords de l'Hellespont“, տես Th. Lavalée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 321.

Արևելքը, ապստամբելու համար միայն սպասում է մի տգա-
տարար ուժի, որի վրա կարելի լինի անվախ հենվել: Եվ
Հայրենիցը Լուդովիկ XIV-ին հրավիրում էր անհապաղ ձեռ-
նարկել այդ ազատարար արշավանքին. «Թուրքական կայ-
սրության կործանումը» կլինի մի «երախտիք, որը Ֆրանսիա-
յին է պատկանելու միայն»¹:

Թե Լուդովիկ XIV-ն ինքը որքա՛ն էր հետամուտ Հայր-
ենիցի առաջարկած այդ «երախտիքը» շահելու՝ կարելի է դա-
տել նրանից, որ այս շրջանում արտակարգ շահագրգռու-
թյուն էր ցույց տալիս նա դեպի արևելյան քրիստոնյա ժողո-
վուրդները: Հայտնի աստվածաբան Առնոյի (Antoine Ar-
nauld) համար դեսպան Գր Նուանտելը Լուդովիկ XIV-ի հրա-
հանգով արևելյան Եկեղեցիների դավանանքների մասին
քննություն էր կատարում 1671/72 թվականներին Օսմանյան

¹ „Mémoire de Leibnitz à Louis XIV, sur la conquête de
l'Egypte, publié avec une préface et des notes par M. de Hoffmans“
etc., Paris, E. Garnot, 1840. Նույնը տես նաև Baron I. de
Testa-ի մոտ. „Recueil des traités de la Porte Ottomane“, t. I,
p. 525—534.

Ա. Սորելի կարծիքով զերմանացիների նպատակն էր «Ֆրանսիացի-
ներին չունոսից հետացնելու» համար «փորձություն մղել Լուդովիկ
XIV-ին՝ նրան թելադրելով թուրքի դեմ կովելու զաղափարը», տես
A. Sorel, „L'Europe et la Révolution française“, t. I, Paris, 1855,
p. 328. Մակայն այս պարագան նշանակություն չունի. բավական է,
որ ֆրանսիական արքունիքը չէր նկատել հետապնդված նպատակը,
ուստի և արտաքին գործերի մինիստր Պոմպոնը գտնում էր, որ Հայր-
ենիցի չիշատակազիրը «Նորին Վեհափառության փառքի և հաջողության
համար շատ մեծ կարծիք է պարունակում», տես T. G. Djuvara, „Ceñt
projets de partage de la Turquie“, p. 221—222.

Բայց կասկած չկա, որ Հայրենիցն իր ժամանակի արևելյան գործե-
րին իրազեկ անձնավորություն է եղել: Այդ երևում է և նրանից, որ
զերմանացի դեմնակներ մեծ շահագրգռություն է հանդես բերել հայե-
քն լեզվի նկատմամբ՝ ինչպես վկայում են այն մի շարք նամակները,
որ նա ուղղել է ֆրանսիացի հայտնի հայագետ Մ. Վ. Լակրոզին (Ma-
thurin Veysières de Lacroze): Այդ նամակներից մեկում նա նույնիսկ
գրում էր. «Հայերը արժանի են, որ իրենց համար դուք անեք այն, ինչ
որ արել է պին. Լուդովիկ հարեշների համար», հմմտ. Ն. Ե. Փ., «Եւրոպայի
և հայերը», Բաղդադիկ, 1940, էջ 127—133:

կայսրության ամբողջ տարածության վրա¹, իսկ այդ առիթով
ու պատրվակով լայն հարաբերություններ էին մշակվում այդ
եկեղեցիների նշանավոր ու ղեկավար ներկայացուցիչների
հետ, ինչպես էին հույներից Կ. Պոլսի պատրիարք Մեթոդիոս
III-ը և նախկին պատրիարք Պարթենիոս IV-ը, Կիպրոսի արք-
եպիսկոպոս Նիկեփոքը, Անդրոսի արքեպիսկոպոս Հակոբը,
Սիֆանտոյի արքեպիսկոպոս Աթանասը, Միլոսի արքեպիս-
կոպոս Գերասիմը, Զանտայի և Կեֆալոնիայի արքեպիսկո-
պոս Պայսիոսը և ուրիշներ. հայերից՝ Հակոբ և Ստեփանոս
պատրիարքները Կ. Պոլսում, Եգիպտոսի առաջնորդ Գասպար
Եպիսկոպոսը. և մինչև իսկ Մինգրելիայի եպիսկոպոսները
և այլն²:

Այս բոլորն ինքնին սուկ կրոնական հետաքրքրության
համար չէ, որ արվում էր:

Անհնարին չէր, և նույնիսկ սպասելի էր, որ տիրող դու-
թյունը պատերազմի հանգեր, սակայն ինչպես ասում է Շար-
դենը, վերջում ընդունված որոշումը չէր համապատասխանել
Մարսելի ժողովում զրսևորված արամազրություններին,
որովհետև Լուդովիկ XIV-ն արդեն Հուլանդիայի դեմ պատե-
րազմական պատրաստությունների մեջ լինելով, չէր կամեցել
ձեռնարկել թուրքական արշավանքին, որին հարկ կլիներ
հատկացնել իր ծովային ուժերի մի կարևոր մասը³: Լուդովիկ

¹ Fr. Macler, „Mosaïque orientale“, Paris, Libr. Paul
Geuthner, 1907, p. 40—41.

² Փարիզի Bibliothèque Nationale-ի հայերեն № 145 ձեռագրում
ամփոփված են վերոհիշյալ և ուրիշ անձերի՝ դեսպան Գր Նուանտելի
կողմից հաճաքված ու Լուդովիկ XIV-ին ուղարկված դավանության
զբեքը հունարեն, հայերեն, վրացերեն բնագրերով և ֆրանսերեն կամ
լատիներեն թարգմանություններով. տես Fr. Macler, „Catalogue
des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationa-
le“, Paris, Impr. Nationale, 1908, p. 77—79.

Կ. Պոլսում հիշատակվող հայոց պատրիարքներից առաջինը, ըստ
երևույթին, պիտի լինի Հակոբ Զուղայեցի կաթողիկոսը, որ այս ժա-
մանակ Կ. Պոլսում էր գտնվում. իսկ երկրորդը՝ Կ. Պոլսի պատրիարք
Ստեփանոս Մեղրեցին էր:

³ Chev. Chardin, „Voyages“, t. I, p. 64.

XIV-ը Հուլանդիայի պատերազմը վճռել էր այն օրվանից, երբ այդ «ամբարտաւան ու ապերախտ ազգը», դաշնակցելով Անգլիայի և Շվեդիայի հետ, նրան հարկադրել էր Ասիենի հաշտութիւնը ստորագրելու (1668 թ.), Սպանիայի ժառանգութեան կռիւում կասեցնելով նրա նվաճումները. իսկ այժմ, իրոք հուլանդացիների «լրբութիւնը» պատժելու ծրագրին տալով առաջին տեղը, նա 1672 թվականի ապրիլին պատերազմ է սկսում, շարժվելով դեպի Հոլանդիա՝ և թուրքական խնդիրը թողնելով երկրորդական պլանի վրա:

Քայց և այնպես կապիտուլացիաների խնդիրը շարունակում էր քաշքշվել և հուզման մեջ պահել տրամադրութիւնները²: Ասպետ Գ'Արվիուս (Laurent d'Arvieux) 1672 թվականի սեպտեմբերին Լուդովիկ XIV-ին ներկայացրած Հիշատակագրով դեպի Արևելք մի ծովային արշավանք կատարելու անհրաժեշտութեան հարցն էր բարձրացնում դարձյալ՝ ստիպելու համար թուրքերին, որ նրանք վերանորոգեն կապիտուլացիաները: Գ'Արվիուսի կարծիքով ո՛չ ուշ քան շորս կամ վեց շաբաթում կարելի էր տեր դառնալ Արշիպելագի բոլոր կղզիներին, իսկ «այնտեղ բնակվող ժողովուրդներն այդ երջանիկ պահին են սպասում, որովհետև այդպիսով կազատվեն անհավատների լծից»։ այդ ժողովուրդները Ֆրանսիայի թագավորին ուրախութեամբ կվճարեն այն հարկերը, որ վճարում էին թուրքերին, «և դա բավական կլինի պահելու համար այն բանակը, որ գործելու է թուրքերի դեմ»: Այսպէս գտնում էր, որ թնդանոթի տասներկու հարվածներ բավարար կլինեն Չմլուռնիայի բերդը տապալելու և քաղաքը գրավելու համար, և այլն³:

¹ E. Lavisse. „Histoire de France“, t. VII, part. II, p. 294 et suiv.

² Ընդարձակորեն տես Chev. d'Arvieux. „Mémoires“, t. IV, p. 379—389 et 396—435.

³ Ibidem, p. 10—28: „Mémoire présenté au Roy par le Chevalier d'Arvieux à son retour de Constantinople, le 24 Septembre 1672“. Տես նաև՝ Baron I. de Testa. „Recueil des traités de la Porte Ottomane“, t. I, p. 7—13.

եվ այսպես՝ կապիտուլացիաների խնդիրը 1670-ական թվականներին շարունակում էր սնունդ տալ թուրքիայի նկատմամբ ֆրանսիացիների խաչակրական տրամադրութիւններին:

Ուրեմն տեսնում ենք, որ նախ 1660-ական թվականներին Լուդովիկ XIV-ի և օսմանյան Դուան միջև դիվանագիտական հարաբերութիւնների խանդարումը, որ դեպի պան ժան Դը Լա Հեյի օրով սկսվելով՝ հետո նրա որդի և հաջորդ Դընի Դը Լա Հեյի դեսպանութեան օրով շարունակվել էր, աչքի ընկնող երևույթ էր: Երկրորդ՝ այդ երևույթը ավելի էր թանձրացել նրանով, որ թուրքերը վճռական ընդդիմութիւն էին ցույց տվել կապիտուլացիաների վերանորոգմանը, և 70-ական թվականների սկզբներին, Դը Նուանտելի դեսպանութեան օրով, ուղղակի պատերազմի սպառնալիք էր կախվել թուրքիայի գլխին. և եթե դրա հետ վերհիշենք նաև դեռևս Կանդիայի պատերազմի սկզբից, Մազարինիի օրով, թուրքերի հանդեպ ֆրանսիական արքունիքի որդեգրած դիրքը, ապա մենք կունենանք իրական պատկերն այս շրջանում Բ. Դուան հանդեպ Լուդովիկ XIV-ի ընդգրկած քաղաքականութեան, որին անպայման կհամապատասխաներ Օսմանյան կայսրութեան մեջ ապստամբական տրամադրութիւնների և շարժումների խրախուսումը:

Այս իրադրութեան մեջ հայոց պատմիրակ Մահտեսի Մուրատը, որ այս շրջանում Փարիզում էր ապրում և իր ներկայացրած հանդամանքով իսկ շփման մեջ էր ֆրանսիական պետական շրջանների հետ, պետք է որ Կանդիայի պատերազմի վերջանալուց հետո շարունակեր զարգացնել իր կայերը ֆրանսիական արքունիքի հետ, քանի որ նույնիսկ Կանդիայի պատերազմի ընթացքում, երբ հայոց ազատագրութեան խնդիրն ուղղակի հայր-օտտոմանյան ծրագրերի հետ էր կապված, հայկական ակնկալութիւնների գլխավոր կովանը դարձյալ Լուդովիկ XIV-ն էր եղել:

Մյուս կողմից, պետք չէ մոռանալ, որ թուրք-ֆրանսիական հարաբերութիւնների այդ աններդաշնակ և սրված մըթ-

նուրրտում Լուդովիկ XIV-ը կցանկանար ղեպի իրեն քաշել և իրեն հետ կապել հակաթուրքական շարժումների ղեկավարներին՝ հարմար ընկերներն ուղղակի իր նպատակներին ծառայեցնելու համար:

Ուստի, հայոց պատմիրակը, արդեն ծանոթ լինելով տիրող մթնոլորտին, պիտի մնար Փարիզում՝ «Արևելքի քրիստոնեություն պաշտպան» Արև-Արքայի օգնության հույսով: Եվ իրոք, Կրետեի պատերազմին հաջորդող տարիներին նա դարձյալ Փարիզում էր և համառորեն շարունակում էր առաքելությունը:

ԳԼՈՒԽ Թ.

ԼՈՒԳՈՎԻԿ XIV-Ը ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐՎՄԱՆ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

Լուդովիկ XIV-ը որպես կովան հայկական անկախությունների.— Գարձյալ հայկական մարգարեություններ.— Արևելյան պատմիրակներ ֆրանսիական արևունիում.— Քրիստոնեական Արևելք ազգանշանի էր սպասում.— Ժորժ Բոնեի հրատարակության անհրաժեշտությունը.— Մահաեսի Մուրատը կամ Խոջա Մուրատը Լուդովիկ XIV-ի մտ, և նրա արտասանած նաղը.— Գա առաջին ունկնդրությունը շէր.— Խոջա Առաքելը.— Հայաստանի «իշխանների» դիմումները Լուդովիկ XIV-ին.— Հայկական սպարապետական ծրագրի մանրամասնությունները.— Կապը բախառակից ժողովուրդների հետ. «բուն» հույները, «սև-ծովյան» հույները, վրացիները, ասորիները.— Կապը սահմանակից պարսիկների հետ.— Հայաստանն ընկնում էր ֆրանսիական գրավման համար նախատեսվող շրջանների մեջ. Շավիեյի ծրագիրը (1606 թ.) և Պուլի ծրագրի (1668 թ.) մանրամասնությունները.— Մահաեսի Մուրատը ներսես Պարբեի մարգարեության մասին.— Արևելյան արշավանքի խոչընդոտները. Կոլբերն ու Գր Լիսե.— Կապիտուլյացիաների վերահորոգումը 1673 թ.— Քուրթիայի գրավման գաղափարի արժարծումը Ֆրանսիայում 1673 թվականից հետո. Միխայել Ֆեբուրը և Հայր Գարբիել Լոնգոն.— Լուդովիկ XIV-ի պատերազմներն ու Մահաեսի Շահմուրատի սպասողական դրությունը մինչև 1683 թվականը:

Նախորդ էջերում հիշեցինք հայ իրականության մեջ տարածված տեսիլներն ու մարգարեությունները: Կոստանդինոս Մեծ կայսրն իբր թե կանխագուշակել էր, թե իր սերնդից էր լինելու հայ ժողովրդի ազատարարը, և հոռմեացիներին կամ ֆրանկներին վերապահված ազատարարի այս դերը մեծ ժողովրդականություն էր ստացել Ներսես Պարթևի և Ազատարան

փիլիսոփայի մարգարեութիւններով: Իսկ Ֆրանսիայի թագա-
վորներին՝ հայկական շահագրգիռ շրջաններում Կոստանդիա-
նոսի սերնդից էին համարում, ինչպես երևում է Կարապետ
Քաղիշեցու հետևյալ տողերից.

«Թագաւոր է աշխարհիս
Հրգօր Ֆրանցայ արքայն.
է սա ի թուանց մեծաց
Կոստանդիայ Կոստանդին արքայն»¹:

Տեսանք, թե ինչպես Խաչատուր Գաղատացի կաթողի-
կոսը 1657 թվականից Կրետի վենետական իշխանութիւն-
ների հետ հարաբերության մեջ լինելով հանդերձ, միաժամա-
նակ ուղղակի դիմումներ էր կատարում Լուդովիկ XIV-ին: Նա
իր նամակում, 1663 թվականին, ներսես Պարթևի մարգարեու-
թիւնը հիշեցնելուց հետո ասում էր Ֆրանսիայի թագավորին.

«Ես՝ Ձեր անարժան ծառան [և իմ ազգը] սպասում ենք
այս մարգարեության իրականացմանը, և հույս ու հավատ
ունենք, որ Ձեր օրհնյալ ձեռքերով կկատարվի մեր փրկու-
թիւնը»²:

Եվ քիչ հետո ավելացնում էր.

«Ես՝ Ձեր ծառան՝ հայոց կաթողիկոսս ու Ձեր հոգևոր եղ-
բայրը, և իմ ամբողջ ազգը, պաղատում ենք, որ բնավ չմո-
ռանաք Ս. Ներսեսի մարգարեացածը»³:

Այսպես և Արևելյան Հնդկաստանի Ֆրանսիական Բնկե-
րության կողմից Պարսկաստան ուղարկված գործակալներ
Դը Լալենը (De Lalain) և Դը Լա Բուլեյ Լը Գուն (De la Boul-
laye le GOUZ), որոնք օսմանյան Հայաստանի նահանգներով
էին անցել, հետևյալն էին գրում Երևանից Լուդովիկ XIV-ին
(20 մայ. 1665 թ.).

«Բերդում, ինչպես բազարում (Երևանում), կան սովարա-

¹ «Տաղ արարածոց, Կարապետ վարդապետի ասացեալ», Հանդէս
Պատմութեայ, 1937, էջ 332:

² և ³ Տես Վավերագիր № 1:

թիվ հայեր և բոլորը, անխտիր, ինչպես նաև Թուրքիայում
մեր տեսած հայերը, որոնք հեծում են օսմանցիների բռնա-
կալութեան տակ, ամեն օր իրենց թշվառութիւնների վախ-
ճանն են ակնկալում Ձեր Վեհափառութեան հաղթական զեն-
քերից, և գիտակ լինելով Նրա մեծութեանն ու հզորութեանը՝
առանձնահատուկ մեծարանք ունեն Նրա առաքինութիւնների
և մեծ բարեմասնութիւնների հանդէպ, և Նրա մասին տա-
րածված համբավն ու հասարակական կարծիքը նրանց հա-
վատալ են տալիս, որ իրենց մարգարեութիւնների իրակա-
նացման ժամանակումն են գտնվում, ու այդ մասին այնքան
են համոզված, որ նրանք Ձեր Վեհափառութեան մասին խո-
սում են միմիայն որպէս իրենց ազատութեան վերականգնողի
և իրենց եկեղեցիների ու հավատի պաշտպանի մասին: Նրանք
հավերժորեն բաղձում են իրենց հույսերի շուտափութի իրա-
կանացումը և հաստատապէս հավատում են, որ գոյութիւն
չունի ոչ մի հեռավոր երկիր, ուր Ձեր Վեհափառութիւնը չկա-
րողանա հասցնել իր բանակների ուժը, ինչպես և իր անվան
փառքը»¹:

¹ «Il y a dans le chasteau, aussi bien que dans la ville [d'Eri-
van], quantité d'Arméniens et tous, tant qu'ils sont, de mesme que
ceux que nous avons veus en Turquie gémir sous la tyrannie des
Ottomans, attendent tous les jours la fin de leurs misères des armes
victorieuses de Votre Majesté, comme ils en connoissent la gran-
deur et la puissance, ils en ont les vertus et les grandes qualités en
très-particulière vénération et ce qu'ils en apprennent de la renommée
et de la voix publique leur fait croire qu'ils sont dans le temps de
l'accomplissement de leurs prophéties, et ils en sont tellement per-
suadés qu'ils ne parlent de Votre Majesté que comme du restaura-
teur de leur liberté et du protecteur de leurs églises et de la foy.
Ils font éternellement des voeux pour voir bientost réussir leurs es-
pérances et croient fermement qu'il n'y a point de pays si éloigné
que Votre Majesté n'y puisse porter la force de ses armées aussi
bien que la gloire de son nom», տես P. Raphaël du Mans,
«Estat de la Perse en 1660», Paris, Ernest Leroux, 1890, p. 302.

Նույն օրը նրանք գրում էին նաև արտաքին գործերի մինիստր Դը
Լիոնին՝ նույնպէս նշելով այն հույսի մասին, որ հայերն ունեն իրենց
մարգարեութիւնների իրականացումը տեսնելու, Ibidem, p. 303.
Այս նամակների հեղինակները 1663 թվականի գարնան ամիսնե-

Այժմ, ազատագրական շարժման այս նոր շրջանում, Լուդովիկ XIV-ը շարժման ղեկավարների աչքում հանդես է գալիս որպես հայկական ակնկալությունների ո՛չ թե գլխավոր կովանը, այլ միակ կովանը:

Մահտեսի Մուրատը դարի 70-ական թվականների սկզբներին ևս Փարիզում էր:

Այդ մասին մենք տեղեկանում ենք ժորժ Բոննեի (Georges Bonnet) հրատարակությունը 1683 թվականին հրատարակված «Ֆրանսիայի թագավոր Լուդովիկ Մեծին ուղղված մի քանի ճառեր և նամակներ» վերնագիրը կրող ժողովածուից¹: Այգտեղ, «Արևելյան իշխանների արտասանած ճառերը 1672 թ. հունվարին»² բնդհանուր խորագրի տակ բերված են երեք ճառեր. 1. հույն ազնվական Հովհաննես Պասպատիի (Jean Paspali, gentilhomme grec), 2. հայ իշխան Սոջա Մուրատի (Cogeamorad, prince arménien), և 3. ասորի իշխան Սոջա Դինխայի (Cogeadinca, prince syrien).

Այս երեք ճառերի բովանդակությունը գրեթե նույնն է: Այն տպավորություն են թողնում, որ կարծես թե այս երեք պատվիրակները համաձայնված լինեն՝ իրար ասածները կրկրենելու և գրեթե միևնույն բառերով արտահայտվելու հա-

բին օտմանյան Հայաստանի նահանգներով էին անցել՝ Զմյուռնիայից մեկնելով փետրվարի վերջերին, Եվզոկիա—Կարին—Հասանկալա—Կաղզը—վան ճանապարհով եկել էին պարսկական սահմանը և մայիսի 13-ին սահմանն անցնելով ուղղվել էին դեպի Երևան, հմմտ. Ibidem, p. 297—301.

¹ «Quelques discours et lettres adressés à Louis le Grand, Roy de France, sur l'état et les affaires de l'Empire des Turcs; publiés par le Sieur Georges Bonnet». A. Paris, chez Claude Barbin, 1683.

Այս ժողովածուից մեր ունեցած քաղվածները կատարված են հանդուցյալ պրոֆ. Կ. Հ. Բասմաջյանի ձեռքով՝ հայտնի գրավաճառ Գ. Գյոթնեի մոտ եղած ձեռագիր օրինակից: Բասմաջյանի կարծիքով՝ այս ձեռագիրը ոչ թե բնագործակություն է տպագրից, այլ այն բնագրին է, որից պետք է կատարված լինի տպագրությունը:

² «Discours des Princes Orientaux prononcés au mois de Janvier 1672», տե՛ս Ibidem, p. 22—33.

մար. և թվում է, թե հենց այդպես էլ եղել է, նկատի ունենալով, որ երեք ելույթները տեղի են ունեցել միևնույն ամսվա մեջ, գուցե և միևնույն օրում:

Առայժմ հնարավոր չէ ասել, թե այստեղ հիշատակվող հույն և ասորի ներկայացուցիչները կանգիական պատերազմի շրջանից մնացած պատվիրակներ են, թե ոչ, բայց կասկած չկա, որ հիշյալ Խոջա Մուրատը Մահտեսի Մուրատն է, որովհետև այդ բանը երևում է նախ՝ անունների նույնությունից (Խոջա Մուրատ—Մահտեսի Մուրատ) և հետո՝ այն բանից, որ Խոջա Մուրատը իր ճառում ակնարկում է Կանդիայի պատերազմի ընթացքում հայերի ունեցած գործունեության մասին:

Այս հատորի մյուս նյութերի մեջ ուշադրության արժանի է նաև դեսպան Գր Նուանտելի 4 հոկտ. 1671 թ. մի նամակը¹, որ թեև ուղղակի և հատուկ ոչինչ չի ասում հայերի մասին, բայց օրվա գրության մասին խոսելիս հայտնում է, որ «Թուրքիայի քրիստոնյա ազգությունների ներկայացուցիչները, որոնք ինձ հետ հարաբերության մեջ են ***-ների միջոցով, ինձ միշտ հավաստում են, որ կարող եմ առանց տարակույսի վստահ լինել իրենց ժողովուրդների պատրաստակամության վրա այն դեպքում, երբ կարիք կլինի, ոչ միայն մայրաքաղաքում, այլև երկրի եվրոպական ու ասիական բոլոր նահանգներում» և «կասկած չկա, որ այս ազգերը կատարյալ անկեղծությամբ ու խորունկ սիրով են կապված Ձեր Վեհափառության անձնավորությանը. նրանք միշտ պատրաստ են անելու ամեն ինչ, որ անհրաժեշտ է՝ կրկին ձեռք բերելու համար իրենց ազատությունը, եթե Ձեր Վեհափառությունը պատերազմ հայտարարի թուրքերին և ծովային ու ցամաքային բավարարչափ զորքեր հասցնի իրենց օգնության»²:

Ըստ երևույթին, ժորժ Բոննեի հրատարակությունն իր ժա-

¹ «Lettre de M. de Nointel, ambassadeur de France à la Porte Ottomane, au Roy, le 4 Octobre 1671», տե՛ս Ibidem, p. 61—66.

² «Les représentants des Nations Chrétiennes de la Turquie lesquels sont en relation avec moy par le canal des*** me donnent

մանակին անհրաժեշտություն էր համարվել Լուդովիկ XIV-ի բաղաբական վարկի համար, որովհետև այդ շրջանում, 80-ական թվականներին, երբ մի կողմից «Մեծ Թուրքի» (օսմանյան սուլթանի) բանակները Կարա-Մուսթաֆա փաշայի հրամանատարությամբ կռվի մեջ էին ավստրիացիների հետ Հունգարիայում, մյուս կողմից «Փոքր Թուրքը», ինչպես փոխաբերական համեմատությամբ որակում էին այս առթիվ Լուդովիկ XIV-ին, կռվի մեջ էր սպանացիների հետ, բայց նա, գուցե «Կարա-Մուսթաֆային գործակից երևալու ամօթից տարված», հանկարծ վերացրել էր Լուքսեմբուրգի պաշարումը և թուրքերի դեմ դերմանական կայսրին օգնության գալու պատրաստակամություն էր հայտնել¹։ Այս ժամանակներում Ռեզենսբուրգում տպագրված մի նամակ (1683 թ.) մերկացումներ էր անում Լուդովիկ XIV-ի մասին՝ նրան ներկայացնելով որպես թուրքերի գաղտնի դաշնակիցը, թեև դժվար է ասել, թե հաստատվում էր այդ մեղադրանքը։ Այդ հրատարակությունը կրում էր այսպիսի խորագիր. «Լեհական պարոն Ս. Լ.-ի նամակը պարոն մարքիզ Կ. Լ.-ին, որից հայտնապես երևում են թուրքերի և ապստամբ հունգարացիների հետ ֆրանսիացիների ունեցած գաղտնի գործակցությունն ու մեղենայությունները» („Lettre de M. S. L., seigneur polonais, à M. le marquis C. L., où l'ont voit manifestement les pratiques et menées secrètes des Français avec les Turcs et

toûjours l'assurance que je peux compter avec confiance sur l'empressement de leurs Peuples en cas où il y aura besoin, non-seulement dans la capitale, mais aussi dans toutes les provinces européennes et asiatiques du pays», „il n'y a pas de doute que c'est avec une sincérité parfaite et une affection profonde que ces Nations sont attachées à la personne de Votre Majesté; elle sont toûjours prêtes à faire tout ce qui est nécessaire pour recouvrer leur liberté, si Votre Majesté déclare la guerre aux Turcs et fait arriver des troupes de mer et de terre suffisantes à leur secours“, *տես* Ibidem, p. 63 et 64.

¹ E. Lavisse et A. Rambaud, „Histoire générale“, t. VI, p. 840.

les Hongrois rebelles“, Ratisbonne, 1683)¹. Կատալոնիայում լույս տեսած մի շարք պարսավագրեր (պամֆլետներ) նույն մեղադրանքով նմանապես նշավակում էին Ֆրանսիայի թագավորին և նրա մինիստր Կոլբերին²։ Այս առթիվ ուրեմն հավանաբար զգացվել էր և այս հրատարակության անհրաժեշտությունը՝ վերականգնելու համար «Ամենաքրիստոնյա Թագավորի» քրիստոնեական վարկը։

Մահտեսի Մուրատը, ուրեմն, 1672 թ. անձամբ ներկայանում էր Լուդովիկ XIV-ին՝ «մի անգամ ևս» նրա ուշադրությունը հրավիրելու համար հայկական խնդրի վրա, ինչպես ասում է նա իր ճառի սկզբում.

«Ես ինձ երջանիկ եմ համարում, որ կարողանում եմ մի անգամ ևս Ձեզ հավաստել այն երախտագիտության մասին, որ մեր ազգը ունի հանդես Ձեզ, որ պաշտպանն եք կրոնի և մեր հայրերի սուրբ հավատի»։

Ուրեմն, առաջին անգամը չէ, որ նա ունկնդրության էր ընդունվում Լուդովիկ XIV-ի մոտ։ Դա երևում է և հետևյալ խոսքերից.

«Ձեր Վեհափառությունը հայտնի է այն ողբալի՝ կացությունը, որի մեջ գտնվում է մեր դժբախտ ազգը, ինչպես այդ մասին Ձեզ գրել ու բացատրել են բազմաթիվ անգամներ մեր ազգի պատրիարքները, ինչպես և տանուտերերը, Ձեզանից օգնություն ու պաշտպանություն խնդրելով, և ինչպես ես ևլ եմ Ձեզ հայտնել նույն բանը սրանից առաջ բանավոր կերպով, ըստ այն պաշտոնի, որը հանձնված էր ինձ»։

Բայց առաջին ունկնդրությունն, անտարակույս, 1670 թվականից առաջ պիտի եղած լինի, քանի որ այդ մասին հետք չենք գտնում Բոնեի ժողովածուի մեջ, որտեղ ամփոփված են միայն 1670—1679 թվականների նյութեր։ Այս հաշ-

¹ L. Drapayron, „Un projet français de conquête de l'Empire Ottoman au XVI^e et XVII^e siècles“, *Revue des Deux Mondes*, t. XVIII, 1876, Ire livraison, p. 145.

² Տես սույն աշխատության 234—236 էջերում։

վով առաջին ունկնդրությունը տեղի է ունեցել Կանդիայի պատերազմի շրջանում:

Շատ հետաքրքրական է Խոջա Մուրատի ճառի բովանդակությունը¹: Նա մեզ որոշ նորություններ է տալիս հայկական շարժման մասին:

Խոջա Մուրատի «պաշտոնակից» Խոջա Առաքելը, որ կապ էր պահպանում երկրի հետ, նոր էր վերադարձել Հայաստանից², հաղորդելով, որ «Հայաստանի իշխանները սպասում են միշտ Ձեր Վեհափառության բանակների ժամանումը տեսնելու նույն հույսով»: Հայոց իշխանավորները կամ տանուտերերը (խոջաները) արդեն «բազմաթիվ անգամներ» Լուդովիկ XIV-ին «գրել ու բացատրել» էին հայերի կացության մասին, նրանից օգնություն խնդրելով: Սակայն նրանք իրենց հույսը դրել էին ո՛չ միայն արտաքին, այլև իրենց ժողովրդի սեփական ուժի վրա: Այդ բանը երևում էր Մահմետի Մուրատի առաքելության սկզբից իսկ, 1666 թվականին, երբ նա հայտնում էր, թե հայերը, հույների հետ միասին, պատրաստ էին ապստամբելու: Այժմ նա դարձյալ հայ իշխանավորների անունից հայտնում էր, թե հայաբնակ շրջանների ժողովրդական զանգվածները պատրաստ են ոտի կանգնելու և բախտակից մյուս ժողովուրդների հետ միասնաբար ապստամբության դրոշմը պարզելու:

«Հայերը, որոնք շատ սովորաբար են վանի, Բիթլիսի, Թոխաթի (Taggat), Սեբաստիայի, Կարինի, Կարսի և մերձակա շրջանների մեջ, միանալով հույների և մյուս քրիստոն-

¹ Discours de Cogeamorad, prince arménien, traduit de l'italien* (p. 27—30), տ՛ես Վավերագիր № 9:

² Հայաբնաբար այս նույն անձնավորությունն էր այն Ղրիմեցի Առաքելը, որ մի ժամանակ Ղրիմի թաթար-խանի վաճառական էր, ինչպես տեսնում ենք 1678 թ. Ղալաթիայի Ս. Լուսավորիչ եկեղեցու քահանաների կողմից նրան տրված վկայականից, թե «այս Ղրիմցի Առաքել քրիստոնեայս՝ էր ի դուռն թաթար խանին կացեալ և էր վաճառական նորին, և որչափ քրիստոնեայ գերի տեսանէր, զգինն կուտայր և ազատ կու առնէր», տես Գ. Գալեմբյարյան, «Կենսագրութիւններ երկու հայ պատերազմներու և տասն կալիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկեայր», Վիեննա, 1915, էջ 78—79:

չա ազգաբնակչությունների հետ, կկարողանան շփոթություններ առաջ բերել Անատոլիայի ներսում և դիմադրել մինչև քրիստոնեական զորքերի հասնելը, որովհետև, Տեր, հարստահարությունները, ճնշումներն ու բռնություններն այդ երկրում ամեն սահման անցած լինելով՝ ժողովուրդներն այլևս չեն կարողանում տանել այդ ստրկությունը և որոշել են ազատվել նրանից»:

Հայոց ղեկավարներն, ուրեմն, կապեր ունեին հարևան ժողովուրդների ղեկավարների հետ՝ համատեղ գործակցությամբ պոլսի բերելու համար ազատագրության ընդհանուր գործը¹: Այդ ժողովուրդներն էին «բուն» հույները, «սև-ծովյան» հույները, վրացիները և ասորիները: «Բուն» հույներ անվան տակ, անշուշտ, պիտի հասկանանք առհասարակ նախկին Հունական կամ Բյուզանդական Կայսրության սահմաններում տարածված հույներին, ներառելով և Փոքր-Ասիայի հույներին: «Սև-ծովյան» անվան տակ, անշուշտ, հասկացվում էր նախկին Տրապիզոնի Կայսրության սահմաններում ապրող հույն ազգաբնակչությունը: Այստեղ հիշվող վրացիները Վրաստանի արևմտյան նահանգների ազգաբնակչությունն էին, այսինքն՝ Իմերեթիայի, Գուրիայի և Մինգրելիայի, որոնք 1553 թվականի թուրք-պարսկական պայմանագրով թուրքերի ձեռքումն էին մնացել: Իսկ ասորիները՝ ծանոթ հակորիկյաններն էին:

Այս ժողովուրդները, որոնք հավասարապես տառապում էին թուրքական լծի տակ, հայերի բնական դաշնակիցներն էին:

¹ Միասնական ապստամբության մասին խոսում էին և մյուս պատվիրակները: Պասպատին ասում էր. «Արևելքի քրիստոնեությունն ուզում է միանգամ ընդմիշտ թոթափել բռնակալության լուծը» («La Chrétienté de l'Orient veut une fois pour toujours secouer le joug de la tyrannie»), էջ 25: Իսկ խոջա Գինխան ասում էր. «Արևելքի քրիստոնեայ ժողովուրդներն այլևս չեն կարողանում տանել այս լուծը. նրանք պատրաստ են միահամուռ կերպով ապստամբելու» («Les Peuples Chrétiens de l'Orient ne peuvent plus supporter ce joug: ils sont prêts à se soulever unanimement»), էջ 32:

Հայոց ղեկավարները միաժամանակ կապեր էին հաստատել նաև «պարսկական սահմանակից նահանգների կառավարիչների հետ», այն հաշվով, որ, ինչպես ասում էր Մահմեդի Մուրատը,

«Շահը սուլթանի հայտնի թշնամին է և միայն նպաստավոր առիթի է սպասում նրա դեմ պատերազմը վերսկսելու համար. այնպես որ, երբ քրիստոնեական զորքերը կմոտենան ու կհարձակվեն Արշիպելագի և Կիպրոսի ծովի ափերի վրա, և այն ժամանակ, որ Ձեր վեհափառության բանակները կգրավեն Կ. Պոլիսը՝ մինչ մոսկովցիները կհարձակվեն Տրապիզոնի վրա, պարսիկները կներխուժեն Բաղդադի կողմից»:

Ինչպես բախտակից ժողովուրդների հետ գործակցության, նույնպես և թուրքերի դեմ պարսկական զիվերսիա պատրաստելու, — այն էլ ոչ հայկական սահմաններից, այլ «Բաղդադի կողմից», — գաղափարն ու ջանքերն այս խնդրում արևմտահայ խոջայության քաղաքականության իրատես կողմն են:

Թուրք-պարսկական պատերազմները սահմանակից հայկական նահանգներին միմիայն ավեր էին բերում, ինչպես ցույց էր տվել դարավոր անցյալը. սակայն եթե տվյալ պահին անհրաժեշտություն էր պարսկական ներխուժումը նույնինքն Հայաստանի ազատագրության համար, այդ ներխուժումը պետք է լիներ ո՛չ Հայաստանի կողմից, այլ թուրք-պարսկական սահմանագծի մի ուրիշ կետից: Հայոց ղեկավարների կարծիքով՝ այդ կետը Բաղդադի նահանգն էր, որը հաճախակի ապստամբությունների բույն էր արդեն: Մենք չգիտենք, թե հայ ղեկավարությունը պարսիկների հետ իր բանակցություններում ի՛նչպես էր վարվում, որպեսզի կարողանար պարսկական ներխուժումն ապահովել այն ձևով, որ Հայաստանը ոտի տակ չզնար. բայց, համենայն դեպս, «խաչակրական» արշավանքների ժամանակ Պարսկաստանի օժանդակությունից օգտվելու գաղափարը նոր չէր ինքնին: Դեռևս 1517 թ. Գերմանիայի Մաքսիմիլիան I կայսրը անհրա-

ժեշտ էր գտնում այդ բանը¹: Պիոս V պապը 1571 թ. նույնիսկ հրավեր էր կարգացել պարսից շահին նույն նպատակով²: Իսկ 1600 թ. Կլեմենտ VIII պապի և գերմանական կայսրի միջև տեղի ունեցած բանակցությունների մեջ նմանապես հաշվի էր առնվել Պարսկաստանը³: Հայ խոջայությունն այժմ ծրագրում և նախապատրաստական աշխատանք էր կատարում, բայց, իհարկե, այս հարցում վերջին խոսքը պատկանում էր Լուդովիկ XIV-ին:

Այսպես, ուրեմն, արևմտահայ խոջայությունը քաղաքական աշխույժ գործունեության մեջ էր՝ ներքին ճակատի վրա կազմակերպելով ժողովրդին և կապեր հաստատելով հարևան ձեռված ժողովուրդների հետ, իսկ արտաքին ճակատի վրա հարաբերություններ մշակելով պարսիկների հետ և ուղղակի օգնություն խնդրելով Ֆրանսիայի թագավոր Լուդովիկ XIV-ից:

Վերջինիս հարաբերությունների լարվածությունը Բ. Դուան հետ՝ հիմնավորում էր այդ առթիվ թուրքերի վրա հարձակվելու մարին ծավալված տարածայնությունները. իսկ առանց այն էլ հաճախակի հրապարակ նետվող խաչակրական ծրագրերի մեջ կարևոր տեղ էր տրվում ֆրանսիացիներին: Սակայն որքանո՞վ էր հիմնավորված հայերի այն հույսը, թե ֆրանսիացիները կարող էին հասնել մինչև Հայաստանի սահմանները:

Հայաստանը, Արևմտյան Հայաստանը, եթե նա մասն է կազմում Փոքր Ասիայի, ապա մենք կարող ենք ասել, որ նա ընդհանրապես ֆրանսիական գրավման համար նախատեսված շրջանների մեջ էր ընկնում: Դեռևս XVII դարի սկզբին այդ գաղափարը հայտնված էր: Օրինակ՝ Շավինյի (Jean-Aimé de Chavigny) ծրագրերը, 1606 թ., Ֆրանսիայի թագավորին էր տալիս Փոքր Ասիան⁴: Լուդովիկ XIV-ի օրերում այդ

¹ T. G. Djuvara, „Cent projets de partage de la Turquie“, p. 64.

² Ibidem, p. 104.

³ Ibidem, p. 129—130.

⁴ Ibidem, p. 161.

գաղափարն ընդհանրացած էր: Պուլեի (Poullet) ծրագրով, 1668 թ., Կ. Պուլի գրավումից հետո ֆրանսիացիները հյուսիսից Սև ծովով պիտի հասնեին Տրապիզոն՝ օղակի մեջ առնելու համար օսմանյան սուլթանին, մինչև հարավից օղակը պիտի սեղմվեր մինչև Ալեքսանդրիա և այս ձևով սուլթանին պիտի դուրս քշեին Հայաստանից և ամբողջ Անատոլիայից:

«Կ. Պուլի գրավումով տեր կդառնան երկու ծովերին և այդ միջոցով սուլթանին կշրջափակեն Անատոլիայում, գրկելով նրան իր մյուս երկրներից օգնություն ստանալու հնարավորությունից, որովհետև ըստ այն գծի, որ կետերով նշել եմ քարտեզի վրա, առաջին ճանապարհով Ալեքսանդրեոսից և Պայասից մի քիչ վերև հասնելով կգրավեն Կիլիկիան, որն Արևելքի լավագույն երկիրն է, արարական ասպատակություններից անմարդարեակ դարձած, և որը կարող է դուրսվածք պահվել 4 կամ 5 հազար մարդով, որովհետև ամեն կողմից փակ է: Հետո՝ Սև ծովի ճանապարհը բռնելով և հասնելով Տրապիզոն, որը պաշտպանողական դիրք չունի, այնպես կփակեն Անատոլիայի անցքը, որ այդտեղից էլ թուրքին կքշեն ինչպես Կ. Պուլից: Որովհետև ապահովություն չտեսնելով Կարինի անցքում, որ կարող են նրա առաջ փակել նրա մահացու թշնամի վրացիները, ինչպես և Բաղդադի և Դիարբեքիի փաշաները, որոնց հետ կապ հաստատված կլինի, նա կհարկադրվի բռնել Եգիպտոսի ճանապարհը»¹:

¹ «Etant à Constantinople on serait maître des deux mers, et que par l'une, et par l'autre on renfermerait le Grand Seigneur dans la Natolie, sans qu'il pût être secouru de ses autres pays; parce que suivant le chemin que j'ai marqué de points sur la carte. Le premier arrivant un peu au-dessus d'Alexandrette, et au-dessus du Payas, on se saisirait de la Cilicie qui est le meilleur pays qui soit dans le Levant, rendu inhabitable par les courses des Arabes, et qui peut être facilement gardé par 4 ou 5 mil hommes, étant fermé de tous côtés. Puis prenant la route de la Mer Noire, et gagnant Trébizonte, qui n'est pas place de défense, on fermerait tellement le pas de la Natolie, qu'on en ferait encore fuire le Turc, de mesme que de Constantinople. Parce que n'osant pas s'assurer au passage d'Herzeron,

Հետագայում ևս մենք տեսնում ենք այս միտքը խաշակրական մի քանի ծրագրերի մեջ¹:

Այսպես, ուրեմն, ֆրանսիացիները կարող էին հասնել մինչև Հայաստանի սահմանները և մասնել հայոց աշխարհը: Դրա մասին, իհարկե, կասկած էլ չէին կարող ունենալ հայոց ղեկավարները, քանի որ գոյություն ունեցող ավանդության և հիշատակարանների համաձայն ներսես Պարթև հայրապետը վաղուց էր մարգարեացել, թե հայոց թագավորությունը ֆրանկների ձեռքով էր վերականգնվելու, մի բան, որին այնքան ջերմորեն հավատում էին ու կրկնում բոլոր առիթներով, և Մահտեսի Մուրաթն ինքը նույն անխախտ համոզումով ասում էր այժմ դարձյալ Լուզովիկ XIV-ին:

«Մենք հաստատապես հավատում ենք Ս. Ներսեսի մարգարեությունը, որ մեզ ավանդել են մեր նախնիները, և համոզված ենք, որ աստվածային նախախնամությունը Ձեր Վեհափառությանն է վերապահել հայոց խեղճ ազգի ազատարարը լինելու երանությունն ու փառքը այն դժբախտ գրությունից, որի մեջ գտնվում է նա, Ձեզ, որ ֆրանկների հզոր թագավորն էք, ամբողջ քրիստոնեական աշխարհի և ամբողջ երկրագնդի ամենից երևելի միապետն եք»:

Այս վիճակում էր հայկական խնդիրը 1672 թվականին, երբ Մահտեսի Մուրաթը առիթ էր ունեցել «մի անգամ ևս» ներկայացնելու այդ խնդիրը Լուզովիկ XIV-ին:

Հակառակ, սակայն, բոլոր երևույթներին, այս թվականներին արևելյան հարցը շտապավ այն սուր բնույթը, որին թվում էր թե հանգելու էր, որովհետև նախ Կոլերեն ու արտա-

qui pourrait lui être bouché par les Géorgiens, ses mortels ennemis, par les Bachats de Bagdet, et de Derbequier, avec lesquels on ne manqueroit point d'intelligence, on l'obligerait à prendre le chemin d'Egypte». ահա Poullet, «Nouvelles relations du Levant», part. I, Paris, Louis Billaine, 1668, p. 401—402.

¹ Միքայել Ֆեբուրը չունաստանն ու Անատոլիան տալիս էր Ֆրանսիային, ահա M. Fevre, «Théâtre de la Turquie», Paris, Edme Coutherot, 1682, p. 539. Հմմտ. T. G. Djuvara, «Cent projets de partage de la Turquie», p. 228.

Քին գործերի մինիստր Դը Լիոնը (Hugues de Lionne) հզոր կերպով ընդդիմանալով մի Բուլբոնյան իշխանի մականի տակ Արևելքի Կայսրությունը վերականգնելու մասին Լուզովիկ XIV-ի երազանքներին, զեսպան Դը Նուանտելին գաղտնի հրահանգներ էին տվել խաղաղությունն ամեն զնով պահպանելու համար¹: Կոլբերի և Դը Լիոնի հետևորդներն Օսմանյան Կայսրության գոյությունն անհրաժեշտ էին գտնում եվրոպայի համասարակշռությունը պահպանելու համար և ֆրանկ-թուրքական բարեկամությունն իրական միջոց էին համարում ֆրանսիական գերակշռությունը ապահովելու համար Ավրստրիայի խոնարհեցումով²: Հետո՝ Հոլանդիայի պատերազմը, որ 1672 թ. գարնան սկսվեց, ժամանակավորապես երկրորդ պլանի վրա նետեց արևելյան հարցը, ո՛չ միայն այն կարևորության պատճառով, որ Լուզովիկ XIV-ը տալիս էր Հոլանդիայի պատերազմին³, այլև մանավանդ նրանով, որ Հոլանդիայի նվաճումը, որի ազմկով թնդաց ամբողջ Արևելքը, ավելի քան սպառնական պիտի դարձներ ֆրանսիացիների դիրքը հանդեպ թուրքերի, որոնք վախի տակ հարկադրվեցին ստորագրել կապիտուլյացիաները 1673 թ. հունիսին⁴: Եվ նոր կապիտուլյացիաների ստորագրումով գծություն մի խոշոր պատճառ իրապես վերանում էր մեջտեղից, սակայն, այնուամենայնիվ, արևելյան հարցը չէր թաղվում:

«Կապիտուլյացիաների վերանորոգման թվականից՝ 1673-ից, —ասում է Թ. Լավալիեն,—Ֆրանսիայի և Թուրքիայի փոխհարաբերությունները դարձան ավելի բարեկամական, բայց լրիվ շտապան մտերմության ու վստահության իրենց նախկին նկարագրերը: Դիվանը հիշում էր իր թշնամիներին տրված օգնությունները. գալով Լուզովիկ XIV-ին՝ նա ռխն էր պահում այն թշնամանքների, որոնց վրեժը չէր կարողացել

չուծել, և իր թագավորության գրեթե ամբողջ ընթացքում Թուրքիան նվաճելու ծրագրեր սնուցեց, ծրագրեր, որոնք պատշաճում էին նրա երիտասարդական շրջանի գաղափարներին, կաթոլիկ աշխարհի հասարակական կարծիքին, խաչակրական ոգուն, և որոնք հենվում էին այն մտքի վրա, թե Միջերկրականին սահմանակից ասիական երկրները՝ քրիստոնեական երկրներ են, որոնք Ֆրանսիայի ազդեցության կամ տիրապետության տակ պետք է լինեն»¹:

Լավալիեի այս տողերը ճշգրտորեն բնութագրում են 1673 թվականի կապիտուլյացիաներին հաջորդող շրջանը և այն գրությունը, որի մեջ գտնվում էր թուրքական հարցը:

Արևելքի հարցում մտքերի վրա իշխողը միշտ Լուզովիկ XIV-ն էր: Ժամանակի գրողներից Միքայել Ֆեբրուրն (Michel Febure) իր «Թուրքիայի ներկա վիճակը» հատորով (1675 թ.) շարունակելով արծարծել այդ խնդիրը, գրքի ուղերձում ասում էր Լուզովիկ XIV-ին.

«Տեր, Թուրքիան, որ իր հողերի ապագա նվաճողն է համարել միշտ Ձեր վեհափառությունը, այսօր իր հույսերը վերադարձեցնում է եվրոպայում ձեր կատարած նվաճումների ազմկով, դրանք դիտելով. որպես քայլառում դեպի այն նվաճումները, որ ձեր միշտ հաղթական ու պանծալի զենքերը պետք է մի օր կատարեն Արևելքում իր (Թուրքիայի) վրա շատ ավելի փառքով, թեև նվազ խոշընդոտներով: Այս պատճառով նա (Թուրքիան) այս աշխատության մեջ Ձեր վեհափառության աչքերին ներկայանում է ցույց տալու համար այն թշվառ վիճակը, որին մատնված է ինքը ներկայումս. (ցույց տալու համար) իր ժողովուրդների տրամադրությունը՝ ձեզ ընդունելու որպես իրենց ազատարարի. այն խորշումը, որ նրանք բոլորն ունեն իրենց կառավարող բռնակալի հանդեպ. նրա անկարողությունը, նրա անարդարությունները, այն դյուրին և ապահով միջոցները, որոնք պետք է ձեռք առնելին նրանց (այդ ժողովուրդներին) նվաճելու համար և

¹ N. Rocca, „La France en Orient depuis les rois francs jusqu'à nos jours“, p. 107.

² Th. Lavalée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 324.

³ Տես սույն աշխատության 149-րդ էջը:

⁴ Th. Lavalée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 322—323.

¹ Th. Lavalée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 323.

գրավելուց հետո նրա (բռնակալի) երկիրը պահպանելու համար»¹։

Եվ Ֆեբուրը, իր աշխատության մեջ հանգամանորեն ծանրանալով վերոհիշյալ բոլոր խնդիրների վրա, ի միջի այլոց գտնում էր, թե պետք է «կազմել մեկ կամ երկու առանձին միապետություններ՝ թագավոր նստեցնելով Բուրբոնյան արքայական զարմից երկու իշխանների»²։ Հայր Գարրիել Լոնգոն (P. Gabriel Longot) 1679 թվականին նույն միտքը կրկնում էր, առաջարկելով Օսմանյան Կայսրությունը բաժանել երկու մասի, եվրոպական և ասիական, հանձնելով երկու Բուրբոնյան իշխանների՝ Ամենաբրիստոնյա Թագավորի գերիշխանության տակ³։

Վերջապես Արևելքի հարցը, — եթե որեէ գործնական ձև էլ չէր տրվել նրան, — որպես քաղաքական հետաքրքիր երեւոյթ շարունակում էր 70-ական թվականներին լրջորեն դրադեցնել մտքերը Ֆրանսիայում. առնվազն «չէին ուզում, որ Ֆրանսիան աննկնկալի գար Օսմանյան Կայսրության անկումով, որը կանխատեսված էր արդեն այս շրջանում, և հա-

մապատասխան միջոցներ էին ձեռք առնում Արևմուտքի դեմքը կերպարանափոխելու կոչված այդ դեպքի կանխատեսման ընթացքում»⁴։ Եվ այս հիման վրա՝ Կրետական պատերազմի հաշվհարդարից հետո հայոց պատվիրակի և Ֆրանսիական արքունիքի հարաբերությունները շարունակվեցին սպասողական դրույթի մեջ Լուզովիկ XIV-ի կողմից այն գիտումով, թե կարելի է հետագայում հարմար առիթով միշտ օգտագործել հայերին, իսկ հայերի կողմից այն հույսով, թե «Ամենաբրիստոնյա Թագավորը» շուտ կամ ուշ մի բարենբախտ առիթով անպայման կովի դուրս կգա թուրքերի դեմ, կտապալի Օսմանյան Կայսրությունը և իրենց կտա երազված անկախությունը, ինչպես հավատում էին այս շրջանում՝ ո՛չ միայն հայերն ու հայոց պատվիրակը, այլև շատ ու շատեր։

Եվ հայոց պատվիրակը տարիներով սպասեց այդ առիթին։ Սպասեց, որ Լուզովիկ XIV-ը ժամանակ ունենար նվիրվելու Արևելքի հարցին։

Հուլանդիայի պատերազմը, սակայն, երկար տևեց։ Ֆրանսիական բանակների հաջողությունից սարսափած՝ Հոլանդիային օգնության էին փութացել Սպանիան, Գերմանիան և Բրանդենբուրգը (1673 թ.). սակայն բացի Արև-Արբայից, որ անձամբ էր առաջնորդել 1672 թվականի Հոննոսյան արշավանքը, ուզմադաշտ դուրս եկան նաև Կոնդեի, Տյուրենի նման անվանի զինվորականներ, Դյուկենի նման նշանավոր նավամարտիկը, որոնք ամեն ճակատի վրա պարտության մատնեցին քառյակ զինակցությունը, և Լուզովիկ XIV-ը, ի վերջո, հաշտություն շնորհեց պարտված ու պարտասած դաշնակիցներին և ստորագրեց Նիմվեգենի դաշնագիրը 1678—1679 թթ.⁵։

Այս երկարատև պատերազմն իսկապես կլանեց Լուզովիկ XIV-ի միջոցները, ժամանակը և ուշադրությունը, որքան

¹ Th. Lavallée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 324.

² Հոլանդիայի և Սպանիայի հետ հաշտությունը կնքվեց 1678 թվականին, իսկ Գերմանիայի և Բրանդենբուրգի հետ՝ 1679 թվականին։ Հոլանդիայի պատերազմի մասին տես E. Lavissee, „Histoire de France“, t. VII, part. II, p. 309—345.

¹ „Sire, la Turquie qui a toujours considéré Votre Majesté comme le futur conquérant de ses terres, réveille aujourd'hui ses espérances au bruit de vos conquêtes en Europe, qu'elle envisage comme un acheminement à celles que vos armes, toujours victorieuses et triomphantes, doivent remporter un jour sur elle dans l'Orient, avec beaucoup plus de gloire quoy qu'avec moins d'obstacles. Pour cet effet elle se présente dans cette relation aux yeux de Votre Majesté pour lui faire voir le misérable état où elle se trouve à présent réduite; la disposition de ses peuples à vous recevoir comme leur libérateur, l'aversion qu'ils portent tous au Tyran qui les gouverne, son impuissance, ses injustices, les moyens faciles et assurez qu'on doit tenir pour les subjuguier et que l'on doit faire pour se conserver son pays après la conquête qu'on en aura faite“, տես Michel F e b v r e, „L'Etat présent de la Turquie“.

² „Faire une ou deux monarchies à part, et y mettre pour roi deux princes du sang royal de Bourbon“, տես I b i d e m, p. 275.

³ Տես „Quelques discours et lettres adressés à Louïs le Grand, Roy de France“, p. 101.

էլ նա աչքի առաջ ունեցած լինելը միշտ թուրքերի վրա արշավելու ծրագիրը. իսկ այս միջոցին բնական բան էր, որ հայոց պատվիրակը որոշած լինելը սպասել դեպքերի վախճանին, այն օրերին, երբ վերջապես խաղաղությունը վերահաստատվելու էր: Եվ իրոք, նիմվեզենի հաշտութեան հաշորդող տարիներին «Վերամիավորման պալատների» (Chambres de reunion) միջոցով մի շարք շրջաններում իր նվաճումները լրացնելուց և Ստրասբուրգին ու Կապալեին ափրելուց՝ հետո Լուզովիկ XIV-ը ժամանակը հասած համարելով Արևելքով գրադվելու, 1682 թվականին, երբ թուրքերը Հունգարիայից դեպի Գերմանիա էին առաջանում, Լեոպոլդ Կայսրին իր օգնությունն էր առաջարկել՝ 90.000 զորքով²:

Ճիշտ այս ժամանակ կրկին Փարիզում է գտնվում հայոց ծանոթ պատվիրակը:

¹ E. Lavissee, „Histoire de France“, t. VII, part. II, p. 351—358.

² E. Lavissee et A. Rambaud, „Histoire générale“, t. VI, p. 840.

ԳՆՈՒՆ Ժ.

ՄԱՀՏԵՍԻ ՄՈՒՐԱՏԸ ԿԱՄ ՇԱՀՄՈՒՐԱՏԸ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒԹՈՒՆՁԻՆ ՎԵՐԱՍՅՈՒՄ (1683 թ.)

Բաղիշեցի Մահեսի Շահմուրատի ճիշտակաւանը.— Երա այցելությունները Վերայլի և Սեն-Կլոի ապարաններին.— Ընդունելության պահանջներ.— Հանդիպումը Հովհաննես Քուրուշիի և ուրիշների հետ.— Երանց ինքնությունը.— Հովհաննես Քուրուշիին՝ Կ. Պոլսի պատրիարք, Աղթամարի կարողիկոս և «գլուխ ազգին Ֆրանկաց».— Շահմուրատի պատվիրակությունն ու Հովհաննես Քուրուշիի պատրիարքությունը 1686 թ.— Հովհաննես Քուրուշիին ազատագրության խնդրով էր անցել դեպի Եվրոպա.— Ժամանակի հպատակությունը. Լուզովիկ XIV-ը բուրբերի դեմ և հայասիրական շարժումը Փարիզում.— Հովհաննես Քուրուշիին «Հայաստանի կարողիկոսի պատգամավոր».— Մահեսի Շահմուրատի և Հովհաննես Քուրուշիի հանդիպումը պատահական չէր:

Մեզ ծանոթ է XVII դարի մի հիշատակարան, որի հեղինակը կոչվում է Բաղիշեցի Մահեսի Շահմուրատ¹:

¹ Տե՛ս Վավերագիր № 12: Այս հիշատակարանից ձեռագրերում ծանոթ են մի քանի օրինակներ.

ա) Երևանի Պետական Մատենադարանի լրիվ օրինակը, ձեռագիր № 4618, էջ 173ա—175ա:

բ) Փարիզի Նուբարյան Մատենադարանի լրիվ օրինակը, որից ուղղակի կատարվել են երկու տարբեր հրատարակություններ, մեկը՝ Արարատ, Թիֆլիս, Ա տարի, 1850/51, էջ 99—101, Գրեյոր Հ. Ա. Մամիկոնյանի ձեռքով. մյուսը՝ Յառաջ, Փարիզ, 7 հոկտ. 1934 թ., № 2619: Իսկ Արարատ-ի վերահիշյալ հրատարակությունը նույնությամբ արտատպված և ուսուրենն թարգմանությունը տես՝ Վ. Ա. Օրբելի, „Опи-

Դա իր ձևի մեջ մի սովորական նկարագրական է 1683 թվականին Վերսալի և Սեն-Կլոտի ապարանքները կատարված այցելությունների, բայց միաժամանակ մեզ համար մի անուղղակի վավերագիր է, որը, ինչպես կտեսնենք, ցույց է տալիս, թե հայ-ֆրանսիական հարաբերությունները շարունակվում էին 1672 թվականից հետո:

Դուրս թողնելով հիշատակարանի նկարագրական մասերը, մենք այնպես գտնում ենք մի շարք պատմական տեղեկություններ, որոնք շատ հետաքրքրական են:

Հեղինակը պատմում է, որ ինքը նախ Վերսալի արքայական պալատներն է այցելել 1683 թ. փետր. 2-ին. իսկ եթե նրա գործածածը հին տոմարն է, կնշանակի՝ այցելությունը կատարվել է նոր տամարով փետրվարի 12-ին:

«Ի թվին Հայոց ՌՃԼԹ, փետրվար ամսոյ Բ աւուրն, ես Բաղիշեցի Մահտեսի Շահմուրատս զնացի ի թագաւորանիստ քաղաքն Վերսալիայ, տեսայ զԹուֆունչի Յովանէս վարդապետն, Միսիանցի Զաքարիա վարդապետն, Հալապցի Ղազարոսի որդի Զուլէփն, Արղրումցի Յովանէսի որդի Գրիգորն, Ղազաւշեցի Մուրատն, Ոսկան վարդապետի քվեր որդի Սո-

санне Версаля в армянской записи 1683 года», *Известия Российской Академии Истории Материальной Культуры*, т I, № 33 (8 февраля 1921 г.), стр. 391—399.

դ) Վենետիկի Միսիթարյան Մատենադարանի օրինակը, որի միայն սկզբի հատվածի հրատարակությունը տես Շրուժպֆ—Զարբնանայան, «Ուսումնասիրությունը հայ լեզուի և մատենագրության յարեմուս», Վենետիկ, 1895, էջ 104—105:

դ) Պաշիկ Առնյանի օրինակը, որի նույնպես սկզբի հատվածի հրատարակությունը տես Բիզանդիոն, Կ. Պոլիս, 1903 թ., № 1931, «Վանեցի բարձրաստիճան եկեղեցականներ ի հնումն» խորագրի տակ:

ե) Ղևոնդ Փերզալեճյանի օրինակը, նույնպես միայն սկզբի հատվածը տես նրա կազմած հիշատակարանների ժողովածուի մեջ, Երևանի Պետական Մատենադարանի ձեռագիր № 6273, էջ 503ա: Փերզալեճյանը սույն հատվածն արտագրել է 1885 թվականին Մանիսայի Ս. Լուսավորիչ եկեղեցուց:

զոմոնն: Նա և տեսաք զՖրանկսիզու թագաւորն¹, զկինն², զորդին³ և զեղբայրն⁴, զեղբոր հարսն⁵ և զվէղիրն⁶: Տեսաք զսէքայններն և զայլ ամենայն սալթանաթն սէրային» և այլն:

Ուրեմն՝ նա Վերսալում հանդիպում է մի շարք ծանոթ հայերի և նրանց հետ միասին այցելում է արքունի ապարանքները: Նրանք տեսնում են թագավորին, թագուհուն, արքայական ընտանիքի անդամներին, ինչպես և թագավորի զխաժոր մինիստրին: Նրանց տեսած նշանավոր անձնավորությունների մեջ առանձնապես հիշատակվում է նաև «Միսոյ Թաքիչն որ զՍախսն փույց, մին հալևոր կարմիր մարդ»: Հետաքրքրական է, որ նրանք ականատես են լինում նաև թագավորական սեղանին, որի մասին գրում է Շահմուրատը.

«Դարձեալ տեսաք զթագաւորի հաց ուտելն, որ ինքն և կինն ի միասին կու նստին. թագաւորն յաջ դիհն, և կինն ի ձախ դիհն. դիվանխանի յաջ դիհն՝ թագաւորի տղայն և իւր կինն. թագաւորի դիմաց՝ եղբայրն և իւր կինն. ձախ դիհն՝ հօրեղբոր որդին, և կամ հօրեղբոր աղջիկն: Իսկ թագաւորն՝ սեղանի վերին դիհն կու նստի, Դ կողմն սեղանին որչափ մեծամեծը կան՝ վէղիր (premier ministre), փիրիոյ (pairs?)

¹ Լուզովիկ XIV-ը:

² Մարիա-Թերեզա (Marie-Thérèse d'Autriche) թագուհին, Սպանիայի Ֆիլիպ IV թագավորի դուստրը, որ Լուզովիկ XIV-ի հետ ամուսնացել էր 1660 թ.: Մեռավ 1683 թ.:

³ Գահաժառանգ իշխան Լուզովիկը, Լուզովիկ XIV-ի և Մարիա-Թերեզայի միակ որդին, ծնված 1661 թ.: Մեռավ 1711 թ.: Նա անվանվում էր Dauphin, ինչպես անվանվում էին ֆրանսիական թագավորների անդրանիկ որդիները, և կրում էր Monseigneur տիտղոսը. այս անվանումը գտնում ենք և Շահմուրատի հիշատակարանում աղավաղված ձևերով՝ Մուսիէոր կամ Միսիէոր:

⁴ և ⁵ Օռլեանի դուքս Ֆիլիպը (Philippe, duc d'Orléans), որ Լուզովիկ XIV-ի միակ եղբայրն էր: Նրան անվանում էին Monsieur. Նրա երկրորդ կինը՝ Էլիզաբեթ-Շարլոտը (Elisabeth-Charlotte) Պալատինյան կուրֆյուրստ Կարլ-Լուզովիկի դուստրն էր: Աբբուները նրան անվանում էին Madame:

⁶ Կոլբերը (Jean-Baptiste Colbert), որ Լուզովիկ XIV-ի առաջին մինիստրը և ֆինանսների ընդհանուր վերահսկիչն էր 1661—1683 թթ.:

մարքիզ (marquis), շինթիւմ (gentilshommes), եպիսկոպոսք, և այլ մեծամեծք շուրջ զսեղանովն կու կանգնին, թէ կամի՛ կու խօսի ընդ նոսա»:

Եվ հետևում է ճաշացուցակը, որ բաղկացած է «աւելի քան զՄԵ (55) կամ Կ (60) թուրլի» ուտելիքենից¹:

Սա այցելութունների առաջին օրն է:

Հաջորդ օրը Շահմուրատն իր թարգմանի հետ միասին գնում է Սեն-Կլու, որտեղ գտնվում էին արքայեղբոր ապարանքները: Հիշատակարանում կարդում ենք այդ մասին.

«Կրկին փետրվարի երեքում օրն ժՆ. ժամուն թագաւորի եղբայրն և իւր կինն տարան զիս ի սարայն իւրեանց, կամեցան զիմ պատկերիս կերպն քաշելոյ, նա ևս զիւր սարայներն և զիւր խաղինայքն, և զամենայն շինուածքն և այլ ինչ որ կայր՝ ցույց ետուր մեզ, որ ևս էի և իմ թարձիմունն հալաւցի Ջուզէֆն: Յորժամ դարձանք յետ, և սկսանք խոնարհիլ թագաւորի եղբորն և կնկանն, եհարց իմ թարձիմանին, թէ հաւանեցա՞ւ մեր զորպիսութիւնն. մեք պատասխանեցինք, թէ աստուած զքո եղբօր թագաւորութիւնն և զքո բարձրութիւնն հաստատուն և անփորձ պահեսցէ աստ և ի հանդերձելումն» և այլն:

Ուրեմն՝ հիշատակարանի հեղինակին Օուլեանի դուքսը և զքուհին անձամբ հրավիրում են և առաջնորդում այցելելու իրենց զգյակը, որ էր Գոնդինների նախկին իշխանական բնակավայրը²: Այստեղ նախ հայ այցելուի նկարն են հանում և

¹ Արքայական սեզանի կարգի մասին հմտ. «Mémoires sur la cour de Louis XIV et de la Régence, extraits de la correspondance allemande de Madame Elisabeth-Charlotte, duchesse d'Orléans, mère du Régent», Paris, 1823, p. 50—51.

² Օուլեանի դուքսը, 1660 թվականին գնելով այդ զգյակը, նշանավոր արվեստագետների ձեռքով վերածել էր պալատի. տես J. Vailout, «Le palais de Saint-Cloud», Paris, 1852. Ph. de Saint-Albin et A. Durantin, «Le Palais de Saint-Cloud», Paris, 1861. Հմտ. Vivien de Saint-Martin et Louis Rousselet, «Nouveau dictionnaire de géographie universelle», t. V, Paris, 1892, p. 374.

Այս պալատը, որ ֆրանսիական զեղարվեստի հարուստ գանձարաններից մեկն էր հանդիսանում, 1871 թ. կողոպտվեց և բարբարոսաբար այրվեց զերմանացիների կողմից:

ապա նրան առաջնորդում են զեպի պալատի զանազան մասերը, մինչև իրենց գանձատունը:

Սրանք են հիշատակարանի էսկան մասերը մեզ համար:

Ինչպես նշեցինք, հիշատակարանի հեղինակը կոչվում է Մահտեսի Մուրատ կամ Մահտեսի Շահմուրատ¹. և սա ուրիշ մեկը չէր, բայց եթե մեզ ծանոթ Մահտեսի Մուրատը կամ ետոյա Մուրատը, որ, հայոց թագավորութունը վերականգնելու հետամուտ լինելով, իր անվան ավելի փայլ տալու համար, երբեմն, ինչպես երևում է, շահ նախամասնիկն էր ավելացնում նրա վրա, որպես թե ինքը թագավորական կամ իշխանական ծագում ունենար, քանի որ այդ հանգամանքը կարող էր իր նշանակությունն ունենալ նրա հետապնդած գործի հաջողության համար թե՛ հայերի մոտ, և թե՛, մանավանդ, օտարներին²:

Ո՛չ մի տարակույս, որ սույն Մահտեսի Շահմուրատը մեր Մահտեսի Մուրատն է, և նա ինչպես որ հանրածանոթ էր ամբողջ Քուրթիայում և սուլթանն իսկ ճանաչում էր նրան, բաշածանոթ էր նաև ֆրանսիական արքունիքին: Եվ այս էր պատճառը, որ նա կարող էր այդպես ազատորեն իր ոտը

¹ Փարիզյան, վենետիկյան և Երևանի Պետական Մատենադարանի N 4618 նկագրի օրինակներում հեղինակի անունը Շահմուրատ է. Ն. Փիքրաշեմյանի օրինակում՝ Մուրատ. Մաշիկ Առնյանի օրինակում թեև գտնում ենք Մարազ մեք. բայց պարզ է, որ դա զրշազրական էջեղ է. ինքնանման ասույթի չփոխմանից առաջ եկած, ու-ա, ա-ու և դի-դ-դ-դ-դ Մարազ (Մուրատ) -ը դարձել է Մարազ. ինչ որ սովորական էր նրան:

² Նման պարագաներ շատ են անդիտում պատմության մեջ: Նույնն էր եղել անցյալում, օրինակ, պարսեան Արգար Եվզոկիացու և նրա որդի Մուլթանյանի, որոնք իբր թե հայոց վարձի թագավորներից էին սերում: Նույնն է եղել հետագայում նաև պարսեան Իսրայել Օրիկի-որը Պառլյան իշխանների պայազատներից էր համարվում:

Այս տեսակետից 1666 թվականին հունական պատվիրակ կողմա Գալուստի ընտրությունն էլ իր նշանակությունն ունենր, որովհետև բաշե՛ այն, որ նա պատրիարքական տեղապահ էր,—ինչ որ արդեն որոշ զգրք էր տալիս նրան,—Եվրոպային նա ներկայանում էր որպես բյուզանդական վերջին կայսրերի՝ Պալեոլոգների մի շտապիղը:

դնել արքունի պալատից ներս և սիրալիր ընդունելութուն գտնել այնտեղ հատկապես թագավորի եղբոր կողմից: Եահմուրատն այն օտարականներից էր, որոնք տարիներ շարունակ ֆրանսիական արքունիքի սեմերն էին մաշում:

Ընթերցողը, սակայն, կարդալով Մահտեսի Եահմուրատի 1683 թվակիր հիշատակարանը, որի մեջ նա այցելուի իր տպավորութուններն է ամփոփել, ակամա տարվում է մտածելու, թե այցելուն առաջին անգամն էր ոտ դնում այնտեղ, և դժվարանում է հաշտվել այն մտքի հետ, թե նա վաղեմի ծանոթ եղած լինի ֆրանսիական արքունիքին:

Արքայանիստ Վերսալլի նկարագրության մեջ արտահայտված անշափ հիացմունքն ու խանդավառութունը ցույց են տալիս, անկասկած, որ Եահմուրատն առաջին անգամն էր տեսնում այդ բոլորը. սակայն դա չի նշանակում, թե նա մինչև այդ անծանոթ եղած լինի ֆրանսիական արքունիքի և պալատական շրջանների հետ:

Այդ թվականին Վերսալլը, որպես նորակառույց քաղաք և արքայական նոր բնակավայր, միայն հայազգի Եահմուրատի համար չէ որ նորութուն էր: Գոնդինների տանուտիրական այս նախկին կալվածք, որտեղ Լուդովիկ XIII-ը 1624—26 թթ. մի զոյակ էր կառուցել, իր հետագա ամբողջ փայլն ու նշանակությունը պարտական էր Լուդովիկ XIV-ին, որը 1661 թվականին այնտեղ սկսել էր կառուցումն իր նշանավոր պալատի, նրա մեջ ձուլելով Լուդովիկ XIII-ի զոյակի մի կարևոր մասը: Պալատի ու պարտնդների շինարարությունը հսկայական գումարների հետ խլել էր նաև երկար ժամանակ, ավելի քան քսան տարիներ, և 1682 թվականից է, որ Լուդովիկ XIV-ն իր բնակությունն այնտեղ էր հաստատել¹:

Ուրեմն Եահմուրատի այցելությունը բացման առթիվ էր, և նրան, որպես պաշտոնապես մի ծանոթ անձնավորության,

թույլատրվում էր այցելել արքայական ապարանքներն ու պարտեզները: Եվ թերևս ավելի ճիշտ դնահատած կլինենք երևույթները, եթե ասենք, թե Մահտեսի Եահմուրատին հրավեր էր եղել այդ այցելությունը կատարելու, ինչպես հաջորդ օրը նա թագավորի եղբոր և հարսի կողմից անձամբ է առաջնորդվել Սեն-Կլուսի նրանց պալատը: Այս հրավիրովի այցելությունների նպատակն էր ավելի բարձրացնել «Արև-Արքայի» հմայքը հայոց պատվիրակի աչքում, այնպես որ, իրոք, տեսնելով այդ բոլորը, վերջինս համակվում է անսահման հիացմունքով, ողևորվում՝ քրիստոնյա թագավորի այդ ճոխությամբ, հզորությամբ ու փառքով: Նրա ամբողջ տպավորություններն արտահայտվում են իր մաղթանքի մեջ. «Աստուած վաճելի տաց է թագաւորին և ամենայն զաւակաց նորին, ընդ երկայն աւուրս, ի փառս աստուծոյ և ի պարծանս ամենայն քրիստոնէից և ի ցնծութիւն տառապեալ ազգիս Հայոց», և զգացած հոգեկան անհուն բավարարությունն է, որ դրդում է նրան գրի առնելու իր տպավորությունները և ավանդելու ազգային պատմական այս հետարքրաշարժ էջերը:

Մրանով բացատրություն է գտնում Եահմուրատի գրվածքում Վերսալլի մասին երևացող աննկարագրելի հիացմունքը, որ չի նշանակում բնավ, թե նա առաջին անգամն էր ոտ դնում ֆրանսիական արքունիքից ներս, այլ միայն նշանակում է, թե առաջին անգամն էր նա տեսնում Վերսալլը, Լուդովիկ XIV-ի այդ փառքը:

Արդևն ասանց այն էլ ազդեցնող ու զարմանալի տպավորություն է կրում ընթերցողն ի տես այն փութկուտ ու մտերմիկ ընդունելության, որ գտնում է Եահմուրատի նման մի օտարական իր այցելության առաջին օրն իսկ արքայական բնասնիքի կողմից:

Նկատի ունենալով այդ ժամանակվա ֆրանսիական միապետական կարգերի կենտրոնացման առավելագույն աստիճանը, որ հատկանշական երևույթներից է Լուդովիկ XIV-ի ժամանակաշրջանի և որի ճնշող թաթի տակ երկրի նույնինքն բնիկ ազնվականությունն ու կղերն անգամ ստիպվել էին

¹ E. Lavisse, „Histoire de France“, t. VII, part. II, p. 143—147. Vivien de Saint-Martin et Louis Rousselet, „Nouveau dictionnaire de géographie universelle“, t. VII, Paris, 1895, p. 125.

հրաժարվել իրենց երբեմնի մի շարք արտոնություններից և ազատություններից, ուզում ենք ասել, թե մանավանդ այնպիսի մի շրջանում, երբ «Արև-Արբան», իրերահաջորդ պատերազմների հետամուտ, ամեն բանից առաջ իր կյանքի և գահի ապահովության համար էր մտահոգ, դյուրին չէ երևակայել, որ մի օր պատահական կերպով նրա պալատի սեմինոտ զնող մի օտարական անմիջապես ներս ընդունվեք այնպիսի բնական և ընտանի մի երևույթի տակ, որպիսին նկարագրում է Շահմուրատը: Այսպիսի մի երևույթ միայն ու միայն նշանակ է վստահության, որ առհասարակ արքունիքներում տարիների շփումով միայն կարող է շահվել. իսկ ֆրանսիական արքունիքի դոները շատ ավելի ամուր էին, քան մյուսներին:

Վերագառնալով Հիշատակարանի բովանդակությանը և մեկնելով նրանից՝ մեր բնությունները լուրջ արդյունքների հասցնում մեզ:

Այդ ժամանակ, 1683 թվականին, Վերսալում հանդիպում ենք մի խումբ հայերի, Հովհաննես Թուֆունջիի գլխավորությամբ: Ո՛վքեր էին նրանք: Հովհաննես վարդապետ Թուֆունջին Կ. Պոլսի հայոց նախկին պատրիարքներից մեկն էր. իսկ այժմյան նրա ներկայացրած հանգամանքի մասին մենք կտեսնենք քիչ հետո: Զաքարիա վարդապետ Միսիանցին, որը կոչվում էր և Սյունեցի, նմանապես հայտնի անձնավորություն էր, ծննդով՝ Հայաստանի պատմական Սյունյաց նահանգի Միսիան գավառից, գուցե և համանուն գյուղից (այժմյան Հացավանից): Նա, ինչպես խաչատուր Գաղատացին, լատին միսիոնար Կլեմենտ Գալանոսի աշակերտն էր, ուստի պատկանում էր հայ հոգևորականության ժամանակի լատինասեր խմբակցության. 1650-ական թվականներին ապրում էր Հալեպում և գրական աշխատանքներով էր պարապում¹:

¹ Հոտի Վատիկանյան Մատենադարանի հայերեն ձեռագրերից մեկի՝ Codex Borgianus Armenus № 24 ձեռագրի ընդօրինակողն է Զաքարիա Սյունեցին, ինչպես կարդում ենք նրա հիշատակարաններում. «Աւարտեցաւ սուրբ մատեանս ի Թուականիս Հայոց ՌՃԱ ի նոյեմբերի Ի. ի բազարն Տիբերայ որ է Ալապ, ի ձեռն յորնա-

նրա մտավորական աշխատանքների արդյունքն է և մի համառոտ ժամանակագրություն, որ ինքը թարգմանել է լատիներենից, մասամբ լրացրել հայկական զարգուրներից, և 1683 թվականին, երբ Ֆրանսիայում էր գտնվում, տպագրել է ավելի «Համառոտ վիպասանութիւն յազազս ժամանակաց կենցաղոյս» վերնագրով: Ոսկան վարդապետի քննորդի Սողոմոնը

մեզ տէր Զաքարիայ Միւնեցւոյ, աշակերտի կղեմէս աստուածաբան վարդապետի, ի վայելումն իւրոյ անձին, և յիշատակ իւրն և ընտանեաց իւրոց» (էջ 396բ). «Յիշատակայ գիրքս Միսիանցի տէր [Զաքարիա վարդապետին]» (էջ 423բ), հմմտ. Eug. Tisserant, «Codices armeni Bybliothecae Vaticanae» etc., Romae, 1927, p. 31. Զաքարիա Մյունեցուց ծանոթ է նաև 1645 թ. գրված չափածո մի հիշատակարան՝ նույն մատենադարանի Codex Vaticanus Armenus № 16 (էջ 102բ), հմմտ. Eug. Tisserant, «Cod. arm. Bybl. Vat.», p. 277.

Մեր կարծիքով նույնիսկ սա է այն Զաքարիա զպիրը (Zacharias clericus), որը 1643 թ. Գալանոսի հետ Կ. Պոլսից Հոտի գնացող երեք հայերից մեկն էր, անս կլ. Գալանոս, «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հոտիմայ», հտ. Ա, Հոտի, 1650, էջ 184. նույնը նաև՝ Cl. Galanus, «Historia armena ecclesiastica et politica», Coloniae, 1686, p. 244—245.

² Եթե՞ վերնագիրը՝ «Համառոտ վիպասանութիւն յազազս ժամանակաց կենցաղոյս ի յիսկզբանէ ստեղծման աշխարհի մինչև ցներկայան ամեռակս մեր. և վասն առաւել կարևոր և պիտանացու իրաց կղեւոյ առ ի բառարայ զամենայն կարծիս և դերկրայութիւնս ի մտաց. իսն որոյ պիտայ է գիտել զթիւ ամաց անցելոցն իրաց, նախահարցն և քննարարցն և բախարանց ամանց մեծազունից: Թարգմանեցեալ ի Նազարէայ Միւնեցւոյ բանագիրն՝ ի լատին բարբառոյ ի հայս, և ի հարց ևս որոնքարդեալ. առ ի պէտս Հայկազունեաց ճշմարտասիրաց», անս Վեպուրի նրտարախոթքան մեջ. «Յիրք աշխարհաց և առասպելաբանութեանց որ է Արտեմազիր», Մարտիկոս, 1683, էջ 289—320:

Նույն ասանկն անվան, հմմտ. Գ. Զաքարիանայան, «Հայկական մատենագրութեան», Վենետիկ, 1883, էջ 320—321:

Նազարությանը մնացել է անավարտ և հետևարար բնագրի պարտախոթքանը չի հասնում մինչև հեղինակի ժամանակը: Երևանի Վեպուրի Մատենադարանի ձեռագրերում մեզ ծանոթ են սույն աշխատության երկու օրինակներ, առանց հեղինակի անվան, երկուսն էլ սրտազրկված վերոհիշյալ տպագրից, հետևարար՝ նույնպես թերի: Իրանցից առաջինը՝ ձեռ. № 1786 (էջ 78ա—85բ), որ կրում է «Համառոտ վիպասանութիւն յազազս ժամանակաց կենցաղոյս ի յիսկզբանէ ստեղծ-

նմանապես ծանոթ անձնավորություն է: Ոսկան Երևանցին, որ, ինչպես գիտենք, հայտնի դեմք է հայկական տպագրության պատմության մեջ որպես հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրիչը Ամստերդամում 1666 թվականին, իր տպարանը Մարսել էր տեղափոխել 1672 թվականին. իսկ նրա մահից (14 փետր. 1674 թ.) հետո տպագրական գործը շարունակում էր նրա քեռորդի Սողոմոն Լեոնյանը՝ մինչև 1683 թվականը¹: Սրանց քաղաքական հակումները ցույց տալու համար բավական է հիշել, որ Ոսկանը դեռ 1664 թվականին, ուրեմն՝ Ֆրանսիա տեղափոխվելուց շատ առաջ, Հոտմում կարդիմալ Ուրսինիի (Card. Ursini կամ Orsini) առաջ իր դավանությունն էր տվել². իսկ Սողոմոնը, նույնիսկ շատ տարիներ հետո, այն է՝ 1704 թվականի խոտվությունների ժամանակ, Կ. Պոլսում հարկադրվում է միառժամանակ թաքստոց մտնել որպես մեկը, որ ֆրանսիական ռեհսպանի պաշտպանության տակ

ման աշխարհի մինչև ցներկայական ամանակս մեր» խորագիրը, ընդօրինակված է 1723 թ. Մարտիրոս դի Առաքելի կողմից. իսկ մյուսը՝ № 82 (էջ 248ա—253բ), որ կրում է «Արդ պարտ է գիտել ուրեմն թե որքան ամբ անցեալք են ի ստեղծմանէ աշխարհի» են խորագիրը, ընդօրինակված է 1770 թ. Սաայի Թոթաթեցու ձեռքով: Այս երկու օրինակների հիման վրա Վ. Ա. Հակոբյանը կատարել է սույն բնագրի մի նոր տպագրություն, այդ համարելով «Անանուն Լիվոնացու(?) ժամանակագրություն», սեն Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հտ. Ա, Երևան, 1951, էջ 262—280:

¹ Մարսելի հայկական տպարանի պատմության և Սողոմոն Լեոնյանի գործունեության մասին տես Գ. Ջաբր հ ա ն ա լ յ ա ն, «Պատմութիւն հայկական տպագրութեան», Վենետիկ, 1895, էջ 114—132: Թեոդիկ, «Տիպ ու տոս», Կ. Պոլսո, 1912, էջ 156—157: Ch.-D. Tékéian, «Marseille la Provence et les Arméniens», Marseille, 1929, p. 40—55. R. Simon, «Histoire critique des versions du Nouveau Testament», Rotterdam, 1690, p. 196—205. J. D. Bory, «Les origines de l'imprimerie à Marseille», Marseille, 1858. Վերջինիս համապատասխան մասի թարգմանությունը՝ «Հայկական տպարան ի Մարսել (1673—83)», Բազմավկայ, 1891, էջ 161—168 և 193—200:

² Հ. Տ ա շ յ ա ն, «Յուդեական հայերէն ձեռագրաց մատենադարանի Միլիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895, էջ 113:

բժրոստ գրքեր (livres séditions) էր տպագրում հայերեն լեզվով³: Ջուզեփի (Հովսեփի) Հալապցին, որի անունը հատկանշական կերպով եվրոպական ձև է կրում, թարգմանի պաշտոն էր կատարում, ինչպես ասում է Շահմուրատը⁴: Իսկ Գրիգոր Արզրուացին և Մուրատ Ղազանչեցին⁵ առայժմ անծանոթ են մեզ: Նրանք կարող են Փարիզի կամ Մարսելի հայ վաճառականներից լինել:

Հարց է, թե ի՞նչ գործ ունեին այս հայերն այդ թվականներին Ֆրանսիայի մայրաքաղաքում: Արդյոք որևէ կապ չունեին նրանք Շահմուրատի հետապնդած գործի հետ:

Շատ հավանական է: Մահտեսի Շահմուրատը նրանց հետ միասին է այցելել արքունական պալատը: Երևում է, որ այս հայերը թագավորի անմիջական շրջապատի հետ շփում ունեին: Նրանք գուցե հայոց պատվիրակությունն էին ներկայացնում իրենց գլուխն ունենալով Հովհաննես Թութունջին, թարգմանը՝ Ջուզեփի Հալապցին և Շահմուրատի հետ մեկտեղ մի ամբողջություն էին կազմում: Համոզվելու համար, սակայն, այս ենթադրությանը՝ կարևոր է ծանոթանալ Հովհաննես Թութունջինին:

Հովհաննես Թութունջին, որ կոչվում էր նաև Արևելցի և անտարակույս վանեցի էր⁶, Կ. Պոլսի պատրիարք է եղել

³ Aubry de la Motraye, «Voyages», t. 1, p. 371. Հմմտ. H. Riandel, *Revue des Etudes Arméniennes*, t. 1, 1920/21, p. 391.

⁴ Նիշատակարանի փարեզյան և վենետիկյան օրինակներն են միայն, որ գնում են Յովսեփի, իսկ մյուսները՝ Ջուզեփի կամ Ջուզեպ, որ է՝ իտալ. Giuseppe, ֆրանս. Joseph.

⁵ Ըստ փարեզյան և վենետիկյան օրինակների՝ Ղազանչի. ըստ Յուզեփ Լեոնյանի օրինակի՝ Խազանչիլերցի. ըստ Փրոզայեմյանի օրինակի՝ Խազանչիլարցի, որ հավանորեն ուղղելի է Խազանչիլարցի:

⁶ Հ. Ա. Լեոնյան, «Վանեցի բարձրաստիճան եկեղեցականներ ի Մարսել», Բիզանցիոն, 1903 թ., № 1931: Երեմիա Չելեքին Ղազար Թարգմատացու պատրիարքության օրով (1660—1663 թթ.) հալածվածների շարքին հիշատակելով նրան, անվանում է «Թութունջի Վանայ», տես Հ. Ա. Կիրոյան, «Երեմիա Չելեպի Բեօսիբանան», Վիեննա, 1933, էջ 230: Հովհաննես Թութունջին իրեն անվանում է «պարզապես Արթուրյան», տես Վալերիազիր № 10:

1663—64 և 65—67 թվականներին: նա էջմիածնից Լեհաստան նվիրակ էր ուղարկվել¹ և իր նվիրակական տուրքերը հավաքելով, կաշառի էր տվել ու մեծ վեզիր Քուլիբեյի Ահմեդ փաշայից ձեռք բերել Կ. Պոլսի պատրիարքությունը, տապալել ու բանա նետել տալով Ղազար Սերաստացուն, 1663 թվականին: Թեև 1664 թվականին նրան հաջորդել էր Սարգիս Բրակացին, սակայն ինն ամիս հետո Հովհաննես Թուֆուճյանը հաջողվել էր սրան ևս տապալել ու կրկին անգամ գրավել աթոռը 1665 թվականին, մինչև որ Հակոբ Զուղայեցի կաթողիկոսը նրան պաշտոնանկ էր արել 1667 թվականին²:

Այս ձախորդությունից հետո Հովհաննես Թուֆուճյանը անցել էր Վասպուրական:

Այդ մասին մեզ տեղեկություններ է տալիս մի անանուն ժամանակագիր, որը Վասպուրականի անցքերն է թվում և 1669 տարեթվի տակ գրում.

«ՄեծժԷ (1669 թ.) եղև շարժ ի քաղաքն Վան և վնաս ինչ ոչ եղև, բայց ի յոտն Վարազայ լեառն մի ոստեալ ի տեղուղէն և թոռցեալ անկաւ ի ձորն, և արգելեաց զգետն, որ ի վերուստ անտի իջանէ. և կառեալ կապեցաւ ջուրն անդէն ժամս բազումս, մինչև ինքեան ընդ ինքեան ճանապարհ արար գնացից իւրոց. և խափանեցաւ ճանապարհ ջրոյն, որ ի գետոյն անտի ի վերուստ բաժանէր և գայր ի վանքն և վարէր զջրաղացն վանիցն, զի նովաւ կառավարիւր վանքն, և այլ ոչ գոյր հնար այլ ճանապարհաւ գալ, այլ անկեալ ընդ ձորն խառնեցաւ ի գետն և գնայր. վասն որոյ հանճարեղ խորհրդա-

¹ Հրատարակած է Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի այն կոնդակը (12/22 հունվ. 1661 թ.), որով «Տէր Ովանէս վարդապետ»-ին նվիրակ է ուղարկում Լեհաստան և Ռուսիոյ, տե՛ս «Կամենից, տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռուսիոյ», Վենետիկ, 1896, էջ 257—258: Մ. Օրմանյանը հիշում է այս նվիրակությունը սույն վավերագրի հիման վրա, առանց սակայն կարողանալու որոշել նվիրակ Հովհաննես վարդապետի ինքնությունը, տե՛ս «Ազգագատում», մասն Բ, § 1743:

² Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 692—696 և 715: Մ. Օրմանյան, «Ազգագատում», մասն Բ, §§ 1741—1742, 1755, 1768 և 1764:

կանն այն Յովհաննէս վարդապետն, որ ի ժամանակին այն-ժեկ էր առաջնորդ անուանի վանուցն Վարազայ, որոյ մակա-նուն Թուֆուճյանի ասէին. սա լեալ էր պատրիարք ի մեծ քաղաքն Բիւզանդիոյ և եկեալ աստ եղև առաջնորդ, և ի միասին տիրէր Սալնապատայ վանիցն ևս. այլ և տիրեաց Հոգուց վանիցն ևս. և եղև կաթողիկոս Աղթամարայ. սա հնարեաց այլ իմն կերպիւ բերել զջուրն ջրաղացին ի վանքն և զանշարժ լեառն և զանհուն վէմն ետ կտրել քարահատացն, որ և անդէն կատարեցաւ հրաման... և յետոյ այս վարդապետն եղև պոլս ազգին Յոանկաց և եկն ի վերայ թուրքին...»¹:

Ուրեմն՝ Կ. Պոլսի նախկին պատրիարքը Վասպուրակա-նում Վարագի, Սալնապատի և Հոգյաց վանքի առաջնորդություններն իր անձի վրա միացնելուց հետո՝ գրավել էր և Աղթամարի կաթողիկոսական աթոռը, մեր հաշվով 1670—1672 թվականներին²:

¹ «Անցը Վասպուրական աշխարհի», Գիւան Հայոց Պատմութեան. գիրք Ժ, էջ 104—105: Գիւան-ի այս հատվածն ուղղագրական ու բառական տարբերություններ ունի Ս. Լևոնյանի առաջ բերածից, Բիւզանդիան. 1903 թ., № 1931, որից արտատպել է Ն. Ա. Կիրյանը, «Գիւտարանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ», Վիեննա, 1920, էջ 138—139:

² Հաս վերահիշյալ անանուն աղբյուրի՝ Հովհաննես Թուֆուճյանի 1669 թ. Վարագի և Սալնապատի առաջնորդն էր: Նույն թվականին Առաջուր պիշը նրան նշանակում է նույնպես իբրև Վարագի վանահայր (Գիւանի Գիւտ. Մատ. Ան. № 5504): Երկու տարի հետո, 1671 թ., Սալնապատի տեղեկանում ենք, որ նա զեւ Վարագի առաջնորդ էր (Գիւանի Գիւտ. Մատ. Ան. № 5835): Իսկ Հոգյաց վանքի առաջնորդու-թյունը թվում է նա 1670 թվականին է՝ մեծ բերում, որովհետև, իմն այլ վավերական արձանագրության առաջնորդ հիշվում է մի ոմն Գեանույն վարդապետ (Ն. Լալայան, «Տեսուցի նայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ Ա, էջ 305), բայց, ըստ երևույթին, նույն թվականին էլ թուֆուճյան տիրում է Հոգյաց վանքին և Պարոս կաթողիկոսի ժամանակաբաժնով (Ն. Լալայան, «Վասպուրական. նշանավոր վանքեր», պրակ Ա, Թիֆլիս, 1912, էջ 19) գրավում է Աղթամարի աթոռը: Թուֆուճյանի կաթողիկոսությունը չի կարող և այս թվականից շատ ուշ լինել: Ըստի որ նրան հաջորդող Կարապետ կաթողիկոսը հիշվում է 1672 թվականից (Երևանի Պետ. Մատ. Ան. № 4904) մինչև անսկզբնական 1677 թ. (Մ. Սմբատյանց, «Տեղագիր Գեղարքունի ձովագարդ գաւա-

ԺԱՄԱՆԱԿԱԿՐԱԿԱՆ ՏԱԵՏԱԿ ԱՂՔԱՄԱՐՆԵՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍԻՓՅԱՆ
 ԵՎ ՎԱՐԱԿՅԻ, ՍՄԱՆԱՊԱՆՏԻ ՈՒ ՀՈԳՏԱՅ ՎԱՆՔԻ ԱՄԱՋՆՈՐԴՈՒՄԻՓՅՈՒՆԵՐԻ
 (Հովանեն Թուրանցի կենսագրության համար)

| Թվական | Աղթամարի կթի | Վարաչի և Վանի առաջն. | Սալնա-պատի առաջն. | Հոգյաց վան-բի առաջն. | Հիշատակա-գրքի առանձնը | Հիշատակ-ման վախճ | Աղթամարի կթի |
|--------------|----------------------|----------------------|------------------------------|----------------------|-----------------------|------------------|----------------------------------------------------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| ԹՃԺԱ 1662 | Մարտիբոս | — | — | — | Հերապետ | Հիգան | Պետ. Մատ. ձեռ. № 5224, էջ 295բ—296բ: |
| ԹՃԺԱ 1662 | — | Պոզոս վրդ. | — | — | Սահակ քհ. | Վան | Պետ. Մատ. ձեռ. № 5422, էջ 288ա—289բ: |
| ԹՃԺԱ 1662 | Մարտիբոս (Փչբուկ) | — | — | — | Դավիթ Բաղիշեցի | — | Պետ. Մատ. ձեռ. № 7589, էջ 40: |
| — | Մարտիբոս | Պոզոս վրդ. | — | — | Սիմեոն Երևանցի | — | Սիմեոն Երևանցի, «Ջամբու», էջ 93—94: |
| ԹՃԺԲ 1663 | — | — | — | Պետրոս արք. | — | Կոզմոս | Ե. Լալայան, «Յուրացի հայ. ձեռ. Վասպ.», (ան- տիպ), ձեռ. № 1286: |
| ԹՃԺԸ 1669 | — | Հովնանեն վրդ. | Հովնանեն վրդ. | — | Առաքյալ գրիչ | Վան | Պետ. Մատ. ձեռ. № 5504, էջ 251ա: |
| ԹՃԺԸ 1669 | — | Հովնանեն Թուրանցի | Հովնանեն վրդ. Թուրանցի | — | — | — | «Բիւան հայոց պատմու- թեան», գիրք ժ, էջ 103: |

| | | | | | | | |
|--------------|----------------------|------------------------------|------------------------------|------------------------------|-------------------------------|----------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| ԹՃԺԹ 1670 | — | — | — | Մանուել վրդ. | Հերապետ գրիչ | Աղթամար գյուղ Կոզմոս | Ե. Լալայան, «Յուրացի հայ ձեռ. Վասպ.», ապ. թիթի- լիս, 3915, էջ 935: |
| ԹՃԺԹ 1670 | Պետրոս | — | — | — | — | — | Ե. Լալայան, «Վասպուրա- նիան. նշանավոր վանքեր», ապ. թիթիլիս, 1912, էջ 19: |
| — | Հովնանեն Թուրանցի | Հովնանեն վրդ. Թուրանցի | Հովնանեն վրդ. Թուրանցի | Հովնանեն վրդ. Թուրանցի | — | — | «Բիւան հայոց պատմու- թեան», գիրք ժ, էջ 105: |
| ԹՃԻ 1671 | — | Հովնանեն վրդ. | — | — | Քալիֆա գրիչ | Վան | Պետ. Մատ. ձեռ. № 5635, էջ 253ա: |
| ԹՃԻԱ 1672 | — | — | — | Հովնանեն վրդ. Թուրանցի | Հարապետ գրիչ | Հարապետ գյուղ Կոզմոս | Պետ. Մատ. ձեռ. № 4388, էջ 198ա—198բ: |
| ԹՃԻԱ 1672 | Կարապետ | — | — | — | Հովնանեն քհ. | Աղթամար գյուղ | Պետ. Մատ. ձեռ. № 4904, էջ 284բ: |
| ԹՃԻԳ 1675 | — | Հովասափ վրդ. Ղափանցի | — | — | — | — | «Բիւան հայոց պատմու- թեան», գիրք ժ, էջ 106: |
| ԹՃԻԵ 1676 | — | Հովասափ վրդ. | — | — | Անդրեաս Կիրակոս գրիչներ | Արաբ գյուղ Վանի | Պետ. Մատ. ձեռ. № 6332, էջ 246ա: |
| ԹՃԻԶ 1677 | Կարապետ | — | — | — | Միխայիլ քհ. | Պաշտ գյուղ Մոկաց | Մ. Սմբատյանց, «Տե- ղապետ Գեղարքունի ծո- ղապարզ պատմութի», էջ 389: Ն. Աղիջյան, «Գա- լապանագիրք», էջ 138: |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---------------|-------|---------------------------|------------------|----------------|------------------------------|------------------------------|-------------------------------------------------------------------------|
| Թ՝ՃԻԸ 1679 | — | Կարապետ Վրդ. | Մելիքեան Վրդ. | — | Մինաս Մոկացի | Վարդ | Պետ. Մատ. ձեռ. № 6332, էջ 247բ: |
| Թ՝ՃԻԸ 1679 | — | Կարապետ Վրդ. | — | — | Բաղդուկ- ձեռն Շուշանյե | Վարապա Վանք | «Գրեան հայոց պատմու- թեան», գրք ժ, էջ 153: |
| Թ՝ՃԻԹ 1680 | Թուժա | — | — | — | Մարտիրոս գրիչ | Փազան գյուղ Գազաշի | Պետ. Մատ. ձեռ. № 5800, էջ 143բ: |
| Թ՝ՃԼ 1681 | — | — | — | Մանուկ Վրդ. | Հեքապետ գրիչ | Համալսվա գյուղ Կորովաց | Պետ. Մատ. ձեռ. № 5085, էջ 286բ: |
| Թ՝ՃԼԲ 1683 | Թուժա | — | — | — | Մարտիրոս երեց | Շահգալղի գյուղ | Պետ. Մատ. ձեռ. № 5162, էջ 222բ—223բ: |
| Թ՝ՃԼԳ 1684 | — | Կարապետ Վրդ. | — | — | Փանոս գրիչ | Վան | Պետ. Մատ. ձեռ. № 5810, էջ 187բ—188տ: |
| Թ՝ՃԼԳ 1685 | — | — | — | Մանուկ Վրդ. | Հեքապետ գրիչ | Համալսվա գյուղ Կորովաց | Պետ. Մատ. ձեռ. № 3833, էջ 280ա—281տ: |
| Թ՝ՃԼԶ 1687 | — | Կարապետ Վրդ. | — | — | Քալիֆա գրիչ | Վան | Ե. Լավրյան, «Ճոնյակ հայ. ձեռ. վասպ.», տպ. քիֆ- լիս, 1915, էջ 97Թ. |
| Թ՝ՃԽԵ 1696 | Թուժա | Կարապետ Վրդ. Մոկացի | — | — | — | — | Պետ. Մատ. ձեռ. № 4618, էջ 99ա: |

Ահա սա էր այն Հովհաննես Թուֆունջին, որը 1683 թվա-
կանին Վերսալում գտնվող հայերի մեջ հիշվում է ամենից
առաջ և որի մասին Վասպուրականի անանուն տարեգրողն
ասում է, թե «եղև գլուխ աղզին Ֆոանկաց և եկն ի վերայ
թուրքին»:

Հիմնվելով այս վերջին վկայության վրա, մենք պիտի
ընդունենք, որ Հովհաննես Թուֆունջին պատահական մարդ
չէր եղել Վերսալում. ինչպես և, հաշվի առնելով նրա անց-
յալը, պիտի ընդունենք, որ նա աննշան մարդ չէր եղել հայ
հասարակական կյանքում. հետևաբար նրա հանդիպումը
Մահտեսի Շահնուբատի հետ դժվար թե պատահական լիներ.
Մանավանդ որ ժամանակակից Լուդովի վկայությամբ դի-
տենք, թե Հովհաննես Թուֆունջին Մուրատի «մտերիմն» էր,
և արդեն նախ քան այդ, և ամեն պարագայի դոնե մի անգամ,
«մտտավորապես շորս տարի առաջ», նորից էին նրանք իրար
հանդիպել Փարիզում¹. Իսկ թե ի՞նչ պարագաներում էր տեղի
ունեցել այդ նախընթաց հանդիպումը, այդ մասին մենք
կտեսնենք հետո:

Չի կարելի այստեղ հաշվի շանել, որ 1666 թվականին,
երբ Մահտեսի Մուրատն առաջին անգամն էր եվրոպա ուղարկ-
վում հայ-հունական ապստամբության ծրագրով, նույն թվա-
կանին Կ. Պոլսի պատրիարքական աթոռի վրա գտնվողը Հով-

«ի», Վաղ/պատ, 1895, էջ 399): Իսկ նկատի ունենալով, որ Թուֆուն-
ջին տակավին 1672 թ. էլ է հիշվում որպես Հոգյաց վանքի առաջ-
նորդ (Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4388), պետք է ընդունել, որ մինչև
այդ թվականը Աղթամարի աթոռի վրա էր նա, տիրելով միշտ երեք
վանքերի վրա: Այդ նույն թվականի ընթացքում է հետացել «մթոսից»
տեղը տալով հիշյալ Կարապետ կաթողիկոսին: Ուստի մենք, ամենայն
գնահատությամբ, նրա կաթողիկոսությունը դնում ենք 1670—1672 թթ.,
հավանաբար մեր կարգում «Ժամանակագրական տախտակը»:

¹ „Ludolfi ad suam Historiam aethiopicam antehac editam Com-
mentarius“, Francof.-ad-Moenum, 1691, p. 265.

Լուդովի այս վկայությունը բառացի տես աստ, էջ 201:

հաննես Թուֆունջին էր: Այդ ժամանակ այդ ծրագիրը չէր կարող ծանոթ չլինել Կ. Պոլսի պատրիարքարանին, քանի որ Օսմանյան Կայսրության մեջ հայոց ներքին հասարակական կյանքի տնօրինումը գերազանցորեն նրանց ազգային-եկեղեցական կազմակերպությունների միջոցով էր կատարվում և նման համազգային շարժումներ չէին կարող կապ չունենալ եկեղեցական ղեկավար օրգանների հետ, ինչպես էր տվյալ դեպքում նաև հույների մոտ, որոնց «մի քանի պատրիարքների հետ» հարաբերության մեջ էր եղել Հայր Օտտոմանը: Իսկ այն պարագան, թե Շահնուրատը միաժամանակ նաև Ալեքսանդրիայի պատրիարքության կողմից պաշտոնապես ուղարկված հունական ներկայացուցիչ էր, տարակույս չի թողնում, որ այս խնդրում հունաց պատրիարքությունների հետ կապ ունենին նաև հայոց եկեղեցական վերին օրգանները, ինչպիսին էին Սսի կաթողիկոսությունը, Կ. Պոլսի պատրիարքությունը, Երուսաղեմի պատրիարքությունն ու Աղթամարի կաթողիկոսությունը, և գործում էին միասին: Հետևաբար ավելի քան հավանական է, որ Կ. Պոլսի այդ ժամանակվա պատրիարք Հովհաննես Թուֆունջին մեկն էր այն անձնավորություններից, որոնց ձեռքերում էր ապստամբական այդ շարժման զսպանակը:

Հովհաննես Թուֆունջին այժմ Ֆրանսիայի մայրաքաղաքում էր գտնվում:

Եկեղեցական սքեմ հազած քաղաքական այս նշանավոր գործիչը թեև ծանոթ է իր խառնվածքով որպես ճարպիկ, հանդուգն և փառասեր մարդ, բայց և եղել է գործունյա ու ջերմ հայրենասեր և իր երկրի ազատագրության համար պայքարող: Կ. Պոլսի պատրիարքությունից ազամա հեռանալուց հետո, այս վանեցի հոգևորականն, անշուշտ, իր հետ տարել էր հայոց ազատագրման խանդավառ երազը և փայփայել երկար տարիներ, մինչև որ մի օր, հարմար առիթով, անցել էր Եվրոպա, որպես պատգամավորը Եղիազար Այնթապցի կաթողիկոսի, որը արևմտահայ ազատագրական այս շարժման

ազդեցությունն սկիզբն էր եղել նախքան էջմիածնի կաթողիկոս դառնալը¹:

Այս ժամանակ, ուրեմն, Հովհաննես Թուֆունջին գնալով Ֆրանսիա և օգտվելով, մանավանդ, հայկական դատի հաջողության համար երևան եկած նպաստավոր նոր հանգամանքներից, աշխատում էր անձամբ արդյունավորել այն բանակցությունները, որոնք Մահտեսի Շահնուրատի միջոցով սկսվել էին 1666 թվականից՝ իր պատրիարքության օրերից:

Իսկապես, որ ժամանակներն ավելի քան նպաստավոր էին երևում այդ տեսակետից: Թուրքական բանակները ողորդում էին ավստրիական հողերը՝ սպառնալիքի տակ առնելով մայրաքաղաք Վիեննան, ինչպես եղել էր 1664 թվականին: Քրիստոնեական աշխարհը կրկին դղրդում էր խաչակրության ահազանգով: Լուդովիկ XIV-ը տրամադրություն էր հայտնել իր հզոր բանակով օգնության հասնելու Լեոպոլդ կայսրին, գրեթե ավորություն ունենալով «անցնել Գերմանիա, պատվար կանգնել բարբարոսների առաջնադասումների դեմ և արտաքսել նրանց Գերմանիայից», ինչպես ասում է վենետացի Ծոսկարինին²: Այսքան՝ ընդանրապես:

¹ Տես դուրս ԺԳ: Հովհաննես Թուֆունջին նախկինում հակա-էջմիածնական չէր եղել: Պետք է անկեղծ համարել այն հայտարարությունը, որ նա արեց 1663 թվականին, երբ էջմիածնի նվիրակական առաքելը կաշառի համար օգտագործելով Կ. Պոլսի պատրիարք դարձավ. «Ես վասն այն ընկալայ դայս ի իշխանութիւն, զի նուսանեցից զգիժազարձն աթոռոյն էջմիածնի, և զոր ինչ պարտիցիմ հատուցանել աթոռոյն՝ ի հասից պատրիարքութեանս անպակաս վճարեցից» (Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, էջ 603): Այս կերպով նույնիսկ նրան պաշտպան ու երաշխավոր էին դարձել արևելյի իշխանավորներից Թուրքով և Միրզա վաճառականները (անդ)․ բայց և այնպես արարել անհաշտելի կերպով թշնամացրել էր նրան էջմիածնի կաթողիկոս Հակոբ Զուղայեցու հետ, իսկ այդ պարագան ճակատագրական էր եղել Թուֆունջիի և էջմիածնի մայր աթոռի հետագա հարաբերությունների տեսակետից՝ նրան մղելով դեպի սոսկիան հոսանքը և դարձնելով եղիազար Այնթապցու կուսակիցը, ճիշտ այն շրջանում, երբ նոր էր փոխում Զուղայեցու և Այնթապցու անպարտ պայքարը:

² E. Lavisse, „Histoire de France“, t. VII, part. II, p. 361.

Իսկ մասնավորապես հայերի համար՝ շատ բարեգուշակ էին երևույթները Ֆրանսիայում:

Լուդովիկ XIV-ը նորից ձեռք անելով Թուրքական հարցը, սկսել էր առանձնապես փայփայանք ցույց տալ հայերին: Դա արտահայտվում էր վերջին տարիներին Փարիզում երևան եկած հայասիրական շարժմամբ՝ ընդգեմ Մարսելի:

Նախ ասենք, որ անցյալում հակահայկական ուժեղ շարժում էր գոյություն ունեցել Մարսելում, որովհետև այնտեղ հայ վաճառականները տեղականներին վտանգավոր ժրջակիցներ էին դարձել. այդ պատճառով Մարսելի Առևտրական Պալատի (Chambre de Commerce) բողոքների վրա քաղաքային խորհուրդը 1622 թվականի մի որոշումով Ֆրանսիացի նավապետներին խստիվ արգելել էր սրևէ հայ ընդունել իրենց նավերի վրա¹, իսկ Պրովանսի խորհրդարանը նույն թվականին մի հրամանագրով հաստատելով այդ տրամադրությունները, հայերին արգելել էր նաև իրենց ապրանքների արդյունքը ոսկով կամ արծաթով դուրս տանել երկրից, նույնիսկ փոխանակազրույթ: Այս պայքարը հետևողական էր դարձել Մարսելում հայերի դեմ շատ երկար ժամանակ², և մինչև իսկ նրանց համար 5% -ի մի հավելվածական տուրք էր հաստատ-

¹ Նավապետները պարտավորված էին նոտաքի առաջ ստորագրություն տալու, թե այդ արգելքին անսասելու դեպքում իրենք 10.000 տուրոնյան ոսկի առժանք պիտի վճարեին: Այդպիսի փաստաթղթերից, թվով ութ հատ, հրատարակել է Մակլերը, հանելով Մարսելի Առևտրական Պալատի գրիվաններից. Fr. Macler, „Notices de manuscrits arméniens ou relatifs aux Arméniens, vus dans quelques bibliothèques de la péninsule Ibérique et du sud-est de la France“, *Revue des Etudes Arméniennes*, t. II, Paris, 1922, p. 10—13. Տես նաև Ch.-D. Tékéian, „Marseille, la Provence et les Arméniens“, p. 14—15.

² Համապատասխան վավերագրերը տես F. Macler, „Notices de manuscrits arméniens“ etc., *Revue des Etudes Arméniennes*, t. II, p. 14—20.

³ Մինչև 1656 թվականը այդ մասին խոսող բազմաթիվ վավերագրեր կան, տես *Ibidem*, p. 22—41.

վել 1650 թվականից սկսած¹, ճնրանց ստիպելու համար, որ այն աչս երկիրը չզան», ինչպես բացահայտորեն ասում է 1652 թվակիր մի վավերագիր²: Այս պատճառով նաև 70-ական թվականներից այնտեղ հաստատվող հայկական տպարանք մեծ դժվարությունների էր հանդիպել. տեղական վաճառականները նրա դեմ պայքար էին մղում հոռմեական հավասարենության (ինկվիզիցիայի) միջոցով:

Բայց այժմ, Մարսելի տպարանի դեմ ի գործ դրված Խատուլյունների առթիվ Փարիզը հրապարակորեն պայքարի էր դուրս եկել Մարսելի դեմ: Հայերի պաշտպանության համար ասպարեղ էին իջել փարիզյան հայտնի անձնավորություններ, ինչպես օրինակ՝ Թեատինյան դիտնական կրոնավոր Հայր Պիդուն (Louis Marie Pidou de Saint-Olon), որի հեղինակավոր միջամտությամբ միայն վերացել էր հայերեն Սաղմոսարանի տպագրման դեմ Մարսելի թեմական փոխանորդ Ֆիլիպ Դը Բոսեի (Philippe de Bausset) դրած արգելքը և տպագրված օրինակների ոչնչացման մասին տված որոշումը (1676/7 թթ.)³. Սորբոնի դոկտորներից Պիկը (Piques), որ 1681 թվականին այլևայլ նամակներով հմտորեն և

¹ Ch.-D. Tékéian, „Marseille, la Provence et les Arméniens“, p. 17—18.

² Վավերագրում բառ առ բառ ասված է. „...Et néanmoins qu'on leur fasse payer le droit de cinq p. Cent que leur sont este establis par. les obliger a ne venir plus en ce pays“, տես H. Samuélian, „Les Arméniens en France depuis les origines jusqu'à nos jours“, *Le Foyer*, III^e année, № 35, Paris, 1^{er} Avril 1930.

³ Fr. Macler, „Mosaïque orientale“, p. 61.

Առաջընթացի արժանի է, որ այս նույն Հայր Ալոյսիոս Պիդուն Մարսելում հայկական տպարանի հաստատման դեմ էր եղել սկզբում, աշխատելով, որ թույլ շտրվի տպագրել «գիրքս յիմարականս ի մեծ վնաս կաթողիկէ հաւատոցն», տես «Բանի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոովմայն», Պետերբուրգ, 1884, էջ 232. Բայց հետագայում, ինչպես երևում է, հարկադրված էր եղել այլ կերպ վարվելու:

Հայերենագետ Պիդունի մասին տես նաև մեր «Հայկական մատենագիտություն», հտ. Ա, էջ 419—421:

արիաբար կոչում էր հայկական շահերի համար. Դ'Էտամպը (D' Etampes), որ 1682 թվականի մայիսին Մարսելի թեմական առաջնորդ ընտրվելով սկսում է հաշիվ պահանջել հիշյալ Դը Բոսելից՝ հայերի դեմ ցույց տրված անիրավությունների համար¹. նույնպես և գիտնական Ռիշար Սիմոնը (Richard Simon), որ 20 և 28 սեպտ. 1683 թվակիր նամակներով հրապարակ էր գալիս հայերին պաշտպանելու. «Հայերին իրավունք և արդարություն անելու համար, — ասում էր նա, — հարկ է խորհրդակցել արևելյան աստվածաբանության հմուտ անձե-րի հետ. իսկ այդպիսիների՝ ավելի դյուրին է գտնել Փարիզում, քան թե Մարսելում»²:

Ահա այդպիսի մի նպաստավոր շրջանում է, որ Հովհաննես Թուֆունջին առիթ էր գտել նորից ձեռք առնելու հայոց ազատագրման խնդիրը:

Մարսելի տպարանի խնդիրների կապակցությամբ մենք Հովհաննես Թուֆունջին հանդիպում ենք մի քանի վավերագրերում³, որոնց մեջ նա անվանվում է «Հայաստանի կաթողիկոսի պատգամավոր» (envoyé du patriarche d'Arménie) և կրում է «Շամիրամակերտի արքեպիսկոպոս» (archevesque de Samiram) տիտղոսը⁴: Ըստ այդ վավերագրերի, նա հաջողապես կարգավորում է տպարանի խնդիրը: Լուրովիկ XIV-ը, կամենալով «ընդառաջել (Հայաստանի) հիշյալ կաթողիկոսի

¹ Գ. Զարբհանյան, «Պատմութիւն հայկական տպագրութեան», էջ 125:

² Անդ, էջ 129:

³ Մարսելի հայկական տպարանին վերաբերող վավերագրերը, որոնք գտնվում են Փարիզի հայերեն գրչագրերից մեկում (Bibliothèque Nationale, Manuscrit arménien № 310, նախկին Supplément arménien 21), հրատարակված են Մակլերի կողմից. տես Fr. Macler, „Mosaïque orientale“, p. 39—75.

⁴ Վավերագրերում «Շամիրամակերտ», կրճատված՝ «Շամիրամ», անունը զանազան անգամներ կրկնված է Samiram, Samiran և Samirand ձևերով:

«Շամիրամակերտի (Վանի կամ Վասպուրականի) արքեպիսկոպոս» տիտղոսը շուրտի հասկանալ իբր «Վանի առաջնորդ», այլ իբր «Վանի

և ամբողջ հայ ազգի դիմումին», «ընթացք է տալիս Շամիրամակերտի հիշյալ տեր արքեպիսկոպոսին», 1683 թ. հունվ. 2-ին և փետր. 5-ին Մարսելի իր պաշտոնակատար Մորանին (Thomas Alexandre Morant) ուղարկելով կրկու հրամանա-պարտ՝ տպարանի իրավունքները լիովին վերականգնելու մասին:

Վերոհիշյալ կողմնակի՝ պատահական վավերագրերը, բնականաբար, ոչինչ չեն պարունակում Հովհաննես Թուֆունջիի քաղաքական առաքելության մասին, բայց ամեն պարագայի ցույց են տալիս, թե նա արժանավոր և շատ ուշադիր վերաբերմունք էր գտել ֆրանսիական արքունիքում:

Շատ պերճախոս են, վերջապես, Վասպուրականի անանուն ժամանակագրի խոսքերը. «Սղև գլուխ ազգին Ֆոանկաց և եկն ի վերայ թուրքին»:

Այս փոքրիկ պարբերությունն անտարակույս պարփակում է մի ամբողջ պատմություն, որը զժբախտաբար իր մանրամասնություններով կորել է մոռացության՝ սեզնդի մեջ: Մեզ թվում է, սակայն, որ այս վկայության հիման վրա կարելի է առնվազն ընդունել, որ Հովհաննես Թուֆունջին չեքմ ընդունելություն էր ունեցել, — ինչպես տեսանք արդեն վերևում, — իր քաղաքական առաքելության մեջ որոշ հաջողություններ էր ձեռք բերել, թուրքերի դեմ ֆրանկների «գլուխ» էր դարձել, մի բան, որ անշուշտ, չէր կարող կապ չունենալ հայկական խնդրի հետ: Եվ Հովհաննես Թուֆունջին մենակ չէր այնտեղ: Նրա հետ կային հայրենակիցներ՝ Շոգևորականության և մտավորականության ներկայացուցիչներից Զաքարիա Սիսիանցին, Սողոմոն Լեոնյանը և Զուղեփ Հալապցին, որոնք, ամենայն հավանականությամբ, նույն նպատակի

(Աղթամարի) կաթողիկոս: Այստեղ, անշուշտ, անհրաժեշտ նբբություն է համարվել փոխանակ «կաթողիկոս»-ի «արքեպիսկոպոս» տիտղոսը քրճածել օտարների առջ, որպեսզի Աղթամարի նախկին կաթողիկոսն իր տիտղոսով ու աստիճանով չբնթվեր էջմիածնի կաթողիկոսի հետ, որն այս շրջանում Եղիազար Այնթապցին էր:

շուրջ էին հավաքվել, և բնավ պատահականութեան արդշունք չէր, որ այս օրերին այնտեղ նրանց հանդիպում էր նաև հայկական դատի հին վաստակավոր Մահտեսի Մուրատը կամ Շահմուրատը:

Բայց անհրաժեշտ է ավելի մանրամասնորեն կանգ առնել Հովհաննես Թութունջիի հետ կապված մի քանի խնդիրների վրա:

ԳՆՈՒՆ ԺԱ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒԹՈՒՆՋԻԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՐԱԳԱՆԵՐԸ
ԵՎ ՆՐԱ ՎԵՐՋԻՆ ԱՌԵՂՄՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Թութունջիի ուղեգրությունը.— Նրա ուղեորությունը երազայում (1678—1680 թթ.) — Նրա կյուրբնիպումը նեզուսի աբուսեփուս և հայ-հարեչական հարաբերությունները.— Հովհաննես Թութունջին աբուսեփուսի կարողիսու եղիպար Այնրապցու և Լուղովի XIV-ի պատգամավորն էր.— Նրա առաքելության ծախքը.— Հովհաննես Թութունջիի վերջին առեղծվածը. «Նյուխ ազգին Ֆահեկաց» և «Եկն ի վերայ բուրքինս առաքելաբայությունները.— 1680-ական թվականները՝ Լուղովի XIV-ի իրական ծրագրերի շրջան.— Միջերկրականի բուրքական ավերի հետախուզությունը.— Մրագիրը և Գառնը.— Ժան Կոպենը և հայերի կարծիքը.— Ազգարուզյան կիզան և Լուղովի XIV-ի պատերազմները մինչև Ռիսվի հաշտությունը (1697 թ.) — Լուղովիյան ծրագիրը մնում է ծրագիր.— Մրագան կիզայի պատերազմները բուրքերի դեմ (1684—1699 թթ.) — Հովհաննես Թութունջիի հնարավոր մասնակցությունն այս արշավանքներին:

Հովհաննես Թութունջին, ինչպես տեսնում ենք, արե՛մտահայ ազատագրական շարժման գործուն դիրակատարներից է հանդիսանում հատկապես զեպի Նվրոպա իր ուղեորութեան ընթացքում: Այդ պատճառով ավելորդ չէ ծանրանալ նրա այդ ուղեորութեան հանգամանքների վրա:

Ինչպես Մահտեսի Մուրատը, այնպես էլ Հովհաննես Թութունջին թողել է մի գրավոր հիշատակարան, որը նրա ուղեորությունների մի մասն է ներկայացնում և մեզ հասել է երկու տարբեր բնագործակութեաններով, որոնք լրացնում են իրար: Նրանցից մեկը գտնվում է Երևանի Պետական Մասն-

նագարանում՝ և հրատարակված է Կարապետ Տեր-Մկրտչյանի կողմից, Ն. Մառի ռուսերեն թարգմանության հետ², իսկ մյուսը՝ Կ. Պոլսի Անտոնյան վանքի մատենադարանում³ և հրատարակված է Արշակ Ալպոյաճյանի կողմից⁴:

Այս հիշատակարանում Հովհաննես Թութունջին նկարագրում է իր ուղևորությունը Եգիպտոսից դեպի Եթովպիա և հետո դեպի Իտալիա՝ մինչև Լիվոռնո քաղաքը:

Ըստ ուղեգրության՝ Հովհաննես Թութունջին 1678 թվականի սեպտեմբերին գտնվում էր Կահիրեում (Եգիպտոս), որտեղից սկսվում է ուղևորությունը, և հայտնի չէ, թե ե՛րբ էր նա այնտեղ հասել: Նույն ամսի 17/27-ին նա մեկնում է այնտեղից, երկար ու տաժանելի ուղևորությունից հետո հասնում Դեմբեա (այժմ Գոնդար), որ այդ ժամանակ Հարեշտանի մայրաքաղաքն էր, երկար ժամանակ հյուրընկալվում է նեգոսի արքունիքում, այցելում Դեմբեա կամ ծանա լիճը, որտեղից սկիզբ է առնում Կապույտ-Նեղոսը, հետո՝ նույնպիսի երկար ու տաժանելի ճանապարհով վերադառնում է Կահիրե 1680 թ. սեպտ. 27/հոկտ. 7-ին: Կահիրեից Հովհաննես Թու-

¹ Պորագրված է՝ «Պատմութիւն երկրին Հայաշտտանայ, զոր զնաց ոմն ի վարդապետաց և զրեալ, զպատմութիւն Հայաշտտանայ եթող աշխարհի»: Երևանի Պետական Մատենադարանի ձեռագիր № 737, էջ 201ա—202բ:

² „Путешествие архиепископа Хованеса в Абиссинию. (Армянский текст, открытый и подготовленный еп. Карапетом, с русским переводом Н. Я. Марра и с примечаниями Б. А. Тураева)“. Христианский Восток, Петроград, том III, вып. I (год 3-й, 1924), стр. 6—16.

Տես նաև մեր հրատարակությունը՝ Վավերագիր № 10, «Երևանի օրինակ» վերնագրով:

³ Պորագրված է՝ «Պատմութիւն Հայաշտտանայ զնայոյ և գալոյ ճանապարհին ի Թուին Քրիստոսի 1678», Կ. Պոլսի Անտոնյան Մատենադարանի ձեռագիր № 211:

⁴ Ա. Ալպոյոյաճյան, «Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հայկշխտան ժէ դարուն», Կահիրե, ապ. Շնոր Աստղ, 1946, էջ 3—11:

Տես նաև մեր հրատարակությունը՝ Վավերագիր № 10, «Կ. Պոլսի օրինակ» վերնագրով:

Թութին անցնում է Ալեքսանդրիա, իսկ այնտեղից նավով ուղևորվում դեպի Իտալիա՝ Մեսինայի ճանապարհով հասնելով Ալիկոնոս (այն է՝ Լիվոռնո), որը Տոսկանայի (Ֆլորենցիայի) մեծ-դքսության նավահանգիստներից մեկն էր և որտեղ հայկական կարևոր դադութ ևս գոյություն ուներ այդ ժամանակ:

Արդ, ինչպես տեսնում ենք, Հովհաննես Թութունջին իր դեպի Եգիպտոս ուղևորության ընթացքում գնում է նաև Եթովպիա: Ուղեգրության մեջ թեև չի խոսվում նրա նպատակի մասին, բայց բոլոր հանգամանքներից երևում է, որ Եթովպական ուղևորությունը կարևոր նպատակ պիտի ունենար:

Արշակ Ալպոյաճյանն այդ ուղևորությունը հրատարակության արժանի է համարել ո՛չ թե միայն այն պատճառով, որ դա դիտական հետաքրքրություն է ներկայացնում իր աշխարհագրական տեղեկություններով այդ ժամանակվա համար, և ժանազանդ այն բանով, որ նրա հեղինակը Կապույտ-Նեղոսի ակը տեսնող առաջին օտարականն է հանդիսանում, այլ նաև իր չբացատրուած, նոյնիսկ շատ զգուշութեամբ պահուած շարժառիթով, ինչպես նկատում է. և նրան թվում է, թե «այ արքայիսկոպոսին վստահուած էր շատ կարևոր քաղաքական առաքելութիւն մը, որով շահագրգռուած էին թերևս Հայրն ալ, որոնք անոր յաջողութենէն կը սպասէին իրենց արտապրումը՝ Թրքական կեղերումներէն և հարստահարութիւններէն»:

Իսկ այս բնական նշանակությունը կհանգեն Ալպոյաճյանի «Այս բոլոր երանք, որոնք ուշագիր և քննական հարցերով կ'ունենան Թութունջիի հիշատակարանին»:

Նախապես Առաքելական երևութ է Հովհաննես Թութունջիի գրած ուշագիր վերաբերմունքը հարեշտական սահմանադրից սկսած:

«Ներկիրս յայս ոչ որ մտանէ,— ասում է հեղինակը,— և որ մտանէ՝ ելանէլ ոչ կարէ յայլ աղգէ. բայց մեր շնորհօքն Քրիստոսի և օգնութեամբ թաղաւորին մտաք և ելաք»²:

¹ Ա. Ալպոյոյաճյան, «Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը», էջ 2:

² Երևանի օրինակով:

Իսկապես՝ այս շրջանում եվրոպացիներին արգելված էր այդ երկրի մուտքը:

Հարեչատանում ծավալված կրոնական այնպիսի վայրենիքների հետևանքով 1632 թվականից օրենքով օրհնվելու փարսի էին այնպիսի լատին միսիոնարներն ու առհասարակ եվրոպացիները¹. Բայց, ընդհակառակն, հայ հոգևորականներն ու փառապաններն ազատ ելումուտ ունեին այդ երկրում, այնպես որ հետագայում, ինչպես վիճելով է ժամանակակից ֆրանսիացի բժիշկ Ֆրանսուա Բեռնիեն, եվրոպացիները Հարեչատան մտնելու համար ստիպված էին լինում երբեմն ապավինել հայկական տարազին: Այդպիսի փորձեր կատարեցին, օրինակ, 1638 թվականին կապուցինյան կրոնավորները, իսկ ավելի ուշ՝ Ալեքսանդր VII պապի օրով (1655—1667 թթ.) ֆրանցիսկյանները² և ուրիշներ:

Հարեչների մոտ հայերի վայելած այս բարչացակամությունը կարող է բացատրվել մասամբ նրանով, որ թուրքիայում, հատկապես Երուսաղեմում, որտեղ հարեչները ազգային սեփականություններ ունեին, հայոց հովանավորության տակ էին ապրում նրանք: Օսմանյան կայսրության մեջ ազգային-կրոնական համայնքներին վերաբերող վարչական օրենսդրությամբ՝ հարեչները, ինչպես զպտիները և ասորիները, որպես քրիստոնյա միարնակ ժողովուրդներ, Հայկական Եկեղեցու իրավասության էին ենթարկված, ինչպես ընդհանրապես բոլոր երկարնակները՝ Հունական Եկեղեցուն, բացի լատիններից: Անշուշտ այստեղից է բխում հայերի մոտ մինչև այժմ տարածված այն կարծիքը, թե հարեչները հայազավան կամ լուսավորչական են: Բայց այս կարծիքը հայեթույսական դավանակցությունից ծագած պատմական որոշ հիմք էլ ունի: Ինչպես նախորդ դարերում, այնպես և XVII դարում Եթովպիայի եկեղեցական պատմության մեջ Թակա-

Հարմանոթյան և Եվստաթեոսյան կոչված հոսանքների միջև գրություն ուներ խիստ պայքար: Թակա-Հարմանոթը և նրա հետևորդները XIII դարից սկսած հոսանքն ունեցել էին ունեցել Եթովպիայում քրիստոնեությունը ծավալելու ուղղությամբ, իսկ Եվստաթեոսն ու նրա հետևորդները XIV դարի առաջին կեսում բարենորոգչական շարժում էին սկսել՝ քրիստոնեական բարքերի անաղարտության և եկեղեցու դավանական հասկացողությունների ճշման ուղղությամբ: Եվստաթեոսի կենսագրիչները պատմում են, որ նա սերտորեն կապված էր Եթովպիայում Հայք կղզու վրա գտնվող հայկական Ս. Ստեփանոս վանքի հետ, ուղևորություններ է կատարել մինչև Կիլիկյան Հայաստան, հարաբերություններ է մշակել հայ միարնակ եկեղեցու ներկայացուցիչների հետ, իր աշակերտներին պատվիրել է ընդունել հայ եկեղեցու առաջնականությունը, նրա բարոյական հեղինակության վրա է հիմնել եթովպական եկեղեցու դավանական հասկացողությունը և իր կյանքի վերջին տասնչորս տարիներն անցկացնելով Հայաստանում՝ այնտեղ էլ մահացել է 1358 թվականին: Եվստաթեոսյանների դեմ իրենց պայքարում՝ Թակա-Հարմանոթյանը Եվստաթեոսին շարունակ անվանում էին հայ: Երկու հոսանքների պայքարը երկրում առաջ էր բերել պայքարի կամ ներկամային որոշ արտահայտություն, որի արդյունքով հարեչների մի մասը համարվում էր հայերից մտնել անշուշտ դավանակցության իմաստով: Այսպես՝ Հարմանոթյանների Ազգացողության մեջ կարգում ենք Թակա-Հարմանոթյանների (Թարմանոթյաններ) և Եվստաթեոսյանների (Եվստաթեոսյաններ) մասին.

«Այս պար է (7) Եվստաթեոսի և (2) ազգ աղանդ են».

¹ C. Rocco da Cesinale, «Storia delle Missioni dei Cappuccini», t. III, p. 397—398.
² Ա. Ալյոսյան, «Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը», էջ 87—88:

Ա (մինն) ասի Թխլմանոսի, որ ի լազգէն Հրէից լառաջ են եկեալ և ունին ճիւղ (100,000) վանք, թող զգիւղօրէից եկեղեցիքն. և միւս ազգն ասի Թաղէսեանք, որ ի լազգէն Հայոց լառաջ են եկեալ, և ունին Ձի (80,000) վանք, թող զգիւղօրէից եկեղեցիքն»¹:

Սրանով մենք կարող ենք համոզվել, որ մի հալ արքեպիսկոպոս առանց մեծ գծվարութիւններ ի կարող էր Հաբեշտան մտնել, բայց դա դեռևս մեզ չի ասում, թե ինչ էր Հաբեշտանի նեղուսի կողմից Հովհաննէս Թութունջիի գտած արտակարգ ընդունելութիւն շարժառիթը, ու նաև չի պարզում դրա հետ կապված այն հարցը, թե նա ինչ առաքելութիւն էր գնացել Հաբեշտանի հեռավոր մայրաքաղաքը:

Մանամազլիի Դիվարպատ քաղաքից, — հավանորին ժանթ Dobara-ն, — հալ ուղևորը դիմում է նեղուսին, որից հրաման է գալիս թույլ տալու նրան՝ գնալու իր մայրաքաղաքը, որ ուղիղ երեսուն օրվա ճանապարհ է.

«Եւ Դիւարպատ է սահրատ Հապաշոյ թագաւորին. և նստի բէկէր բէկի (= կուսակալ): Արդ արի թագաւորին. վասն մեր եղև հրաման գնալոյ»²:

կամ՝

«Ի Դիվարպատու Հապաշի թագաւորին վէզիրն (= կուսակալը) վասն մեր արդ արու թագաւորին, եղև հրաման գնալու»³:

Հովհաննէս Թութունջին ավելի քան մի տարի մնում է հաբեշների արքունիքում, վայելելով նեղուսի խորին բարւա-

¹ Երևանի օրինակում:

² Ճմտ. նաև Հովհ. Թութունջիին ժամանակակից արևմտահայերացի Ալեքտիք Պաղտասարյանի «Վասն որ կամի ի Հէպէշին երկիրն զնալ» աշխատութիւնի հետեյալ տողերը. «Անմարային ձախ դին են ազգն Թղոնէլաց (այժմյան Tigré), որ են Դ Հէպէշ, որ Հայոց Թաղէոս վարդապետն է դարձուցեր. ունին մեծ թագաւոր, բայց Անմարային հնազանդեն», Բագմավէպ, 1897, էջ 460:

³ Երևանի օրինակում:

⁴ Կ. Պալսի օրինակում:

քակամութիւնը, ինչպես ավանդում է ժամանակակից Լուդօլֆը (Job Ludolf): Վերջինս գրի է տակ այն, ինչ որ Մահտեսի Մուրատը նրան և հայտնի ճանապարհորդ Թևնոյին (Melchisédech Thévenot) պատմել է Փարիզում 1683 թվականի վերջերին.

«Նա (Մահտեսի Մուրատը) մեզ պատմում էր, թե մի հալ եպիսկոպոս, որ իր մտերիմն է, Հաբեշտանում էր գտնվել ավելի քան մի տարի, այնտեղից վերադարձել էր մոտավորապես չորս տարի առաջ. այդ ժամանակվա թագավորի անունը Հովհաննէս էր և ինքը (եպիսկոպոսը) նրա (թագավորի) մոտ մեծ բարլացակամութիւն էր վայելել, այնքան որ նա թույլ էր տվել շոշափել իր արմկոսկրը, որ միայն մեկ հաստատուն ոսկրից է կազմված»¹:

Թութունջին նեղուսից արտոնութիւն է ստանում այցելու նեղուսի ակունքները, ինչպես ինքն անձամբ պատմում է հետագայում Եգիպտոսի ֆրանսիական հյուպատոս Գը Մալլէին (Benoît de Maillet)². Իսկ վերադարձին նեղուսը նրան

¹ „Is nobis narrabat: Episcopum quendam Armenium, familiarem suum, ultra annum in Habassia vixisse. Ex ea ante quatuor circiter annos reducem nunciavisse; Regi tunc temporis nomen fuisse Johannes, seque magnâ gratia apud illum valuisse. Nam permisisse sibi contractare cubitum, qui uno tantum esse solido constiterit“, տե՛ս „Ludolfi ad suam Historiam aethiopicam antehac editam Commentarius“, Francof.-ad-Moenum, 1691, p. 265.

Ըստ Ուղեգրութիւնի Հովհաննէս Թութունջին Հաբեշտանում Ֆաթիլ է միայն 4 ամիս, բայց դա բացահայտորեն գրեական սխալ է. «Դ» (4) թվանշանը պետք է սկզբնաղբում եղած լինի «Ժ» (14). և ուրիշ փոքր չի էլ կարող եղած լինել, քանի որ, իր Ուղեգրութիւն վերջում աված հաշիվ համաձայն, հասիրից հեղինակի մեկնումը և կրկին այնտեղ վերադարձը տեղի է 24 ամիս և 10 օր, որին մոտավորապես կհամապատասխանի ճանապարհներին նրա կորցրած օրերի և 14 ամիսների օրերի ընդհանուր գումարը: Այսպիսով՝ Լուդօլֆի տված տեղեկութիւնը շատ ճիշտ է:

² Ֆրանսիական հյուպատոսն իր նամակներից մեկում, 1692 թ., Նեղոսի ակունքների նկարագրութիւնը տալով ավելացնում է. «Այս

հանձնարարական գիր է տալիս սահմանակից Անննարի թագափորի անվամբ և վերջինս հատուկ մարդիկ է տալիս նրան՝ մինչև Կահիրե հասցնելու համար: Թուֆունջին գրում է իր Ուղեգրութլունում.

«Եւ յետ [Ժ]՛ ամսոյն խնդրեցաք զհրաման ելանելոյ... որ և թագաւորն զրեաց յանձնար[ար]ական գիր ի վերայ Սնարոյ թագաւորին, որ է թագաւոր Արաւանդոյ, և անուն կոչի Բահդին ... և այս թագաւորս ես թարի է Հապաշոյ թագաւորին... և թագաւորն [Բահդին] եզիր մարդ ընդ մեզ, որ բերին մինչև ի Մար»¹:

Այս բուրն, իհարկե, մանրամասնութլուններ են, որոնք ասում են, թե Թուֆունջին Հարեշտանում առանձին, արտակարգ ու միաժամանակ խորհրդավոր ուշադրութլան և հոգածութլան առարկա է եղել, բայց այս անգեկութլունների շարքում մենք ոչ մի ակնարկութլուն չենք գտնում ուղևորութլան նպատակի մասին: Նկատի առնելով, սակայն, այս մասին հեղինակի հանդես բերած ակնբախ լուսութլունը, սկսած գալիս ենք այն համոզման, թե այդ լուսութլունը մի կամավոր և գիտակից լուսութլուն է, որի տակ նա քողարկել է հարեշական արքունիքին տված իր նյցելութլան շարժառիթը: Անվիճելի է, որ Թուֆունջիի դեպի Եթովպիա ուղևորութլան նպատակը պիտի լիներ անսպախման քաղաքական և կապ ունենար ազատագրական խնդրի հետ:

տեղեկութլունն ինձ անձամբ հազարեց մի հայ եպիսկոպոս, որը, եթովպական արքունիքում գտնվելով, Նեղոսի ակունքները տեսնելու թույլտվութլունն էր ստացել Հովհաննես քահանա անվանյալ թագափորից, որ է Մեծ Նեղուսը կամ հարեշների թագափորը» («Ce rapport m'a même été confirmé par un Evêque Arménien, qui ayant été conduit à la Cour d'Éthiopie, avoit obtenu du Roi que nous appelons le Prête-Jean, autrement le Grand Négus ou Roi des Abyssins, la permission de voir les sources du Nil»), տե՛ս A b b é Le M a s c r i e r, «Description de l'Égypte contenant plusieurs remarques curieuses sur la géographie ancienne et moderne de ce pais..., composée sur les mémoires de M. de Maillet, ancien consul de France au Caire», Paris, 1735, p. 39.

¹ Երևանի օրինակում:

Հովհաննես Թուֆունջին, ինչպես վերասյլի, այնպես էլ Գեորգիայի արքունիքում հանդես էր գալիս «Շամիրամակերտի արքեպիսկոպոս» տիտղոսով: Այդ նշվում է ուղևորութլան Նեց առաջին տողերում.

«Սա Յովհաննէս վարդապետս Աթթամարայ և ալհի եպիսկոպոս Շամիրամակերտոյ կամեցայ գնալ ի Հապաշբոսան և զնացի ի Մար...»¹:

Իսկ մյուս կողմից գիտենք արդեն, որ Շամիրամակերտի արքեպիսկոպոսը «Հայաստանի կաթողիկոսի պատգամաւորն» էր: «Հայաստանի կաթողիկոսին» անձնանունը թեև չի հիշատակված փաստաթղթերում², բայց այդ կաթողիկոսը չէր կարող լինել ուրիշ մեկը, եթե ոչ Նղիազար Այնթապցին՝ արևմտահայոց կաթողիկոսը, որ նստում էր Երուսաղեմում: Հլմիածնի կաթողիկոս Հակոբ Զուղայեցու մասին չի կարող խոսք լինել, որովհետև Հովհաննես Թուֆունջիի պատգամաւորութլունը չէր կարող Զուղայեցու կողմից լինել երկու պատճառով: Առաջինն այն է, որ, իբրև գեղծարար նվիրակի, Հակոբ Զուղայեցին աններող էր եղել նրա հանդեպ և 1667 թվականին Կ. Պոլիս գնալու առթիվ ինքն էր տասպալել նրան պատրիարքութլունից: Երկրորդ պատճառն ավելի ծանրակշիռ էր. Թուֆունջին Նղիազար Այնթապցու կուսակիցն էր, նրա որդեպանյալը, և Այնթապցին Զուղայեցու ոխերիմ հակառակորդն էր, իսկ նրանց պայքարը տեեց մինչև Զուղայեցու մահը (1686 թ.)³:

Ուրեմն՝ Հովհաննես Թուֆունջին դեպի Եթովպիա ուղևորվում էր որպես արևմտահայոց կաթողիկոս Նղիազար Այնթապցու պատգամավորը. և արդեն եթովպացիների հետ Հայկական եկեղեցու ուղղակի կապը Երուսաղեմի պատրիարքական աթոռն էր: Պատգամավորութլան նպատակը պիտի լիներ ոտի հանել Եթովպիան թուրքերի գեմ: Ինչպես գիտենք՝ այդ խնդիրը աչքի առաջ եղել էր ազատագրական շարժման

¹ Երևանի օրինակում:
² Փաստաթղթերի մասին տես նախորդ գլխում:
³ Այս խնդիրների մասին տես Գլուխ ԺԳ:

դեռևս սկզբից: Մահանսի Մուրատի Եվրոպա տարած ծրագրում Եթովպիան մեկն էր այն պետություններից, որոնք պիտի շարժման մեջ դրվեին զանազան կողմերից Օսմանյան կայսրության վրա հարձակվելու համար: Այսպես նաև այժմ, երբ հայոց ազատագրության գործը հետապնդվում էր համաուորեն, հարեջներին ոտի հանելու խնդիրն էլ հետապնդվում էր զարծյալ գործնապես և նրուսաղեմի հայոց կաթողիկոսի պատգամավորն այդ ուղղությամբ առաքելություն ուներ Եթովպիայում: Իհարկե, մի այսպիսի ձեռնարկման շէր կարող մասնակից չլինել Լուդովիկ XIV-ը, որի հետ վաղուց էր կապված արևմտահայ շարժումը, և դա այնքան բնական է, որքան եթե նկատի ունենանք, որ 1676/77 թվականներից Փարիզում ծայր առած հայասիրական շարժումը, որ քանի զննւմ՝ ուժեղանում էր, ասում է, թե հայկական կամ արևելյան խնդիրը Ֆրանսիայի թագավորին զբաղեցնող ոչաննշան խնդիրներից մեկն էր: Եվ իրոք՝ Հովհաննես Թուֆուճին 1678 թվականին Եթովպիա զնալուց առաջ արդեն եղել էր Փարիզում¹, և, ինչպես երևում է, Լուդովիկ XIV-ից ևս հանձնարարություններ էր ստացել հարեջական արքունիքի համար:

Հովհաննես Թուֆուճի այս առաքելությունը ունեցել է բարդ ծախքեր:

Ուղեգրության մեջ հիշատակություն կա, թե նրա երկարատև բնակությունը հարեջական արքունիքում՝ կասկած ու դժգոհություն էր առաջացրել հարեջ հոգևորականության մեջ, ուստի և ինքը խոհեմություն էր համարել հեռանալ այնտեղից:

«...Ձի ոչ կարացաք կալ, վասն օրինացն և հաւատոցն, որ վշտացուցանէին քահանայքն հարց և փորձ առնելովս²»:

¹ Լուդովիկը, Մահանսի Մուրատից ստացած տեղեկության համաձայն, խոսում է Հովհաննես Թուֆուճիի Հարեջասանից «վերադարձի» մասին, որից հետևում է, որ եթե նա Փարիզ էր «վերադարձել», նշանակում է՝ այնտեղից էլ մեկնել էր: Լուդովիկ տեղեկությունը տեղ գրելում էջ 2011

² Երևանի օրինակում:

Լուդովիկը, նույնպես հիշատակելով այս սլարազան, հետաքրքրական մանրամասնություններ է տալիս:

«Այնտեղ տիրող դավանանքը, — ասում է նա, — այնքան հարյուրան է, միայն թե թագավորը զանազան անգամներ հակամիտություն էր հայտնել Հայաստանից բերել տալու արևելային, այսինքն՝ մետրոպոլիտին, զպտիների թանձրամած տգիտության ու կոպտության պատճառով. իսկ դրա համար հարեջ արեղաները կասկածանքով էին նայում նրան, որպես թե այդ պատվին ձգտեր նա և դավանանքով հոռմեական լինելու նրանք դեռ շատ հակառակ են հոռմեական կաթողիկեներին: Ուստի, վտանգից խույս տալու համար, նա շտապեց հեռանալ թագավորության սահմաններից»:

Հայ պատգամավորի՝ Երուսաղեմի արևմտահայ կաթողիկոսության և ֆրանսիական արքունիքի հետ կապված անձնազորություն լինելու պարագան մեղ հնարավորություն է տալիս տեսնելու, թե քաղաքական ինչպիսի՝ բովանդակություն ուներ հարեջական արքունիքում տեղի ունեցած սույն դեպքը:

Մեղ ծանոթ է այն պայքարը, որ Եթովպիայի ավատական իշխանները ոչ միայն ապստամբություններով, այլև կրոնական ձեռնարկ և հարեջ հոգևորականության միջոցով ձգում էին եվրոպական կապիտալի ներթափանցման փորձերի դեմ, որովհետև այդ փորձերին կրոնական բնույթ էր տրվում Եթովպիայում, ինչպես մի շարք այլ երկրներում: Օգտավելով եթովպական կայսրի դժվարություններից՝ XVI դարում Պորտուգալի թագավորներ էմմանուելը (1495—1521 թթ.) և Հովհաննես III-ը (1521—1557 թթ.) նրանց թըշ-

¹ „Religionem Alexandrinam ibi adhuc praepollere, nisi quod Rex crebris sermonibus tractaverit, quod Abbanum seu Metropolitam ex Armentia accersere vellet, ob crassam Coptorum inscitiam et ruditatem, seque propterea suspectu fuisse monachis Habessinibus, tanquam ipse hanc dignitatem affectaret, atque Romano Religioni addictus esset. Quippe eos Catholicis Romanis adhuc valde inimosos esse. Quomobrem periculi evitandi causâ maturè ex Regno excessisse“, — „Ludolfi ad suam Historiam aethiopicam antehac editam Commentarius“, p. 266.

նամինների դեմ դիմվորական օգնության հետ միասին հիսուսյան միսիոնարներն էին ուղարկում եթովպիա: Նույնիսկ, 1550 թվականից սկսած, եթովպական եկեղեցու համար նշանակվել էին պատրիարքներ, ինչպես Հովհաննես Նունյեզը և ապա Անդրեաս Ալիեզոն, թեև նրանց այդ պաշտոնը մնաց միայն անվանական, որովհետև կաթոլիկությանն ընդդիմադիր շարժումը շատ ուժեղ էր: Այնուհանդերձ՝ եթովպիայի կայսրերից մի քանիսը, օժանդակություն ստանալու հույսով ցանկանալով հարարերություններ հաստատել Եվրոպայի հետ, իրապես աշխատել էին կրոնական հեղաշրջում առաջ բերել երկրում, զամանական կապերը խզել Ալեքսանդրիայի դպտի պատրիարքության հետ և հոռոմեազավան մետրոպոլիտներ ունենալ: Այդպիսիներից էին եղել, օրինակ, Զաղենդել կայսրը, որ 1604 թվականին Ապանիայի թագավորից խնդրել էր մի պատրիարք ուղարկել Հարեշտան, և Սուանյոս կայսրը, որ պապից և Սպանիայի թագավորից նույնպես խնդրել էր մի պատրիարք ուղարկել և որպես այդպիսին՝ 1625 թվականին եթովպական արքունիքն էր հասել պորտուգալցի հիսուսյան կրոնավոր Ալֆոնս Մենդեզը: Սակայն կաթոլիկությունն ու եվրոպական ազդեցությունը եթովպիայում արմատավորելու այս փորձերը զուր էին անցել և, ընդհակառակն, հակակրօնք ու խիստ հալածանք էին առաջ բերել եվրոպացիների դեմ, հատկապես 1632 թվականից սկսած, երբ գահ բարձրացավ Ֆացիլիդասը¹:

Ներկա դեպքում մենք հանդիսատես ենք Լուդովիկ XIV-ի կողմից եվրոպական կապիտալի ներթափանցման մի նոր փորձի դեպի եթովպական հարուստ երկիրը՝ դարձյալ կրոնական ձևի տակ, բայց՝ հայերի միջոցով: Արևմտահայ կաթողիկոսությունը, որ արևմտահայ ժողովրդի աղատազրը-

ման գաղափարը-լրա էր հենվում և այդ բանի իրագործումը հանդամանքների բերմամբ լատինական Եվրոպայի հետ էր կապում, փաստորեն ինքն իսկ Արևելքում եվրոպական կաթողիկ պետությունների և հատկապես Ֆրանսիայի հետապրնդած ներթափանցման քաղաքականության ջատագովն ու գործակալն էր հանդես գալիս. այնպես որ Լուդովիկ XIV-ը հենց նույն կաթողիկոսության միջոցով էլ փորձում էր կաթողիկոսության և ֆրանսիական կապիտալի մուտքն ապահովել այնտեղ Հովհաննես կայսրի հետ բանակցելով, որպեսզի եթովպիայի պատրիարքները հայերից բերվեն, իսկ մինչև այդ նրանք բերվում էին Եգիպտոսի դպտիներից, ինչպես է և մինչև մեր օրերը:

Սա մի դիվանագիտական միջոց էր, որով Լուդովիկ XIV-ը նպատակ ուներ միաժամանակ նաև սիրաշահել հայերին՝ թե՛ նրանց հեղինակությունը բարձրացնելով հարեշների աչքում և թե՛ նրանց տալով այն պատրանքը, թե այս ճանաչարհով Հարեշտանի օգնությունն էլ կապահովվեր աղատազրական խնդրի համար:

Մեր կարծիքով հայ-ֆրանսիական այս կրկնակի պատգամավորության հանդամանքն է, որ պիտի լիներ եթովպիայի կայսրի կողմից Հովհաննես Թուֆունջիին ցույց տրված այնքան արտակարգ ուշադրության ու բարյացակամության պատճառը: Այսպիսով՝ Երուսաղեմի արևմտահայ կաթողիկոսության պատգամավոր Հովհաննես Թուֆունջիի եթովպիա ուղևորության նպատակը քաղաքական էր և կապ ուներ աղատազրական խնդրի հետ: Նշենք, որ Հովհաննես Թուֆունջիի ուղևորության հրատարակիչ Արշ. Ալպոյաձյանն էլ, անկախաբար մեզանից, ուղևորության բնագրի և հարակից մի շարք հարցերի զննությամբ գալիս է այս եզրակացության. ինչպես և, դարձյալ անկախաբար մեզանից և մեր ներկա աշխատության մեջ արժարժված ու լուսաբանված խնդիրներից, գալիս է այն եզրակացության, թե Հովհաննես Թուֆունջիի առաքելությունը հավանաբար կապ ուներ 1683 թվականին Փարիսիցում հավաքված հայերի և Լուդովիկ XIV-ի հետ, թեև

¹ „Mémotre sur l’Ethiopie“, հետևյալ ժողովածուի մեջ. „Lettres édifiantes et curieuses concernant l’Asie, l’Afrique et l’Amérique, avec quelques relations nouvelles des Missions, et des notes géographiques et historiques, publiées sous la direction de M. L. Aimé-Martin“, t. I, Paris, 1838, p. 629—637.

առանց կարողանալու ավելի որևէ բան ասել այդ մասին: Նրա կարծիքներն, որևմն, ուղղակի կամ անուղղակի նեցուկ են հանդիսանում մեր դրույթներին՝ Հովհաննես Թուֆունջիի այս ուղեորության հետ կապված հիմնական հարցերում:

Հովհաննես Թուֆունջիի այս ուղեորությունը, այո՛, կապ ունի 1683 թվականին Փարիզում հավաքված հայերի, կամ, ինչդիպե ասել ենք նախորդ դիտում, հայկական պատվիրակության, և Լուդովիկ XIV-ի հետ. և նա, նեզուսի արքունիքում իր առաքելությունը կատարելուց հետո, կրկին անցել էր Եվրոպա, ուղղվելու համար դեպի ֆրանսիական արքունիքը: Նա հենց 1680 թվականի վերջերին հասել էր Փարիզ, սրտեղ այդ նույն միջոցին գտնվում էր նաև Մահաեսի Մուրատը¹: Իսկ 1683 թվականի փետրվարին նա դարձյալ այնտեղ էր և, Մահատեսի Մուրատի, Ջաբարիա Միսիանցու և մյուսների հետ, այցելություն էր տալիս Վերսալի արքայական ապարանքներին և պարտեզներին: Մակայն նույն թվականի վերջերին նա արգեն Փարիզում չէր գտնվում²:

Այնուհետև մենք այլևս չենք կարողանում հետևել Հովհաննես Թուֆունջիի հետքերին Եվրոպայում, ինչպես արդեն 1683 թվականից հետո հնարավորություն չունենք ազատագրական շարժման ընթացքին հետևելու, ուստի և շարժման՝ կանդիալի վերջավորումով սկսվող երկրորդ շրջանի վախճանն էլ մնում է անհայտություն մեջ:

Բայց մեր առաջ մնում է դեռ Հովհաննես Թուֆունջիի վերջին առեղծվածը:

¹ Ըստ ուղեգրության՝ Հովհաննես Թուֆունջին 1680 թվականի հոկտեմբերին մեկնել էր Ալեքսանդրիայից, տե՛ս վերևում, էջ 198—197: Իսկ Լուդովիկի վկայությունը՝ Մահաեսի Մուրատը 1683 թվականի վերջերին նրան ասել էր, թե Հովհաննես Թուֆունջին Եթովպիայից վերադարձել էր «մտաւորապէս շոքա տարի առաջ», տե՛ս վերևում, էջ 201:

² Այնպես որ Լուդովիկ Մահաեսի Մուրատից է միայն, որ կարողանում էր քաղել Եթովպիայի մասին այն մի շարք տեղեկությունները, որ բերել էր Հովհաննես Թուֆունջին. հմմտ. „Ludolf ad suam Historiam aethiopicam antehac editam Commentarius“, p. 265—266.

Հովհաննես Թուֆունջին՝ տեսանք, որ, ըստ անանուն տաբեղարդի, «եղև դուռն ազգին Տոսնկաց»: Թեև մեզ հայտնի չէ, թե այս վկայության տակ պատմական ի՞նչ բովանդակություն ու պարագաներ կան թաղված, բայց բնավ զարմանալի չէ, եթե Լուդովիկ XIV-ը ֆրանկներին «գլուխ» լինելու պատիվն էր արել «Հայաստանի կաթողիկոսի պատգամավորին», քանի որ «Արև-Արբալի» քաղաքականությունն էր ոգևորել հայ գործիչներին՝ արևելյան հարցում որևէ հարմար առիթով հենվելու համար նաև հայերի վրա: Լուդովիկ XIV-ը, հազիվա՛նակներից արբեցած և փառքի գազաթնակեհան հասած, այս թվականներին առավել ևս հետամուտ էր Արևելքի բրիտանյա ժողովուրդներին սիրաշահելու և նրանց հետ ունեցած կապերն ամրապնդելու, որովհետև ո՛չ միայն չէր հրաժարվել Արևելքի հարցից, այլև ավելի քան երբեք գործնականորեն հետապնդում էր այդ Թուրքերի դեմ արշավելու նրա իրական ծրագրերն արգեն այս շրջանին ևս պատկանում: Ը՛իշտ է, թե 1682 թվականին էլ, երբ Թուրքերը պաշարել էին Վիեննան, նա կամեցել էր Վեոպոլոզ կայսրին օգնության գալ, բայց կայսրը վախենալով մերժել էր նրա օգնությունը, ուստի՝ նա ակամա հրաժարվել էր խաչակրությունից. ինչպես ասում է Դրասկոյունը՝ «բրիտանեական հասարակությունն էր, որ, արդարացիորեն կասկածոտ, նրան արդելք էր եղել անհավատների դեմ կռվելու»: Իսկ դրանից հետո նա սկսել էր խաչակրության իր սեփական ծրագրերը մշակել: 1685—1687 թվականներին Միջերկրականի թուրքական ափերը հետախուղել էր տվել, ինչպես տեղեկանում ենք Փարիզի Ազգային Մատենադարանում պահված ձեռագրից, որի մեջ ամփոփված են այդ ծրագրի մանրամասնությունները. «Պատկեր այն վայրերի, որ մահմեդական իշխողներն ունեն Միջերկրականի ափերի վրա և որոնց հատակագծերը հանվել են Քաղավորի հրամանով Արևելքի նավահանգիստներին տրված այն այցելություն ժամանակ, որ նորին

¹ L. Drapayron, „Un projet français de conquête de l’Empire Ottoman au XVII^e et au XVIII^e siècles“, *Revue des Deux Mondes*, t. XVIII, 1876, 1^{er} livr., p. 145.

Վեհափառությունը կատարել ավելց 1685, 1686 և 1687 թվականներին՝ զեպի այդ վայրերը արշավանք կատարելու և դրանց տիրելու նպատակով» («Estat des places que les princes mahométans possèdent sur les costes de la mer Méditerranée et dont les plans ont esté levez par ordre du Roi à la faveur de la visite des eschelles de Levant, que Sa Majesté a fait faire les années 1685, 1686 et 1687. avec les projets pour y faire une descente et s'en rendre maître»)։ Կազմվել էր նաև մի քարտեզ, որը, ծրագրին համապատասխան, ցույց էր տալիս այն վայրերը, որոնք պիտի գրավվեին Ֆրանսիայի և նրա դաշնակիցների կողմից։ Այդ քարտեզը խորագրված էր՝ «Թուրքական Մուլթանի կայսրության երկրները եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում, բոլոր բեկիրբեղությունների բաժանումներով, որանց նշանակված են նաև նրան հարկատու երկրները։ Գծված ըստ Նորադուն Հազարգազությունների, Բուրգունդիայի Մեծաշուք Գրեի գործածության համար, նրա ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայող Ժակոպի կողմից» («Estats de l'Empire du Grand Seigneur des Turcs en Europe, en Asie, et en Afrique, divisé en tous ses Beglerbeglicz, ou Gouvernements, où sont aussi remarqués les Estats qui luy sont Tributaires. Dressé sur les plus Nouvelles Relations, et à l'Usage de Monseigneur le Duc de Bourgogne, par son tres Humble et tres Obeissant Serviteur H. Jaillot»)։

Ուրեմն՝ Լուդովիկ XIV-ը գործնական աշխատանքների

էր ձեռնարկել 80-ական թվականների կեսերից սկսած։ Նրա հայտնի գործակալներից մեկն էր Ռազոն (Razaut), որը 1687 թվականին զեպի Արևելք էր մեկնել, պաշտոն ունենալով «հետախուզելի Հունաստանի և Միրիայի ծովափերի այն բոլոր վայրերը, որոնք հարմարություն են ներկայացնում հարձակման համար» և այլն¹։

Վերոհիշյալ ծրագրի և քարտեզի համաձայն Ֆրանսիան պիտի գրավեր Մորեան, Աքայիան, Քեսալիան, Մակեդոնիան, Սերբիան, Բուլղարիան, Ռումելիան և Արշիպելագյան կղզիները։ Լեհաստանին ընկնում էին Վալաքիան և Մոլդավիան, իսկ Վենետիկին՝ Սլավոնիան (Esclavonie), Խորվատիան, Բոսնիան, Դալմատիան, Ալբանիան և Եպիրոսը²։ Լուդովիկ XIV-ի ծրագրերը ավստրիական կայսրին թողնում էր այն բոլորը, ինչ որ նա գրավել էր Թուրքերից և Հունգարիայի այն մյուս մասերը, որոնք զեռ թուրքական տիրապետության տակ էին գտնվում³։

Իհարկե՝ Լուդովիկ XIV-ի ծրագրի բովանդակությունը հայտնի չէր հրապարակին և այդ պատճառով խաշակրություն ծրագրողները, շիմանալով թե Օսմանյան կայսրության ո՞ր մասերը սեփականացնելու դիտավորություն ունեւր «Արև-Արբան», բաշխումներ էին կատարում ըստ իրենց հայեցողության։ Այսպես օրինակ՝ հեծելազորի նախկին կապիտան Հայր Ժան Կոպենը (Jean Copin) 1686 թվականին հրատարակած իր ծրագրով⁴ Ֆրանսիային տալիս էր Կոստանդինուպոլիսը, Ալբերտուպոլիսը, Բրուսան, Կորնթոսը, Բոնան (Bône), Թունիսը, Եգիպտոսը և Փոքր Ասիան՝ մինչև Տրապիզոն⁵,

¹ T. G. Djuvara, „Cent projets de partage de la Turquie“, p. 232, Th. Lavalée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 324.

Լուդովիկ XIV-ի այս ծրագրը, որ գտնվում է Գրավիե ԳՕրտիերի (Gravier d'Ortières) ձեռագրում, ամբողջությամբ հրատարակվել է H. Omont-ի կողմից, „Projets de prise de Constantinople et de fondation d'un Empire d'Orient sous Louis XIV“, *Revue d'Histoire Diplomatique*, 1893, № 2, p. 195—246.

² Այս քարտեզը կարելի է տեսնել T. G. Djuvara-ի մոտ, էջ 234—235։

³ Th. Lavalée, „Histoire de l'Empire Ottoman“, p. 324.

⁴ T. G. Djuvara, „Cent projets de partage de la Turquie“, p. 232.

⁵ Ibidem, p. 234.

⁶ P. Jean Copin, „Le Bouclier de l'Europe“, imprimé au Puy et se vend à Lyon chez Ant. Briasson, 1686.

⁷ T. G. Djuvara, „Cent projets de partage de la Turquie“, p. 238. L. Drapayron, „Un projet français de conquête de l'Empire Ottoman“ etc., p. 142—143.

ուրեմն և՛ Հայաստանը: Այսպես և հայերը նմանապես անտեղյակ լինելով Լուզովիկ XIV-ի ծրագրի իրական բովանդակությանը և միաժամանակ առաջնորդվելով Կոպենի և ուրիշների հրատարակություններով, անտարբեր չէին կարող լինել նրա ծրագրի մասին շրջան անող զրույցներին ու նրա օրորիչ խոստումներին: Բայց, համենայն դեպս, Լուզովիկ XIV-ի անվան հետ կապված՝ դեպի Արևելք արշավելու ծրագիրն իրապես գոյություն ուներ: Ամբողջ Եվրոպան դենքի ուժով կարգի բերելուց հետո՝ «Արևելքի քրիստոնեության պաշտպանն» իսկապես մտածում էր մի հարված էլ «մահմեդական» կայսրությանը տալ, օգտագործելով Օսմանական կայսրության լծի տակ տառապող քրիստոնյա ժողովուրդների, դրանց թվում և հայերի, ապստամբական արամազրություններն ու նախապատրաստությունները:

Մակոյն ժամանակի փոփոխական պայմանները թույլ չէին տա այդ բանը: Թեև 1684 թվականին հաղթականորեն կնքելով Ռեզենսբուրգի դաշինքը Մյանխայի և Ավստրիայի հետ՝ Լուզովիկ XIV-ը քսան տարվա համար զինադադար էր պարտադրել իր թշնամիներին, իբր երաշխիք գրավման տակ առնելով մի շարք շրջաններ¹, բայց 1686 թվականին Հոլանդիայի շտատհալտեր Վիլհելմ III Օրանցու ջանքերով դարբերվել էր եվրոպական մի նոր զինակցություն, որը ծանոթ է «Աուգսբուրգյան Լիգա» անունով և որի մեջ մտել էին Ավրյտրիան, Սպանիան, Շվեդիան, Հոլանդիան, գերմանական երկրներին՝ Բրանդենբուրգը, Բավարիան, Պալատինատը, Ֆրանկոնիան, Շվաբիան և այլն, ինչպես և Մավրիան, Հոլշտեյն-Քոտտորպի գրությունը և ուրիշներ, իսկ 1689 թվականին՝ նաև Անգլիան: Ֆրանսիայի փառատենչ արքայի աջ ու ձախ կատարած նոր ոսնձգությունները կայսրության մի շարք շրջաններում (Քյոլնի, Պալատինատի և Մաչնցի կուր-

Ֆյուրստություններում և այլն)² ոտի էին հանել շուտով կոալիցիային: Պատերազմը, որ բռնկվել էր 1689 թվականին և տևել էր երկար՝ մինչև 1696/97 թվականները, բազմաթիվ ճակատների վրա սպառելով ինչպես դաշնակիցների, նույնպես և Լուզովիկ XIV-ի ուժերը, մեծապես նսեմացրել էր Ֆրանսիայի հմայքը և անկման թվական բացել³:

Լուզովիկ XIV-ն, ուրեմն, ժամանակ և հնարավորություն չէր ունեցել իր արևելյան ծրագրի իրագործման ձեռնարկելու և այլևս չէր էլ ունենա, որովհետև նույնիսկ Ռիսվիկի հաշտությունից (1697 թ.) հետո, որը վերջ դրեց Աուգսբուրգյան Լիգայի պատերազմներին, Ֆրանսիան շարունակեց անգաղղում պատերազմների մեջ լինել իր հարևանների հետ՝ մինչև Լուզովիկ XIV-ի մահը (1715-թ.):

Իսկ եթե նկատի ունենանք նաև այն, որ Լուզովիկ XIV-ի երկարատև իշխանության վերջում տնտեսապես ինչպիսի՜ անկման վիճակի մեջ էր գտնվում Ֆրանսիան, մեզ հասկանալի կդառնա, որ բոլորովին ավելորդ բան էր այլևս արևելյան հարցի մասին մտածելն անգամ: Խոսելով Ֆրանսիայի այդ ժամանակվա ներքին տխուր վիճակի և նրա պատճառների մասին, էրնեստ Լավիսան ասում է իրավամբ, թե «Լուզովիկ XIV-ը հյուծեց ֆրանսիական միապետությունը»², և սա ինքնին բավական է արդեն, որ մենք վերջակետը գրված համարենք արևելյան հարցում նրա ունեցած բոլոր հավակնություններին:

Մակոյն՝ Հովհաննես Թուրոնշիի հարցը զեռ մնում է լուծման կարոտ:

Արդյոք թյուրիմացության մեջ է վասպուրականի տարեգրողը, երբ ասում է, թե նա ֆրանկների զուլու լինելով, «եկն ի վերայ թուրքին»:

Մենք առայժմ ի վիճակի չենք այս հարցը լուսարանելու բայց, համենայն դեպս, ստույգ է, որ Ֆրանսիան այս թվա-

¹ E. Lavisse, „Histoire de France“, t. VII, part. II, p. 362—363.

² E. Lavisse, „Histoire de France“, t. VIII, part. I, p. 8—47. E. Lavisse et A. Rambaud, „Histoire générale“, t. VI, p. 121—139.

³ E. Lavisse, „Histoire de France“, t. VIII, part. I, p. 477.

կաններին, այսինքն 1683 թվականից հետո, որևէ մարտական հյույժ չի ունեցել թուրքերի դեմ, որպեսզի կարողանայինք ասել, թե Հովհաննես Թուֆունջին մասնակցած լինի մի որևէ արշավանքի: Գիտենք, որ Լուզովիկ XIV-ը նույնիսկ շմասնակցեց Իննոկենա XI պապի շանքերով 1684 թվականին կազմվող Սրբազան Լիգային. այնպես որ այս հարցը առայժմ մնում է անրացատրելի:

Ուրիշ խնդիր է սակայն, եթե ֆրանկներ անվան տակ մենք անպայման ֆրանսիացիներին չհասկանանք:

XVII դարում հայերը ֆրանկ էին անվանում ոչ միայն Եվրոպայի կաթոլիկ ժողովուրդներին, այլև ընդհանրապես բոլոր Եվրոպացիներին¹:

Այս պարագային հնարավոր է լինում որոշ բացատրություն գտնել, որովհետև 80-ական թվականների երկրորդ կեսին և 90-ական թվականների ամբողջ ընթացքում իսաչակրական արշավանքներ տեղի ունեցան թուրքերի դեմ: Սրբազան Լիգային, որը կոչվեց «14-րդ խաչակրություն», մասնակցեցին Ավստրիան, Լեհաստանը, Վենետիկը և Մալտան (1684 թ.), որոնց միացավ հետո նաև Ռուսաստանը (1686 թ.): Խաչակիրները մեծ նվաճումներ կատարեցին այդ երկարամյա պատերազմների ընթացքում և Կարլովիցի հաշտության մր (26 հունվ. 1699 թ.), որը վերջ դրեց այդ արշավանքներին, Ավստրիան ստացավ Հունգարիան՝ բացառությամբ Բանատի (Banat de Temesvar), Տրանսիլվանիան և Սլավոնիայում Սիրմիայի մեծագույն մասը: Վենետիկը տիրացավ Դալմատիայի մի մասին, ամբողջ Պելոպոնեսին՝ բացառությամբ Կորնթոսի, և

¹ Հետաքրքրական փաստեր տե՛ս Ա. Ղոս Հովհաննիսյան, «Գրվագներ հայ ազատագրական մարտի պատմության», զիբր Ա, էջ 85—86, զիբր Բ, էջ 510—511:

XVII դարում ֆրանկ անվան տակ հասկացվում էին Եվրոպայի լատինական, տևտոնական և սլավոնական լեզուներով խոսող ըստը ժողովուրդները, հմմտ. «Գանձ շափոյ, կշոյ, թըոյ և զրամից բոլոր աշխարհի... ժողովեալ և ի մի վայր հաւաքեալ աշխատութեամբ Ղուկասու աղաշնորճ ջանքնկալի Վանանդեցւոյ», Ամստերդամ, 1699, էջ 50:

Յգինա ու Սանտա-Մարիա կղզիներին, իսկ Ռուսաստանը ստացավ Ազովը²:

Հովհաննես Թուֆունջին կարող էր մասնակցած լինել այս արշավանքներին՝ ավստրիական, լեհական կամ վենետական բանակներից մեկի կամ մյուսի մեջ³: Այս դեպքում հարկ կլինի գուցե ենթադրել, որ խաչակրական արշավանքների «կապելուց հետո, Հովհաննես Թուֆունջին Վերսայից հուսահատ հեռանալով՝ գնացած լինի Սրբազան Լիգայի դրոշի տակ մտնելու, տեսնելով որ Լուզովիկ XIV-ը չի մասնակցում նրան: Բայց ավելի հավանական է, որ նա հենց Լուզովիկ XIV-ի հանձնարարությամբ անցած լինի լեհական բանակների մեջ՝ թուրքերի դեմ շարժվելու համար, որովհետև Սրբազան Լիգայի անդամներին մեջ Լեհաստանը ամենամոտիկն էր Ֆրանսիային՝ անցյալ խնամիական ու բարեկամական հարաբերություններով³:

Համենայն դեպս Հովհաննես Թուֆունջիի հարցը դեռևս մնում է առեղծված:

Դրա հետ միասին ազոտ է մնում, ուրեմն, նաև արևմտահայոց ազատագրական շարժման երկրորդ շրջանի ու այս շրջանի հայ-ֆրանսիական հարաբերությունների վերջին սահմանը՝ հարակից բոլոր պարագաներով:

Տարակույս չկա, որ խաչակրական արշավանքների հանդեպ Լուզովիկ XIV-ի ունեցած ձեռնպահությունը որոշ շափով

² J. de Hammer, «Histoire de l'Empire Ottoman», t. III, liv. LVIII—LX. Th. Lavallée, «Histoire de l'Empire Ottoman», p. 345—356. E. Lavisse et A. Rambaud, «Histoire générale», t. VI, p. 842—847.

³ Օրինակ՝ 1685 թվականին Հունգարիայում Բուդա ամրոցի ազատագրման զործում հայտնի է հայազգի Գարրիել Թորաթեցու ունեցած կարևոր դերը՝ իր հետախուզական զործունեությամբ, տե՛ս Յ. Սյուր, «Новые данные о Габриеле Токатеци», Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, հասարակական գիտություններ, 1961, № 1, էջ 109—106.

³ Հմմտ. E. Lavisse, «Histoire de France», t. VII, part. II, p. 201—202.

հիասթափութիւնն պիտի պատճառած լինի հայ գործիչներին,
իսկ տակաւին 1707 թվականին էլ մի անձանոթ հայ գրիչ
միամիտ ու բարեմիտ հպարտությամբ Փարիզն անվանում է
«բաղար Տրանկաց և Հայոց»¹:

¹ Ստ. Կահանյան, «Ցուցակ հայերէն ձեռագրերի թիֆլիզե
ներսիսեան ձեռագր Գլխանոցի», թիֆլիս, 1893, էջ 18:

ԳՒՌԻՍ ԺԲ.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՇԱՐԺՄԱՆ ՎԱՅՃԱՆԸ
ԵՎ ՆՐԱ ԵՐԿՈՒ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՆՍԱՍԱԿԱՆԸ

Արեւմտեայ շարժման դադարու՞մը դարավերջին. — Մանսեփ Մուս-
տփ մահը (1684 թ.). — Հովհաննէս Քարունջին Տրապիզոնում (1698 թ.). —
Երա մահը (1703 թ.). — Գնահատական եզրակացութիւններ. — Հայկական
բազմութեան վերականգնման գաղափարը. — Պատմութեան գրգռը և
Սեբաստիայի 1562 թվականի ժողովը. — Արժունչաց բազմութեան
հիշատակները և Վասպուրականի Սմբատ բազմութեան (1465 թ.). — Ազրա-
մարի «հայրապետական ու բազմութեան» արողը. — Անցյալի ու ներ-
կայի հակադրութիւնը և հայկական բազմութեան երազը. — «Ժողո-
վուրդների ազատագրութեան» իմաստը եվրոպացիների մոտ. — Ազգա-
սուրբան Հայր Օտտոմանը և ազգա աշան. — Քարունջի մականը և
տեղական ժողովուրդները. — Ժողովուրդների ներքին ու ստրկացման յուր-
հատուկ միջոցները. — Հայր-Օտտոմանյան ծրագիրն՝ անիրագործելի. —
Դաշնակիցների հարաբերութիւնները Կրեմլի պատերազմի վերջերին. —
Մոլիեռոյի առաքելութիւնը և բյուրիմացութիւնը Փարիզի ու Վենետիկի մի-
ջև. — Հայր Օտտոման բյուրիմացութիւնների առաջին՝ Փարիզի և Վատի-
կանի միջև. — Լուդովիկ XIV-ի «կասկածաբեկներն» իր դաշնակիցների հան-
դեպ. — Ռուսաստանի մասնակցութեան և Կ. Պոլսի ժառանգութեան խնդիրը
հայր-Օտտոմանյան ծրագրերի տեսանկյունից. — Լուդովիկյան ծրագրերի
արգելակող պատճառները. — Կոլլերը և Դը Լիոնը. — Ֆրանկ-պատերազմական
հակամարտութիւնը. — Ֆրանսիան և Սերբական կիզան. — Լուդովիկյան
ծրագրերի անիրագործելիութիւնը. — Լուդովիկյան ծրագրերը կապ չունենին
ժողովուրդների ազատագրութեան խնդրի հետ:

Հեռավոր արևելյիների համար օգնության ամեն հույս մեռնում էր XVII դարի վերջերին, որովհետև Լուդովիկ XIV-ն իր տեղից իսկ չէր շարժվել խաչակրական արշավանքների ժամանակ, թեև ուզեց և այն պատճառով, որ մյուս կողմը կանգնած էր Աուգսբուրգյան Լիգան՝ նման մի առիթից օգտվելով նրան զոհանելու համար: Արդեն Կարլովիցի դաշնագրով մյուս խաչակիր պետություններն էլ իրենց տեղն էին նստել՝ յուրաքանչյուրն իրեն համար որոշ տերիտորիաներ յուրացնելով: Ազատագրական շարժման ղեկավարները՝ արևմտահայ խոջայությունն ու նրան վիճակից հոգևորականությունն անշուշտ կարողացան համոզվել, թե դատարկ բան էր հայոց փրկությունը ձեռք բերելու համար քրիստոնյա եվրոպայի գոտերը թակելը. ավելի քան քսան տարվա ջանքերն ու սպասումներն իզուր էին անցել: Եվրոպայի «ազատ» քրիստոնյաներն իրար բզկտելն տվելի կարևոր էին գտնում, քան արևելյան բռնակալության ճիրանների տակ տվյալ քրիստոնյա ժողովուրդների ազատագրումը, ինչպես ցույց էր տվել, առանց շատ հեռունները գնալու, պատմությունը ամբողջ XVII դարի, որի ընթացքում նրանք բազմաթիվ ահաբաններ էին խաչակրություն ծրագրել, բայց երբեք չէին կարողացել միահամուռ ճակատ ստեղծել: Այդ ցույց էր տվել և պատմությունը վերջին՝ «14-րդ խաչակրության», որի բախտը, իհարկե, տարբեր կլիներ, եթե Ֆրանսիան ձեռնադաճ եղած չլիներ նրանից, թեև հաջողության դեպքում էլ դարձյալ Արևելքի ստրկացված ժողովուրդների համար տարբերություն չէր լինի, քանի որ խաչակիր պետություններն իրենց նվաճած երկրները յուրացնում էին պարզապես, առանց որևէ ինքնուրույնություն տալու տեղական ժողովուրդներին:

Այսպես թե այնպես՝ XVII դարի վերջում արևմտահայերի ազատագրական այս շարժումը դադարել էր՝ երկու առանձին շրջաններ՝ բոլորելով: Մահտեսի Մուրատը 1683 թվականի վերջերին դեռ գտնվում էր Փարիզում, ինչպես տեսանք Լուդովիկի հաղորդած տեղեկություններից, բայց այնուհետև

արդեն տեղեկություն չունենք նրա մասին: Թվում է, թե նա հաջորդ 1684 թվականին մահացել է Ջմյունիայում¹:

Իսկ Հովհաննես Թուֆունջին հուսահատ ու ձեռնունայն Արևելք էր վերադարձել, հայանի չէ թե ե՛րբ: Միայն գիտենք, որ նա 1692 թվականին Կահիրեում էր դարձյալ², իսկ 1698 թվականին՝ Տրապիզոնում, որտեղ ականատես էր եղել Կիրակոս անուն պատանու նահատակությանը և Ամենափրկիչ վանքի առաջնորդ Հակոբ վարդապետի հետ թաղել էր նրան. ինչպես կարդում ենք նրա ինքնագիր հիշատակարանում՝ քաղաքի Չարխափան եկեղեցու ձեռագիր «Յայամաուրը»-ի մեջ: Ընս Յովհաննէս վարդապետս որոյ մականունն Թուֆունջի կոչի, և առաջնորդ սուրբ Ամենափրկիչին Յակոբ վարդապետ՝ եղեալ ականատեսս այս սուրբ նահատակիս. և ես Յովհաննէս արք եպիսկոպոսս սուրբ իմովք ընթացայ և գրկախառն համ-

¹ Անձանոթ սճե, որը սեփականատերն է եղել Երևանի Պետական Մատենադարանի № 1677 ձեռագրի, նրա դատարկ էջերի մեջ, Ջմյունիայում, հիշատակագրել է մի քանի դեպքեր, որոնց շարքին՝ «Թվին թե՛՛՛ Գ նոյնմայլերի. ամտոյ ԻՍ Պճճայ Մուրատն առ աստուած փոխեցաւ, աստուած իւր գատաստան քայցրացնէ» (էջ 117բ): Եթե այս Պճճայ Մուրատն ուրիշ մեկը չէ, այն ժամանակ կունենանք հայոց ժամով պատմիրակի մահվան թվականը: Եվ անհավանական չէ: Ջմյունիան այն բանուկ նավահանգիստն էր, որի միջոցով տեղի էր ունենում Անատոլիական դավաճանների զլխավոր երթևեկությունը դեպի Եվրոպա և որտեղ կարող էր իրոք պատահել Մահտեսի Մուրատի մահը: Նշենք, որ 1678 թվականին ես Մահտեսի Մուրատի ծննդավայրում՝ Բաղնջում պատահում ենք մի համանուն անձի, որը նույն քաղաքի Ս. Կիրակոս եկեղեցուն նվիրում է Դավիթ Շնճզուկի ձեռքով ընդօրինակված մի երկաթաղբի պիեսարան: Նրա հիշատակարանում գրված է. «Արդ ես Մահտեսի Մուրատս ստացայ զսուրբ Աւետարանս, և ետու զսա յիշատակի զուռն Սուրբ Կիրակոսին և Կարմիր-ակ Սուրբ Նշանին և մի ոք...», տես՝ Դ. Փիրզալիմյանի հիշատակարանների ժողովածուն, Երևանի Պետական Մատենադարանի ձեռագիր № 4515, էջ 531:

² Կահիրեի Փրանսիական հյուպատոս Դը Մայլեն գրում է, որ 1692 թ. հայ եպիսկոպոսն իրեն անձամբ պատմել է դեպի Նեղոսի ակունքները կատարած իր ուղևորության մասին, տե՛ս Abbé Le Mascrier, «Description de l'Egypte», p. 39 (Տե՛ս նաև վերևում, էջ 201, ծան. 2):

իրավակարգի տակ «բազում պանդխտութեամբ և անհանգըստութեամբ» էր անցկացնում իր կյանքը, 1648 թվականին գրում էր Աղթամարի կաթողիկոսական աթոռի մասին. «Տէր աստուած պահեսցէ անասան և անսայթաբ զաթոռ հայրապետական և զթագաւորական»¹: Իսկ ընդհանրապես արդեն հայ հիշատակագիրները ժողովրդի ողբալի կացութիւնը նկարագրելիս ակնարկութիւն էին անում գոյութիւնից զաղարած հայոց թագաւորութեանը, իբր հակադրութեան եզրի, ցույց տալու համար ներկայի և անցյալի տարբերութիւնը, ինչպէս, օրինակ, տեսնում ենք Հովհաննէս գրչի մոտ, որը 1648 թվականին այսպէս էր գրում Մոկաց քաղաքում.

«Եւ ի թագաւորութեան Հայոց ազգի,
Որ խափանեալ և ոչ երևի.
Նւ հարկաւսահանջութեամբ ազգս տապալի
[Յ]այլասերից ազգէ նետողի»²:

տական և զթագաւորական մերոյ աղին» կամ «Տէր աստուած պահեսցէ անասանելի զաթոռ հայրապետական և զթագաւորական, զի յիշելով զանուանս նոցա սասանեալ սաբրին (կամ թաքչին) և ո՛չ ևս երևին թշնամիք ճշմարտութեան»։ այսպէս՝ Հովհաննէս գրչիը 1336 թվականին (Ն. Լալայան, «Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ Ա, Քիֆլիս, 1915, էջ 194), Ստեփանոս գրիչը 1404 թվականին (Երևանի Պետ. Մատենադարանի ձեռ. № 5727, էջ 297ր), նույն Ստեփանոսը 1420 թվականին (տե՛ս Ղ. Փիրղալեմյան, «Յիշատակաբանք կամ նշխարք պատմութեան հայոց», հտ. Ա, Երևանի Պետ. Մատենադարանի ձեռ. № 6273, էջ 333ր), Մահտեսի ներսոսը (?) 1431 թվականին (տե՛ս Ղ. Փիրղալեմյան, «Նոտարք հայոց», Կ. Պոլս, տպագր. Նիշան Կ. Պերպլըյան, անթվական, էջ 97), Իսրայել գրիչը 1447 թվականին (տե՛ս Երևանի Պետ. Մատենադարանի ձեռ. № 4923, էջ 362ա. և Ղ. Փիրղալեմյան, «Նոտարք հայոց», էջ 156), Հովհաննէս գրիչը 1460 թվականին (տե՛ս Երևանի Պետ. Մատենադարանի ձեռ. № 7566, էջ 293ր), նույն Հովհաննէսը 1486 թվականին (Ն. Լալայան, «Յուցակ», պրակ Ա, էջ 604), զարձայ նույն Հովհաննէսը 1497 թվականին (տե՛ս Հ. Տաշյան, «Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», էջ 284):

¹ Ն. Լալայան, «Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ Ա, էջ 914:

² Անդ, էջ 910, Երևանի Պետական Մատենադարանի ձեռ. № 4969, էջ 258ա—259ա:

Մենք արդեն տեսանք նաև, թե ի՛նչպէս էր արտահայտվում հայկական թագաւորական գահը վերանորոգված տեսելու տրամադրութիւնը XVII դարի սկզբներում՝ Սարգիս Հիզանցու, Հակոբ Բաթուկենցի և Ազարիա Սասնեցու հիշատակարաններում¹: Նույն իղծը մենք գտնում ենք արտահայտված նաև այս շրջանում, 1674 թվականին Փարթամ գրչի կողմից գրի առնված հետևյալ մաղթանքում.

«Մանաւանդ զազգս Հայկազեան՝ զբաժանեալս և զվարատեալս մեղօք, զցրուեալս ընդ երեսս երկրի իբրև զփուշ մեղացն հողմով ի յազգս և յազիկս և յօտարասեսոս, հալլցեսցաք յամենախինամ և յամենագութ արարչէն, զի որ եհարն՝ զարձեալ բժշկեսցէ և գրգամբ հօգոյն իբրև հաւ զձագս հաւաքեալ ընդ թևօք իւրովք, և ամբաժածով աջովն իւրով հաւաքեալ վերստին ի սեփհական, ի բնիկ և ի հայրենի յերկիրս և ի դաւառս Հայկազեան վիճակի, նոր նորոգեալ նորոգեսցէ իբրև զառաջնաստեղծն պերճ փառօք և բարգաւաճեալ բարի արգասիք կարողացուցցէ, կազդուրացուցցէ, և հաստահիմն արացցէ թագաւորական և քահանայական ճոխութեամբ, և ամենայն օրհնութեամբ բարեաց յաղթող և զօրաւոր արացցէ ընդդէմ ամենայն ներհակաց ճշմարտութեան քրիստոնէականացդ, զվերջինն պայծառ ունելով քան զառաջինն, ամէն»²:

Այս փաստերի մեջ դժվար չէ տեսնել, որ արևմտահայոց ազատագրական ձգտումների և ձեռնարկումների վերև թեատարած իշխում էր հայկական թագաւորութեան վերականգնումն և նրան հրապարակումը:

Երկրորդ հարցի պատասխանը ավելի պարզ է: Փաստաթղթերն ասում են, որ եվրոպացիների կողմից հայերին, հույներին և ուրիշներին տրվելիք «ազատութիւնը» քաղաքական անկախութեան իմաստ չունէր ամենևին:

Ազատագրական շարժման առաջին շրջանի համար դա պարզորեն երևում է Անտոն Գրիմանիի 14 ապրիլի 1668 թ.

¹ Տե՛ս մեր ներածութիւնը, էջ 39—41:

² Բ. Կյուլեւսերյան, «Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից», Անթիլիաս, 1957, էջ 747:

այն նամակից¹, որը խտացումն է Հայր Օտտոմանի ծրագրերի. ըստ որում «Նույներին, քրիստոնյաներին և լավ թուրքերին» պետք էր գննք տալ, որպեսզի նրանք «աջակցեն իր գահակալմանը». ինչ որ նշանակում էր, թե օսմանյան կայսերական գահի վրա փոխանակ մահմեդական սուլթանի, պիտի նստեր մի քրիստոնյա՝ կաթոլիկ սուլթան: Դա կլիներ միակ փոփոխությունը, որն իրականության մեջ որևէ փոփոխություն չէր բերի Արևելքի քրիստոնյա ժողովուրդներին, ո՛չ ըստ ձևի, ո՛չ էլ ըստ բովանդակության: Ըստ ձևի՝ որովհետև օտար տիրապետության լուծք կշարունակեր ճնշել այդ ժողովուրդների վրին, նրանց չէր տրվի ո՛չ սեփական իշխանություն, ո՛չ սեփական հող. ըստ բովանդակության՝ որովհետև այդ ժողովուրդները կպահպանեին ուսույցի այն միևնույն դիրքում, որի մեջ նրանց դրել էր օսմանյան զինվորա-ալատական թեոկրատական իրավակարգը: Հայր Օտտոմանի ծրագիրը գործերի հաջողության համար անհրաժեշտ էր գտնում «ազդաբնակությունների հետ վերաբերվել ճարպիկ ձևով», և իհարկե նրանից հետո հրապարակ կգար լատինական մոլեռանդության ամբողջ խտությունը՝ ոչնչով չտարբերվելով մահմեդական մոլեռանդությունից: Հիշյալ ծրագիրն արդեն նախատեսում էր, որ «նրանցից շատերը կորոշեն ընդդրվել կաթոլիկ հավատը»: Իսկ թե ի՛նչպես նրանք «կորոշեն»՝ մենք կատանենք քիչ հետո:

Շարժման երկրորդ շրջանի համար չի կարելի տարբեր եզրակացություն հանել: Լուդովիկ XIV-ի ծրագրով՝ Ֆրանսիայի կողմից գրավվելիք շրջանները պիտի միանային «Արև-Արքայի» որդիներից մեկի մականի տակ². Հետևաբար չէր կարող խոսք լինել տեղական ժողովուրդների անկախության մասին, Թուրքիայի որ մասն էլ գրավելու լիներ նա: Հենց այս ձևի տակ էլ տիրում էր Ֆրանսիայի կողմից գանազան շրջանների գրավման գաղափարը ժամանակակից այն գրողների

¹ Տե՛ս Վովեբագիր № 8:

² T. G. Djuvara, «Cent projets de partage de la Turquie», p. 232.

ժոռ, որոնք խաչակրության ծրագրեր էին մշակում: Միքայել Ֆեբուրը 1675 թվականին և Հայր Գաբրիել Լոնգոն 1679 թվականին առաջ էին քաշում այն միտքը, թե կարելի էր Օսմանյան կայսրության ավերակների վրա հաստատել երկու առանձին միապետություններ, եվրոպական և ասիական մասերում, Բուրբոնյան երկու իշխանների մականի տակ¹: Ֆեբուրը մինչև անգամ, պարզաբանելով իր ծրագրի այդ մասը, ի միջի այլոց ասում էր, թե հարկ էր յուրաքանչյուր նահանգի վրա մի ֆրանսիացի կուսակալ գնել²: Ուրեմն՝ եթե ֆրանսիացիները նվաճեին Օսմանյան կայսրությունը կամ նրա մի մասը, այդ կկառավարեին ֆրանսիական թագավորի իշխանության տակ ֆրանսիացի կուսակալներով, իսկ տեղական ժողովուրդներին անկախություն չէին տա, ինչպես նկատեցինք նաև վերևում՝ Հայր Օտտոմանի ծրագրի առիթով: Նմանապես այդ ժողովուրդներին նրանք կպահպանեին ստրկության այն միևնույն վիճակում, որի մեջ նրանց դրել էր մահմեդական տիրապետությունը: Հիշյալ Ֆեբուրը չի քաշվել նույնիսկ հրապարակով պարզելու այն ստոր միջոցները, որոնց դիմելու էին քրիստոնյա ժողովուրդների ստրկության շղթաներն ամբարացնելու, մահմեդական ճնշող տիրապետությունը լատինական անհանդուրժող իրավակարգով փոխարինելու համար: Կիրառվելիք այդ միջոցներից զխալտոնները հետևյալ-ներն էին. բոլոր եկեղեցիներն ընդհանուր դարձնել և «ազանդաներին» (ոչ-կաթոլիկներին) թույլ չտալ, որ նրանք ասեն՝ «ֆրանկների եկեղեցի», «հույների եկեղեցի» և այլն, բայց նրանց շխտանքներու համար նրանց եկեղեցիներն առժամապես իրենց թողնել, մինչև որ հնարավորություն լինի «բունի ուժով» նրանց ստիպելու, որ հրաժար-

¹ M. Febvre, «L'Etat présent de la Turquie», p. 275—276. «Quelques discours et lettres adressés à Louis le Grand, Roy de France», p. 101.

² M. Febvre, «L'Etat présent de la Turquie», p. 277. Այս հեղինակը նույն բանը կրկնում է նաև 1682 թվականին՝ իր «Le Théâtre de la Turquie» աշխատության մեջ, հմմտ. T. G. Djuvara, «Cent projets de partage de la Turquie», p. 225.

վեն այդ բանից. հատկապես նրանց պատրիարքներին ու եպիսկոպոսներին ստիպել, որ նրանք հնազանդություն քարոզեն պապի հանդեպ, իսկ հակառակ դեպքում նրանց փոխարինել ուրիշ այնպիսիներով, որոնք ավելի հյուսիս կամակատար կլինեն. տարեկան թոշակներով հոգեորականներին հանձնառու դարձնել ասնելու այն, ինչ որ մենք կուզենք. դպրոցների գասատուներին «խոստով արգելել» այլևս հայերեն, քաղցնարեն և ասորերեն սովորեցնել և այլն¹.

Այս և այսօրինակ բռնական ուրիշ լրացուցիչ միջոցներով նրանք Արևելքի քրիստոնյա ժողովուրդներին ստիպելու էին՝ հրաժարվել իրենց կրոնական-ազգային դիմադիծը կազմող ինքնուրույնությունից, այդ բոլորը վնասակար համարելով «ազատարար» պետության շահերին:

Նույնն էր լինելու այդ ժողովուրդների դրությունը Հայր-օտտոմանյան ծրագրերի հաջողման դեպքումն էլ և այս միևնույն միջոցների շնորհիվ է, որ Հայր Օտտոմանը հույս ուներ, թե «նրանցից շատերը կորոշեն ընդգրկել կաթոլիկ հավատը»:

Սա էր միայն այն «ազատությունը», որ լատինական նվաճողական պատրաստ էր սիրով տալու Արևելքի քրիստոնեությունը. և ուրիշ ոչինչ:

Իսկ թե ազատագրության խոստումն ի՞նչ արտաքին ձևի տակ էր արվել հայերին՝ հայտնի չէ. բայց զժվար չէ գուշակել, որ, թե՛ Հայր Օտտոմանի և թե՛ կոլոզիի XIV-ի կողմից, «ազգաբնակությունների հետ ճարպիկ ձևով վերաբերվելու» քաղաքականությունը, նրանց խոստացվում էր ամեն ինչ, մինչև քաղաքական լիակատար անկախություն:

Քաղով երրորդ հարցին՝ եթե նույնիսկ Կանդիայի դիվերսիան հաջողվեր, դարձյալ զժվար էր իրագործված տեսնել Հայր Օտտոմանի ծրագրի այն մասը, որ վերաբերում էր Օսմանյան Կայսրության ճակատագրին և որի հետ էր կապված ժողովուրդների «ազատագրումը»: Մրցադրվում էր Հայր Օտտոմանին՝ բարձրացնել սուլթանական դահի վրա, բայց այդ խնդիրը դեռ շատ ջուր կվերցներ մինչև իրականություն դառնալը: Եվ

¹ M. Febvre, «L'Etat présent de la Turquie», p. 278-282.

եթե նույնիսկ իրականություն դառնար այդ, Հայր Օտտոմանն ու նրա գահը անխուսափելիորեն առիթ կգտնային Եվրոպայի համար նոր պայքարների, պատերազմների և վերիվայրումների: Ո՛ւմն էր պատկանում Հայր Օտտոմանը, որ Վատիկանի, Փարիզի և Վենետիկի կողմից որպես թեկնածու հրապարակ էր քաշված: Հաջողության դեպքում ո՛ւմ ազդեցություն ու շահերին պետք է ծառայեր նա՞: Ո՛վ էր վերջիվերջո Հայր Օտտոմանը: Նա ուրիշ բան չէր, եթե ոչ մի խրրոփիլակ, որին ցուցադրում էին՝ սուլթանին վախեցնելու համար: Զե՛ որ նա առանձին՝ քաղաքական ոչ մի արժեք չէր ներկայացնում իրենից:

Ժիշտ է, որ երեք դաշնակիցները եռանդով կովում էին Կանդիայում, սակայն բացակայում էր փոխըմբռնումը: Նրանց միջև տիրում էր փոխադարձ անվստահություն: Նախ՝ Փարիզի և Վենետիկի միջև: Հաշտության կողմնակիցները 1668 թվականի կեսերից սկսած ուժեղացել էին վենետիկյան Սենատում և ուժեղ տրամադրություն կար այս երկարատև պատերազմին այլևս վերջ տալու: Մի ժամանակ հետո Սենատը Կ. Պոլիս էր ուղարկել ասպետ Մոլինոյին (Luigi Molino),

¹ Հետաքրքրական է նույնիսկ այն, որ պաշտոններ ու աստիճաններ ստանալու մասնողությունն արդեն ուժեղ կերպով գործում էր: Փարիզի վենետիկյան դեսպան Մարկ Անտոն Զիուստինիանիի կողմից Հայր Օտտոմանին ուղղված մի նամակում (10 մայ. 1668 թ.) կարգում ենք հետևյալ թիւղարանքը. «Լավ կլիներ, որ Ձեր Արքայական Բարձրությունը մեկին լիազորեր իր անունից պաշտոններ, աստիճաններ ու վարձատրություններ խոստանալու, նկատի ունենալով, որ Ֆրանսիացիները, ինչպես սուսում են այստեղ, ձեռներեց են» («Il serait bon que Votre Altesse Royale autorisât quelqu'un à promettre en son nom, des chargés, rangs et récompenses, attendu que les Français, comme on dit ici, sont entreprenants»), տե՛ս *Revue d'Histoire Diplomatique*, t. XVII, p. 375. Իսկ համի վենետիկյան դեսպան Անտոն Գրիմանիի կողմից Սենատին ուղղված նամակում (14 ապր. 1668 թ.) կա հետևյալ խոստումը, որ Հայր Օտտոմանն անում էր Հանրապետությանը. «Եթե աստված կամենա հաջողություն տալ իր ձեռնարկումներին՝ իրեն միջոցներ չեն պակասի իր երախտադատությունը ցույց տալու», տե՛ս Վափերագիր № 8:

հաշտության բանակցություններ վարելու պաշտոնով: Բայց հետո, Կլեմենտ IX-ի պնդումներով, ետ էր վերցրել Մոլինոյի այդ լիազորությունը: Սակայն մինչև այդ՝ այս պատճառով որոշ թյուրիմացություն էր առաջացել վենետացիների և Լուգովիկ XIV-ի միջև. և եթե լինեիր պապական դիվանագիտության ճարտար միջամտությունը՝ հեռանքները ծանր կլինեին: Լուգովիկ XIV-ը 1669 թ. փետրվարին պահանջ էր դնում, «որ վենետացիները հաշտություն չկնքեն առանց իրեն»². նույն թվականի մարտին նա վենետական ղեկավարին ստիպում էր իրեն երաշխիք տալ, թե Սենատը «ոչ մի մտադրություն չունի հաշտություն կնքելու թուրքի հետ»³. և նույնիսկ լինում է մի ժամանակ, երբ ֆրանսիական զորքերի կողմից Կրեմա քաղաքը գրավելու հարց է լինում՝ Հանրապետության անկեղծության իբր երաշխիք⁴: Եվ դրությունն այսպես էլ շարունակվում է⁵:

¹ Լուևիե Մուլինոն 1668 թ. նոյ. 8-ին հասել էր Լարիսա, որտեղ գտնվում էր այդ ժամանակ սուլթանը: Նրա բանակցությունների մասին տես J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman“, t. III, p. 117.

² „Que les Vénitiens ne conclussent pas la paix sans lui“, տե՛ս Ch. Ter Linden, „Le Pape Clément IX et la guerre de Candie“ p. 184.

³ „[Que le Sénat] ne songeait nullement à faire la paix avec le Turc“, տես Ibidem, p. 184.

⁴ Ibidem, p. 184—185.

⁵ Այդ սարակարծությունների արձագանքը գտնում ենք նաև Մարտիրոս Դրվեկցու 1670 թվակիր մի հիշատակարանում, որում նա կրետեի Կատարո ամրոցի ունկուճը վերադրում է Ֆրանսիայի թագավորի դավաճանությունը, պատճելով, որ պատերազմի ամենատար շրջանում շենկոսթեմար գործնալ տարան (ղարան) Ֆրանցու թագավորի պղծոյն, եկն ի վերայ սոցա Գձ (300) կտոր մեծամեծ նաւոյք, սկսաւ երկոցունցն տալ պատերազմ և ինքն տիրել բոլոր կղզւոյն, յորոյ սակի տարակուսեալ Վէնետիկցին՝ ևս գրադարն թուրքին. արարեալ հաշտութիւն՝ իւրաքանչիւր որ զարձան ի տեղիս իւրեանց», տես Բ. Կյուրյան, «Յուդայի ձևազարց Անկիւրթոյ Կարմիր վանուց և շրջակայից», էջ 442—443:

Մյուս կողմից՝ անվստահություն էր տիրում նաև Փարիզի և Վատիկանի միջև՝ նույն հողի վրա. և ուշագրավն այն էր, որ այդ բոլոր թյուրիմացությունների հետ կապված էր նաև Հայր Օտտոմանի անունը: Փարիզի պապական նվիրակ Բարջելլինին (Bargellini) հետևյալն էր գրում կարդ. Ռոսպիլիոզին (Card. Rospigliosi) (5 հուլ. 1669 թ.).

«Պարոն Դր Լիոնն ինձ ասաց, թե ստույգ տեղեկություն ունի այն մասին, որ Նորին Սրբությունն ու Վենետական Հանրապետությունը լուրջ գործերի մասին են բանակցում մեծ վեզիրի հետ անձամբ՝ Հայր Օտտոմանի վերաբերմամբ, և մեծ ահաճություն ցույց տվեց այն բանի համար, որ վստահություն չեն ունեցել այդ մասին Ֆրանսիային իրազեկ դարձնելու»¹:

Մի հաջորդ նամակով (19 հուլ. 1669 թ.) Բարջելլինին հազորում էր, որ ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դր Լիոնը խոսքը նորից էր բերել զաշխիքի վրա, «այն դաշինքի, որի մասին, պնդում էր, բանակցում են Նորին Սրբությունը, Վենետական Հանրապետությունը և մեծ վեզիրը, Հայր Օտտոմանի կուսակիցների միջնորդությամբ»²:

Իհարկե նման սարակարծությունները Կանդիայի այդ ճգնաժամային օրերին անխուսափելիորեն կծառայեին քայքայելու այն, ինչ պապական դիվանագիտությունը մեծ ջանքերով էր առաջ բերել. ուստի և Վատիկանը շտապում էր վրձնականորեն հերքել այդ լուրերը:

Կարդ. Ռոսպիլիոզին Հոռմից գրում էր Բարջելլինին (30 հուլ. 1669 թ.).

¹ „Monsieur de Lionne me dit savoir avec certitude que Sa Sainteté et la République de Venise traitaient d'affaires sérieuses avec le grand-vizir en personne au sujet du Père Ottoman et montra un grand déplaisir de ce que l'on n'eut pas eu la confiance d'en faire part à la France“, տե՛ս Ibidem, p. 186.

² „... Traité qui, prétendait-il (Mr. de Lionne), se négociait entre Sa Sainteté, la République de Venise et le grand-vizir, par l'intermédiaire des partisans du Père Ottoman“, տե՛ս Ibidem, p. 186.

Ճնորհն Արքուիթյան և Հանրապետութեան միջև ո՛չ միայն որևէ դաշինք չի կնքվել Հայր Օտտոմանի կամ ուրիշ անձերի կապակցութեամբ՝ որևէ ձեռնարկ կամ թուրքերի դեմ հարձակում կատարելու համար, այլ նույնիսկ այդ մասին եղած առաջարկներն այստեղ նկատվել են որպէս շատ դատարկ, որևէ բանավոր հիմքից և հաջողութեան հավանականութիւններ կայացնելուց զուրկ...: Եթէ Նորին Արքուիթունը դուզն շափով հետամուտ եղած լիներ այդ բանին, ապա նրա առաջին դործը եղած կլիներ հրավիրել Ամենաբրիտանոնյա Թագաւորին և խնդրել նրա բարեպաշտութեան աջակցութիւնը¹:

Խնդիրն այն չէր, թե որքան էին հիմնավոր Լուղովիկ XIV-ի այս կասկածանքները Վատիկանի և վենետիկյան Սենատի նկատմամբ, այլ այն է, թե Կանդիական պատերազմի վերջին օրերին դաշնակիցների հարաբերութիւնները պղտորված էին հենց Հայր Օտտոմանի կապակցութեամբ: Ծիշտ է՝ այս ժամանակ Հայր Օտտոմանը հեռացված էր Կանդիայից, բայց նա աշխատում էր Մորեայում և Ալբանիայում անել այն, ինչ որ չէր հաջողվել անել Կանդիայում: Սակայն նրա անունն այլևս տաղտկալի էր Լուղովիկ XIV-ի համար, որովհետև հաշիվներն այժմ փոխվել էին, և նրա գործունեությունը երկպառակություն առիթ էր հանդիսանում: Սխալված չենք լինի եթէ ասենք, որ Լուղովիկ XIV-ի «կասկածանքներն» իր դաշնակիցների հանդեպ ուրիշ բան չէին, և թե ոչ պատերազմի մոտալուտ վախճանի հետ կապված մտահոգութիւնների արտահայտութիւններ, իր սեփական շահերն անպայման ապահովելու միջոցառումներ՝ թե՛ հաղթանակի դեպքում և թե՛

հաշտութեան: Հաղթանակի դեպքում շատ մեծ կլինէին նրա հավանութիւնները, որովհետև Օսմանյան Կայսրութեան ավերակների վրա երբևիցե բարձրացվելիք՝ Արևելքի Հռոմեական նոր կայսրութիւնն իրենց պատմական իրավունքն էին համարում Բուրբոնները, և այս գաղափարը բավականին արմատացած էր Լուղովիկ XIV-ի օրերում: Դա քաղաքական անհրաժեշտութիւն էլ էր Բուրբոնների համար՝ արևելքից շղթայի մեջ առնելու համար Հարսուրգյան Ավստրիային, որը դարավոր թշնամին էր Ֆրանսիայի: Լուղովիկ XIV-ն այժմ «կասկածանքներ» հարուցելով՝ հետագայի համար պատերվակների հող էր պատրաստում, որպէսզի հաղթութիւնից հետո կարողանար ի նպաստ իրեն տնօրինել հաղթանակի արդյունքները՝ Բյուզանդիոնի կայսերական դահլիճ վրա բազմեցնելու համար Բուրբոնյան մի իշխանի, փոխանակ Հայր Օտտոմանի, որին նա միշտ էլ միայն մի նպատակահարմար միջոց էր համարել իր ծրագրերի հաջողութեան համար. ուստի և այժմ էլ, երբ զգացվում էր, թե կոխվը չէր կարող այլևս երկար տևել, նրան հարկավոր էր իր «կասկածանքներին» առարկա դարձնել Հայր Օտտոմանին: Իսկ հաշտութեան դեպքում՝ նա ուզում էր հեղինակավոր ձայն ունենալ բանակցութիւնների մեջ, որպէսզի Վենետիկն առիթից օգտվելով Ֆրանսիական վաճառականութեան դիրքերը յիսխտեր Արևելքում: Այս պայմաններում սպասելի չէր, որ, եթէ նույնիսկ պատերազմը հաղթանակով վերջանար, այսպէս կոչված հայրօտտոմանյան ծրագրերի՝ Օսմանյան Կայսրութեան ապագա բախտին վերաբերող մասը կարողանար իրագործվել:

Այս խնդրում կար մի լուրջ հարց ևս: Դա ուսական հարցն էր: Ռուսաստանի մասնակցութեան արդյունքն ինքնին գլխավոր խոչընդոտներից մեկը պիտի լիներ հայրօտտոմանյան ծրագրերի իրագործմանը: Ռուսական պետութիւնն այս շրջանում իր հզորացման և վերելքի շրջանն էր ապրում, արդեն մեծ կշիռ էր ձեռք բերել Նվրոպայում և հաշիւի շտանվող ուժ էր միջազգային հարաբերութիւնների մեջ, այնպէս որ, թուրքերի դեմ կազմակերպվող դինակցական խմբավորում-

¹ «Non seulement aucun traité n'a été conclu entre Sa Sainteté et la République pour faire en considération du Père Ottoman ou d'autres personnes quelque entreprise ou attaque contre les Turcs, mais même les propositions qui en ont été faites, ont été considérées ici comme très vaines, basées sur aucun fondement raisonnable et dénuées de toute apparence de succès probable... Si Sa Sainteté s'y était le moins du monde appliquée, ses premiers soins eussent été d'y inviter le Roi Très Chrétien et d'implorer le secours de sa piété», տե՛ս I b i d e m, p. 186.

ների ժամանակ, հանդես էր գալիս նաև Ռուսաստանի մասնակցության հարցը, և այդ հարցը, հատկանշական կերպով, հենց Հոռոմի պապերի կողմից էր առաջ քաշվում: Դեռևս 1513 թվականին Լևոն X պապը մոսկովյան մեծ իշխան Վասիլ III-ին հրավեր էր արել դաշնակցելու Լեհաստանի և Հունգարիայի թագավորներին՝ թուրքերի դեմ¹: Ռուսաստանի հետ հակաթուրքական լիզա կազմելու գաղափարը հետապնդել էին նաև պապեր Պիոս IV-ը (1559—1565) և Պիոս V-ը (1566—1572)²: Կլեմենտ VIII պապը, որ ուժեղ ու եռանդուն ջանքեր էր թափել թուրքերի դեմ մի նոր խաշակություն գլուխ բերելու համար, 1594 թվականին պատգամավոր էր ուղարկել այս խնդրով դիմելու մոսկովյան արքունիքին³. Իսկ նրա պատգամավոր Ալեքսանդր Կոմուլեոն (Կոմուլովիչը) գտնում էր, որ թուրքերին Եվրոպայից արտաքսելու միջոցների մեջ լավագույնն էր՝ «ղաշինք կնքել մոսկովցու հետ և միաբանել նրա հետ»⁴: Հակաթուրքական լիզա կազմելու համար 1600 թվականին նույն Կլեմենտ VIII-ի և ավստրիական արքունիքի միջև տեղի ունեցող բանակցությունների մեջ նույնպես հաշվի էր առնվում Ռուսաստանը⁵:

Այսպիսով, Թուրքիայի դեմ կազմակերպվող դինակցության դեպքերում Ռուսաստանին մասնակից գարձնելու գաղափարը բավականին տարածված էր Եվրոպայում, ուստի և զարմանալի չէ, որ այդ մասին բերվող հույն-հայկական առաջարկը Հայր Օտտոմանի կողմից համարվել էր խրախուսելի, իհարկե Հոռոմի և Վենետիկի համաձայնություններ, նկատի ունենալով, որ մի այնպիսի ճգնաժամային դրության մեջ, որպիսին ստեղծվել էր այս ժամանակ Կանդիայում, ավելի քան անհրաժեշտություն էր այդ: Լուդովիկ XIV-ը, դրություն-

ներից ելնելով, նույնպես կարող էր համաձայնվել Ռուսաստանի մասնակցությանը, բայց դրանով էլ կատեղծվեր մի նոր նախադրյալ ևս հետագա վեճերի համար՝ քանի լանդիրը Կ. Պոլսի գրավմանն էր վերաբերում, որովհետև այդ կետում ֆրանսիական և ռուսական պետությունների շահերը բախվում էին:

Ֆրանսիայի թագավորները, ինչպես ասել ենք, իրենց ժառանգությունն էին համարում Արևելյան Կայսրությունը, այն հիման վրա, որ Անդրեաս Պալեոլոգը 1494 թվականին իր ստորագրած մի ակտով ֆրանսիական թագավոր Կարլոս VIII-ին էր զիջել բյուզանդական զահի նկատմամբ իր իրավունքները¹: Մյուս կողմից, սակայն, ռուսական ցարերը, Պալեոլոգների հետ կնքված ամուսնություններ, նմանապես ժառանգորդներ էին հանդիսանում Արևելյան Կայսրությունը, ինչպես տեսանք արդեն, և հենց Եվրոպայում միշտ չէ որ կարողանում էին անտեսել Ռուսաստանի իրավունքների հետ կապված հավանականությունները: Ծանոթ է, օրինակ, թուրքերի դեմ Եվրոպայի քրիստոնյա թագավորների զինակցության մի անտիպ ծրագիր, որը կազմված է 1572 թվականին²: Այդ ծրագրի անանուն հեղինակը ռուսական ցարի մասին խոսելիս գրում էր, որ «անշուշտ՝ հաշվի առնելով մոսկովցու ուժը՝ դիրքի հարմարության տեսակետից ոչ ոք նրանից ավելի ձեռնհաս չէ հարձակվելու Կ. Պոլսի վրա»³: Այսպես էր մտածում և Կոմուլեոն (1594 թ.), որի կարծիքով եթե մոսկովյան ցարը Պողոսիայով իջներ դեպի Մոլդավիա և այնտեղից Դանուբն անցնելով ուղղակի արշավեր Կ. Պոլսի վրա, նա արդեն բաց կդառներ իր առաջ օսմանյան մայրաքաղաքի դրոները⁴:

¹ Mémoires de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, t. XVII, 1751, p. 572—578. Հմտ. T. G. Djuvara, „Cent projets de partage de la Turquie“, p. 48.

² Գտնվում է Միլանում, Biblioteca Ambrosiana, G. 56. Inf.

³ T. G. Djuvara, „Cent projets de partage de la Turquie“, p. 118.

⁴ Ibidem, p. 141—142.

¹ T. G. Djuvara, „Cent projets de partage de la Turquie“, p. 141.

² Ibidem, p. 141.

³ Ibidem, p. 138.

⁴ Ibidem, p. 141.

⁵ Ibidem, p. 129—130.

Արդ՝ այսպիսի պայմաններում պարզ է, որ ընդհանուր խնդրի կատարման՝ Կ. Պոլսի գրավման դեպքում, — եթե երբեք կարողանար անդի ունենալ այդ բանը, — ժառանգութեան հողի վրա անխուսափելիորեն առաջ կգար շահերի բախում ֆրանսիական թագավոր Լուդովիկ XIV-ի և ռուսական ցար Ալեքսեյ Միխայլովիչի միջև և այդ հակամարտությունը նույնպես կդառնար մեկը այն լուրջ խոչընդոտներից, որոնք, ինչպես ասացինք, թույլ չէին տա հայր-օստոմանյան ծրագրերի իրագործումը՝ բյուզանդական դահի վերականգնման հարցում:

Գանք շորթորդ հարցին՝ Լուդովիկ XIV-ի ծրագրին:

Թեոֆիլ Լավալեն նկատում է, որ Ֆրանսիայում խաչակրական ծրագրերն ու պլանները, որոնք ավելի շուտ Լուդովիկ XIV-ի անձին էին պատկանում, շարունակ հետաձգվեցին նրա մինիստրների քաղաքականության պահանջներով, ըստ որում՝ Օսմանյան կայսրության գոյությունը անհրաժեշտություն էր համարվում եվրոպայի հավասարակշռության համար, որով Թուրքիայի հետ բարեկամությունը միջոց էր նկատվում մի կողմից ֆրանսիական ազդեցության տեղանայացման ու աճման համար Արևելքում, մյուս կողմից Ֆրանսիայի գերակշռությունն ապահովելու համար Արևմուտքում՝ Ավստրիայի խոնարհեցումով:

Իրոք, Կոլբերը, որ Մադարինիի մահով մինիստրության կոչվեց 1661 թվականին, Արևելքում պատերազմ անելու գաղափարին ընդդիմացավ մինչև իր մահը, իր ամբողջ մտահոգությունը նվիրելով առևտրի զարգացմանը՝ թուրքերի հետ բարեկամական հարաբերությունների ուղիով, որի պատճառով և հասարակական կարծիքի խիստ դատաստանին ենթարկվեց նա, նույնիսկ իր մահից հետո: Այն զուգահիշյալությունը, որով Կոլբերի մահը պատահել էր այն միևնույն շաբաթվա ընթացքում, երբ Հովհաննես Սոբիեսկին ազատել էր Վիեննան թուրքերից (6—12 սեպտ. 1683 թ.), աքիթ էր տվել

¹ Th. Lavalée. „Histoire de l'Empire Ottoman“, p. 324.

հրապարակ գալու մի հետաքրքրական պարսավագրի (պամֆլետ), որն այս խորագիրն էր կրում. «Զրույց Խավարի Թագավորության մեջ՝ ժամանակի գործերի մասին, Մուհամմեդի և Ֆրանսիայի երբեմնի մինիստր պարոն Կոլբերի միջև» (Entretien dans le Royaume des Ténèbres sur les affaires du Temps entre Mahomet et M. Colbert, cy-devant ministre de France). Այսանդ Մուհամմեդը Կոլբերին սրտազին շնորհակալություն էր հայտնում այն պաշտպանության համար, որ նա շնորհել էր թուրքերին և, ի մեծ ապշուցյուն նրան, հաղորդում էր քրիստոնյաների հաղթանակի մասին:

Դը Լիոնը, որ 1661 թվականից սրտաքին գործերի մինիստր էր (մեռ. 1671 թ.), նույն գծի վրա Կոլբերի աջ բազուկն եղավ: Այդ երկուսի կողմից լիազարդությունն ամեն զեռով պահպանելու մասին դեսպան Դը Նուանտելին արված գաղտնի հրահանգների ուժով է, որ դեսպանը ձգձգեց հարաբերությունների խզումը՝ հասցնելով մինչև 1673 թվականի կապիտուլյացիաների կնքումը²:

Բայց բոլորն այդ չէր: Ֆրանկ-ավստրիական հակամարտության անկալությունը նույնքան և ավելի ուժեղ արգելակ էր Լուդովիկ XIV-ի առաջ:

Հարսուրդներին խոնարհեցնելու քաղաքականությունն անուղղակի ղինակցության գերի մեջ դրեց Ֆրանսիային թուրքերի հետ այն շրջանում, երբ վերջիններս Վիեննայի պարիսպներին էին հասել, մինչև իսկ «Ամենաքրիստոնյա Թագավորին» նշավակելի դարձնելով քրիստոնեական աշխարհի առաջ: Այդ առթիվ 1683 թվականին Կատալոնիայում լույս տեսած քաղմաթիվ պարսավագրեր, որոնք ծաղր ու ծանակ արեցին Ֆրանսիայի Արև-Արբային, շոշափելի էին դարձնում

¹ L. Drapayron. „Un projet français de conquête de l'Empire Ottoman au XVI^e et au XVII^e siècles“, *Revue des Deux Mondes*, t. XVIII, 1876, 1^{re} livr., p. 145.

² N. Rocca. „La France en Orient depuis les rois francs jusqu'à nos jours“, p. 107.

այդ երևույթը: Գրանք կրում էին զանազան բնորոշ խորագրեր, ինչպես՝ «Համառոտ բովանդակությունը Յրանսիայի կողմից որդեգրված այն օսմանյան ծրագրի, որն ուղղված է քրիստոնեական աշխարհի դեմ» («Abrégé du dessein ottoman sur la chrétienté par la France»), «Փաթթոցավորված ծրանսիան» («La France turbanisée»), «Քրիստոնյաների նոր սալթանը» («Le Nouveau Turc des Chrétiens») և այլն: Կերչինս, հասկանալի է, նույնիսկ Լուդովիկ XIV-ն էր¹:

Ասենք, սակայն, որ ինչքան էլ դիտումնավոր կերպով շահագանցված լինի այդ երևույթը, այնուհանդերձ դա որոշ շահով համապատասխանում էր իրականությանը: Ավստրիայի դեմ Լուդովիկ XIV-ի տարած հետևողական պայքարը նրան դեպի հակասություն էր առաջնորդել արևելյան քաղաքականության մեջ: Նա՝ թուրքերի հանդեպ իրապես հարձակողական արամադրություններ անուցելով հանդերձ, Հաբսբուրգների դեմ վարած պայքարում անուղղակի կերպով և փաստորեն զորավիգ էր լինում թուրքերին: Գործնական քաղաքականությունն ուրեմն Լուդովիկ XIV-ին ի վերջո տարել էր, թեև ակամա, դեպի այն ուղին, որը Կոլբերի պաշտպանածն էր. և իզուր չէ, որ այդ ժամանակ հանկարծ թուրքերի՝ դեմ դառնալու նրա պատրաստակամությունը կասկածոտ մերժման էր հանդիպել:

Այս իրադրությունն ի վերջո հանգեց այն բանին, որ Լուդովիկ XIV-ը հետո մնաց Սրբազան Լիգայից (1684 թ.), իսկ երկու տարի հետո, երբ ծնունդ առավ Աուգսբուրգյան Լիգան (1686 թ.) Լուդովիկ XIV-ի դեմ, վերջինիս դիրքը Սրբազան Լիգայի հանդեպ զարձավ ակնհայտորեն թշնամական: Ավստրիան, որ գլխավոր անդամն էր Սրբազան Լիգայի, անգամ էր նաև Աուգսբուրգյան Լիգային. հետևաբար՝ Լուդովիկ XIV-ի քաղաքականությունը պիտի լիներ այնուհետև խափանել ամեն գնով խաչակիրների հաջողությունները:

¹ L. Drapayron, «Un projet français de conquête de l'Empire Ottoman au XVI^e et au XVII^e siècles», p. 145.

Այսպես՝ նա զիվանագիտական միջոցներով զանազան փորձեր կատարեց պառակտելու համար Սրբազան Լիգան: Սկզբից իսկ նա լեհերին զրդել էր ձեռք քաշելու Լիգայից¹, իսկ հետագայում, պատերազմների ընթացքում, ջանքեր էր թափել, որ նրանց և թուրքերի միջև անշատ հաշտություն կնքել տա²: Միևնույն ժամանակ նա աշխատում էր վիժեցնել լիգայականների հաշտության ձեռնարկումները թուրքերի հետ: Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Դը Շատոնյուֆի (Pierre-Antoine de Castagner, marquis de Châteauneuf) ջանքերով Մարսիլին (Louis-Ferdinand, comte de Marsigli), որ 1691 թվականին կոստոյղ կայսրի կողմից բանակցության էր դնացել թուրքերի մոտ, ձախողվել էր իր առաքելության մեջ³: Անգլիական դեսպան Լորդ Պեյջեթը (Lord Paget) և հուլանդական ռեզիդենտ Հեմսկերկեն (Hemskoeke), որոնք 1693 թվականին թուրքերին իրենց միջնորդությունն էին առաջարկել Ավստրիայի հետ հաշտության բանակցություն կատարելու համար, նույնպես ձախողվել էին իրենց ձեռնարկման մեջ՝ Դը Շատոնյուֆի ջանքերով⁴: Իսկ 1699 թվականին, երբ Անգլիայի և Հոլանդիայի միջնորդությամբ Կարլովիցի հաշտությունն էր պատրաստվում, Լուդովիկ XIV-ն աշխատել էր դարձյալ ամեն գնով ձախողել այդ, բայց չէր հաջողվել⁵:

Այսպիսով, ուրեմն, Լուդովիկ XIV-ը Հաբսբուրգների դեմ ունեցած պայքարում հասել էր այն դրույթյան, որ ստիպված էր, թե՛ անուղղակի և թե՛ ուղղակի կերպով, թուրքական շահերին օժանդակել, հատկապես Աուգսբուրգյան Լիգայի կազմվելուց հետո. իսկ այդ պայմաններում՝ թուրքիայի վե-

¹ Th. Lavalée, «Histoire de l'Empire Ottoman», p. 345.

² J. de Hamer, «Histoire de l'Empire Ottoman», t. III, p. 250.

³ Mémoire de M. de Châteauneuf au roi à son retour de Constantinople, pour lui rendre compte de son ambassade*, *in* Marquis de Bonnac-ի *ձեռք*, «Mémoire historique sur l'ambassade de France à Constantinople», p. 95.

⁴ *Ibidem*, p. 96.

⁵ Th. Lavalée, «Histoire de l'Empire Ottoman», p. 355.

րարեմամբ իր ծրագրերն ստիպված էր անվազն թողնել ավելի լավ ժամանակներին:

Լուզովիկ XIV-ի ծրագրերն, ուրեմն, իրականալի չէին բնայ. Այժմ տեսնենք, թե ի՞նչ էին ներկայացնում նրանք արևելյան քրիստոնեության ազատագրության տեսակետից:

Սաուլյ է, որ Լուզովիկ XIV-ը նպատակ ուներ իր գլխավորությամբ խաչակրություն կազմակերպելու. սաուլյ է նաև, որ նրա արքունիքում Բոսյուեն (Jacques-Bénigne Bossuet), սրբազան հետաքրքիր, որ 1670—1681 թվականների ընթացքում դաճածառանդ Լուզովիկի դաստիարակն էր, իր արքայազուն աշակերտին դաստիարակում էր այն դադափարով, թե հարկ է անողոք կոխվ մղել թուրքերի դեմ¹. բայց, այնուհանդերձ, չի կարելի ասել, թե «Արև-Արքային» ոգեշնչողը Արևելքի քրիստոնեությանն օգնություն ցույց տալու գաղափարն էր:

Լուզովիկ XIV-ի մտա և նրա արքունիքում խաչակրական տրամագրությունների խմբումն ու սնումը պայմանավորված էին լոկ տնտեսական ու քաղաքական շարժառիթներով և բնավ աննշույթ չունեին «Ամենաքրիստոնյա Վեհափառության» քրիստոնեական գաղափարների և զգացմունքների հետ:

Որոշ ժամանակ, մինչև 1673 թվականի կապիտուլացիաների կնքումը, Թուրքիայի հանդեպ Ֆրանսիայի գրաված ոչ բարեկամական ու թշնամական դիրքը գլխավորապես կապիտուլացիաների հարցից էր գալիս: Բ. Դուան հանդեպ թըշնամական արտահայտությունների ու պատերազմական սպառնալիքների հիմնական շարժառիթը այդ հարցն էր. ու թեև եվրոպայում և Միջերկրականում թուրքական ազդեցության գերակշռումը կանխելու մտահոգությունն էլ արդեն ունեին ֆրանսիական քաղաքականության ղեկավարները, բայց և այնպես կապիտուլացիաների հարցը ֆրանկ-թուրքական հարաբերությունների գլխավոր առանցքն էր կազմում:

Դրանից հետո՝ նոր կապիտուլացիաների կորզումով Թուրքիայի հանդեպ ֆրանսիական քաղաքականության «կըր-

քերը» հանդարտվեցին թեև, բայց ֆրանսիական դիվանագիտության շահագրգռությունը շարունակվեց Թուրքիայի նկատմամբ այն պատճառով, որ թուրքական հարցն այդ շրջանում իր ամբողջ թափով գրադեցնում էր եվրոպական պետություններին: Ֆրանսիական շահերը պահանջում էին անտարբեր չլինել նրա նկատմամբ: Թուրքիան ղեկեա այն ժամանակ էլ համարվում էր եվրոպայի «հիվանդ մարդը», և նրա տապալումն ու անհետացումը, կամ դոնե վտարումը եվրոպայից, անխուսափելի և մոտալուտ էր համարվում և հետևաբար քաղաքական իմաստություն էր նախապատրաստվելը՝ պատմական այդ պահը դիմավորելու և, հավանականության բոլոր ղեպքերում, Ֆրանսիային իր արժանավոր բաժինն ապահովելու համար:

Այս հիմքերի վրա է միայն, որ Ֆրանսիայում, Լուզովիկ XIV-ի օրով, իրապես խաչակրական ծրագիր գոյություն ուներ, բայց դա հեռավոր կապ իսկ չունեի Արևելքի քրիստոնեության ազատագրության խնդրի հետ:

Ամփոփելով այս բոլորը՝ կարող ենք ասել, որ արևմտահայերը, Կանդիայի պատերազմի վերջին շրջանում իրենց ազատագրական հույսերը կապելով այս պատերազմի հաջող ելքի և Հայր Օտտոմանի ծրագրերի հետ, հայոց թագավորությունը վերականգնելու ակնկալությունն ունեին. Իսկ Կանդիայում միացած երեք գլխավոր պետությունները, — Հոմ, Փարիզ և Վենետիկ, — հայերի, հույների և ուրիշ ժողովուրդների միջոցով Օսմանյան Կայսրության մեջ ներքին խլրտումներ ու պատերազմի մեջ ղիվերսիա առաջացնելու նպատակով թեև խոստանում էին նրանց ցանկություններին բավարարություն տալ, բայց նպատակ չունեին բնավ իրենց խոստումները կատարելու, նույնիսկ եթև իրենց հաջողվեր Մահոմետ IV-ի իշխանությունը տապալել: Նույնը պետք է ասել նաև առանձին՝ Լուզովիկ XIV-ի համար, որը Կանդիայի պատերազմից հետո, հայոց ազատագրական շարժման երկ-

¹ L. Drapayron, „Un projet français de conquête de l'Empire Ottoman“, p. 137.

բորդ շրջանում, շարունակում էր օրօրել հայերին և մյուս քրիստոնյա ժողովուրդներին՝ ազատագրութեան հույսերով, նրանց շարժումները Թուրքիայի վերաբերմամբ իր պատրաստած պլանների հաջողութեան համար օգտագործելու նպատակով:

Քաջի այդ՝ հայր-օտտոմանյան ծրագրերն իրագործելի չէին բնավ, որովհետև Հայր Օտտոմանը ինքն իսկ պատերազմի վերջին օրերին երկպառակութեան առիթ էր դարձել Ֆրանսիայի և նրա դաշնակիցների միջև. և եթե նրա շուրջը ստեղծված երկպառակությունը չխորացավ ու հետևանքներ չունեցավ, պատճառն այն էր, որ պատերազմը Հայր Օտտոմանով ձեռնարկված դիվերսիային չհանդեց, այլայնս Մահոմեա IV-ի կայսրության տապալման վաղորդային բոլորովին ուրիշ պատկեր կպարզվեր, քան այն, որ նախատեսում էր հայր-օտտոմանյան ծրագիրը. թող որ, առանց այն էլ, Բյուզանդիոնի ժառանգության խնդրում Ֆրանսիայի և Ռուսաստանի շահերը նույնպես չէին կարող համերաշխ լինել և թույլ տալ, որ ստացվեին հայր-օտտոմանյան ծրագրերով երազված արդյունքները: Այլ էլ իրագործելի էին Հուլիոսի XIV-ի ծրագրերը, քանի գոյություն ունեին, սկզբից իսկ, նրա մինիստրներին դադանի քաղաքականությունը, Ֆրանկ-ավստրիական հակամարտությունը և Եվրոպայում թուրքերին հավասարակշռության տարր ծառայեցնելու անհրաժեշտությունը. իսկ վերջում նաև ու մանավանդ գոյությունը Աուգսբուրգյան կիզայի, որի պատերազմները մինչև դարի վերջերը կաշկանդեցին Հուլիոսի XIV-ին:

ԳՆԻՆ ԺԳ.

ԵՂԻԱԳԱՐ ԱՅՆԹԱՊՅԻՆ ԵՎ ԵՂԻԱԳԱՐՅԱՆ ՇԱՐՃՈՒՄԸ

Եղիագարյան հարցի կարևորությունը.— Երեմիա Ջեյբին ու Ջաֆա Քանաֆեցին որպես միակողմանի արյուներե եղիագար Այնթապցու վերաբերյալ.— Երանց ազդեցությունը հետագաների վրա և հայկական պատմագիտության սխալ գնահատականը եղիագար Այնթապցու շարժման մասին.— Գնահատման նոր ուղին.— Եղիագար Այնթապցին Արղենի առաջնորդ, Կ. Պոլսի պատրիարք և Երուսաղեմի պատրիարք.— Եղիագարի արևելյանայ կաթողիկոսության ծրագիրը.— Խաչատուր Գաղատացին և Եղիագարի կաթողիկոսության հարցը.— Խաչատուրի և Եղիագարի երբեմնի բարեկամությունը հակամաղենցիական հողի վրա.— Եղիագարը որպես հակասական (1662 թ.).— Խաչատուր Գաղատացու պայքարը նրա դեմ. Հայր Սիլվեստրի նամակն այդ մասին.— Խորհրդավոր դաշինքը Խաչատուրի և Եղիագարի միջև (1663 թ.).— Եղիագար Այնթապցու ներգրավումը սակավաթիվի և ազատագրական ուխտի մեջ.— Եղիագարի կաթողիկոս օձվելը Հայկում: Խաչատուր Գաղատացու ներքին (1664 թ.).— Եղիագարի կաթողիկոսության խանդավառ ընդունելությունն ազգի կողմից.— «Լատինափրությունը» սակավաթիվի հայտարար երևույթ և Եղիագար կաթողիկոսի գործունեությունը.— «Վիշապն Սպանիացոց». սպանական-գաղմատական—ճոռմեական կամ լատինական.— Մեռոնի առաջինը Հոռմի պապին.— Թուլյատությունը հայ հոգևորականներին՝ Հոռմից նեոնադուրյուն ստանալու.— Եղիագար Այնթապցու Հոռմ գնալու ծրագիրը և նրա խափանումն էլմիածնականների կողմից (1681 թ.).— Եղիա վարդապետի առաջնությունը դեպի Հոռմ.— Եղիագար Այնթապցին «երկարակ» և «կարույթի».— Արևմտանայ առեւտրական բուրժուազիան՝ Եղիագարի արևմտանայ կաթողիկոսության ծրագրի նեկարան.— Եղիագար Այնթապցին ապագա Հայաստանի կաթողիկոսության որպես բեկնածու.— Եղիագարի ականա կաթողիկոսությունը էլմիածնում.— Եղիագարյան եղիագարյան շարժման բնույթի և եկարագրի մասին:

Աշխատութեան մեջ առիթ ունեցանք մի բանի տեղ հիշատակելու ժամանակի նշանավոր դեմքերից եղիազար Այնթապցու անունը, նախ արեւմտահայ խոշալուստիւնի և հոգևորականութեան փոխհարարերութեաննների և այլա Հովհաննէս Թուֆուճիի գեպի Եվրոպա ուղևորման խնդիրների կատակցութեամբ: Սակայն եղիազար Այնթապցու դիմագիծը կարոտ է լրացման՝ ազատագրական շարժման որոշ հարցերի լուսաբանման համար:

Եղիազար Այնթապցու և այսպէս կոչված եղիազարյան շարժման հարցը կապված է արեւմտահայ ազատագրական շարժման ամբողջ ընթացքի հետ և անհրաժեշտ է նրանով զբաղվել հանդամանորեն: Սակայն այդ հարցի քննարկումը հնարավոր չէր կատարել նախքան առաջ քաշված հիմնական հարցերի ամբողջական լուծումը:

Սակայն այդ բովանդակին ծավալուն ու տեսական շարժման նշանավոր ներկայացուցիչներից մեկն էր եղիազար Այնթապցին՝ Երուսաղեմի պատրիարքը և արեւմտահայոց կաթողիկոսը:

Համեմատած ժամանակի ուրիշ դեպքերի հետ՝ եղիազար Այնթապցու ազմկուս գործունեությունը շատ ընդարձակ տեղ է գրավել մեր պատմության մեջ: Արեւմտահայոց առանձին կաթողիկոսություն հաստատելու նրա ձեռնարկումն իր ժամանակին հայութեան մի մասի կողմից արտակարգ հարգած է համարվել Հայկական Եկեղեցու միասնության դեմ և այդպէս էլ միակողմանիորեն ավանդվել մեզ՝ ժամանակակից երկու մատենագիրների կողմից: Արանցից առաջինը հայտնի մտավորական և հասարակական գործիչ Երեմիա Չելերի Քլոմուրջյանն է, հակա-եղիազարյան ճակատի պայտազուլան իսկ, որն իր «Տարեգրական պատմութիւն»-ում մանրամասնորեն խոսում է այդ անցքերի մասին¹. և Միքայել Չամչյանը,

¹ «Տարեգրական պատմութեան» անտիպ ձեռագիրը գտնվում է Վեներական Միթիթարյան Մատենադարանում. հմտ. Վ. Լ. Թորոզյանի հրատարակած «Երեմիա Չելեպիի Քէօմլուրճեան Մտածողոյց պատմութիւն», հտ. Ա, էջ 185—186:

օգտվելով հանդերձ այլ և այլ մանր հիշատակարաններից, Երեմիա Չելերիի տիրական ազդեցութեան տակ է գրել եղիազար Այնթապցու մասին¹, Երկրորդը՝ Զաքարիա Քանաքեռցին է, որի «Պատմագրութիւն»-ը 1870 թվականին միայն լույս աշխարհ եկավ էջմիածնի մատենադարանից. սա ևս, լինելով էջմիածնի ազդեցութեան շրջանում աճած ու ստրած մարդ, եղիազարի գործունեությունը ներկայացնում է միեւնոյն գույնավորումով, ինչ որ Երեմիա Չելերին²:

Չամչյանից հետո եկող մեր պատմաբաններն, այսպիսով, առաջնորդվել են միեւնոյն ուղղությամբ, հետևելով նախ և հիմնականում Չամչյանի միջոցով Երեմիա Չելերիին, և հետո՝ Զաքարիա Քանաքեռցուն: Նրանց մեջ ամենակարևորը և ամենահեղինակավորը Մաղաքիա Օրմանյանն է³. Երուսաղեմյան հեղինակներ Աստվածատու Տեր-Հովհաննէսյանը⁴ և Տ. Զ. Թ. Սամվալանյանցը⁵ թեև օգտվել են նաև Մուրթ-Հակոբի մատենադարանի անտիպ աղբյուրներից, բայց չեն կարողացել ձեռքագատվել նախորդների ազդեցությունից: Նույն ազդեցության տակ են մնացել նաև Լեոն⁶ և ուրիշներ:

Այսպիսով՝ հայ պատմագիտությունը, հոռոմեական Չամչյաններից մինչև լուսավորչական Օրմանյանները, գտնվելով

¹ Մ. Չամչյանը գրում է Երեմիա Չելերիի մասին. «Գրեաց և զպատմութիւն անցից իւրոյ ժամանակի՝ ստուգութեամբ և հաւատարմութեամբ. յորմէ տեսալ և մեր՝ տանուկցար ինչ ինչ ի ԼԲ. զլիտյ մինչև ցայսր, հայելով և յայլ յիշատակարանս և ի հատուկաբ գրութիւնս», տե՛ս «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, էջ 723: Եղիազարի կաթողիկոսութեան են նվիրված Չամչյանի 12—16 զլուխները, էջ 697—723:

² «Զաքարիա Մարկապոյի Պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, հտ. Բ, գլ. ԼԹ, Խ, ԽԳ և ԽԲ:

³ «Աղգադատում», մասն Բ, §§ 1751—1767, 1791, 1797 և 1808—1825:

⁴ «Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի», հտ. Ա, Երուսաղեմ, 1890 զլ. ԽԷ—Մ:

⁵ «Պատմութիւն Երուսաղէմի», հտ. Ա, Երուսաղեմ, 1931, էջ 608—636:

⁶ «Հայկական տպագրութիւն», հտ. Ա, Թիֆլիս, 1901, էջ 221—227, և «Հայոց պատմութիւն», հտ. Գ, էջ 317—319:

զեպրերին ժամանակակից աշատու, կրքոտ ու միակողմանի աղբյուրներին ազդեցութեան տակ, չի կարողացել ճիշտ և արժանավոր գնահատական տալ Եղիազար Այնթապցու գործունեութեանը¹։

Եղիազար Այնթապցուն նկարագրում են որպես վերին աստիճանի փառամոլ, եսասեր ու խռրամանկ մարդ. սակայն այս գծերը նրա անհատական նկարագրի որքան էլ ստույգ հասկանալի չեն, այնուհանդերձ ոչ մի զեպրում բավարար չեն նրա առաջ բերած հասարակական հեկայական շարժումը բացատրելու։

Եղիազարի արևմտահայ ինքնուրույն կաթողիկոսութեան պատմութեան սկսվում է 1663 թվականից, բայց այդ թվականին նա արդեն հասարակական արդյունավոր անցյալ ունի։ Նա Հովհաննես Շնորհազու աշակերտն էր և իր արժանավորության համար 1647 թվականին Արղնիի Բարձրահայաց Ս. Աստվածածնի վանքի առաջնորդությանն էր կոչվել։ Իսկ 1651 թվականին Կ. Պոլիս գալով այնքան էր համբավ հանել, որ, «ճարհեալ յիշխանաց և ի ռամկաց նաև յալլազդի երևելեաց բողաքիս», մեկուկես տարի քաղաքի պատրիարքությունը վարելով ընդհանուր համակրանքի էր արժանացել², որից հետո վերադարձել էր իր նախկին աթոռին 1653 թվականին³։ Դրանից հետո Երուսաղեմի հայկական իրավունքների պաշտպանության գործում ցույց տված եռանդի և աջակցության համար Երուսաղեմի Աստվածատուր Տարոնեցի պատրիարքը նախ իրեն փոխանորդ էր կարգել նրան 1656 թվականին, և հետո՝ հաջորդ, նրան հանձնելով պատրիարքա-

կան ամբողջ իշխանությունը 1657 թվականի զեկտեմբերին⁴ և այդ իշխանության մեջ նա մնում էր մինչև 1663 թվականը։

Այս թվականին նա սկսում է արդեն հետամուտ լինել իր կաթողիկոսության ծրագրի իրագործմանը։ Այդ ծրագիրը, ինչպես գրում է Չամչյանը, էր «լինել գլուխ ազգին հայոց, և նստիլ առանձին կաթողիկոս ի վերայ այնոցիկ՝ որք կային ընդ իշխանութեամբ Օսմանցոց, և զնել զաթոռ իւր յԵրուսաղէմ»⁵։

Հետաքրքրական է, սակայն, որ այս ծրագրի դեռ հզացման շրջանում Եղիազար Այնթապցին իրեն գաղտնի խորհրդակից է ունենում մեզ ծանոթ և հրապարակում իր լատինասիրական գործունեությամբ հայտնի Խաչատուր Գաղատացուն⁶, որը նրա հետ զաշնադիր է լինում այդ ծրագիրը գլուխ բերելու համար։ Մ. Չամչյանը գրում է․

«Ինչպե՞ս և ոչ ի նոյն աւուրս գալ յուխտ յԵրուսաղէմ Խաչատրոյ կաթողիկոսին Ստոյ, որում բազում սէր և մեծարանս պատուոյ ցուցեալ Եղիազարու և ընտելութիւն արարեալ յանկոյց յինքն զսիրտ նորս, և յառանձին պահու ի տեղոց ուրք կոչեցեալ Գլխադիր սրբոյն Յակոբայ՝ յայտնեաց նմա զխորհուրդս սրտի իւրոյ, և յաւել ասել՝ թէ ի յաջողել կաթողիկոսութեան իմոյ ո՛չ հասցէ քեզ բնաւին վնաս ինչ, այլ մասնաւանդ յամենայնի ձեռնտու եղէց քեզ. կայցի, ասէ, էջմիածին զիշխանութիւն իւր ի վերայ արեւելեայց և եթ՝ որք կան ընդ տէրութեամբ Պարսից, և զու՝ զիշխանութիւն քո զառաջին ի սահմանս Կիլիկիոյ, և ես դիւրաւ ձգեմ յիս զամենեսին՝ որք կան արտաքոյ քումդ զիճակի ընդ տէրութեամբ Օսմանցոց ի բովանդակ Հոռոմստան։ Եւ զի Խաչատուր էր պարզամիտ որ, ի խօսիլն Եղիազարու բազում ինչ՝ հանդերձ խոստմամբք, ես

¹ Եղիազար Այնթապցու և նրա ժամանակաշրջանի պատմության համար շատ սրճերավոր են Երուսաղեմի վանքի վավերագրերը, որոնք 1930 թվականից սկսած հրատարակվել են Միսն ամսագրում՝ «Գիււան Ս. Յակոբայ» խորագրի տակ, Միքայիլ Աղափնուու և Մեդրոպ Աշանյանի կողմից։ Մինչև 1941 թիվն այդ վավերագրերից լույս են տեսել Ա.—Խէ համարները։

² Գ ա Ր. Ս Ր վ ա ն ձ ա յ ա ն ց, «Թորոս աղբար», մասն Բ, էջ 400—401։

³ Ա ն դ, էջ 404։

⁴ Տ. Ս ա վ ա յ ա ն յ ա ն ց, «Պատմութիւն Երուսաղէմի», հտ. Ա, էջ 602—605։ Տես նաև Աստվածատուր Տարոնեցու այն կոնզակը (4/14 զեկտ. 1657 թ.), որով նա պատրիարքութիւնը հանձնում է Եղիազարին, անդ, հտ. Բ, էջ 1202—1208։

⁵ Մ. Չ ա մ շ յ ա ն, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, էջ 607։

⁶ Խաչատուր Գաղատացու մասին խոսել ենք էջ 76—78 և այլն։

նմա հաւանութիւն. յայնժամ երկրքին նաքա ի միասին ուխտիւք դաշինն եղեալ հաստատեցին ի դիպող ժամու ի գլուխ տանիլ զիրանս¹:

Հետագա դեպքերի լուսարանման համար ավելորդ չէ հիշատակել, որ խաչատուր Գաղատացին մի ժամանակ բարեկամ էր եղել Նդիազարի հետ:

4. Պոլսի պատրիարքութիւնից ընկնելուց հետո հայտնի չէ, թե խաչատուրը ո՞րտեղ էր մնացել. սակայն 1656 թ. մայիսին 4. Պոլսի վերադառնալով² Նդիազար Այնթապցու եռանդուն կուսակիցներից էր դարձել Հովհաննես Մուղնեցի պատրիարքի դեմ և ապա այդ կապակցութեամբ էջմիածնի Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի դեմ՝ նրա տարած պայքարում:

Ինչպես հայտնի է, այս ժամանակ պոլսահայութիւնն ալեկոծութեան մեջ էր եղիազարյան-մուղնեցիական պայքարի հետեանքով: Այդ պայքարն սկսվել էր նախորդ տարվա սեպտեմբերին³ և այդ առթիւ հարաբերութիւնները լարվել էին էջմիածնի մայր աթոռի հետ, որի զահակալ Հակոբ Զուղայեցին Հովհաննես Մուղնեցու և մուղնեցիականների կողմն էր բռնել: Որպես եռանդուն եղիազարյանի՝ խաչատուր Գաղատացուն էր հանձնվել հուլիսի 4/14-ին դատ անել նոխուտջի Մելքիսեթ երեցին, որն իբր թե գերեզմաններն կանանց խօսք է ասացեալ և զոմանս հայհայեալ և բազում խայտառակութիւնս⁴, բայց իրականում նրա հանցանքն այն էր, որ Նդիազարի հակառակորդներից էր⁵: խաչատուր Գաղատացին

նույն 1656 թ. հուլիսի 17/27-ին սյունհողոս էր գումարել Մարաիբոս Ղրիմեցու, Նդիազարի աշակերտներ Իգնատիոս և Կիրակոս վարդապետների, Կեսարացի խաչատուր եպս. Պարոնաների և Ղազար վրդ. Ստամբուլցու հետ, մասնակցութեամբ քաղաքի երեկիւնների և աթոռակալների, քննելու համար Մուղնեցուն հովանավորող Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի խնդիրը, և որոշվել էր, որ ճնա ևս մեզ պէտք չէ, և այսուհետև ոչ յիշեսցի անուն նորին ի պատարագնս⁶: Նմանօրինակ մի ժողով էր տեղի ունեցել նաև դեկտեմբերի 19/29-ին և 21/31-ին, Սսի Թորոս կաթողիկոսի գլխավորութեամբ և հոգևորականների, իշխանավորների ու ժողովրդի խնուն բազմութեան ներկայութեամբ, որին նույնպես զործոն մասնակցութեան էր ցույց տվել խաչատուր Գաղատացին⁷:

Վերջինիս Նդիազարին համակիր ու կուսակից դարձնող պատճառք, սակայն, այն էր միայն, որ Հովհաննես Մուղնեցին իր ճակատով էջմիածնական հոսանքն էր ներկայացնում 4. Պոլսում, թեև իրականութեան մեջ Նդիազարն ինքը հակաէջմիածնական չէր, ինչպես տեսնելու ենք հետո. իսկ այդ ճակատի վերացումով նրանց հարաբերութիւնները կարող էին տարրեր դույն ստանալ:

Իրոք, Մուղնեցու վեճը վերացել էր հրապարակից նույն 1656 թվականի վերջերին⁸ նրանով, որ Հովհաննես Մուղնեցուն հեռացնելով պատրիարքութիւնից՝ աշխարհական տեղակալներ էին գրավել իշխանութիւնը⁹. իսկ Նդիազարն ու խաչատուրը իրենք ևս հեռացել էին 4. Պոլսից՝ մեկնելով

¹ Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, էջ 697:
² Երեմիա Չելեբի, «Օրագրութիւն», էջ 177:
³ Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, էջ 664: Մ. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, § 1729:
Հովհաննես Մուղնեցու կուսակիցները կոչվում էին հովհաննիսյաններ կամ մուղնեցիներ (հմտ. Երեմիա Չելեբի, «Օրագրութիւն», էջ 89—90), իսկ Նդիազար Այնթապցու կուսակիցները կոչվում էին եգիստայններ (հմտ. անդ, էջ 90 և 104):
⁴ Երեմիա Չելեբի, «Օրագրութիւն», էջ 89—90:
⁵ Անդ, էջ 193:
⁶ Անդ, էջ 97:

¹ Երեմիա Չելեբի, «Օրագրութիւն», էջ 198—199:
² Անդ, էջ 219—220:
³ Վերջին անգամ 1656 թ. դեկտ. 21/31-ի ժողովն է միայն զբաղվել մուղնեցիականների խնդրով. իսկ նրանից հետո այլևս չի լսվում նրանց մասին, հմտ. անդ, 220-րդ էջից սկսած:
⁴ Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, էջ 664: Մ. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, § 1729.

գեպի իրենց նոր պաշտոնատեղիները, արաջինը՝ նույն տար-
վա հոկտեմբերին¹, իսկ երկրորդը՝ 1657 թ. մայիսին²:

Այժմ Կիլիկիայի կաթողիկոս Խաչատուր Գաղատացու
հարաբերություններն այլևս բարեկամական չէին Երուսաղեմի
պատրիարք Եղիազարի հետ. և ո՛չ միայն բարեկամական
չէին, այլև թշնամական էին:

Եղիազար Այնթապցին, ինչպես ասացինք, հակա-էջմի-
ածնական չէր, հետևաբար Հովհաննես Մուղնեցուն Կ. Պոլսի
պատրիարքությունից բռնի տալուց հետո նա դարձյալ և միշտ
Հայկական Եկեղեցու և էջմիածնի մայր-աթոռի շահերին էր
ծառայում, ինչպես անցյալում: Հայեպում 1661/62 թվական-
ներին սասկաններին հաջողվել էր «Հոռոմի աշակերտ» Հով-
հաննես վարդապետին (Don Giovanni) «հայ ազգի ղեկավար
և հոգևոր առաջնորդ» հաստատել տալ ֆրանսիական հյու-
սյատոս Ֆրանսուա Բարոնի ջանքերով ու միսիոնարական
գումարներից տրամադրված նյութական ուժեղ միջոցներով.
Իսկ Եղիազար Այնթապցին նրա դեմ Բ. Դանից հրովարտակ
հանելով եկել էր Հալեպ ու հալածել նրան³:

Այսպիսով, նախկին կուսակիցների միջև ներքին հակա-
մարտություն էր սկսվել:

Հալեպի լատինական առաքելության այն Տեղեկագիրը,
որ պատմում է այս գեպերի մասին, ասում է, թե Խաչատուր
Գաղատացին այս ժամանակ Կ. Պոլսից Հալեպ հասնելով կա-
րողացել էր «աղմուկները հանդարտեցնել և կարգադրել ի
նպաստ կաթողիկոսներին»⁴, այսինքն՝ սասկաններին, և ամեն
գնով աշխատում էր միսիոնարներին միջոցով, — ինչ որ նշա-
նակում է՝ Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանի միջոցով, — տա-
պալել տալ իր հակառակորդին:

Այդ մասին Հալեպից Հայր Սիլվեստրե (Sylvestre de
Saint-Aignan) գրում է Հելիոպոլսի եպիսկոպոս Ֆրանսուա
Պալլուին (François Pallu)⁵ 12 հոկտ. 1662 թ. նամակով.

«Հայոց կաթողիկոսն ասում է, որ իրեն հրապարակով
հռոմեական կաթողիկ է հայտարարելու, եթե Բարձրագույն
Դանից պատիժ ձեռք բերվի Եղիազար պատրիարքի համար,
որը Երուսաղեմում է նստում և այնտեղ 50,000 դահեկանի
եկամուտ է ստանում՝ շատ վատ օգտագործելով այդ: Աշխա-
տում ենք այդ ուղղությունը»¹:

Արդ, այժմ հարց է ծագում, թե ի՞նչպես է լինում, որ
Խաչատուր Գաղատացին այս թվականից շատ քիչ հետո, այս-
պիսի ոխերիմ հակառակորդի իր դիրքը հանկարծ թողնելով,
գնում է Երուսաղեմ և, Եղիազարի գաղտնի ծրագրին հաղոր-
դակից դառնալով, նրա հետ այդ հողի վրա ուխտադիր է լի-
նում:

Միամտությունը պետք չէ նայել Չամչյանի աղբյուրի այն
տեղեկության վրա, թե Խաչատուրն ուխտի համար էր Երու-
սաղեմ գնացել, որովհետև, երևույթներից դատելով, Երուսա-
ղեմի հանդիպումը պատահական լինել չէր կարող: Այդ հան-
դիպումը շատ խորհրդավոր է: Եղիազար Այնթապցին Գլխա-
ղբի մատուռում «գլխորհուրդս սրտի իւրոյ». վերջինս հավանու-
թյուն է՝ տալիս, և նախկին հակառակորդների միջև դաշինք է
կնքվում «ի դիպող ժամու ի գլուխ տանիլ զիրան»:

Եղիազարի նկատմամբ մեր աղբյուրի ունեցած միակող-
մանի և խմբակցական հայացքի արդյունքն են անշուշտ նրա
դատումների այն թեթև և մակերեսային մասերը, ըստ որոնց

¹ «Le patriarche des Arméniens dit qu'il se déclarera publique-
ment catholique, si on obtient de la Porte le châtiement du patriarche
Eliasar, résidant à Jérusalem, et y recevant cinquante mille piastres,
qu'il emploie très mal; nous y travaillons», տե՛ս «Lettre du P. Syl-
vestre de St.-Aignan, d'Alep, 12 Octobre 1662, à Mgr. d'Héliopolis
à Surat», Bibl. Nat. Ms. Fr. 25038, fol. 1292. Հմմտ. «Documents Iné-
dits», t. I, p. 464.

¹ Եղիազար Այնթապցին Կ. Պոլսից մեկնեց հոկտ. 9/19-ին, տե՛ս
Երևմտա-Չեչեթի, «Օրագրութիւն», էջ 210—211:

² Անդ, էջ 244—245:

³ «Documents inédits pour servir à l'histoire du christianisme en
Orient», t. I, 461—462.

⁴ Ibidem, p. 463—464.

իրք թե Եղիազարն իր խորամանկությամբ էր սիրաշահել ու համոզել Խաչատրի նման մի հակառակորդի (Գրազում սեր և մեծարանս պատուայ ցուցեալ Եղիազարու՝ և ընտելութիւն արարեալ՝ յանկույց չինքն գտիրտ նորա»), կամ Խաչատուրը, իրք թե պարզամիտ մարդ լինելով, համոզվել էր նրան (սե զի Խաչատուր էր պարզամիտ ոք, ի խօսիչն Եղիազարու բազում ինչ՝ հանգնած խոստմամբք, ետ նմա հաւանութիւն»): Նման դատումներն անզոր են երևույթները պարզարանելու: Մեզ պետք է միայն այն, ինչ որ առարկայական բնույթ ունի, իսկ միակ առարկայականը Եղիազարի խոստումներն են, որոնց բովանդակության մասին զժբարխտարար ոչինչ չի ասված: Այսքանը միայն գիտենք, որ Եղիազարը տուտ էր, թե Քի յաջողել կաթողիկոսութեան խնդր՝ ո՛չ հասցէ քեզ բնաւին վնաս ինչ. այլ մանաւանդ յամենայնի ձեռնառու եղէց քեզ»:

Այս «ամենայն»-ի տակ շատ բան կար անշուշտ թաքնու-ված: Եղիազար Այնթապցին, եթե իրապես ունէր թաքուն ծրագիր, այդ ծրագիրը նա վստահում էր թշնամուն հաղորդել՝ այս «ամենայն»-ով քաշալներված: Նա իր նպատակների իրազորման համար նրա օժանդակությունն էր ասպահովում՝ այս «ամենայն»-ի փոխարեն: Նա իր ծրագիրը կարող էր իրազործել՝ այս «ամենայն»-ի հետ զուգորդված: Ի՞նչ էր այդ «ամենայն»-ը:

Ինչպես գիտենք՝ Խաչատուր Գաղատացին Հայոց ազատագրության զարգացման էր նվիրված: Հենց այս ժամանակ նա այդ նպատակով հարարերություններ էր մշակում Հալեպում ֆրանսիական հյուպատոսի և լատին միսիոնարների հետ՝ և նամակներ էր գրում Հոմմ՝ Ալեքսանդր VII պապին, ու Փարիզ՝ Լուիզվիլ XIV թագաւորին²: Սակայն շատ բնական

¹ Խաչատուր Գաղատացին 1662 թվականին Հալեպում այցելու-թյուն է տալիս ֆրանսիական հյուպատոս Ֆր. Բարոնին ու փոխազար-ձարար Հաչի հրապիրվում իր հետևորդներով, միսիոնարների մասնակ-ցությամբ. ընծաներ են փոխանակվում. նա պատարագի է հրապիրում հյուպատոսին լատին միսիոնարների ներկայությամբ և այլն, տե՛ս «Documents inédits», p. 463—464.

² Տեսնել սույն աշխատության 93—100-րդ էջերը:

է, որ արևմտահայ ընդհանուր շարժում առաջ բերելու համար միմիայն Կիլիկիայի կաթողիկոսի ուժերը բավական չէին: Նրան հարկավոր էր և Երուտաղեմի պատրիարքի նման մի հեղինակավոր անձնավորության գործակցությունը. և եթե ներդրավներ վերջինս այդ շարժմանը, կարող էր մեծ օգուտ բերել գործին, իսկ նրա թշնամությունը, ընդհակառակն, խոչընդոտ կդառնար: Հավանաբար ուղղակի այս նպատակով էր Խաչատուր Գաղատացին Երուտաղեմ գնացել՝ Եղիազարի տրա-մադրությունը շոշափելու և բանակցելու համար, հույս դնե-լով հին բարեկամության վրա: Բայց իր խոշոր ծրագրին նրան աջակից դարձնելու համար հարկավոր էր և մի համարժեք փո-խադարձություն: Այս հիման վրա է, որ պետք է ծնունդ առած լինի Եղիազարի արևմտահայ կաթողիկոսության խնդիրը, որի իրագործումը երկու կողմերի համար ձեռնառու էր հավասա-բապես, որովհետև դրանով մի կողմից Եղիազար Այնթապ-ցու իշխանությունը կընդարձակվեր, մի բան, որ կշահագրք-զըներ նրա անհատականությունը. մյուս կողմից՝ կաթողիկո-սական այս նոր իշխանությամբ, որի իրավասությունը պիտի տարածվեր Կիլիկիայի կաթողիկոսությունից դուրս՝ Օսման-յան Կայսրության բոլոր սահմանների վրա, սակայն ազդե-ցությունը արևմտահայ ամբողջ արևմտահայությունից վրա՝ հօգուտ արևմտահայ ընդհանուր շարժման:

Այս համաձայնությամբ կներկուզվող դաշինքը՝ Եղիազար Այնթապցին արևմտահայ ազատագրության ուխտի մեջ էր մտնում, խոսք առնով Խաչատրին, թե «յամենայնի ձեռնառու եղէց քեզ»:

Ուրիշ կերպ չի բացատրվի Խաչատուր Գաղատացու ըն-թացքը: Տիրող պայմաններում մի օրից մյուսը իր սխերիմ թշնամուն բարեկամ և անկեղծ գործակից դառնալու երևույթը ներքին ուժեղ զրգասպատաճառ է պահանջում: Եղիազարի դեմ Խաչատրի ունեցած պայքարը լատին միսիոնարներն էին իրենց ձեռքն առել, եթե չասենք, թե բուն զրգոզն էլ հենց նրանք էին. հետևաբար՝ առանց նրանց համաձայնության անկարելի բան էր Խաչատրի անակնկալ հաշտություն

ու մերձեցումը «հերձվածող» Եղիազարի հետ, և եթե արևմտահայ առանձին կաթողիկոսության ծրագիրը Եղիազարի սեփական ծրագիրն էր, ինչպես կարծում են Չամչյանը և ուրիշներ, բուլլատրելի է ենթադրել նաև միսիոնարների մասնակցությունն այդ խնդրի մեջ՝ Եղիազարին հրապուրելու համար, ելնելով մի կողմից նրա անհատական փառասիրական հակումներից, մյուս կողմից՝ նրա շեշտված հայրենասիրական զգացմունքներից, Բայց Եղիազարի կաթողիկոսության խնդիրը կարող էր նույնիսկ լինել միսիոնարների հղացումը:

Ինչևէ, անվիճելի փաստ է, որ 1663 թվականին խորհրդավոր պարագաների տակ գործակցություն զաշինքը կնքվել էր, որից հետո Եղիազարը 1664 թվականի դարձան զիմելով մեծ վեպի Բյուրուպի Ահմեդ փաշային, որն այդ ժամանակ պատերազմի առիթով Հունգարիայում էր Պանյում, նրանից առատ կաշտում կաթողիկոսության և միաժամանակ Երուսաղեմի պատրիարքության հրովարտակ էր առել և Հայկոյ վերադարձել: Այդտեղից նա նաժակ էր ուզարկել Խաչատուր Փաղատացուն, որն այդ օրերին Կ. Պոլսում էր, խնդրելով փութալ դեպի Հալեպ, հայանելով թե «ժամ է կատարելոյ զրան մեր՝ զոր հաստատեցաք ի միասին յերուսաղէմ»: Խաչատուր Փաղատացին, ըստ իր խոստման, շտապում է ճանապարհ ընկնել, «բայց զգուշացեալ՝ զի մի՛ ի գործել նորա զայսպիսի ինչ շտապալ՝ ծագեսցի աղմուկ շփոթից», ինչ որ անխուսափելի էր, խոհեմություն էր համարել նախքան մեկնելը նախապատրաստել հասարակական կարծիքն այդ արտակարգ անակնկալի համար և, հավաքելով մի քանի երեկելի մարդիկ, որոնց մեջ էր Երեմիա Չելեբի Բյուրուրջյանը, դադարաբար նրանց հայտնել էր իրողությունը: Բայց և այնպես անխուսափելին պատահել էր, որովհետև նրանք ժրբեր լուան, ափշեցան և զահի հարան, յայտնի տեսանելով՝ թէ որպիսի պառակտումն հանդերձեալ է լինել ի մէջ ազգին, և պատառումն անկարկատելի»։ և նախ աշխատել էին Խաչատրին համոզել, որպեսզի շտապի, և հետո՝ իրենց կողմից Երեմիա Չելեբիին Հալեպ էին ուղարկել, որպեսզի Եղիազարին տար-

համոզի: Սակայն անօգուտ էին եղել և՛ մեկը և՛ մյուսը: Երեմիան չէր կարողացել համոզել Եղիազարին, իսկ Խաչատուրը նույնպես համոզվող չէր, և ոչ էլ վախեցող, թե «ինքն ի պատճառս այլոց (!!!) ի բերան անկցի ամենեցուն», ինչպես կարծում է մեր միամիտ աղբյուրը, ուստի Երեմիա Չելեբիի ետևից շտապելով դեպի Հալեպ՝ ձեռնադրել և օծել էր Եղիազարին:

¹ Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, էջ 699—700:

Չամչյանը 1663 թվականին է վերագրում գեղքը, բայց հիշո չէ իսկ Օրմանյանը՝ 1664 թվականին, «Ազգուպատում», մասն Բ, § 1753: Առայժմ դժգոյ է մեզ հշտել Եղիազար Այնթապցու օծման օրը: Երեմիա Չելեբին Կ. Պոլսից դեպի Հալեպ է մեկնել 1664 թ. սեպտ. 14-ին, ըստ երևույթին հին տոմարով (Հանդէս Ամսօրեայ, 1932, էջ 630), ուրեմն՝ սեպտ. 24-ին: Երուսաղեմի Ա ժծ վավերագրերը (Միտն, 1933, էջ 150—151), որ Եղիազարի օծման օրերին է գրված, տարեթիվ չունի, այլ միայն կրում է ամսաթիվ և շաբաթական օրվա նշում, նոյեմբ. 29, եղ. օր, բայց հրատարակչի կողմից դասավորված է 1664 տարեթիվ տակ, որի համար անշուշտ մի հիմք է եղել: Ասկայն 1664 թ. նոյեմբերի 29-ին Գշ. էր (հին տոմարով), իսկ եղ. օրը դեկտ. 31-ն էր: Վավերագրի հեղինակն ուրեմն կա՛մ ամսաթիվն է շփոթել, կա՛մ օրը: Այս հաշվով Եղիազարի օծումն ընկնում է 1664 թ. նոյեմբերի վերջերին (հին տոմարով) և արդեն զբաղից առաջ չպիտի եղած լինի, որովհետև ԱՅՏԳ և ժԳ վավերագրերը, որոնք 1664 թ. նոյ. 4-ին և 27-ին Կ. Պոլսից գրված նամակներ են (Միտն, 1933, էջ 119—122), տեղեկություն չունեն այդ մասին: Այս 1664 տարեթիվը հաստատվում է և Եղիազարի կնքով. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Եղիազար կաթողիկոս, սպասաւոր Սուրբ Գլխազրի որդւոյն Չելեբեայ, թվ. ՌՃԺԳ» (տես Միտն, 1933, էջ 284): Հայոց ՌՃԺԳ (1113) թվականը լրիվ համապատասխանում է 1664 թվականին, և թե նկատի ունենանք, որ վերջին գարեկում հայկական տոմարի կիրառությունը նույնացած էր հուլյանի հետ, հաշվարկի 1-ը տարեկուտ ընդունվելով նաև հայկական անշարժ թվականի համար: Մյուս կողմից սակայն, ըստ Սիմեոն Երեանցու վկայության, Եղիազարի կաթողիկոսության հրովարտակը ստացված էր հայոց ՌՃԺԳ (1114) թվականին («Ջամբո», Վաղպատ, 1873, էջ 239): Երեմիա Չելեբին Եղիազարի կաթողիկոսության համար նույնպես առիտ է հայոց ՋՃԱՌԷ (6+100+1+1000+7=1114) թվականը (տես սուս, Վավերագրեր Ա 11): Եթե անշարժ տոմարով հաշվենք հայկական այս 1114 թվականը, կունենանք հուլյան 1665 թվականը, տարեկալից մինչև տարեկալը. իսկ շարժական տոմարով՝ 1664 թ. հոկտ. 6-ից մինչև 1665 թ. հոկտ. 5 (Գրիգորյան տոմարով՝ 1664 թ. հոկտ. 16—1665 թ. հոկտ. 15): Արեմն՝ օծումը տեղի է ունեցել 1664 թվականի հոկտ. 13-ից հետո:

Եղիազարի կյանքն այնուհետև ամբողջ տասնվեց տարի-
ներ տևական աշխարհագրության մեջ է լինում կաթողիկոսության
և պատրիարքության այս աթոռի վրա՝ հաճախակի էլեկշնե-
րով: Նրան կատարի հակառակորդ և մրցակից են դառնում
նրա նախկին գաղափարակիցներից նույնինքն Աստվածա-
տուր Տարոնեցին ու Մարտիրոս Ղրիմեցին, որոնք էջմիած-
նական շահերի պաշտպանության համար այս անգամին
լուրջ պայքարի են դուրս գալիս նրա դեմ: Բայց Եղիազարն
անդրդվելի և անհողզող է մնում իր նոր դիրքերում, հենվե-
լով սասական հոսանքի ուժի և հեղինակության վրա, որոնք
աճում էին հեազհետև Արևմտյան Հայաստանում, շնորհիվ
այն բանի, որ այդ հոսանքը պատարագրության դրոշմ էր տանում
այդ շրջանում: Եվ, իրոք, Եղիազարի այս շարժումը լայն ըն-
դունելություն է գտնում և ծավալվում է ամբողջ արևմտահա-
յուսթյան մեջ՝ հակառակ էջմիածնականների բուռն ընդդիմու-
թյան ու պայքարին²: Մենք տեսնում ենք, օրինակի համար,

1 Նախ, 1665 թվականին, Աստվածատուր Տարոնեցին և Մարտիրոս
Ղրիմեցին շտապել էին եպարքոսական հրովարտակ ձևեր բերել, մեկը
Նրուսաղեմի կաթողիկոսության՝ իսկ մյուսը փոխանորդության անունով,
որպեսզի գոնե Նրուսաղեմի աթոռը չբեկներ Եղիազարի ձեռքը (Մ. Չամ-
չյան, «Պատմություն Հայոց», հտ. Գ, էջ 705—706) և նա հազիվ 1666 թ-
սեպտեմբերի սկզբներին (հին տոմարով «չելս օգոստոսի») կարողացավ
Նրուսաղեմ մտնել (Անդ, էջ 713): Հետո, 1667 թվականից, նա գարձյալ
թափառական էր եղել երբեմն նստելով Ռամլայում, երբեմն Արշնիում,
Բերիայում և ուրիշ վայրերում, մինչև որ 1671 թվականին կարողացավ
վերջնականապես դառնալ Նրուսաղեմի պատրիարքությունը (Անդ, էջ 715:
Տ. Սավալայանց, «Պատմություն Նրուսաղեմի», հտ. Ա, էջ 618—631:
Ա. Տեր-Ղովհաննեսյան, «Ժամանակագրական պատմություն Ս. Նրուսա-
ղեմի», հտ. Ա, էջ 394):

2 Այս շրջանում սասկանեերին տալիս են հռոմքի կամ եղիազարյան
անունը, իսկ էջմիածնականներին՝ արևելցի կամ հակորյան, տե՛ս
Մ. Չամչյան, «Պատմություն Հայոց», հտ. Գ, էջ 700—701:

Հռոմքի (արևմտահայ) և արևելցի (արևելահայ) անրմինները բնո-
րոջ էին այն տեսակետից, որ նրանք պայքարող հոսանքների գաղափարա-
կան տարբերությունը կամ պատկանելությունն արտահայտում էին հայ
ժողովրդի գոյություն ունեցող երկու մեծ հասկանքների անուններով, թեև

որ 1666 թվականի խռովությունների ընթացքում մեծ վեզիրիե
բազմաթիվ աղերսագրեր են հասնում էջմիածնի կաթողիկոսի
ոտնձգություններն ու նրա նվիրակների շրջագայությունը
խափանելու համար, հայտնելով, թե իրենք Եղիազարին են
ընդունում: Այսպիսի աղերսագրեր երեք անգամ Կ. Պոլսի
հայերն էին տվել. նույնը արել էին նաև Կարինի, Տիգրանա-
կերտի (Դիարբեքրի), Սերաստիայի, Կուտինայի (Քյոթնա-
հիայի), Եվզոկիայի (Բոխսաթի), Ամասիայի, Գաղատիայի
(Անգորայի) և այլ գավառների հայերը. նմանօրինակ մի ամ-
բաստանադիր էլ տվել էին «աղքատք հայոց», ստեղծել թե
«մեք ըստ խնդրանաց մերոց ընտրեցաք և կացուցաք զԵղիա-
զար վարդապետ կաթողիկոս և հաստատեցաք իշխանութիւն
նորա կայսերական հրովարտակաւ. այլ Յակոբ կաթողիկոսն
էջմիածնի ոչ անսացեալ կայսերական հրամանին, սկիզբն
արարեալ ի Կարնոյ, եհաս մինչև ի Զմիտին քաղաք, ժողովե-
լով զամենայն կաթողիկոսական հասս, որք պատկանին
Եղիազարու» և այլն³:

գաղափարախոսական առումով զա չէր նշանակում, որ ամեն մի եղի-
ազարյան անպայման արևմտահայ էր, կամ ամեն մի հակորյան՝ արևելա-
հայ:

Երեմիա Չելեբին, որ այս պայքարում Եղիազար Այնթապցու անհաշտ
հակառակորդներից էր, խոստովանում է, որ նա հոռմցիների պաշտելին
էր, որին 1682 թվականին արևելցիները Պնարոս Աղուկեցու ջանքերով
բարջ տվին տարան էջմիածին, ինչպես Արտաշես Արշակունին կողոպտելով
Հայաստան էր տարել «զՀելլենացոց պաշտելին», տե՛ս Վավերագիր № 11:

1 Ա. Տեր-Ղովհաննեսյան, «Ժամանակագրական պատմու-
թյուն Ս. Նրուսաղեմի», հտ. Ա, էջ 381—385:

Եղիազար Այնթապցու և Հակոբ Զուղայեցու հայտնի հակամարու-
թյունն սկսվելով այս ժամանակ՝ տեղեց մինչև 1680 թվականը, կր ժահա-
ցավ Զուղայեցին: Աշոտ Հովհաննեսյանն այս պայքարին նախորդող շր-
ջանի մասին խոսելիս, էջմիածնի աթոռի հանդեպ Արևմտյան Հայաստա-
նում եղած անջատողական ձգտումներն ընդհանրապես կապում է այն
զեղծումների հետ, որ էջմիածնի նվիրակները կատարում էին Օսմանյան
Կայսրության հպատակ հայ բնակչության մեջ (տե՛ս նրա հոդվածը՝ «Ժա-
կոբ Գ. Զուղայեցի կաթողիկոսը և տաճկահայ Գուրախովեան խնդիրը»,

Մեր նպատակից դուրս է ծանրանալ Եղիազարի կաթողիկոսության արտաքին պարագաների վրա. իսկ նրա ներքին ծալքերը հայտնաբերելու համար կարիք կա գեո երկար ու լուրջ ուսումնասիրությունների, մանավանդ անտիպ ու մեզ անմատչելի մնացած ւկղբնաղբյուրների հիման վրա: Եղիազարի գործունեության այս մասը քողարկված է թանձր մշրշով, և չէր էլ կարող քողարկված չլինել, քանի որ կապված էր հայոց ազատագրության խնդրի հետ, որը քաղաքական խընդիր էր: Այս նույն պատճառով արգեն Խաչատուր Գաղատացու գործունեության ներքին ծալքերի մասին էլ բացարձակապես ռշինչ չենք գտնում հայկական աղբյուրներում. և եթե չլինեին մեր ձեռքի տակ օտար աղբյուրներ, այս մասը մեզ համար կմնար բառի իսկական առումով մի անծանոթ աշխարհ: Այնպես որ բնավ զարմանալի չէ, եթե Եղիազար Այնթապցուն վերաբերող մեր հայկական աղբյուրներն այդ մասին ռշինչ չեն ասում մեզ. իսկ օտար աղբյուրներ, որոնք կարող էին լույս սփռել այս հարցի վրա, չեն հայտնաբերվել առայժմ:

Սակայն այս խնդրում արտաքին որոշ երևույթներ կարող են մեզ անուղղակի կամ ուղղակի առաջնորդ լինել, երեւույթներ, որոնք բնորոշ են սասկանության դիմագծին և ուղեղծին: Այդ երևույթներն ընդհանուր առմամբ երկու էին. մեկը՝ հակա-էջմիածնականությունն էր, որի մասին խոսեցինք արդեն, իսկ մյուսը՝ լատինասիրությունը: Վերջինս շատ բնորոշ երևույթ էր մանավանդ այս շրջանում, երբ Հայաստանի ազատագրության հույսերը լատինական Եվրոպայի հետ կտրուղ սասկանները բացահայտորեն լատինասիրական ընթացք էին բռնել: Այնպես որ, եթե սասկան հոռանքն ընդհանրապես էջմիածնի դեմ եղած իր պայքարում, իսկ մասնավորապես այժմ հայկական խնդրի հաջողության հույսով, իր գոր-

Առաքատ, 1915, էջ 195—205; Տե՛ս նաև նրա «Երվաղներ հայ ազատագրական մտքի պատմություն», դիրք Բ, էջ 144 և շար.): Լեզինակի հետ մենք համաձայն ենք այն բանում, որ Եղիազար Այնթապցին նվերակների համար Բուրբիայում ստեղծված աննպատ դրությունն օգտագործել է՝ անջատ կաթողիկոսությունը հաստատելու իր ծրագիրն առաջ մղելու համար:

ծունեությունը լատինասիրության հունով էր տանում, ապա ուրեմն Եղիազարի գործունեությունն էլ պետք է կրեր նույն դրոշմը: Իհարկե այդ լատինասիրությունը պետք է չակերտների մեջ առնել և կամ ուղղակի անվանել կեղծ-լատինասիրություն. բայց, համենայն դեպս, դա հայտարար երևույթ է:

Այս երևույթով մենք կարող ենք վստահ քայլերով հետեւել Եղիազար Այնթապցուն:

Եղիազարն, իրոք, իր կաթողիկոսության թվականից սկսած ընթացիկ է սասկանության այդ ուղիով:

Եղիազարի կաթողիկոս հռչակումը լատինական հակման հայտնի երևույթ է համարվել ժամանակակիցների կողմից:

Երեմիա Չելեբին, ակնարկելով այդ դեպքի մասին, 1682 թվականով իր մի նամակում այլաբանորեն գրում էր Պետրոս Ադուլեցուն.

«Դու լուար զաստղ աւետարտ, որ ի Բերիա մեզ տեսաւ ՁձԱՌէ: Հայոց թվին, ըստ որում յայտնեցաւ վիշապն Սպանիացոց յաշխարհի, որ քարշէր զմասն աստեղաց բանականաց յանյազ յորովայնին»²:

Այս թունալի ակնարկությունը Հալեպում (Բերիայում) Եղիազարի կաթողիկոսական ձեռնադրության մասին է: Հայկական ՁձԱՌէ թիվը համապատասխանում է մեր թվագրության 1664/65 թվականին³:

¹ Հայոց լատինասիրությունը, որ լատին գործիչների մոտ թարգմանվում կամ հասկացվում է կարողիկություն, առերեսային էր, լոկ կաթողիկ Եվրոպայի համակրանքը շահելու համար: Աւ. Պիղոն պատմում է, որ կլիմենտ Գալանոսը միշտ կասկածաբով էր նայում հայերի կաթողիկոսության վրա, որովհետեւ «ժանօթն էր Հայոց և դիտեր վթարեբայ բարոյս նոցա» (տե՛ս «Բանի միութին հայոց կեհատանի ընդ Եկեղեցոյն Հոովմայ», էջ 36): Ապա Պիղոն, մի շարք հայ հոգևորականների կեղծ-կաթողիկոսության մասին խոսելով՝ հիշատակում է և՛ Խաչատուր կաթողիկոս Գաղատացուն, նրան և՛ անվանելով «խարեբայ որպև և այլքն» (Անդ, էջ 35):

² Տե՛ս Վավերագիր N 11:

³ Տե՛ս 253-րդ էջի ծանոթությունը:

Վիշապն, ուրեմն, նույնինքն Եղիազար Այնթապցին է՝ Սալապն ինչո՞ւ է նա այդ հրեշի նպանական անվանում:

Սպանական-ք, այստեղ, գործածված է հոռմեական կամ լատինական իմաստով, որովհետև Սպանիան միջին դարերում հռոմեական ուղղափառության ռահվիրան էր և Սպանիայի թագավորներն իրենց սեփականել էին կարյուրի վեհափառություն տրադուր:

XIII դարի հայ բանաստեղծ Ֆրիկի օտանավորներից մեկում կարդում ենք.

«Մինքն Դաղմատ Ըսպանիացի,
Ծրնունդ սրբոյ աազանի.
Հատատացեալ Հայր և յՈրդի,
Ի երկըրայազու քո սուրբ խաչի»¹:

Այստեղ Ֆրիկը զանազան ժողովուրդների մասին խոսելիս նրանց կրկնանուններ տալով (Ջհուտ-եբբայեցի, արաբ-հազարացի, բուրգ-բանանացի, ֆոանգ-լատինացի, հոռովմ-հունացի), սպանացիներին տալիս է դաղմատ կրկնանունը. իսկ վերջինս մեր հին մատենագրության մեջ հաճախ գործածված է հոռմեական կամ հոռմեացի նշանակությամբ: Ազաթանդեղուր Տրդատի և Լուսավորչի ուղևորության առթիվ ասում է, որ նրանք «երթային հասանէին յաշխարհն Իտալիացւոց և յերկիրն Դաղմատացոց ի թագաւորական քաղաքն Հոռովմայեցւոց»²: Այստեղ երկիր Դաղմատացոց կամ Դաղմատիա նշանակում է Լատին: Իսկ «Դաշանց թղթում» Կոստանդիանոս Մեծը դաշն կնքելու առթիվ ասում է, թե «ժողով նդն մեծ... բազմաբիր իշխանօքս դաղմատական»³. հետո՝ հայոց հազարապետներին նվիրում է «նշանակս և դրօշս դաղմատացիս»⁴ և հրամայում է, որ «համօրէն մարդիկ սեփհական

ազգացս Դաղմատացւոց և Հայոց ամենեկին անզխահարկ լինին»¹:

Ուրեմն այս համեմատությամբ «վիշապն Սպանիացոց» (սպանական վիշապը) նշանակում է հոռմեական կամ լատինական վիշապ. և այսպիսով 1664/65 թ. Բերիայում հայտնվող այդ վիշապը նույնինքն Եղիազար Այնթապցին էր, որը հռոմեական կամ լատինասիրական ուղղությանը հրապարակ գալով որպես ավետավոր աստղ, դեպի իրեն էր քաշում բանական աստղերի մի մասը, այսինքն՝ առաջնորդի դեր էր ստանձնում այն շարժման մեջ, որն ընթանում էր արևմտյան (լատինական) կողմնորոշմամբ:

Ըստ երևույթին՝ Բերիայում Եղիազարի օժման արարողությունը, լատին միսիոնարների պահանջով կամ նրանց վստահությունը շահելու համար, մի հանդիսավոր արտահայտություն էր ունեցել լատինասիրական թեքումով, ինչ որ սովորական բան էր Հայեպի միջավայրում. և դա գայթակղություն էր պատճառել հակառակորդներին կամ բամբասանքի նյութ եղել՝ առիթ տալով սպանական վիշապի այլաբանական զրույցին²:

¹ Կ. Շ ա հ ն ա գ ա ր յ ա ն ց, «Դաշանց թղթոյ բնութիւնն ու հերթումը», էջ 23:

Այսպես և զաղմատեբն նշանակում էր լատինեբն, տե՛ս Ղուկ. ավետարան, ԻԳ, 38. և Հովհ. ավետարան, ԺԹ, 20: Այս մասին կարդում ենք Մխիթար Սեբաստացու աշակերտների հրատարակած «Բառգիրք հայկազեան լեզուի»-ի Բ հատորում (Վենետիկ, 1769). «Եւ զի լեզուս այս (լատինեբնը) աւելի ծաղկեալ և ճոխ երեւի ի ժամանակս մերոց թարգմանչաց ի ժողովուրդս, որք բնակեալ են ի Դաղմատիա (Արևելյան Լյուրիկեում), վասն այսորիկ ի մեզ՝ փոխանակ ասելոյ լատինեբն, ասացաւ զաղմատեբնն», տե՛ս հատորի այն բաժինը, որ կրում է «Բառարան յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին և Նոր Կտակարանաց» խորագիրը, էջ 70:

² Այդ դեպքն ու զրույցը կապվել էին այս ժամանակներս հայտնված գիտավոր աստղի հետ, որի երևումն այլևայլ շարադեա դեպքերի նշան էր համարվել ժամանակակից աստղաբաշխների և գուշակների կողմից: Երբ-

¹ Ֆրիկի «Իխման» (հրատարակություն Տիրայր արք-ի), Նյու-Յորկ, 1952, էջ 531:

² «Ազաթանդեղայ պատմութիւն», Վենետիկ, 1930, էջ 644—645:

³ Կ. Շ ա հ ն ա գ ա ր յ ա ն ց, «Դաշանց թղթոյ բնութիւնն ու հերթումը», էջ 14:

⁴ Անդ, էջ 18:

Այս թվականից արդեն աչքի են ընկնում Եղիազարի բարեկամական ու մերձեցողական արամադրութիւնները Հոռմեական Եկեղեցու հանդեպ: Եւ 1666 թվականի Մենդյան տոնին մեռն է օրհնում Երուսաղեմում և այդ առիթով գրված նամակում ասում է, թե նաև Քի խնդրոյ կատինացն՝ Հոռմայ միտ Չեկերին իր Պատմութիւն համառօտ ՚ն՝ տարույ Յամանցոց թագաւորացն աշխատութեան մեջ խոսում է այդ մասին.

«Ասող տրտաւոր և վարատար,
Հինգ զից ամսօ՞ք որ երեկալ.
Որ էր հաղա՞ր հարիւր և տասն,
Եւ ի շորո՞ւմն զատիկ հասեալ:

Նըշանալո՞ւմքն խոնջեցան.
Եւ ասողարա՞ջիս թէ զորս լուծեալ.
Միայն մի՞ո՞յն տեսնն զիտելի,
Ամենեքեա՞ն շաղկերատեալ:»

Երևանի Պետական Մատենադարանի ձեռագիր
N 1675, էջ 163ա—163բ:

Երևանի նշում է, որ գիտավորի հետ կապվող շարքաատիկ դեպքեր են համարվել այդ ժամանակ թուրք-հունգարական պատերազմը, թաթարների ներքին խռովությունները, հրեաների մոտ Մեսիայի գալուստը, քրդերի մոտ Մեհդիի հայանումը, և Պոլսում սեղի ունեցող հրեաները, և այլն. իսկ հայերի մոտ՝ սպանական վիրապի երևան գալն է համարվել. բայց հեղինակն այստեղ չի ուզում ասել, թե ի՞նչ էր այդ վիրապը և ո՞րն է նրա պատմությունը, զի պատկառի որ թէ պատմալու, և բավականանում է գրելով հետևյալը միայն.

«Նոր վիշա՞պն Իսպանիոյ
Անհեթեթ և՛ անճոռնի լեալ.
Որոյ վերա՞յ զօրք զինուորք
Նդին հագի՞ւ զնա ըսպանեալ:»

Անդ, էջ 163բ.

Այլարանության հիմքը Հովհաննու Հայտնության ժԲ զվտում հղի կնոջ (ուղղափառ եկեղեցու, այսինքն՝ Հայկական Եկեղեցու) դեմ հանդես եկող այն հրեան բախազուրի վիրապն է, որի մասին ասված է. «Եւ տուտ նորա քորչըր զերբորդ մասն ասանդաց նրկնից» և այլն (ճԲ. 3 և 4): Հայտնության գրքի մի անանուն մեկնության մեջ այս մասը մեկնելով հեղինակն ասում է, որ վիրապը կամ սաղայնը «բազում սուրբան և իմաստուն» որք որպէս ասողը սրբութեամբ և գիտութեամբ փայլէին, մուրեցուցել» (Երևանի Պետական Մատենադարանի ձեռագիր N 4226, էջ 245բ—246ա).

պատին շնորհ առաքեցաւ: Սա բացահայտ բարեկամութեան նշան էր, բայց Եղիազարը բավարար չէր գտնում այդ բանը: Նա հասարակական գործունեության իր նոր ասպարեզում իր ծրագրերի հաջողության համար անհրաժեշտ էր գտնում անմիջական շփման մեջ լինել հոռմեական աթոռի հետ, ո՛չ թե միայն արտաքին բարեկամական ձևի տակ, այլև ներքին՝ եկեղեցական խնդիրներում լայն կապեր հաստատելով:

Այս տեսակետից շափազանց ուշագրավ է էջմիածնի և արևմտահայոց կաթողիկոսական աթոռի հարաբերությունները ճշտելու և կանոնավորելու նպատակով Եղիազարի կողմից Հակոբ Զուղայեցուն առաջարկված Կանոնի 6-րդ հոդվածը, որտեղ ասվում է, որ եթե որևէ եկեղեցական ասանց Երուսաղեմի և կամ էջմիածնի կաթողիկոսի կողմից ուղարկվելու և նրանից գրություն ունենալու Հոռմ գնա և Հոռմեական Եկեղեցուց ձեռնադրվի, այդպիսին շքնդունվի՝ եթե վերադառնա՞: Ուրիշ հարց է, որ Կանոնը երկու աթոռների համար ուժի մեջ չի մտնում, որովհետև Զուղայեցին չի ընդունում այդ. սակայն 6-րդ հոդվածով չի կարելի շնկատել, որ Եղիազարը արամադրութիւն ունէր նախ ինքը ո՛չ միայն թույլ տալու, որ հայ հոգևորականներ Հոռմից ձեռնադրություն ստանան, այլև այդ նպատակով և հատուկ գրությամբ հոգևորականներ Հոռմ

իսկ միաժամանակ մեկնության ընդօրինակող Գնորդ Նաղաշ վարդապետի (XVIII դար) կատարած հավելումներից երևում է, որ նրա համար մուրվածները «լատինացոց և լուրանաց» ազանդներն են, որոնք հեռացել են Նիկիայի դավանութիւնից (անդ, էջ 244բ):

1 և. Մ ի թ ա թ յ ա ն, «Համառօտ պատմութիւն Երուսաղէմի և ստորագրութիւն սրբազան տեղիաց», Երուսաղեմ, 1867, էջ 106: Այստեղ ամբողջութեամբ տպված է Եղիազարի նամակը (էջ 103—106), որ գրված է ԹՃԺԵ—1666 թ. հունվ. 23-ին: Բայց Օրմանյանի հաշիվով մուտանօրհնութիւնը 1667 թ. Մենդյան պետք է եղած լինի, «Ազգապատում», մասն Բ, § 1762: Նույնպես է ընդունում և ՄԿ. Արծրունյանը, «Ստորագրութիւն սրբոյ քաղաքին Երուսաղէմի», Երուսաղեմ, 1859, էջ 193:

2 Ց. Ս ա վ ա լ ա ն յ ա ն ց, «Պատմութիւն Երուսաղէմի», հտ. Ա, էջ 611:

ուղարկելու, և հետո՝ այս նույն դրությունն ընդունելի անելու նաև էջմիածնի կաթողիկոսի իշխանության սահմաններում: Սա, մի խոսքով, նշանակում էր լայն բանալ Հայկական Եկեղեցու դռները Հոռոմեական Եկեղեցու սահմաններին առաջ: Եստ նշանակալից է արևմտահայոց կաթողիկոսի այս ինքնամատուցումը Հոռոմեական Եկեղեցու հանդեպ:

Նյիազար Այնթապցին նպատակ էր ունեցել և անձամբ Հոռոմ գնալու, բայց դա չէր հաջողվել: Ավետիք Եվդոկիացին իր Ընթանակնսագրության մեջ պատմում է, որ Նյիազարը 1681 թվականին Չմյուռնիայում պատրաստվել էր 7 վարդապետներով և 12 ստորագրած հոգևորականներով Հոռոմ մեկնելու «վասն միաբանութեան և հնազանդութեան Փափին Հոռոմայ», երբ էջմիածնից պատվիրակություն եկալ մահացած Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի տեղը նրան հրավիրելու և Եղիազարի Ծանապարհը փոխվեց ղեպի էջմիածին¹: Դեպի Հոռոմ ուղևորության այս ծրագրի մասին Ավետիքը խոսում է նաև պատյին ուղղած իր մի նամակում²:

Ավետիք Եվդոկիացու այս տեղեկությունն լրաց կասկածելու տեղի չկա ամենևին, որովհետև նույն բանը հաստատում է և Ստեփանոս Լեհացին՝ իր Ժամանակագրության մեջ ասելով, թե

«Կամ էր երթալ ի Հոռոմ և նորոգել զվաղեմեան միաբանութիւնն ընդ սուրբ Աթոռոյն Հոռոմայ, բայց հասեալ ի Չմիւռ, ի սաղրելոյ ջուղայեցոցն և ալլոց՝ փաշային տեղոյն հրամանան արգելանի երթալը»³:

Սակայն՝ այն տարրերությամբ, որ էջմիածնի պատվիրակությունը Չմյուռնիայում չի հանդիպում նրան և նա ուղղակի էջմիածին չի գնում այնտեղից, այլ

«Բարձեալ յնրուսաղէմ, գտանէ զհրաւիրակն էջմիածնի, և նորօք դայ ի Կոստանդինուպոլիս, և անտի երթայ յէջմիածին»¹:

Որոշապես հայտնի է, որ էջմիածնի պատվիրակությունը, Ագուլեցի Պետրոս վարդապետի ղլխավորությամբ, Երուսաղեմում էր հանդիպել Եղիազարին. այս կետում Ավետիք Եվդոկիացին սխալվում է²: Բայց երկու դեպքում էլ իրողությունն է, որ Նյիազարը 1681 թվականին իսկապես պատրաստվել էր Հոռոմ գնալու, Չմյուռնիայում Ասրո Չելեբիի որդի Մաթուազայի միջոցով նազ էր վարձել, պաշար էր բեռնել և ալլն³, սակայն էջմիածնականներն արգելակել էին նրա ուղևորությունը («ի սաղրելոյ ջուղայեցոցն և ալլոց...»), ինչպես տեսանք իսկ Պետրոս վարդապետն ինքն էլ մեծ ջանքեր էր թափել նախ

1 Ա. Պ ա լ ճ յ ա ն, «Աթոռ սրբոյն Պետրոսի առաքելապետի», էջ 277:

2 Եթե ճիշտ է էջմիածնի միաբանության հրավերի նամակի թվագանը, որ 1681 թ. հուլ. 21/31-ն է (և. Մխիթարյան, «Համառոտ պատմութիւն Երուսաղէմի», էջ 206—211), ապա էջմիածնի պատվիրակը հազիվ Չմյուռնիայում կարող էր հանդիպել Եղիազարին, որովհետև վերջինս արգենն ապր. 17/27-ին մեկնել էր Երուսաղեմից, հես. 7/17-ից մինչև սեպտ. 22/հոկտ. 2-ը Չմյուռնիայում էր մնացել և ապա՝ Բրուսայի, Կ. Պոլսի, Տրապիզոնի և Կարինի վրայով էջմիածին էր գնացել («Ծրագրութիւն Միսոս պատրիարքի Ամգեցոյ», ամփոփումը տե՛ս Երեմիա Չելեբիի Ծրագրութեան ներածութեանում, էջ 212—213): Այս դեպքում սուույց է երկվում Ավետիք Եվդոկիացու տեղեկությունը: Բայց մեզ թվում է, թե էջմիածնի նամակի կրած թվականը ինքնին ճիշտ չէ, որովհետև ուրիշ վստահելի աղբյուրներ հակասում են նրան: Ըստ Զաքարիա Ագուլեցու՝ Պետրոս վարդապետը ՌՃԻԹ—1680 թ. դեկտ. 15/25-ին մեկնել է էջմիածնից և հաջորդ տարվա Զատին Երուսաղեմում է եղել. «Պետրոս վարդապետ գնաց Երուսաղէմ, Նդիազարին յետ լուսն տեսան եկին Ըզմիր, Բուրսայ, Ըսամբուլ և ալլ (տե՛ս «Զաքարիա Ագուլեցու Ծրագրութեանը», Երևան, 1938, § 141), Երեմիա Չելեբիի՝ հիշյալ Պետրոս վարդապետին ուղղած նամակի մի ակնարկությունը՝ «զու գհնար Երուսաղէմին և զԲժիւռնոյ...» Երևանյան հաստատում է, որ առաջին հանդիպումը Երուսաղեմում է եղել (տե՛ս Վավերագիր № 11: Հմմտ. նաև Մ. Զամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. 9, էջ 720):

3 Արարատ, 1874, էջ 75:

¹ Արարատ, 1874, էջ 75: Bulletin de l'Académie Impériale des Sciences de St.-Petersbourg, t. XX, p. 5.

² Այս նամակը (17/28 մայիսի 1711 թ.) գտնվում է Ֆրանսիայի Արարատի Գործերի Միևիտերություն գրիվանում, Ավետիքի գործի հայերեն փաստաթղթերի մեջ, տես Bulletin, t. XX, p. 82.

³ Ա. Պ ա լ ճ յ ա ն, «Աթոռ սրբոյն Պետրոսի առաքելապետի», էջ 277:

Երուսաղեմում և հետո Զմյուռնիայում նրան ետ կանգնեցնելու համար այդ նպատակից («զհնար Երուսաղէմին և զիզմիւռնոյ՝ ի Հոռոմ գնալն փութալ»)՝

Դրանից հետո Եղիազարն իր աեղը Եղիա վարդապետին էր ուղարկել Հոռոմ, ինչպես ասում է Ավետիք Եվզովիացին. իսկ պապն ուրախությամբ ընդունելով նրան, վերադարձին նրա հետ օրհնության դիր, մի ականակուռ թագ, մի գաւգազան և մի խաչ էր նվեր ուղարկել Եղիազարին, որ արդեն էջմիածնում էր այն ժամանակ²։ Ստեփանոս Լեհացին ևս, որի ձեռնադրին էր եղել Եղիա վարդապետը, նրա մասին գրում է իր ժամանակագրության մեջ, թե «սա յառաջնորդէն Երուսաղէմի և ի Հայոց թղթովք առաքեցաւ ի Հոռոմ առ Իննոշ-ժԹ հանդերձ հնազանդութեամբ և այլն»³։

Մի խոսքով Եղիազար Այնթապցին Հոռոմեական Եկեղեցու հետ մերձեցման և ընդհանրապես լատինասիրական բացահայտ հակումներ է ցուցաբերել 1664/65 թվականներից սկսած։ Հիշատակություն կա, որ Հալեպի ֆրանկների և Եղիազար Այնթապցու միջև 1667 թվականներին զաղտնի ու խորհրդավոր պայտույթներ գոյություն ունեն⁴։ Երուսաղեմի Ա. Հակոբի վանական դիվանում կան գրություններ, որոնք

1 Տե՛ս Վաղերագիր № 11։
2 Արարատ, 1874, էջ 75։
3 Ա. Պ ա յ ճ յ ա ն, «Աթու սբոյն Պետրոսի առաքելապետին», էջ 283-Բայց մենտկնում XII-ը պապ է եղել 1691—1700 թթ., որով գրչական խոյ կա բնագրում։ Պետք է լինի Ենեոկնետ XI-ը, որ իշխել է 1676—1689 թթ.։
Եղիա վարդապետը, որ Բեթղեհեմի արքեպիսկոպոսն էր, Երուսաղեմի միաբաններից էր։ Նրան Եղիազար կաթողիկոսն էր եպիսկոպոս ձեռնադրել 1666 թվականին։ Նրա մասին կենսագրական տեղեկություններ տե՛ս նաև՝ Մկ. Ազգամուծի, «Միաբանք և այցելութ ճաչ Երուսաղէմի», Երուսաղեմ, 1929, էջ 118։
4 Ըստ Երուսաղեմյան № 17 Վաղերագրի (Միտն, 1941, էջ 41—42), 1667 թ. հունվարին կամ փետրվարի սկզբներին Հալեպից Երուսաղեմ ֆրանկների սուրհանդակը մի նամակ էր բերել, կնքված և «լատին գրով» (ըստ երևույթին՝ ֆրանսերեն) ու հայերեն մակագրված, թե հանձնելի է անձամբ Եղիազարին, սակայն նրան այդ օրերին Երուսաղեմում չգտնելով՝ հանձնել էր տեղի լատին աթուակապին (ֆր. vicaire, թրք. վեֆլի), որ-

ցույց են տալիս, թե Եղիազարը, լատիններին հատուկ սովորություններ, պատարագի բաժակի մեջ ջուր էր խառնում՝ և նույն բանը պատվիրել էր անել նաև Ավետիք Եվզովիացուն՝ նրան եպիսկոպոս ձեռնադրելիս²։ Նրա այդ հակումներն այնքան բացահայտ էին, որ «երկաբնակի» համբավ էր շահել նա։ Էջմիածին հրավիրման առթիվ նրա դեմ եղած զանազան առարկություններից կամ մեղադրանքներից մեկը երկաբնակությունը կամ քաղկեդոնականությունն էր, որի մասին էջմիածնի պատգամավոր Պետրոս Ազուլեցու ձեռքը հատուկ գրություն էր հասել³։ Անտեղի չէ հիշատակել, որ Եղիազար Այնթապցին այդ դիժն ունեցել ու պահպանել է նաև էջմիածնի իր կաթողիկոսության ընթացքում։ Երևանի Հիսուսյան առաքելության մի Տեղեկագրի համաձայն նա թեև սկզբում դժկամակություն էր ցույց տվել միսիոնարների Երևանում հաստատման առթիվ (1684 թ.), — և դա իհարկե հասկանալի էր, — բայց հետագայում շափից դուրս սիրալիր ու սրտագին վերաբերմունք էր ունեցել նրանց հանդեպ։ «Ստույգ է, — ասում է Տեղեկագիրը, — որ նա, դոնե արտաքննապես, կաթողիկ կենցաղավարություն ուներ. ուժեղ կերպով պաշտպանում էր կաթողիկներին. խստորեն պատժում էր նրանց նեղող հերձ-

պետի նրան հասցնի. «Մեք շատ ասացաք՝ թէ տուէք որ մէկ մի հարենք ողարկենք. լսեցին՝ թէ մինչ որ լիմանանք զտեղն որ ի նա թէսլիմ անենք. մարդոյ շնք ի տար», գրում է այդ առթիվ նամակագիրը Եղիազարին. և այսպես այս կարևոր ու շտապ նամակն ուղարկել էր մինչև փետրվարի 13/23-ը, երբ Եղիազարից նամակ գալով՝ հայտնի էր եղել, թե որտեղ է նա։ «Ես տպա վերին կրկին սահի (սուրհանդակ) բռնեալ, — շարունակում է նամակագիրը, — ուղարկեաց զգիրն առ քեզ և բնախն շարտացաք իմանալ մեք՝ թէ զի՛նչ զիր է և կամ ուստի՛ է. թէ հնար իցէ՛ ծանուցես ծառայի քո, հայր սուրբ»։
1 Քր. Գ ա լ Ե մ թ յ ա բ յ ա ն, «Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկեալք», էջ 81։
2 Արարատ, 1874, էջ 75։
3 «...ոմանք զՄովսիսին փոքրահոգութեան սակի և ոմանք զՍահակին Երկաբնակութեան, որ ցուցի գրուղքն վասն նորա գրեալ, ոմանք զԳաւ-

«վածող եպիսկոպոսներին ու երեցներին»¹. այնպես որ դարմանալի չէ բնավ, եթե նրան առանց այլևայլի «կաթողիկե» էին համարում միախոնարներ. Հայր Մոնիեն² և Հայր Հակոբ Վիլյուար³:

Ի մի բերելով այս բոլոր փաստերը՝ մենք տեսնում ենք, որ բառինասիրական երևույթը ակնառու երևույթ է եղել արևմտահայոց կաթողիկոս նդիազար Այնթապցու եռանդուն գործունեության ընթացքում և կարող ենք ասել, որ նա, դեռ 1663 թվականից, խորհրդավոր պարագաների տակ դաշն կնքելով սասկան հոսանքի հայտնի դեմքերից խաչատուր Գազաապու հետ, նվիրվել է այն գաղափարին և ուղեգծին, որին հետամուտ էր այդ ժամանակ այդ հոսանքը. և այնուհետև նրա կյանքն ու գործունեությունն ընթացել են սասկանության

հատուկ հակա-էջմիածնականության և լատինասիրության ուղիով:

Այսպիսով, ուրեմն, ինչպես Կլիվիայի կաթողիկոսությունը հանձին խաչատուր Գազաապու, նույնպես և Երուսաղեմի արևմտահայ կաթողիկոսությունը հանձին նդիազար Այնթապցու ներգրավված էր ազատագրական այն շարժման մեջ, որին պիտավորում էր արևմտահայ առաջավոր աւետրական բուրժուազիան: Վերջինս էր այն քաղաքական ուժը, որի վրա հենվում էր արևմտահայ կաթողիկոսության ծրագրերը: Այն շփոթության շրջանում, երբ նդիազարի դիրքը տակավին չէր ամրապնդված վերջնականապես և ինքը չկարողանալով Երուսաղեմ մտնել՝ հալածական և աստանդական էր եղել. Կ. Պոլիս գալով Ղալաթիայի Ս. Լուսավորիչ եկեղեցում էր օթևանել (1665/66 թ.) և այնտեղից հետո՞հետև ուրիշ թաղերի եկեղեցիներն էր հրավիրվում իր համախոհների կողմից⁴: Իսկ այնտեղ իջևանելն իր նշանակությունն ուներ, որովհետև Ղալաթիայի թաղամասը պոլսահայ խոջայության և սասկանության ամրոցն էր: Ս. Լուսավորիչ եկեղեցու «գահը» խոջաների իշխանության տակ էր, ինչպես տեսանք արդեն⁵, իսկ նրա կղերական կազմն ամբողջությամբ «հոռոմեական» էր, այսինքն՝ սասկան⁶:

Նդիազար Այնթապցին, որը հեղինակավոր և տիրող դեմք է եղել իր ժամանակաշրջանի արևմտահայ պատմության մեջ, այն անձնավորությունն էր, որին, ըստ բոլոր երևույթների, սասկան հոսանքը սահմանել էր Հայկական եկեղեցու դուրս

¹ Մ. Գազապու, «Պատմություն Հայոց», հտ. Գ, էջ 709:
² Աստ, էջ 61:
³ Ս. Լուսավորիչ ավագներից Տեր Անտոնը և 10 քահանաներ (Տեր Քաղեաս, Տեր Ասովածատուր, Տեր Մկրտիչ, Տեր Հարություն, Տեր Հակոբ, Տեր Պողոս, Տեր Գասպար, Տեր Զաքարիա, Տեր Արքաճամ և Տեր Հոսան) 1678 թ. Լվովի Նիկոլ եպիսկոպոսին գրած մի նամակով ասում են, որ «մեք Կոստանդինուպոլսի Ղալաթաու լիալ սուրբ Լուսավորիչ եկեղեցույ միաբան քահանայքս ... նմք հնազանդ սրբոյ կաթողիկէ առաքելական եկեղեցոյ Հոռոմայ», տե՛ս Գ. Գազապու, «Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու» և այլն, էջ 78—79:

Թին Անտոնի Կոստանդնուպոլսի պատմաբանը և այլն, տե՛ս Վավերագրեր Ց 11:

Հիշելի Սահակն, անասրակույս, Թավրիզի արքեպիսկոպոս Սահակ կամ Բահակ Մակվեջին է, մահանվանչայն Արղար, որին Հակոբ Զուլալիցի կաթողիկոսն իր մահից դեռ առաջ ասել էր «հաջորդ» էր անվանել և որն իր լատինասիրական հակումներով հայտնի անձնավորություն էր. տե՛ս Գր. Գազապու, «Միջին Հայաստանի և Հայկական կաթողիկոսի յաջորդք», Հանդես Ամստերդամ, 1912, էջ 572—580: Զուլալիցու մահից (1660 թ.) հետո Սահակի հաջորդության դեմ դուրս եկան հակառակորդներ, առարկելով թե նա «երկարնակ» էր Ստեփանոս Գազապուին նրա մասին ասում է, որ «ի պատմառու սիրոյ և միաբանութեան որ ընդ արեւելեացի եկեղեցոյն Քրիստոսի կրեաց գրազում վիրտոս, և մանաւանդ թէ զրկիալ եղև ի կաթողիկոսական աստիճանէն՝ զոր սեփականեալ էր սմայ ի տէր մակարայ սրբազան կաթողիկոսէն Զուլալիցուցոյս, տե՛ս Երևանի Պատմական Մատենադարանի ձեռագիր Ց 8111, էջ 213ա:

¹ «Mémoire de la Mission d'Erivan», p. 336, տե՛ս հետևյալ ժողովածուի մեջ. «Lettres édifiantes et curieuses», t. I, Paris, 1838.
² «Lettre du père Montier au père Fleuriau, sur l'Arménie», p. 293, նույն ժողովածուում:
³ «Պատմագրություն կաթողիկոսաց և թագաւորաց Հայոց, շարադրեցեալ ի Յակոբ վարդապետէ, ի կարգէն Յիսուսեանց», Վենետիկ, տպ. Անտ. Պոսթոլի, 1713, էջ 20—30:

դառնալու այն Հայաստանում, որը ազատագրվելու էր Եվրոպայի օգնությամբ, հասկանալի է՝ հոռմեական աթոռի գերիշխանության տակ: Եղիազար Այնթապցու այս շարժումը նախապատրաստություն էր այդ մոտիկ ապագայի համար, որպեսզի հետագայում Հայկական Եկեղեցու մեջ անհրաժեշտորեն և անխուսափելիորեն առաջ գալիք անջատումը հանկարծական և ցնցող չլիներ հայության համար:

Եղիազար Այնթապցին, հայոց ազատագրության հույսերով տարված, մոտ տասնչորս տարիներ համառորեն գլխավորեց այդ շարժումը և ի վերջո, 1682 թվականին, երբ հակառակորդների հնարքներով էջմիածին տարվեց Հակոբ Զուղայեցու տեղը կաթողիկոսական աթոռի վրա բազմելու, նա ակամա և մեծ դժվարությամբ բաժանվեց այն գաղափարից ու նպատակից, որոնց նվիրված էր հոգևին: Ասում ենք՝ ապրվեց, որովհետև Եղիազարը հոժարությամբ չհամաձայնվեց էջմիածին գնալու, այլ, ինչպես պարզվում է Երեմիա Զելերիի մի նամակից, նրան բռնագատեցին և հարկադրեցին: Էջմիածնականները, — Հակոբ Զուղայեցին, Մարտիրոս Արևելացին և ուրիշներ, — նախ երկար ժամանակ պայքարեցին սպանական վիրապի դեմ՝ «մարտն՝ զինուրբ և բարանիք տուեալ», բայց նա անհաղթելի մնաց, սակայն ի վերջո «ի սեռն սալից հայնեալ դահալիժեցին» և հաղար հնարքով ու գրեթե բռնութեամբ նա էջմիածին տարվեց Պետրոս վարդապետ Ազուլեցու ջանքերով¹:

Երեմիա Զելերին Պետրոս Ազուլեցու համար մեծ երախտիք է համարում Եղիազարի էջմիածին տարվելը: Պատասխանելով այն նամակին, որով Պետրոս Ազուլեցին էջմիածնից հաղորդել էր, թե ինքը Եղիազարի հետ միասին հասել է այնտեղ, Երեմիան իր հիշյալ նամակում գրում է.

«Ազդեցեր մեզ սիրելեացդ խնդալ ընդ խնդացողդ, զի օրհնեցաւ պսակ տարույ քաղցրութեան կամաց Տեառն ի ձեռն քոյին մեծի ճգնողական համբերութեան»²:

¹ Տե՛ս Վավերագիր № 11:

² Անդ:

Նշանակում է՝ 1682 թվականի ազգային դործերի շարքում այս գեպը Եղիազարյան շարժման հակառակորդների համար համարվում էր մեծ հաղթանակ՝ «պսակ տարույ»:

Այս կապակցությամբ նախ ասենք, որ, ըստ Երեմիայի, Պետրոս Ազուլեցին իր զոննությամբ զարմացրել էր բոլորին՝ «շիջուցեալ կոտորեալ զամենայն արհեստ որսանաց նորին սրտին ծրարելոյ», ավելի ստորև Եղիազարի այդ թաքուն գաղանիքները համեմատության կարգով անվանելով «անաստուածութեան ձուլածոյք», որոնցով նա «խրամատէր զկարդ և զկրօն»¹: Այստեղ ակնարկությունն, անշուշտ, վերաբերում է այն բանին, որ հենվելով արևմտյան ազդեցության վրա՝ Եղիազարը խախտում էր Հայկական Եկեղեցու օրգանական միասնությունը: Բայց՝ չհեռանանք: Մեզ համար կարևորն այն է, որ Եղիազարը խուսափում էր էջմիածին գնալուց: Բրուսայում² մի ընթրիքի ժամանակ ինքն իր մասին խոսելով նա ասել էր.

«Արևելեանք զամենայն գեղեցկութիւն ընչից քարշալ տարան յԱրևելս և արդ տեսեալ զգեղեցիկ կաթողիկոս Հոռմցոց, կամին և զայն քարշել տանել յԱրևելս»³:

Այս խոսքերով Եղիազարն աշխատում էր դրդել ներկաներին, որպեսզի նրանք խափանեն իր մեկնումը, ինչպես դիտել է տալիս Երեմիան:

«Ըստ նախագուշակ իւրում բանի էր կամ եպերումն ընդ նոսա դրդել ի ջան՝ զի մի՛ թողուցուն զինքն ի ձեռաց»⁴:

Իրոք՝ Եղիազարը, զանազան առարկություններով, չէր ուզում Կ. Պոլսից այն կողմը գնալ: Նորջուղայան մի ժամա-

¹ Տե՛ս Վավերագիր № 11:

² Երուսաղեմից հասնելով Բրուսա՝ Եղիազարն այնտեղ էր մնացել 1681 թ. հոկտ. 8/18-ից մինչև 1682 թ. մարտի 1/11-ը, տե՛ս Մինաս Ամզեցու Օրագրության ամփոփումը՝ Երեմիա Զելերիի Օրագրության նեթածությունում, էջ 211:

³ Տե՛ս Վավերագիր № 11:

⁴ Անդ:

նակակից փաստաթղթի համաձայն նա

«Ի դնալն յՆրուսաղէմայ նստաւ ի Կոստանդնուպոլիս, ասելով թէ ո՛չ եկից ի սուրբ Աթոռն [Էջմիածնի] մինչև ոչ գայցէ մանսար Իսպահանու»¹:

Նրան դժվարությամբ կարողացան պոկել Կ. Պոլսից և հազիվ հաղ կարողացան ներս մտցնել պարսկական սահմանից.

«Մինչ ի Ղաւախ ձգէր զաչքն ի յետ սգնել ոք ի դարձուցանել և ձգէր զոտսն ի կախ և ձգէր ապա-զլոյսն ի Կարին, և յայդր և՛ մինչև և՛մուտ ի ներքս»²:

Նա հասավ Էջմիածին, բայց, միևնույն է, չէր ուզում Ամենայն Հայոց Կարողիկոս դառնալ. «Կաթողիկոսութիւն յանձ շառաւ, անունն նորա նայ կու յիշէն», ասում է Զաքարիա Աղուլեցիին³: Չէր ուզում նա ընդունել այն նամակները, որոնց վրա զբոված էր լինում Կարողիկոս Էջմիածնի, այլ փոխել ու գրել էր տալիս՝ Կարողիկոս Նուսաղէմի, ինչպես պատահել էր Երեմիա Չելեքիի նամակին⁴:

Սխալ է, ուրեմն, այն կարծիքը, թե սկզբից իսկ Եղիազարը հայոց ընդհանուր կաթողիկոս դառնալու նպատակն էր

¹ Հար. Տեր-Շովհանյան, «Պատմութիւն նոր Զուղայու որ յԱսպահան», հտ. Բ, Նոր-Ջուզա, 1881, էջ 117:

² Եղիազարը Կ. Պոլսում մնաց մարտի 4/14-ից մինչև հունիսի 15/25-ը տե՛ս Մինաս Ամգեցու Օրագրության ամփոփումը, էջ 211:

³ Տե՛ս վավերագիր № 11:

⁴ Պոլսից մեկնելով 1682 թ. հունիսի 15/25-ին՝ Եղիազարը Տրապիզոն է հասնում հունիսի 26/հուլիսի 6-ին, այնտեղից մեկնելով հուլիսի 3/13-ին, Կարին է հասնում՝ 14/24-ին և, մեկնելով օգոստոսի 1/11-ին, Էջմիածին է հասնում օգոստոսի 26 կամ 27/հոկտեմբերի 5 կամ 9-ին, տե՛ս Մինաս Ամգեցու Օրագրության ամփոփումը, էջ 211:

⁵ «Զաքարիա Աղուլեցու Օրագրութիւնը», § 141:

⁶ Տե՛ս վավերագիր № 11:

Անշուշտ այս իմաստով է, որ Գրիգոր զպիքը 1684 թվականին վա՛նում իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում նշում էր՝ «ի հայրապետութեան ամենայն Հայոց տեսուն Եղիազար կաթողիկոսին, որ աիքէր երկուց զահիցն՝ Երուսաղէմայ և Էջմիածնի», տե՛ս Երեանի Պետական Մատենադարանի ձեռագիր № 6332, էջ 252ա:

հետապնդել և ի վերջո հասել իր նպատակին: Նրա նպատակն է եղել միայն արևմտահայ եկեղեցական անկախ իշխանություն ստեղծել՝ հայկական հասարակությունը նախապատրաստելու և առաջնորդելու համար դեպի այն կացութիւնը, որ առաջ էր գալու Արևմտյան Հայաստանի ազատագրմամբ. և այնքա՛ն եռանդով էր անձնատուր եղել այդ նպատակին, որ չէր կարողանում հրաժարվել նրանից և հաշտվել Ամենայն Հայոց Կարողիկոս լինելու գերագույն պատվին հետ: Այնպես որ միանգամայն անիրավ ու սխալ է հակառակորդ Երեմիա Չելեքիի դատողութիւնը, երբ նա գրում է Պետրոս Ազուլեցուն, թե

«Դա զոր խնդրէրն՝ էառ զկարգ և զանուն և զտեղի. արդ ընդէ՞ր յիշէ զՕսմանցոց երկիր, զոր զայնքան փառսն մեք մեղէն քաջութեամբ ստացար, ասէր. և նախատէ զքաղաքացիա թէ՛ չկարացին զիս արգիլել. ընդէ՞ր յոգոց հանէ. մի՞թէ վասն այլ ևս ոչ կարելոյ ապուելոյ և գաղելոյ. ընդէ՞ր լայ, մի՞թէ զըզձալիսն զմտաւ ածեալ տագնապի: Արդ տեղն է՞ վանիցն և անօրինոյին աստուծոյ կամքն յայդմ վայրի վարեալ էձծ»¹:

Բայց Երեմիա Չելեքին չի սխալվում երբ կարծում է, թե Եղիազարն անպայման փախուստ կտա Էջմիածնից և անհրաժեշտ է գտնում պատվիրել, որ զգույշ լինեն: Նա գրում է.

«Վաւ զգուշութեամբ այսուհետև հոգ տարջիք դմա ի պահպանութիւն մինչև ցմահ, զի կարծիք ունիմ նկրտիլ ձգտիլ յայսմ կողմ փախստեան»²:

Արդ՝ ճիշտ գնահատում չէ Եղիազար Այնթապցու կաթողիկոսական ձգտումների մեջ նրա սոսկ անհատական փառամոլ նկարագրի մղումը տեսնել: Այդ ձգտումները գաղափարական հիմքեր ունեին և այդ էր պատճառը, որ Եղիազարյան շարժումն այդքան լայն ընդունելութիւն ու ծավալ էր գտել Արևմտյան Հայաստանում:

Եղիազար Այնթապցին, ուրեմն, ստականության գրոշի-

¹ Տե՛ս վավերագիր № 11:
² Անդ.

տակ արևմտահայ ազատագրական ուխտին նվիրված դեմք էր. որպիսին և մնաց նա մինչև իր կյանքի վերջը:

Եղիազար Այնթապցու ներգրավումը և նրա կաթողիկոսության հաջողումը խոշոր նվաճում էր արևմտահայ ազատագրական դատի համար:

Կաթողիկոսական նոր աթոռի նշանակությունը մեծ էր մանավանդ նրանով, որ կոչված էր, Ասի աթոռի հետ միասին, Օսմանյան Կայսրության մեջ հայ ազգային-եկեղեցական միաձույլ իշխանություն ստեղծելու:

ՆՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս ամենից հետո կարելի է հանդել հետևյալ եղբայրացությունը, որ Կրետեի կամ Կանդիայի պատերազմի (1645—1669 թթ.) շրջանում ազատագրական շարժում էր առաջ եկել արևմտահայության մեջ և 1666 թվականին, որպես պատվիրակ, Փարիզ էր ուղարկվել ոմն «հայ ազնվական» Մահտեսի Մուրատ, որը նույն էր 1672 թվականին Լուդովիկ XIV-ին ներկայացող Խոջա Մուրատի և 1683 թվականին Վերսայի ու Սեն-Կլուի ապարանքներն այցելող Բաղիշեցի Մահտեսի Շահ-մուրատի հետ:

Արևմտահայ ազատագրական շարժումը գաղափարապես չայն ծավալ ուներ, բնդգրկում էր ինչպես հայկական գավառների գանգվածներին, որոնց դրությունն անտանելի էր սուլթանական բռնապետական կարգերում, այնպես էլ հասարակական մյուս խավերին, հատկապես արևմտահայ բուրժուազիայի և հոգևորականության առաջադիմական տարրերին:

Ազատագրական շարժման նախապատրաստման ու ղեկավարման գործի նախաձեռնությունը պատկանում էր արևմտահայ խոջայությանը (սուևորական բուրժուազիային), որն ազգային-հասարակական գործերում ղեկավարման իրավունքների նվաճման համար մղած պայքարում պարտություն կրելով հայ շեղբիության (բուրժուազիայի ազնվականացած՝ պահանջողական հատվածի) կողմից և գտնվելով տիրող զինվորա-ավատական կաշկանդիչ կարգերի ծանր լծի տակ, օգտվելով ժողովրդական զանգվածների ծայրահեղորեն դժգոհ տրամադրություններից, առաջ էր քաշել Հայաստանի

ազատագրութեան զազափարն ու ծրագիրը և դործնական քայլերի դիմել:

Արևմտահայ առևտրական բուրժուազիայի միջավայրից էին ազատագրական շարժման գործոն գերակատարներ հանդիսացող Մահտեսի Մուրատը կամ Շահմուրատը, որ Բաղեշի մեծ վաճառականներից էր, և նրա «պաշտոնակից» Խոջա Առաքելը:

Արևմտահայ ազատագրական այդ շարժմանը հարել էր հոգևորականութեան սասկան թեք, որ պահպանողական էջմիածնականութեան գեմ մղած իր պայքարում հենվելով առևտրական բուրժուազիայի (խոջայութեան) հասարակական գիրքի և ազդեցութեան վրա, դարձել էր նրա զինակիցն ու անվերապահ գործակիցը՝ Արևմտյան Հայաստանի ազատագրական շարժման կազմակերպման, ղեկավարման ու ձեռնարկումների մեջ:

Շարժման հոգևորական գերակատարներից էին Խաչատուր Գաղատացին, որը Կիլիկիայի կաթողիկոս էր (1657—1674 թթ.), Եղիազար Այնթապցին, որն արևմտահայոց կաթողիկոս էր (1664—1681 թթ.), Հովհաննես Թութունցին, որը Կ. Պոլսի պատրիարք (1665—1667 թթ.) ու Աղթամարի կաթողիկոս (1670—1672 թթ.) էր, և ուրիշներ:

Արևմտահայ ազատագրական շարժումը մարմնավորվում է 1660-ական թվականների կեսերին, բայց խմորումը շատ ավելի հին էր: Դրա կենսավորման արտահայտությունը գտնում ենք դեռևս 30-ական թվականների կեսերին միաժամանակ թե՛ բուրժուազիայի և թե՛ հոգևորականութեան շրջաններում՝ ծնունդ առած ներքին երկպառակությունների մեջ:

Ազատագրական գործի հետապնդումը եվրոպայում ունեցել է երկու ուրույն շրջաններ: Առաջին շրջանն ընդգրկում է 1666—1669 թվականները, այսինքն՝ Կանդիայի պատերազմի վերջին տարիները, երբ հայկական ազատագրութեան հույսերը կապված էին Հայր Օտտոմանի և հիշյալ պատերազմի հաջողութեան հետ: Կանդիական պատերազմի վերջավորումով սկսվել է երկրորդ շրջանը, որի ընթացքում հայկական

ազնեկալություններն ուղղակի կապվել են Ֆրանսիայի թագավոր Լուդովիկ XIV-ի հետ:

Արևմտահայ ազատագրական շարժման քաղաքական կողմնորոշումը, ղեկավարող խավերի շահերին համապատասխան; արևմտյան էր՝ իր ակնկալությունները կապելով խաչակրական արշավանքների հետ. բայց միաժամանակ, շարժման հենց սկզբում, հետապնդվում էր նաև խաչակրական այդ արշավանքներին Թուրքաստանին, ինչպես և Վրաստանին, անպայման մասնակից դարձնելու խնդիրը:

Արևմտահայ ազատագրական շարժումը տեղական անկախ շարժում չէր, այլ կապված էր իր շրջապատի հետ: Առաջին շրջանում՝ կապված էր հունականի հետ, ինչ որ դրական երաշխիք էր հետապնդված նպատակի հաջողման տեսակետից, որովհետև սուլթանների տիրապետության տակ ապրող քրիստոնյա ժողովուրդների մեջ թվով առաջին տեղն էին գրավում հույները: Իսկ երկրորդ շրջանում՝ հայկական շարժման կապերն ավելի էին ընդարձակվել՝ միանալով նաև Վրաստանի ժողովուրդների (իմերեղների, գուրխացիների ու մինգրեղների) և ասորիների հետ:

Հայր-օտտոմանյան և լուդովիկյան ծրագրերով հայերին տրվելիք «ազատությունը» քաղաքական անկախության իմաստ չունեի ամենևին: Հայր-օտտոմանյան ծրագրով օսմանյան զահի վրա Հայր Օտտոմանն ինքն էր բաղմելու, իսկ լուդովիկյան ծրագրով՝ Բուրբոնյան իշխաններից մեկը: Երկու դեպքում էլ տեղական ժողովուրդներին ոչ միայն որևէ ձևի անկախություն կամ ինքնավարություն չէր տրվելու, այլև ո՛չ իսկ որևէ շափով ազատություն, թեև այդ բոլորը խոստացվում էին՝ «ճարպիկ ձևով», նրանց զրավելու և օգտագործելու համար: Այլ հարց է նաև, թե հիշյալ ծրագրերի մեջ Հայաստանն իրապես մտնո՞ւմ էր, թե ոչ. կամ թե՛ ո՛րքան իրագործելի ծրագրեր էին դրանք:

Հայկական ազատագրական պատմության մեջ արևմտահայերի սույն շարժումն առաջինն է, որը հիմնվում է զինված ապստամբության զազափարի վրա, որպիսին ավելի ուշ է

երևան գալիս Արևելյան Հայաստանում Իսրայել Յրիի ծրագրով: Բացի այդ՝ այս շարժումը, վերահիշյալ հիմնադրով և բացառելով XIX դարը, արևմտահայերի ազատագրության դեռևս միակ ծանոթ փորձն է. մինչ Հայոց պատմության արձանագրած նման բոլոր ձեռնարկումները թուրք-պարսկական տիրապետության շրջանում՝ եղել են արևելահայերի կողմից:

Հայ ազատագրական շարժումների քաղաքական կողմնորոշումը եթե շկարագացավ այս շրջանում՝ հասնել դրական արդյունքի, պատճառն այն էր, որ նա հենվում էր միայն հասարակական որոշ խավերի տրամադրությունների վրա:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ր Ե Ր

№ 1

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈԶՍՏՈՒՐ ԳՈՂԱՏԱՅՈՒ
ՆԱՄԱԿԸ ԼՈՒԳՈՎԻԿ XIV-ԻՆ

Հայեպ, 12 փետր. 1663 թ.

Archives du Ministère des Affaires Etrangères, Correspondances
diplomatiques, Turquie, t. 7, f. 77 et 78

Vous avez été seul couronné du Messie, et très puissant, victorieux, grand, ô roi Louis dieudonné, soyez toujours content et heureux, de la part du pauvre Kachadour, serviteur des serviteurs de Dieu, lequel, par sa grâce et miséricorde, a été fait patriarche des Arméniens¹. Je vous salue du salut que Notre-Seigneur Jésus-Christ a donné par sa charité pleine de bénédiction. Encore bien que loin de vous, nonobstant nous sommes encore présents et batsons votre image heureuse, vous qui êtes de l'ancienne race des puissants rois de France, et qui êtes honoré et glorifié de tous, descendant d'une race heureuse et fortu-

¹ Այս առաջին տողերում, ինչպես երևում է, ֆրանսերենի թարգմանիչը չի կարողացել հարադատորեն ապլ հայկական կաթոլիկոսական հատուկ սկզբնավորությունը և ազավազել է: Հայերեն վերաթարգմանության մեջ մենք աշխատել ենք վերականգնել սկզբնաղիբը: աշխարհաբար լինելու տարբերությունը: Հ. Ս. Ա.:

née, illuminée et glorifiée; qui êtes tenu de tout le monde comme un pain béni et un calice réjouissant, à tous ceux qui vous souhaitent et ont recours à vous, comme moi même je fais maintenant désireux de vous, qui êtes la colonne et le soutien de l'Eglise catholique, l'espérance et le refuge de tous les chrétiens, Monseigneur, roi des rois, roi divin, qui gouverne avec puissance les princes, les grands, les villes, les peuples, salut de la part de moi, Kachadour, indigne patriarche, et de toute ma nation; nous nous présentons à Votre Majesté d'un cœur humble, ayant les larmes aux yeux, ô roi Louis.

Le grand Dieu confirme, élève, exalte et dilate votre royaume plus que par le passé, comme dans l'Ecriture Sainte nous lisons que Dieu a exalté le prophète David sur Goliath, et a donné à Salomon l'intelligence et la majesté; et dans le Nouveau Testament le grand Constantin et Dertadius, roi des Arméniens, et les autres rois chrétiens et saints, qui ont été victorieux et triomphants de tous leurs adversaires temporels et spirituels et ont été couronnés du Roi immortel, desquels la mémoire est encore fraîche, et durera jusqu'à la fin.

En cette sorte, soyez, ô notre puissant Seigneur et frère spirituel dans la véritable foi et ami des chrétiens, couronné de la part de Dieu, roi des rois, Louis dieudonné, vous, véritable chrétien, et ceux aussi qui sont sous votre ombre, grands et petits; nous prions le Roi des rois, Jésus-Christ, qu'il vous confirme, fortifie et exalte sur tous, comme un lion, et vous couronne d'une couronne immortelle; et que le Messie demeure avec vous et vous protège dans les rencontres, et élève votre bras droit sur tous et rende votre règne victorieux, et terrasse vos ennemis et toutes les nations qui vous veulent contrarier, et s'ils viennent contre vous par un seul chemin, qu'ils s'enfuient devant vous par sept voies, et

votre main puissante soit sur le dos de ses ennemis, et votre épée traverse leurs cœurs et les détruit et extermine à jamais, en sorte qu'on ne voit plus leurs vestiges. Et de plus, le grand Dieu vous bénisse d'une bénédiction qu'on ne vous puisse ravir, et vous inspire dans le cœur les sentiments de la foi pour sauver tous les chrétiens, et particulièrement notre pauvre nation à cette fin que nous ayons le bonheur de finir nos jours dans la véritable foi et le repos de nos âmes.

Et puis, il n'y aura qu'une foi et un pasteur, et la zizanie sera levée et ôtée et le diable confondu, et, pour cet effet, moi votre indigne serviteur, nous attendons l'accomplissement de cette prophétie et nous avons espérance et foi que par vos mains bénites sera fait notre salut, car nous en avons des preuves manifestes, parce que depuis que vous avez envoyé dans le Levant votre consul Picquet, par son soin et le travail des religieux, il a converti plusieurs personnes de notre nation et le nombre s'augmente tous les jours de plus en plus, dont nous sommes très contents, et surtout de ce que votre consul François Baron fait le même et protège puissamment les chrétiens catholiques.

Mais, ô seigneur auguste, seigneur, roi des rois très puissant, moi, votre serviteur, patriarche des Arméniens et votre frère spirituel, avec toute ma nation, nous vous supplions de ne point oublier ce qu'a prophétisé Saint Nersès; et surtout nous prions Votre Majesté qu'il lui plaise recommander à son ambassadeur qui est à Constantinople et à votre consul d'Alep de toujours protéger

¹ Ըստ հրատարակչի ծանոթացրության՝ նամակի հեղինակն այս-
տեղ հիշատակում է ներսես Պարթևին վերաբրվող մարգարեությունը:
Հ. Պ. Պ.:

la pauvre nation Arménienne; et nous espérons que votre puissance réunira à la foi toutes les sectes divisées, et qui ont une même naissance de l'Eglise, et qu'après un si grand bien vous aurez une couronne immortelle, et que vous aurez pour héritage le royaume de Jésus-Christ, qui ne finira jamais, et ne se peut expliquer, et nous espérons que cela arrivera de votre temps, par l'intercession des saints qui nous ont précédés, et par les prières des pauvres affligés.

Voici la seconde fois que nous avons écrit à Votre Majesté. Le 12 Février, 1663 depuis la naissance du Messie, et des Arméniens 1112.

Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient*, t. I, p. 471—473.

Թ Ա Ր Ի Մ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Միակ մեծիապասկ և ամենահզոր, հաղթական և մեծ Լուսոյիկ աստվածատուր արքայիկ մշտնջենական զոհութիւնն և երանութիւնն նվաստ թաշատրի կողմից, որ Աստու ծառաների ծառան է և նրա շնորհով ու գթութեամբ հալոց կաթողիկոս: Ողջունում եմ Ձեզ այն ողջունով, որ մեր տեր Հիսուս Քրիստոսը տվեց օրհնութեամբ լի իր ողորմութեամբ: Թեև տակալին հետև Ձեզանից, այնու հանդերձ դեռ կենդանի ենք և համբարում ենք Ձեր երջանիկ պատկերը, Ձեր, որ Թրանսիայի հզոր թագավորների հին զարմից եք և բոլորի կողմից պատվոված և փառավորված եք, սերելով մի երջանիկ ու բախտավոր լուսավոր ու փառապանծ զարմից, որ բոլորի կողմից օրհնված հաց եք համարվում, և ուրախարար բաժակ բոլոր նրանց համար, որոնք Ձեզ են բաղձում ու Ձեզ են ապավինում, ինչպես ես-ինքս եմ անում այժմ Ձեր սիրով վառված, Ձեր, որ սլունն ու նեցուկն եք կաթողիկե (ընդհանրական) Եկեղեցու, հուլան ու ապավենը՝ բոլոր քրիստոնյաների, Տեր, արքաների արքա, աստվածային թագա-

վոր, որ հզոր բազկով կառավարում է իշխաններին, մեծամեծներին, քաղաքները, ժողովուրդներին: Ողջունում ենք Ձեզ, ես թաշատուր անարժան կաթողիկոսս և իմ ամբողջ ազգը: Մենք Ձեր Վեհափառութեանը ներկայանում ենք խոնարհ սրտով և արտասովից աչքերով, ո՛վ Լուսոյիկ արքա:

Բարձրալն Աստված թող ամբացնի, բարձրացնի, փառավորի ու ծավալի Ձեր թագավորությունը ավելի քան անցյալում, ինչպես Ս. Գրքում կարդում ենք, որ Աստված Դավիթ մարգարեին բարձրացրեց Գողիթի վրա, և Սողոմոնին տվեց իմաստություն ու վեհություն, իսկ նոր ուխտում մեծ Կոստանդիանոսին և հալոց թագավոր Տրդատին և մյուս քրիստոնյա ու սուրբ թագավորներին, որոնք հզոր ու հաղթող հանդիսացան իրենց բոլոր աշխարհիկ և հոգևոր հակառակորդների վրա և պսակեցին անմահ թագավորի կողմից, և որոնց հիշատակը կենդանի է դեռ ու տեկու է հավիտյան:

Այսպիսով, ո՛վ մեր հզոր տեր և ճշմարիտ հավատի մեջ մեր հոգևոր եղբայր ու քրիստոնյաների բարեկամ աստվածատուր Լուսոյիկ, թող Աստված՝ արքաների արքան պսակի՝ Ձեզ, որ ճշմարիտ քրիստոնյա եք, ու նաև նրանց, որոնք Ձեր հովանու տակ են՝ մեծ ու փոքր: Մենք աղոթում ենք արքաների արքա Հիսուս Քրիստոսին, որպեսզի նա Ձեզ, ինչպես մի առյուծի, հաստատի, զորացնի և բարձրացնի բոլորի վրա, և Ձեզ պսակի անմահական պսակով, և որպեսզի Մեսիան լինի Ձեզ հետ ու Ձեզ պաշտպանի մարտերի մեջ, և Ձեր աջ բազուկը բարձրացնի բոլորի վրա ու Ձեր թագավորությունը հաղթական դարձնի, զգեանի Ձեր թշնամիներին ու Ձեզ ընդդիմանալ ուզող բոլոր ազգերին, և եթե նրանք Ձեր դեմ ելնեն մի ճանապարհով՝ Ձեր առաջից փախչեն լոթը ճանապարհով, և Ձեր հզոր ձեռքը լինի իր թշնամիների թիկունքին, ու Ձեր սուրբ թող անց կենա նրանց սրտի միջով և նրանց տապալի ու բնաջնջի ընդմիջտ, անհետ անելու սատիճան: Բացի այդ, բարձրալն Աստված թող Ձեզ օրհնի այնպիսի օրհնութեամբ, որ ո՛չ ոք չկարողանա խլել Ձեզանից, և Ձեր սրտի մեջ ներշնչի հավատի զգացումները՝ ազատելու

համար բոլոր քրիստոնյաներին և հատկապես մեր խեղճ ազգին, որպեսզի կարողանանք երջանկությունն ունենալ ճշմարիտ հավատի և հոգու անդորրութեան մեջ փակելու մեր աչքերը:

Սի հետո՝ մի հոտ և մի հովիվ է լինելու, և որոմը հանվելու և վերացվելու է ու սատանան շփոթվելու է, և այն պատճառով, ես՝ Ձեր անարժան ծառան [և իմ ազգը] սպասում եմ որ Ձեր օրհնյալ ձեռքերով կկատարվի մեր փրկությունը, որի համար բացահայտ ապացույցներ ունենք, որովհետև այն օրվանից, երբ Արևելք ուղարկեցիք Ձեր հյուպատոս Պիլիկին, նա իր ջանքերով և կրոնավորների աշխատանքով մեր ազգից բազմաթիվ անձերի զարձի բերեց և նրանց թիվը հեռագրեցեալ ավելանում է ամեն օր, որից մենք շատ զոհ ենք, և մանավանդ այն բանից, որ Ձեր հյուպատոս Ֆրանսուա Բարոնը նույնն է անում ու հզոր կերպով պաշտպանում է կաթոլիկ քրիստոնյաներին:

Բայց, ո՞վ օգոստափառ տեր, ամենհզոր արքայից արքա, ես՝ Ձեր ծառան՝ Հայոց կաթողիկոս ու Ձեր հոգևոր եղբայրը, և իմ ամբողջ ազգը, պաղատում ենք, որ բնավ չմոռանաք Ս. Ներսեսի մարգարեացածը, և մանավանդ խնդրում ենք Ձեր Վեհափառութունից, որ նա հաճի Կ. Պոլսի իր դեսպանին և Հայեպի հյուպատոսին հանձնարարել՝ միշտ պաշտպանել Հայոց խեղճ ազգին, և հույս ունենք, որ Ձեր հոգրությունը հավատի մեջ կփրամփայտի բաժանված բոլոր աղանդներին, որոնք միևնույն ժառանգ ունեն եկեղեցուց, և Գուք այսքան մեծ բարերարությունից հետո կունենանք մի անմահական պսակ, և, որպես ժառանգություն, Հիսուս Քրիստոսի թագավորությունը, որ անվախճան է և անիմանալի: Իսկ մենք հույս ունենք, որ այս բանը կկատարվի

² Այստեղ հիշատակում է Ներսես Պարթևին վերադրվող մարգարեությունը: Հ. Ս. Ա.:

Ձեր օրով մեզ նախորդող սրբերի բարեխոսութամբ և խեղճ տառապյալների աղոթքներով:

Ահա այս երկրորդ անգամն է, որ գրեցինք Ձեր Վեհափառութեանը: Մեսիայի ծննդյան 1663 թվականի և Հայոց 1112 թվականի փետրվարի 12-ին:

№ 2

ՀԱԼԵՊԻ ՖՐԱՆՍԻՍԿԱՆ ՀՅՈՒՊԱՏԱՍ ՖՐԱՆՍՈՒԱ ԲԱՐՈՆԻ
ՆԱՄԱԿԸ ԼՈՒԻՍՎԻԿ XIV-ին

Հայեպ, 23 հուլ. 1663 թ.

Sire, il y a près de dix mois que je donnais avis à Votre Majesté, que le patriarche des Grecs, celui des Arméniens, comme encore celui des Syriens lui avaient écrit, et qu'ils avaient adressé leurs lettres à Sa Sainteté, afin qu'elles fussent présentées à Votre Majesté par Monsieur le Nonce.

Les mêmes prélats, Sire, ayant du depuis su que je me devais rendre auprès de Votre Majesté, eurent la bonté de me voir et me donnèrent une lettre, chacun pour Votre Majesté, lesquelles je lui envoie, n'ayant pu partir, ainsi que je lui en ai rendu compte.

Ces vertueuses personnes, Sire, ont un amour et un respect pour Votre Majesté très grand, et espèrent que du temps de votre règne seront délivrés de la tyrannie sous laquelle leurs peuples gémissent depuis quelques siècles. Ils prient sans cesse pour cela, et moi demande instamment à Dieu qu'il donne à Votre Majesté une longue vie accompagnée de toutes les bénédictions du Ciel.

«Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient», t. I, p. 477.

Տեր, մոտաւորապէս տասը ամիս առաջ Ձեր Վեհափառութեանը տեղեկացնում էի, թե հուլիների, հայերի, ինչպէս նաև ասորիների պատրիարքները Ձեզ գրել էին և իրենց նամակներն ուղարկել Նորին Սրբութեանը, որպէսզի նրանք Ձեր Վեհափառութեան ներկայացվին Սրբազան Նվիրակի միջոցով:

Նույն առաջնորդները, Տեր, հետո իմացած լինելով, որ ես Ձեր Վեհափառութեան մտա պիտք է գնալի, բարութեանն ունեցան ինձ տեսնելու և յուրաքանչյուրն ինձ տվեց Ձեր Վեհափառութեանն ուղղված մի նամակ, որ ուղարկում եմ, քանի որ չկարողացա մեկնել, ինչպէս զեկուցել եմ Ձեզ:

Այս առաքինի անձնավորութեանները, Տեր, շատ մեծ սիր ու հարգանք ունեն Ձեր Վեհափառութեան հանդեպ և հուսով են, որ Ձեր իշխանութեան օրով կազատվին այն բռնակալութեանից, որի տակ հեծում են նրանց ժողովուրդները մի քանի զարերից իվեր: Այդ բանի համար նրանք աղոթում են անդադար. իսկ ես թախանձաբեր խնդրում եմ Աստուծոց, որ նա Ձեր Վեհափառութեանը երկար կյանք տա՝ հանդերձ Երկընքի բոլոր օրհնութեաններով:

№ 3

ԿՈՉՄԱ ՊԱԼԵՈԼՈԳԻ ՆԱՄԱԿԸ ԿՈԼԵՅԵՐԻՆ

Փարիզ, 25 Եոյ. 1666 թ.

Bibliothèque Nationale de Paris, Mélanges Colbert 142, f. 175.
Նրա առաջնութեանը անփոփոխ՝ ըստ Կ. Յ. Բամաշյանի ընդօրինակութեան:

Grandèzza Reale.

Partendomi sodisfatissimo, primo rengratio humilmentè Là M-ta Christianissima dell. Rè Nostro, et puoi V-ta G-za mentre che non à mè solamentè mà à tuttà la nazione nostra Grecha facesti il non essere più fastidita dai corsari,

pigliando jo tali passaporti, et hauendoli stampati per partiri. per exaltare il nome di Re.

Onde là supplico Signore humilmentè, di aiutare il pouero Armeno chadzi Muràt, che litiga con Criuilliers corsaro primo, francese, sertificolo esser huomo cognossuto in tutta là Turchia, hauer liberato molti huomini schiaul francesi in Canea. cognosciunto etian dal. gran Signore. per I. am[o]re di Dio Signore fatte che sia reso il suo: anche del Nicolao mio seruitore è conpagno, spogliato medesimamentè dal. sopra detto Criuillier, hà lasciato un suo procuratore, I. auocato Beaurin, onde non potendo jo solo irmene copigliami meco, et iò racconmando à loro altri Signori, essendo senpre obligato.

1666. 25. Noembre. in Parigi.

Seruus Cosma
Vicario dell. Patriarcha Alexandrino

Vostra Grandezza piacia di dire all. Musieur cheualier Polli, direttituire una saetia che piglio di mio padre in Tunisi 1663: per li frattelli miei, et madre, che poueramentè là sitrouano. uale mille scudi è li mandi in Tunisi per che iddio (issio?) lo punirà.—

Արքայական Մեծութուն,

Մեկնելով լիուրի բավարարված, խոնարհաբար շնորհակալութուն եմ հայտնում նախ մեր թագավորի Սմենաբրիտտանյա Վեհափառութեանը և հետո՝ Ձեր Մեծութեանը, այն բանի համար, որ ոչ թե միայն ինձ, այլ մեր ամբողջ հունաց ազգին կորսարների նեղութեաններից ալևս ազատ լինելու ապահովութունը շնորհեցիք. [ուստի] վերցնելով մեր անցադրերը և կնքել տալով՝ մեկնում եմ, ի փառս թագավորի անվան:

Արդ, Տեր, խոնարհարար խնդրում եմ, որ օգնութիւն ցույց տաք հայազգի խեղճ Հաջի Մուրատին, որը դատե մեջ է ֆրանսիացի ավագ կորսար Կրիվիլիեի հետ: Նրա մասին վկայում եմ, որ ամբողջ Թուրքիայում հանրածանոթ մարդ է, Կաննայում ազատել է ֆրանսիացի բաղձաթիվ գերիներ և սուլթանը նույնպես ճանաչում է նրան: Ի սեր Աստու, Տեր, կարգադրեք, որ հատուցվի նրա պահանջը, ինչպես հատուցվի նաև իմ սպասավոր և ուղեկից Նիկոլային, [որը] նույնպես կողոպտված լինելով հիշյալ Կրիվիլիեի կողմից՝ իր տեղը դատապարտույան է թողնում փաստարան Բորենին, որովհետև, չկարողանալով ինքս առանձին գնալ, ինձ հետ եմ տանում նրան, հանձնարարելով իրավասու անձնավորութիւններով ուղարկութեան: Մնալով միշտ շնորհապարտ

23 նոյ. 1666 թ.

Ձերդ ծառա՝ Կոզմա

Փարիզ

Փոխանորդ Ալեքսանդրիայի Պատրիարքի

Ձեր Մեծութիւնը բարեհաճելու ասել պարոն ասպետ Պուլիին, որ նա 1663 թվին Թուսիսում իմ հորից գրաված նավը հատուցեր իմ եղբայրներին ու մորը, որոնք ախտեղ են գտնվում խեղճ դրովյան մեջ, և 1.000 սկուդ, որ նրա արժեքն է, ուղարկեր Թուսիս, եթե ոչ՝ Աստված կպատժի նրան:

№ 4

ԿՈԶՄԱ ՊԱԼԵՈԼՈԳԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՐ ՕՏՏՈՄԱՆԻՆ

1666 թ.

Degna Maestà,

La confidenza, che mi ha compartita la Maestà Sua, m'èccita non solamente con l'organo evangelizzante impiegarmi al Vs. servizio in esortare tutta la Grecia, di riconoscervi per Re, Re e liberatore, ma personalmente se lei vorrà veniro a far l'ambasciata al Re di Moscovia e al Re d'Iberia, li quali sono vicini, e vi procurarò popolo quanto ne vorrete.

268

Io sono della casata dell'ultimo Paleologo e mai abbiamo dato tributo al Turco. Muhmusselim ci chiamano, nepoti dell'ultimo Prencipe di Tessalonica nominato Maurizio, onde l'Arcivescovo di Tessalonica mio zio al presente; e tutto il popolo maritimo mi ama in Egitto.

P. O. Bulgarini, „Vita del Padre maestro F. Domenico di S. Tommaso“, p. 286.

Ք Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Արժանավոր Վեհափառութիւն,

Այն վստահութիւնը, որ ինձ շնորհել է Ձեր Վեհափառութիւնը, ինձ խրախուսում է ո՛չ միայն քարոզութեամբ նվիրվելու Ձեր ծառայութեանը՝ հորդորելու համար ամբողջ Հունաստանը, որպեսզի նա Ձեզ ճանաչի որպես թագավոր, որպես թագավոր և ազատարար, այլև, եթե կամենաք, անձամբ դեսպանութեան գնալու Մոսկովիայի և Իբերիայի թագավորներին մոտ, որոնք միմյանց հարեաններ են, և Ձեզ հայթափվելու այնքան մարդ, որքան Դուք կուզեք:

Ես վերջին Պալեոլոգի գերդաստանից եմ և մենք երբեք հարկ չենք տվել թուրքին: Մուսուսելիմ են անվանում մեզ՝ Թեօաղոնիկեի վերջին իշխան Մավրիկի դարմիկներին, որոնցից է Թեսաղոնիկեի այժմյան արքեպիսկոպոսը, որ իմ հորեղբայրն է. իսկ Եգիպտոսի ծովեզերյա ամբողջ բնակչութիւնը սիրում է ինձ:

№ 5

ԿՈԶՄԱ ՊԱԼԵՈԼՈԳԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՐ ՕՏՏՈՄԱՆԻՆ

Փարիզ, 25 նոյ. 1666 թ.

Maestà Orthodoza,

Gia tutto arso nel servizio della Vs. Maestà, ho scritto al nostro Patriarca dalla parte sua, piu di quello che mi havete comandato, dicendogli che dovrebbe scrivere al Re di Moscovia, Iberia, Etiopia, due principi di Val-

289

lachia e Moldovia per lei, acciò vi ajutino [ed] accettino per loro Re.

Lasciatè fare a me. Io eccitarò tutti i Patriarchi in questo e vi scriverò da Marsiglia che dobbiate fare. Perchè sono pronto in servire Vs. Maestà, state allegramente.

Lavorarò quanto potrò quando sarò in Chairò, e faremo o dall'una parte o dall'altra tutto quello che Dio vorrà.

Suo Servo Cosmo Maurizio de Paleologo
Vicario Generale e Assistente
del Patriarca Alessandrino

P. O. Bulgarini, „Vita del Padre maestro
F. Domenico di S. Tommaso“, p. 287.

Ք Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Ուղղափառ Վեհափառութեան,

Արդեն լիովին խանդավառված Ձեր Վեհափառութեան ծառայութեան մեջ՝ ես Ձեր կողմից գրել եմ մեր պատրիարքին ավելի քան ինչ որ Դուք ինձ հանձնարարել էիք, նրան թելադրելով, որ Ձեր մասին գրի Մոսկովիայի, Իբերիայի և Եթովպիայի թագավորներին, Վալաքիայի և Մուղադիայի երկու իշխաններին, որպեսզի [վերջիններս] Ձեզ օգնեն ու Ձեզ ընդունեն որպես իրենց թագավորը:

Թույլ տվիք, որ ես գործեմ ըստ իմ հալեցողութեան: Ես այս ուղղութեամբ կղբղեմ բոլոր պատրիարքներին և Մարսելից Ձեզ կգրեմ, թե ի՞նչ պիտի անեք: Քանի ես պատրաստ եմ Ձեր Վեհափառութեանը ծառայելու՝ Դուք ուրախ մնացեք:

Կահիրեի հասնելիս՝ ես կաշխատեմ իմ ամբողջ կարողութեամբ, և երկուստեք կանենք այն ամենը, ինչ որ Աստված կկամենա:

Ձերդ ծառա՝ Կողմա Մավրիկ Պալեոլոգ
Ընդհանուր Տեղապահ և Ընթերակա
Ալեքսանդրիայի Պատրիարքի

№ 6

ԿՈՉՄԱ ՊԱԼԵՈԼՈԳԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՐ ՕՏՏՈՄԱՆԻՆ

Կահիրե, 1666(?) / 1667(?) թ.

Ho ricevuto una delle gentilissime sue, e nel vederla gusto inesplicabile hebbi nell'anima, e nel cuore l'affetto il quale ho cordialmente verso la Vs. Maestà. Il Signore lo sa.

Son prontissimo spargere il sangue insieme con Lei, per la gloria prima di Dio e poi di Vs. Maestà. La mia parola sarà sicura e sicurissima.

Operi Lei e cominci disporre le cose con politichi fini.

Delli tre Patriarchi Alessandrino, Antiocheno e Hierosolimitano portarò lettere forse questa estade al Re di Moscovia, al Re di Giorgia, donde etiam mandaremo al Re d'Etiochia che doppo lui occupi l'Egitto.

P. O. Bulgarini, „Vita del Padre maestro
F. Domenico di S. Tommaso“, p. 288.

Ք Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Ստացել եմ Ձեր պատվական նամակներից մեկը և, ինչպես նրան, իմ հոգու մեջ անբացատրելի հաճույք եմ զգացել, իսկ իմ սրտում՝ այն սերը, որ անկեղծորեն տածում եմ Ձեր Վեհափառութեան հանդեպ: Տերը գիտի այդ:

Ես լիովին պատրաստ եմ իմ արյունը թափելու Ձեզ հետ միասին, նախ ի փառս Աստուծո և հետո՝ Ձեր Վեհափառութիան: Իմ խոսքը կլինի հաստատ և ավելի քան հաստատ:

Դուք գործեցեք և սկսեք տնօրինել իրերը՝ խորազիտութիամբ:

Հավանական է, որ այս ամռան ես Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի երեք պատրիարքների կողմից նամակներ տանեմ Մոսկովիայի և Գեորգիայի (Վրաստանի) թագավորներին [և] այդ տեղերից նմանապես [նամակներ] ուղարկենք Եթովպիայի թագավորին, որպեսզի հետո նա գրավի Եգիպտոսը:

№ 7

ԳՐԻԳՈՐ ՎԱՍԻԼԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՐ ՕՏՏՈՄԱՆԻՆ

Մարսելյ, 8 դեկտ. 1666 թ.

Sacra Maestà,

Anche noi siamo annotati d'una sì lunga pazienza [che] il Vostro fratello Maometto è ingiusto.

Son venuto in queste parti con intenzione di andare in Roma, ma il Vicario Alessandrino mi hà distornato.

Adesso mi trovo impegnato in qualche affare in Barcellona.

Aspetterò nuove del Patriarca e co' il detto Vicario andrò in Moscovia.

Io son Suo servo e se Cristo Signor Nostro mi permetterà, spero che ci rivedremo.

Con che Le baccio le mani.

In Marsilia, di 8 dicembre 1666.

Servo di Vostra Maestà Gregorio Basilio figlio del principe di Vallacchia

P. O. Bulgarini, „Vita del Padre maestro F. Domenico di S. Tommaso“, p. 288.

Սրբազան Վեհափառութիւն,

Մենք ևս երկար համբերութիան գնով եկել ենք այն համոզման, թե Ձեր եղբայր Մահոմետը անարդար է:

Ես այս կողմերն եմ եկել Հոռոմ գնալու դիտավորութիամբ, բայց Ալեքսանդրիայի Տեղապահը փոխեց իմ մտադրութիւնը:

Այժմ ես ստիպված եմ մի գործով գնալ Բարսելոնա:

Պատրիարքից լուրերի եմ սպասելու և հիշյալ Տեղապահի հետ գնալու եմ Մոսկովիա:

Ես Ձեր ծառան եմ և, եթե մեր տեր Գրիստոսը կամենա, հույս ունեմ, որ մենք նորից կտեսնվենք:

Ուստի համբուրում եմ Ձեր ձեռքերը:

Մարսելիա, 8 դեկտ. 1666 թ.:

Ձեր Վեհափառութիան ծառա՝

Գրիգոր Վասիլ

Որդի Վալաքիայի իշխանի

№ 8

ԱՆՏՈՆ ԳՐԻՄԱՆԻԻ ՆԱՄԱԿԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՍԵՆԱՏԻՆ

Հոռոմ, 14 ապր. 1668 թ.

Le Père Ottoman, fils aîné du grand seigneur Ibrahim, fait jadis esclave par les Maltais, est arrivé ici. Il porte le costume de dominicain, mais ne compte point s'adonner au sacerdoce. Il connaît sa naissance et nourrit des sentiments généreux. Il prétend que son frère (Mahomet IV) est détesté par ses peuples; que l'Empire est dépeuplé de Turcs et que la guerre de Candie a ruiné cette monarchie. Il espère qu'en se faisant voir sur les escadres de Votre Sérénité au Levant et en écrivant et s'exhibant aux chefs, il parviendrait à produire une grande agitation

en Orient et une diversion dans la guerre de Candie; que le vézir pourrait bien en profiter pour échapper au péril dans lequel il se trouve; que pour convaincre toutefois ce grand empire, il faut lui montrer quelqu'un; qu'il a des relations avec quelques patriarches grecs; que le pacha de Mossoul en Babylonie, est en révolte depuis plus d'un an sans le secours du Persan; qu'il espère que les Grecs, les chrétiens et les bons Turcs s'uniront à lui et que beaucoup d'entre eux se décideront à embrasser la vraie foi catholique; que peut-être Dieu a voulu laisser Vos Seigneuries continuer depuis tant d'années une si pénible guerre afin de lui faire succéder ce grand bonheur pour ces peuples; que lui a une grande confiance dans la bonté divine; que l'on ne saurait douter de sa foi, puisqu'il est certain qu'en mettant le pied en Turquie, sa vie court le plus grand danger, mais que c'est une félicité pour lui de l'exposer au service de Dieu; que toutefois il croit nécessaire d'agir avec les populations d'une manière adroite; que s'il plaisait à Dieu de faire réussir ses entreprises, il ne lui manquerait pas de moyens de montrer sa reconnaissance; que ce qu'il y a de mieux à faire c'est de procurer des armes à ces peuples qui voudraient concourir à son avènement; qu'il se pourrait que ce projet fût accepté par le général Rospigliosi qui le conduirait avec lui et que ses généreuses intentions fussent également protégées par les glorieuses armes de Votre Sérénité.

Revue d'Histoire Diplomatique,
t. XVII, p. 372—373.

Ք Ա Ր Դ Մ Ա Ն Ա Ի Ք Յ Ա Ի Ն

Հայր Օտտոմանը՝ սուլթան Իբրահիմի անդրանիկ որդին, որը ժամանակին գերի էր ընկել մալտացիների ձեռքը, ժամանել է այստեղ: Նա դոմինիկյան սքեմ է կրում, բայց մտա-

դիր չէ բնավ քահանայության նվիրվելու: Ընդունում է իր ծագումը և ազնվական զգացումներ է սնուցում: Նրա կարծիքով իր եղբայրը (Մահոմետ IV) ասված է իր ժողովուրդների մոտ. կախրության մեջ նվազել է թուրքերի թիվը և Կանդիայի պատերազմը քայքայել է այդ միապետությունը: Նա հույս ունի, որ Արևելքում Ձերդ Պերճության նապատորմի վրա երևալով և գրելով [թուրք] ղեկավարներին ու հանդես գալով նրանց առաջ՝ իրեն կհաջողվի մեծ շարժում առաջ բերել Արևելքում և Կանդիայի պատերազմի մեջ՝ դիվերսիա. որ վեզիրը կարող է օգտվել այդ առիթից, խույս տալու համար այն վտանգից, որի մեջ գտնվում է ինքը. որ, այնուհանդերձ, այդ մեծ կախրությունը հավանություն բերելու համար հարկ է նրան մի մարդ ցույց տալ. որ ինքը հարաբերություններ ունի հունական մի քանի պատրիարքների հետ. որ Բաբելոնիայում Մուսուլի փաշան (Բաղդադի փաշան) արդեն մի տարի է, որ ապստամբության մեջ է առանց պարսկի օգնության. որ նա հույս ունի, թե հույները, քրիստոնյաները և լավ թուրքերը կմիանան իրեն և թե նրանցից շատերը կորոշեն ընդգրկել կաթողիկոս ճշմարիտ հավատը. որ գուցե Աստված կամեցել է թողնել, որ այդքան տարիներից իվեր Ձեր Տերությունները շարունակեն մի այսպիսի տաժանելի պատերազմ, որպեսզի նրան հաջողվել տա այս մեծ երջանկությունը՝ այդ ժողովուրդների համար. որ ինքը մեծ վստահություն ունի աստվածային բարություն վրա. որ չի կարելի տարակուսել իր հավատի մասին, որովհետև կասկած չկա, որ թուրքական հողի վրա օտ զենկով՝ իր կյանքը ամենամեծ վտանգի տակ կընկնի, բայց որ իրեն համար երջանկություն է կյանքը վտանգի ենթարկել Աստուծո ծառայության մեջ. որ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է համարում ազգաբնակչությունների հետ վերաբերվել ճարպիկ ձևով. որ, եթե Աստված կամենա հաջողություն տալ իր ձեռնարկումներին, իրեն միջոցներ չեն պակասի իր երախտագիտությունը ցույց տալու. որ անելիք վավազույն բռնը՝ ղենքեր հայթայթելն է հիշյալ ժողովուրդներին, որոնք պատրաստակամություն կունենային

աշակցելու իր գահակալմանը: նա հույս ունի, որ այս ծրագիրը կընդունվի զորավար Ռոսսլիխովի կողմից, որը և նրան կառաջնորդի իրեն հետ, և իր վեհ գլխավորութիւնները նույնպէս կպաշտպանվեն Ձերդ Պերճութիւն պանծալի գեներով:

№ 9

ԽՈՋԱ ՄՈՒՐԱՏԻ ՈՒՂԵՐՁԸ ԼՈՒԴՈՎԻԿ XIV-ին

Հունվար 1672 թ.

Sire,

Je m'estime heureux de pouvoir, une fois de plus, Vous assurer de la gratitude de nôtre Nation envers Vous, qui êtes le protecteur de la Religion et de la sainte Foy de nos Pères. Nous sommes les admirateurs de la Gloire qui auréole vôtre majestueux nom et qui illumine l'Orient et l'Occident. Votre Majesté sait combien nous sommes dévoués à la cause chrétienne, comme nous l'avons prouvé à plusieurs reprises pendant la guerre que les Vénitiens et toute la Chrétienté ont faite contre les infidelles. La confiance même que Sa Sainteté a accordée à nos Patriarches et à notre Clergé est une preuve évidente que nous sommes du troupeau de N. S. Jésus-Christ et les fils légitimes de l'Eglise, et par conséquent nous sommes de ceux qui méritent d'être secourus par Vous. Votre Majesté n'ignore pas la situation déplorable dans laquelle se trouve notre malheureuse Nation, comme vous en ont écrit et l'ont expliqué plusieurs fois les Patriarches de notre Nation, ainsi que les Seigneurs, Vous demandant aide et protection et comme je Vous ay exposé aussi ci-devant de vive voix la même chose suivant la commission dont j'étais chargé.

Or, Sire, les Arméniens comme les autres Chrétiens de l'Asie souffrent d'une souffrance insupportable, et accablés de toutes sortes de malheurs, ils gémissent depuis des siècles sous la tyrannie des Agariens et n'ont autre refuge que l'ombre miséricordieuse de Votre Majesté qui tend son bras protecteur vers les malheureux les plus lointains. Vous savez, Sire, qu'aujourd'hui les Chrétiens du Levant sont dans un état pitoyable, et ne pouvant plus supporter le joug des Ismaélites, sont tous prêts à se soulever contre le grand Turc et ses Bachas, comme Vous en ont desjà fait part aussi les Grecs proprement dits, les Grecs de la Mer Noire, les Géorgiens, et les Syriens. Tous ces Peuples sont persuadés que Votre Majesté ne tardera pas d'entreprendre la grande expédition libératrice que nous attendons d'Elle depuis très long temps pour se révolter les armes à la main aussi tôt que les troupes de la Chrétienté paraîtront sous la conduite de Votre Majesté. Pour ce qui est spécialement de notre Nation, Cogearachel, collègue de votre serviteur, qui est revenu de l'Orient, rapporte que les Princes d'Arménie attendent toujours dans le même espoir de voir arriver les armées de Votre Majesté et entretiennent intelligence avec les Gouverneurs des Provinces persanes limitrophes, car Votre Majesté sait que le Sofi est un ennemi déclaré du grand Turc et qui n'attend qu'une occasion favorable pour rentrer en guerre avec luy; de sorte qu'à l'approche et à l'attaque des forces chrétiennes sur les bords de l'Archipel et de la mer de Chypre, en même temps que les troupes de Votre Majesté s'empareront de Constantinople et pendant que les Moscovites attaqueront Trébison, les Persans feront incursion du côté de Bagdad. Les Arméniens qui sont très nombreux dans les régions de Van, de Bitlis, de Taggat, de Sevas, d'Erzeron, de Cars et les autres régions circonvoisines, s'unissant aux Grecs et aux

autres populations chrétiennes seront capables de produire des troubles dans l'intérieur de la Natolie et de résister jusques à ce que les troupes chrétiennes y accourent, car, Sire, les concussions, les oppressions et les violences excédant toute limite dans ce pays, ces peuples ne peuvent plus supporter cet esclavage et se sont résolus de s'en affranchir.

Or, en Vous présentant de nouveau tout cela, j'ay, Sire, le ferme espoir que Votre Majesté ne dédaignera pas les hommages de son humble serviteur et ceux de la Nation Arménienne qui n'aspire qu'au raffermissement de la sainte Religion et ne souhaite que l'agrandissement de la Gloire de Votre Majesté et la propagation de sa Renommée chez tous les Peuples. Nous croyons fermement à la prophétie de S. Narcisse que nos Pères nous ont transmise et nous sommes persuadés que c'est à Votre Majesté que la Divine Providence a réservé le bonheur et la gloire d'être le libérateur de la pauvre Nation Arménienne du sort malheureux où elle est, à Vous, qui êtes le puissant Roy des Francs, qui êtes le plus illustre Monarque de toute la Chrétienté et de toute la Terre.

„Quelques discours et lettres adressés à Louis le Grand, Roy de France“, p. 27—30.

Ք Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Տեր,

Ես ինձ երջանիկ եմ համարում, որ կարողանում եմ մի անգամ ևս Ձեզ հավաստել այն երախտագիտութեան մասին, որ մեր ազգը ունի հանդեպ Ձեզ, որ պաշտպանն եք կրօնի և մեր հայրերի սուրբ հավատի: Մենք հիացողներն ենք այն փառքի, որը պատկում է Ձեր վեհափառ անունը և որը լուսավորում է Արևելքն ու Արևմուտքը: Ձեր վեհափառութունը գիտի, թե մենք ո՛րքան ենք նվիրված քրիստոնեական դա-

տին, ինչպես ապացուցել ենք բազմաթիվ անդամներ այն պատերազմի ընթացքում, որ վեհնեոացիները և ամբողջ քրիստոնեութունը մղեցին անհավատների դեմ: Այն վստահութունն իսկ, որ Նորին Սրբութունը շնորհել է մեր պարիարքներին ու մեր կղերին, հայտնի ապացույց է, որ մենք մեր տեր Հիսուս Քրիստոսի հոտից ենք և Եկեղեցու հարազատ զավակները. և հետևաբար նրանցից ենք, որոնք արժանի են Ձեր օգնութեանը: Ձեր վեհափառութեանը հայտնի է այն ողորալի կացութունը, որի մեջ գտնվում է մեր դժբախտ ազգը, ինչպես այդ մասին Ձեզ գրել ու բացատրել են բազմաթիվ անդամներ մեր ազգի պատրիարքները, ինչպես և տանուտերերը, Ձեզանից օգնութուն ու պաշտպանութուն խնդրելով, և ինչպես ես էլ եմ Ձեզ հայտնել նույն բանը սրանից առաջ բանավոր կերպով ըստ այն պաշտոնի, որը հանձնված էր ինձ:

Արդ, Տեր, հայերը, ինչպես ասիական մյուս քրիստոնյաները, տառապում են անտանելի տառապանքներով և, բազմատեսակ դժբախտութունների մեջ թաթախված, դարերից ի վեր հեծում են հազարացիների բռնակալութեան տակ և ուրիշ ապստան չունեն բացի բարեզույթ հովանին Ձեր վեհափառութեան, որն իր պաշտպանարար թեղ տարածում է մինչև ամենահեռավոր թշվառները: Դուք չեք անգիտանում, Տեր, որ այսօր Արևելքի քրիստոնյաները եղկելի վիճակի մեջ են և, չկարողանալով այլևս տանել իսմայելացիների լուծը, բոլորը պատրաստ են ապստամբելու սուլթանի և նրա փառանքների դեմ, ինչպես արդեն այդ մասին Ձեզ տեղեկացրել են բուն հույները, սև-ծովյան հույները, վրացիները և ասորիները: Այս բոլոր ժողովուրդները համոզված են, որ Ձեր վեհափառութունը չի ուշանա սկսելու ապստարար այն մեծ արշավանքը, որ մենք սպասում ենք նրանից շատ երկար ժամանակից իվեր, զենքը ձեռին ապստամբելու համար հենց որ քրիստոնեական բանակները կհայանվին Ձեր վեհափառութեան առաջնորդութեամբ: Ինչ վերաբերում է հատկապես մեր ազգին, Սոչա Առաքելը, որ Ձեր ծառայի պաշտո-

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒԹՈՒՆՁԻՒ ՈՒՎԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ
1678—1680 թթ.

ԵՐԵՎԱՆԻ ՕՐԻՆԱԿ

Երևանի Պետ. Մատենադարանի ձեռ. № 737, էջ 201ա—202բ:
Բնագրում կըր և անկյունավոր փակագծերով արված հավե-
լումները մեր կողմից են:

Պատմութիւն երկրին Հապաջատանայ, զոր գնաց ոմն
ի վարդապետաց և գրեալ զպատմութիւն Հապաջատանայ եթող
աշխարհի:

Եւ Յովհաննէս վարդապետս Ախթամարայ և արհի եպիս-
կոպոս Շամիրամակերտոյ կամեցալ գնալ ի Հապաջատան:
Եւ գնացի ի Մսր. ի Մսրոյ Ը (8) օր Միլ (sic) գետովս
գնացինք Գիրճալ. և Գիրճու նոյն գետովս Գ (3) օրին գնա-
ցինք Ղինայ, և այս գետիս Բ (2) կողմն էլ շինութիւն է. Ղի-
նու Ը (8) օրէն ճանապարհ է մինչ ի Ղուրսէլ՝ որ է Հնդկաց
ծովու իսկէլէն: Եւ այս Ը (8) աւուր ճանապարհն չօլ է. ոչ
չուր կալ և ոչ բոյս, այլ միայն կարմիր աւազ: Ղուրսէլու
ղայեխով ի վերայ Կարմիր ծովուն կու գնալ, Լ (30) աւուր
ճանապարհ է մինչ ի Սովաքի, որ է սինօր Բանդին Արաքի
թագաւորին. և այս Լ (30) օուր ճանապարհիս վերայ ազգ և
ազգ մարդիկք կալին: Կան ազգ, որ ոչ վարեն և ոչ ցանեն,
և ոչ ուտեն հաց, այլ միայն հում միս և զոր ինչ ելանէ ի
ծովէն և զամենայն վալրի գազան. և ոմանք զմիս մարդոյ
ևս ուտեն, և իւրաքանչիւր ոք կարճ են և հաստ: Եւ ի վե-
րայ այս ճանապարհիս է կղզին, որ ելանէ մարդարիտն, և
լեառն որ գտանի զմրութ ահն: Սովաքինոյ Ի (20) օուր ճա-
նապարհ է ծովով ի Մոսովայ որոյ մի կողմն լեմամանին է,
և մի կողմն Հապաջատան: Եւ Մուսովայ է կղզի ի մէջ ծո-
վուն և նստի փաշայ Օսմանցոց, և գատ ի կղզին ո՛չինչ
տեղ կարէ իշխել: Ի Մուսովայ ԺԲ (12) օուր ճանապարհ է
մինչ ի Բիւրպատ, ցամաքով գնան: Այս ԺԲ (12) օուր ճա-

նակիցն է և Արեւելքից է վերագարծել. հաղորդում է, որ Հայաս-
տանի իշխանները սպասում են միշտ Ձեր Վեհափառութիւն
բանակների ժամանումը տեսնելու նույն հուլիսով և հարաբե-
րութիւնների մեջ են պարսկական սահմանակից նահանգների
կառավարիչների հետ, որովհետեւ, ինչպէս Ձեր Վեհափառու-
թիւնը գիտի, շահը սուլթանի հայտնի թշնամին է և միայն
նպաստավոր առիթի է սպասում նրա դեմ պատերազմը
վերսկսելու համար: Այնպէս որ, երբ քրիստոնեական զորքերը
կոտորենան ու կհարձակվեն Արշլուկլագի և Կիպրոսի ծովի ափե-
րի վրա, և այն ժամանակ, որ Ձեր Վեհափառութիւն բանակ-
ները կգրավեն Կ. Պոլիսը՝ մինչ մոսկովցիները կհարձակվեն
Տրապիզոնի վրա, պարսիկները կհերթաւժեն Բաղդադի կող-
մից: Հայերը, որոնք շատ սավարթիով են Վանի, Բիթլիսի,
Թոխաթի, Սեբաստիայի, Կարինի, Կարսի և մերձակա շրջան-
ների մեջ, միանալով հույների և մյուս քրիստոնյա ազգաբնա-
կութիւնների հետ, կկարողանան շփոթութիւններ առաջ բե-
րել Անատոլիայի ներսում և դիմադրել՝ մինչև քրիստոնեա-
կան զորքերի հասնելը, որովհետեւ, Տեր, հարստահարութիւն-
ները, ճնշումներն ու բռնութիւններն այդ երկրում ամեն սահ-
ման անցած լինելով՝ ժողովուրդներն այլևս չեն կարողանում
տանել այդ ստրկութիւնը և որոշել են ազատվել նրանից:

Արդ, այս բոլորը ներկայացնելով Ձեզ նորից, ես հաս-
տատ հույ ունեմ, Տեր, որ Ձեր Վեհափառութիւնը անտես
չի անի մեծարանքները իր խոնարհ ծառայի և հալ ազգի,
որի միակ փափաքը սուրբ կրօնի ամբացումն է, Ձեր Վեհա-
փառութիւն փառքի ծավալումը և նրա համբավի տարածումը
բոլոր ժողովուրդների մոտ: Մենք հաստատապէս հավատում
ենք Ս. Ներսեսի մարգարեութիւնը, որ մեզ սպանդել են մեր
նախնիները, և համոզված ենք, որ աստվածային նախախնա-
մութիւնը Ձեր Վեհափառութիւնն է վերապահել հայոց խեղճ
ազգի ազատարարը լինելու երանութիւնն ու փառքը այն
դժբախտ դրութիւնից, որի մեջ գտնվում է՝ նա, Ձեզ, որ
Ֆրանկների հզոր թագավորն եք, ամբողջ քրիստոնեական
աշխարհի և ամբողջ երկրագնդի ամենից երեկի միապետն
եք:

նապարհս կայ շատ կերպ գազան, և է մայրի, ևս առաւել
ֆիլ, առիւծ, քէրկէրտան, մէլմուն, որք են իբրև դաւազ ծո-
վու: Եւ ի գիշերի ո՛չ ոք կարէ գնալ, բայց միայն ի ցերեկի:
Գոյ ազգ և ազգ թուշունք քաղցրխօսք, և գեղեցկագոյն փետ-
րով: Եւ ճանապարհն ամէն շինութիւն է և մարդով լի: Եւ
Դիւարպատ է սահրատ Հապաշոյ թագաւորին. և նստի բէկ-
լէր բէկի: Արդ արի թագաւորին. վասն մեր եղև հրաման
գնալոյ: [Ի] Դիւարպատ[ու] Լ (30) օուր ճանապարհ է մինչ ի
քաղաքն Դումպիեայ, որ է թախտ թագաւորին Հապաշոյ: Այս
Լ (30) օուր ճանապարհս ժե (15) օուրն խիստ լեռնային է,
որ յառաւօտէ մինչև լերիկուն ի գլուխն կելանէ, և լերեկոյն
մինչև յառաւօտն ի տակն կու իջանէ. և մնացած ժե (15)
աւուր ճանապարհն առաջին օրն սար մի կու անցանի, որ
խիստ բարձր է և երկայն, որ Ա (1) կողմն հասեր է ի ծովն
ովկիանոս, և միւս կողմն հասեր է Բագինոյ լերկիրն. և զսարն
գծար կու անցանի որ թէ՛ սաւար, և թէ՛ բեռն չուանով կու
քաշին ի վեր. և յորժամ սարի գլուխն ելանէ, գլխէն մինչ
ի թագաւորի թախտն ԺԴ (14) օուր ճանապարհն զաշտ է
ընդարձակ լի ամենայն շինուածովք և շինութեամբ որ կարէ
ասել Ա (մին) քաղաք: Իսկ Դումպիայ, որ է թախտն, Բ (2)
տակ մեծ է քան զՍտամպոյ առանց պարսպի. միայն թա-
ղաւորի տունն է պարսպով. և ուր կան որդիք թագաւորին՝
ամուր բերդ է և ժեմ (15,000) մարդ կու պահեն զբերդն:
Եւ լայնութիւն երկրին է Ե (5) ամսեան ճանապարհ, և լայս
երկիրս կայ Է (7) թաղաւոր քրիստոնեայ, որ մեծն և առա-
ջինն Թումպիոյ թագաւորն է, որ է իբրև իփրատոյ (իտալ.
Imperatore, կայսր) ի վերայ ալոցն: Երկրորդն ասի Տիգրէ:
Երրորդն՝ Ազգավ: Չորրորդն՝ Բագայ: Հինգերորդն՝ Նառէ: Վե-
ցերորդն՝ Ճիկլայ: Եւ այս Չ (6) թագաւորքս հնազանդ են
Դումպիոյ թագաւորին. և որ ինչ որդիք ծնանի այս թագա-
ւորացս, կուղարկեն Դումպիոյ թագաւորին, զի զորն որ կա-
մի՝ զայն արասցէ թագաւոր ի տեղի հօրն: Եւ ինքն թագա-
ւորն է լոյժ ստուածասէր և բարեպաշտ. տեսլեամբն գեղե-
ցիկ և հասակաւն Բ (2) կանգուն բարձր քան զամենայն

մարդիկք: Իսկ զգնանն երբեմն է զարպաֆ և երբեմն ֆու-
թալով ծածկած և ականակուռ թագն ի գլուխն: Եւ ինչ տեղ-
որ նստի, Ա (1) թօփուզ, Ա (1) թուր և Ա (1) խանչար ա-
թոռովն առջևն դնեն, և մին խանչար միշտ ի մէջքն է, և
բազմութիւն զօրացն ասելի են քան զաւազ ծովու. և օլօֆալ-
չունին, այլ միայն գեղ և քաղաք ի տեղի օլօֆային. և Չ (6)
ամիս միշտ սաֆար է ի վերայ թշնամեաց. և Չ (6) ամիս-
լիւր զարպասն է. և լամիւնայն օր Բ (2) անգամ դատաստան
նստի առաւօտն և երկուունն ժե (12) դատով. Բ (2) մեծ վա-
զիր առջևն կու կանգնին մեծ թագաւորին՝ ի ձեռներն է գիրք-
դատաստանի, առաջի իւրեանց, և գրով դատաստան առնեն,
թէ՛ չիվէլ (իտալ. civile, քաղաքացիական), թէ՛ կրմնալ
(իտալ. criminale, քրեական). և զայս օուր դատաստան ի վա-
զըն ոչ ձգեն թէ՛ չիվէլ, թէ՛ կրմնալ. և որպէս դատաստան
առնեն դատիքն առաջի թագաւորին, թագաւորն տայ սայն-
թեցայ (իտալ. sentenza, վճիռ): Եւ յորժամ թագաւորն ի դուրս
եկանէ, այս է զինաթն. ԻԴ (24) լեղաք, ԻԴ (24) շաթիր և
ԻԴ (24) խաչալամ, Լ (30) դաւուլխանայ, արծաթէ թրըմիթ
(թուրք. trampete, թմբուկ), նաֆիր, պօսօզան. և իւր-
եանց առաջնորդն ընդ թագաւորին շուռ կու զայ ականակուռ:
Թագով. և որքան զինաթ թագաւորն ունի, այնքան և առաջ-
նորդն ունի: Եւ երկիրն լի է ամենայն բարութեամբ և զա-
նազան այգօք և առատութիւն լոյժ ամենայն կերակրոց թէ՛
մսեղինաց և թէ՛ մրգեղինաց: Կան ծառք և ծաղիկք զանա-
զան: Բայց կայ և ծառ մի որ ո՛չ ինչ գտանի ի նա, և է
բարձր որպէս զանկակատուն Պիշարու (Pisa) և տակն այն-
քան հաստ է, որ ժե (15) կամար ե[ն] շինել ի ծառէն. և
ի գլուխն ունի սակաւ ճիւղ, և պտուղն որպէս դդում, և մէջն
է իբրև զփշտ թըթվաշ, և մարդիկք ուտեն զայն: Իսկ բնա-
կիչք երկրին ամէնքն տկուր: Միայն մեծամեծք ծածկվին
Ա (1) ֆութալով, և ի սանայեթէ պակաս են. արծաթ և
պղինձ, կլայեկ և արճիճ ո՛չ գտանի բնաւ. բայց ոսկի շատ,
Գ (3) կերպիւ, Ա (մինն) որպէս զաւազ, և Ա (մինն) որպէս
նօխուտ և բակլայ, և Ա (մինն) որպէս ձնէրեկ բուսովի ի

մէջ դամիշի. և սսք (sic) ևս ո՛չ գոյ, այլ ամենայն ալիշ վէ-
րիշ ազով կանեն: Կայ և հզն մի, որ պոզն այնչափ մեծ է,
որ ամէն պող թ (40) յողալ շուր կու տանի, որ և յամէն
տարի փոխի պոզն: Կայ և էշ վայրի գեղեցկախայտ, որ թա-
գաւորաց ընծայ կու տանին: Կայ և սամուր պատուական, որ
մինն մի քուրք կու լցնու, և է թանկագին: Կայ և ծառ բամ-
պակի մեծ որպէս ծիրանի, և տարին ժԲ (12) ամիս պտուղ
տայ և ապրի մինչ ի Ճ (100) տարի: Եւ երկիրն ամենայն
շուր ո՛չ ըմպեն, այլ մեղր և զինի և պոզալ: Դարձեալ զմեռ-
եալն ուրախութեամբ և պարով և սազով թագեն և զնոր
ձնեալն յետ Ը (8) աւուր թլփատեն և սպա մկրտեն. և ամէն
մարդ ըստ կարողութեան կարէ պահել մինչ ի Ծ (50) աղ-
ջիկ որպէս կին, բայց ընդ միոյն պսակի: Եւ այս է (7) թա-
գաւորութիւնս Ա (1) առաջնորդ ունին, որ ի Մսրայ Ղպթոց
ազգէն տանին. Եւ այս է (7) թագաւորութիւնս Բ (2) ազգ
ադանդ են. Ա (մինն) ասի Թխլմանոսի (sic), որ ի յազգէն
Հրէից յառաջ են եկեալ և ունին ՃԹ (100,000) վանք, թող
զդիւղօրէից եկեղեցիքն, և միւս ազգն ասի Թագէտեանք, որ
ի յազգէն Հայոց յառաջ են եկեալ, և ունին ՁԹ (80,000)
վանք, թող զպիւղօրէից եկեղեցիքն: Եւ այս է (7) թագաւո-
րութիւնքն մի հաւատ և մի օրէնք ունին առ հասարակ. և ի
շարքս օրն պահեն զկիրակին ընդ Հրէից, և երիցունքն կա-
նայք առնեն. Իսկ արեղայքն ո՛չ խառնուին յաշխարհական
դործ՝ և ո՛չ ի խոտալանութիւն, ո՛չ մարդկանց և ո՛չ կա-
նանց: Իսկ եղանակ երկրին այսպէս է, որ լուսնիս ամսէն
մինչ ի հոկտեմբեր ամիսն ձմեռն է. և այս Դ (4) ամիսս
յամէն օր Բ (2) անգամ անձրև կու գայ, առաւօտն և երեկոյն
և զիշերն ամենայն. և որչափ անձրև կու գայ այս Դ (4) ա-
միսս, ամէնն կու գնայ ի ծովակն մի, որ կապէ ժԵ (15) օր,
և Միլ (sic) գետի ակն այս ծովակիս մօտն է, որ կու մտնու
այս ծովակիս մէջն. և յայս ծովակէս շուրն կու ելանէ և
գնայ ի Մսր, որ Մսրայ երկիրն բովանդակ շինութիւնն
այս շրովս է, և թէ Հաբաշայ թագաւորն կամենայ՝ կարէ
կտրել զշուրս զայս և ձգել լիւր երկրի մէջն: Եւ այս

ծովակիս մէջն լի է ամենայն ծովային կենդանի՝ ֆիլ,
գոմէշ, եզն, արջ, շուն, խոզ, մարդ, կին, և այլ ան-
թիւ կենդանիք: Եւ երկիրն Հապաշոյ միշտ կանաչ է, և
չոր բոյս ոչ տեսանի. լի է ջրաւէտ և խոտաւէտ: Եւ յերկիրս
յայս ո՛չ ոք մտանէ. և որ մտանէ՝ ելանել ո՛չ կարէ յայլ
ազգէ: Բայց մեք շնորհօքն Գրիստոսի և օգնութեամբ թա-
գաւորին մտաք և ելաք, մնալով անդ ամիսս Դ (4). և յետ
Դ (4) ամսոյն խնդրեցաք զհրաման ելանելոյ, զի ո՛չ կարա-
ցաք կալ վասն օրինացն և հաւատոցն, որ վշտացուցանէին
քանանայքն հարց և փորձ առնելով. որ և թագաւորն գրեաց
յանձնարարական գիր ի վերայ Մնարոյ (Sennaar) թագաւորին,
որ է թագաւոր Արապներոյ, և անուն կոչի Բահդին. թէպէտ
ասի Թուրք, բայց ո՛չ ունին զօրէնս Թուրքաց: Եւ ելեալ ի
Դուսպիոյ Ի (20) օուր ճանապարհ մինչև ի Չանկղալայ որ է
երկիրն կոպաշտից Արարից, և այժմ կէսքն քրիստոնեալ
են: Դարձեալ ճանապարհն ամէն շինութիւն է. ի Չանկղա-
լայոյ մինչ ի Բանտին թագաւորի թախան ԻԳ (23) օուր ճա-
նապարհ է ի վերայ Միլ (sic) գետոյն: Տուաք ինքն զգիր
Հապաշոյ թագաւորին, կանգնեցաւ ի վերայ ոտին և զգիրն
ընթերցեալ եղ ի վերայ զլիտոյն, և ամենայն զօրքն կանգնեցան
ընդ ինքեանն. և այս թագաւորս ևս թարի է Հապաշոյ թա-
գաւորին: Եւ կացաք անդ մինչև քարաւանի ելանելն, և թա-
գաւորն եղիւր մարդ ընդ մեզ, որ բերին մինչև ի Մսր, Ի (20)
օր գետի վերայ եկանք ի տեղ մի և անցանք զգետն. և ժ (10)
աւուր ճանապարհ ևս եկանք ի գետի վերայ, և թաքրար ան-
ցաք զգետն, և այս Լ (30) օուր ճանապարհս շինութիւն է և
յայս տեղէս մինչ ի Թուսիլայ Ը (8) օուր ճանապարհ է, ա-
մէն չօլ է. և շուր վեր կալանք ի Դանկղալոյ (sic). է (7) օր
գետի վերայ գնացինք մինչ ի տեղ մի, և այն տեղէն մինչ ի
Ալֆայ ԻԷ (27) աւուր ճանապարհ է. և այն տեղէն շուր վեր
ապինք վասն մարդկան, զի ոչ գոյ բնաւ շուր. միայն Բ (2)
տեղ շուր կալ դառն վասն աղտոց: Եւ ի ճանապարհին ոչ
բոյս կալ, ոչ ծառ և ոչ սառ (sic), բայց միայն կարմիր ա-
ւազ, որ ասի ծով աւազոյ. և ԻԷ (27) օր հասաք լիւլֆայ, որ

է. երկիր Քուրքաց, Մարացոց իշխանութեամբն: ՅԱլֆալոյ Ե (5) աւուր ճանապարհ է մինչ ի Կոճայ: Կոճայոյ Ը (8) օուր ճանապարհ է մինչ ի Մար: Եւ ճանապարհն ամէն չօլ է. ոչ ջուր կայ և ոչ բոյս, ալլ միայն սպիտակ աւաղ. և Գաճոյ ջուր վեր առանք և մինչ Ը (8) օրն հասաք ի Մըսր: Ի գնալն ծովով դնացաք ի Հապաշտան, և ի գալն չօլով եկաք ի Մըսր. և լետ Բ (2) տարոյն դարձանք ի Մար: Ի Մարոյ եկաք ի Սքանդարիա: Ի Սքանդարիոյ ի Միսինա (Messina), Լիօրնայ (Livorno) լերկիրն Քուսկանաց զոսնդուկի, որոյ տէր Աստուած լերկար կեանս տացէ նմա ամենայն տամբն իւրով ի պարծանս քրիստոնէից և ի խնդութիւն տառապեալ ազգիս Հայոց:

Եւ է սնօրտաշ Հապաշի թագաւորին ընդ Օսմանցոց, և իւր երկիրն է յոյժ խաղաղութիւն, որ ոչ զոդ կայ և ոչ բող, ոչ մարդասպան. և ոչ գօմբուկ, ոչ ի մտանկն և ոչ լիւանկն, և թագաւորն է խիստ ձեռնառաս, և ինքն աղքատազգեստ և մեծազլուի քան զամենայն մարդիկք երկիրն:

Եւ լայս է (7) թագաւորութիւնս Հապաշին և Ա (1) թագաւորութիւն Մնարոյ ոչ գտանի կոլր, կազ, խոցոտ, անդամալոյժ, և ալլ ախպիսի ցաւ. և ձիանք երկիրն ըզտոյ չափ են, և խիստ վազող. և մարդ՝ քան զձի վազող:

Կ. ՊՈԼՄԻ ՕՐԻՆԱԿ

Կ. Պոլսի Անտոնյան վանքի Մատենադարանի ձեռ. № 211

Պատմութիւն Հապաշքստանայ գնալոյ և գալոյ ճանապարհին ի թուին Գրիստոսի 1678:

Ես, Բրիստոսի նուստ ծառայ Յոճաննէս վարդապետ և արքեպիսկոպոս Շամիրամակերտու, կամեցալ գնալ ի Հապաշտան: Ի թուին Հայոց ՌձԻԷ սեպտեմբերի ԺԷ էլեալ ի Մարոյ 8 օր մեծ գետովն գնացաք Գիրճալ: Գիրճու նոյն գետովն 4 օր գնացաք Աինայ: Այս գետոյս Բ կողմն ալլ շինութիւն է. Աինու 8 օր գնացաք Աուրաբր, որ է Հնդկաց ծովու

էսկալէն: Այս 8 օրեալ ճանապարհս չօլ է. ոչ ջուր կայ և ոչ բոյս, ալլ միայն կարմիր աւաղ: Աուրաբր զայնիսով 30 օրն հասաք Սօվաքի, որ է սրճօս Բագէն Արաբի թագաւորին: Եւ այս 30 աւուր ճանապարհի կերպ կերպ մարդիկ զոն որ ոչ վարել ունին և ոչ ցանկի, ալլ միայն զձուկ և ամենայն ազգ գազան և եադի սեղ մարդոյ միս ուտեն: Եւ մարդիք երկիրն խիստ կարճ են և հաստ: Եւ ի գնալն անցաք մարգարտի ազալովն և զմրութի սարովն: Սովաքինու 20 օր ծովով գնացաք Մուսովա, որ է մին կողմն լեամանն, և մին կողմն Հապաշտան, և ինքն կղզի է ի մէջ ծովուն, և այս կղզիս նստի փաշայ Օսմանցոց, և զատ ի կղզոյն ոչինչ իշխանութիւն չունի: Ի Մուսովու 12 օր գնացաք ի Գիվարպատ: այս 12 աւուր ճանապարհիս շատ կերպ գազան կայ, եւս սուաւիլ Ֆիլ, քարքեարդան, մէհմուն, առիւծ, որ շատ են քան զուաղ ծովու: Գոն և ազգ ազգ խօսուն թռչունք գեղեցիկ փետրօք, և է մալրի՝ և ի գիշերի ոչ սք կարէ գնալ և երկիրն ամենայն շէն է և մարդալի: Ի Գիվարպատու Հապաշի թագաւորին վեզիրն վստն մեր արզ արաւ թագաւորին, եղև Կրաման գնալու. տեղէն 30 օր հասաք ի Դոււմպիա, որ է դախտ Հապէշու թագաւորին. այս 30 աւուր ճանապարհիս 15 աւուր ճանապարհն լեանային է, որ առաւօտէ մինչև երեկոյ լերան զլուխն կեննէ, և երեկոլէն մինչև առաւօտն զլսոյն կու իջանէ. մնացեալ 15 աւուր առաջին աւուր ճանապարհն լեան մի կայ բարձր և երկայն, որ մի կողմն հասել է ի ծովն, և մին կողմն ի Բագինու երկիրն է. և այս լերան այն երես անցանկն տաւար չէ կարող զլուի ելնել, թէ՛ բեւ, թէ՛ տաւար չուսնով վեր կու քաշեն: Եւ ի լերան զլսէն մինչև ի Դոււմպիա դաշտ է և լի շինութեամբ եւ մարդով որ կարէ ասել մին քաղաք: Իսկ քաղաքն Դոււմպիոյ երկու չափ մեծ է քան զՄտամպօլ, առանց պարբալի, եւ թագաւորին տունն է միայն պարսպով, և ար կան որդիք թագաւորին՝ լերան զլուխն է և ամուր բերդ, եւ ԴԵՌ (4-5 հազար) մարդ պահեն զբերդն: Եւ երկիր լայնութիւնն ասեն 5 ամսէն ճամբալ է. և այս քան երկրումն 6 թագաւորութիւն կայ քրիստոնեալ. բայց զլուխն Դոււմպիոյ թագաւորն է

իրբե իմփէրաթօր, միւսք թագաւորքն հնազանդին սմա և որ ինչ տղայք ծնանին այս 6 թագաւորքն և թագուհիքն, և ողորկին Դոմպիոյ թագաւորին մօտն, որն որ կամի գալն, գալն թագաւոր դնէ իւրեանց հօր տեղն: Իսկ թագաւորն է լոյժ բարեպաշտ և աստուածասէր, և ամէն օր երկու անգամ ի դիւան կու նստի առաւօտ և երեկոյ, 12 զատով և 2 մեծ վէզիրով, 2 մեծ թուր ի ձեռաց երկու վէզրին:

Դասաստանազիրքն առաջեւներն, այս օրէն դասաստանն վաղն չին ձգել, թէ չէվիշ թէ կամանել և ինչ տեղ որ դիւան կանէ մեծ փիւլայցայ է. Գ (3) մեծ ծառ կայ փչի որ հաստութիւն Գ (3) մարդ չէ կարող պատել և զլսի հղներն հաւասարք են և այնչափ լայն է ծառի գլուխն որ տակի շուքն ԴԻ (4000) մարդ կու նստի: Եւ բնաւ սքայ չունի, այլ աղով կանեն այիշ վէրիշն: Եւ յորժամ թագաւորն դուրսն ելանէ այս է պենաթն. 24 լետակով, 24 դաթրով, ԻԳ (24) խաչալամով, 30 դապուշխանայ՝ թրէմպէտով, նաֆիրով, բուռով և պօռօզանով, իւրեանց առաջնորդն հետն, ակահակապ թագ ի դուխն, և որքան դնէթ որ ունի ինքն նոյնպէս այլ ունի կինն: Ե յորժամ թագաւորն նստի ի սեղան՝ 2 աւաքերէց մինն լաջ և մինն լահեակն կու կանգնին, և 2 վէզիր առաջեւ և թագաւորին ձեռաց մին ճոթ կայ, և ինչ կերակուր վէզիրքն հրամայեն՝ չաշնիդիրն գալն կերակուրն դնէ հացին վրայ՝ ոտէ թագաւորն. նոյնպէս և ըմպելն, որ ինչ վէզիրքն հրամայեն: Եւ հագուստ թագաւորին երբեմն բարակ գառպատ, և երբեմն ֆութալով, և ականակու թագ ի դուխն. և ինչ տեղ որ նստի մին թուր մին թօփուզ և մին խանչար աթոռով առաջեւն դնեն և մին խանչար այլ միշտ մէջքն է: Եւ ինքն թագաւորն է լոյժ անձնեղ և գեղեցիկ և հասակաւ երկու կանգուն բարձր քան զամենայն մարդիկ և որքան թագաւոր որ եկեալ է սորա ազգէն՝ բազկի ոսկոտն մի է և ոչ երկու իրբե հասարակ մարդոց: Կէս տարի միշտ ի սաֆար է թագաւորն ամենայն զօրօքն և զօրքն անհուն են իրբե զաւազ ծովու առանց ուլուֆայի և փոխանակ ուլուֆայի երկիր ունին և զեղ: Ի յոնիսի ամսոյն մինչև հոկտեմբեր ամիսն

ձմեռն է որ բարձր սարերն ձիւն կու գայ. և այս 4 ամիս ամէն օր 2 անգամ անձրեւ կու գայ և զիշերն մինչև լոյս. և որքան անձրեւ որ կու գայ ամէն կու հաւաքին ի ծովակ մի որ պատէ 15 օր. և նիլ գետոյ ակն այս ծովակիս մօտ է, կու մտնու այս ծովակիս մէջ, և այս ծովակիս շուրն կելնէ 2 սարամիջով կու գնայ Մար, որ Մարայ երկիրն շէն կու պահէ. և թէ Հապաշի թագաւորն կամենայ կարէ կարել զՄարու շարն, և այս ծովակիս մէջն ամենայն ծովային կու գտանի. ֆիլ, գամէշ, եզն, մարդ, կին, և ամենայն անճոռնի կենդանի: Եւ երկիրն շատ Հրէայք կան բնիկք, և թուրք որ լետոյ են եկել: Եւ այս 6 թագաւորութիւնս մի օրէնք և մի հաւատ ունին, և երկրունքն կին ունին, արեղայքն ոչ. և են 2 ազգ, մինն ասի Թալմանոսք որ ի յազգէն Հրէից են յառաջ եկեալ և մինն Թագէոսեանք որ յազգէն Հայոց են յառաջ եկեալ: Թալմանոսեանքն ունին ձմե վանք, թող զգեղօրէից եկեղեցիքն, և Թագէոսեանք ունին ձմե վանք, թող զգեղօրէիցն: Եւ երկիրն ամենայն է լոյժ բարութեամբ լի և դանազան պտղովք, և միշտ կանանչ է ի Գ եղանակն և ջրավէտ, և մարդիկ ամենեքեան են մերկ և բոպիկ, գատ ի մեծամեծացն որ մին ֆութալով ծածկեն, և այս 6 թագաւորութիւնս Հապաշին և մին թագաւորութիւն Սընարին չկայ կոյր, կազ, խոցոտ, և այլ այսպիսի ցաւ. և ձիանք երկիրն են կարի վազողք և մարդիքն քան զձիանքն:

Այլ և կայ ծառ մի մեծ որ բարձր է քան զգանկակաւաւանն Փիլգալու, և տակն այնքան հաստ է որ բոլորն կու փորին՝ 15 և 20 կամարաւ կու շինեն. և զլուխն փոքր ճուղ ունի, և պտուղ ունի. որպէս թարում փշատի նման է և թթվաշ ունին գալն. կայ և բամպակի ծառ որ մեծ է իրբե ունկղի ծառ և ի տարին բոլոր պտուղ կու տայ և կու մնայ մինչև ձ տարին. կայ և ծառ շաֆթալուի որ 2 լիրա կու կշռէ մին հատն, և ի տարին բոլոր պտուղ կու բերէ: Կայ և ազգ մի եզն որ ամէն պոչն Թ. հոխայ շուր կու տանի որ կու մորթեն կուտեն. կայ և էշ վայրի գեղեցկախայ որ թագաւորաց փէշքաշ կու տանին: Կա և ազգ մի կենդանի որ զառնափա

ասեն որ վիզն խիստ երկայն է, գէվադուշու նման է, և ինքն է քան գէզն մեծ և լիաքն բարձր է քան գառաշքն, և ինքն խիստ սիրուն կաշի ունի պուտ պուտ: Կայ և սամուր պատուական որ մէկ հատն մին քիւրք կու լինի: Եւ երկիրն բնաւ ոչ լմպեն ջուր ալլ մեղրի գինի և բոզալ: Եւ ի Հապաշի երկիրն ոչ գոչ բնաւ արծաթ, պղինձ, կլալէկ, արճէճ, բայց ոսկի չտա, որ Յ կերպ է. մինն իրրև դաւաղ. Յ որպէս բակլայ և սիսեան. Յ բուսուն ոսկի որպէս ծնեբեկ ի մէջ զամիշի: Եւ անուն թագաւորաց քաղաքին մեծի ասի Թումպիտ, երկրորդին Տիգրէ. երրորդին Աշղավ. 4 Բագա. 5 Հասէ. 6 Ծիլկա: Իսկ Մնարու թագաւորն որ է սնուտաշ Օսմանցոց և Հապաշին, իւր երկիրն է խիստ ազալաթ որ ոչ գող կայ, և ոչ բող, և երկիրն բնաւ գերմայրուկ չկայ ոչ ի մաւանելն և [ոչ] ի լիւանելն, և թագաւորն է լոյժ ձեռնաւատ, և ինքն աղքատազգեստ և աղքատաւէր և մեծագլուխ քան զամենայն մարդիկ երկիրն: Եւ իմ կացեալ ի Հապաշատան Դ ամիս, խնդրեցի հրամանն ելանելոյ, զի ոչ կարացի կեալ վասն վշտացոցանելոյ զմեզ քահանայիցն լաղազս հարցափորձի բազմիցս օրինաց մերոց և հաւատոց համար: Եւ զբեաց թագաւորն լանձնարարական գիր ի վրայ Մնարու թագաւորին որոյ անունն ասի Բաղէն որ է թագաւոր Արարաց և կոչի Թուրք. բայց ոչ ունի զօրէնս Թուրքաց: Եւ ելեալ ի Թումպիտ ի օրումն հասաք ի Չանկ Շաղայ որք են կապաշտ Արապ և կէս մի քրիստոնեալ են դարձեալ. ճանապարհն և երկիրն ամէն շէնութիւն է. ի Չանկշալու ԻԳ աւուր ճանապարհն ի վերայ Նիլ գետոյն է. և տվաք զգիր թագաւորին Հապաշալ, Բաղին թագաւորին, կանգնեցաւ ի վերայ ոտիցն ամենայն զօրքն հանդերձ համբուրեաց զգիրն և եզ ի վերայ գլխոյն: Եւ կացաք անդ մինչև քարվանի ելանելն. և թագաւորն Բաղին ետ մեզ մարդ, որ բերին զմեզ ի Մար: Եւ ի գալն 20 աւուր ճանապարհ գետ ի վեր և անցաք զգետն և ժ. աւուր ճանապարհ, և եկաք թաղրար անցաք զգետն. և մինչև տեղս ամէնն շինութիւն է. և այս տեղէս մինչև Լ օրն եկաք ի Դուկլայ չօլով որ ջուր չկայ. ջուր վերառաք Դուկլա-

յու. է օր գետն ի վեր գնացինք, և այս տեղէս մինչև Իէ օրն հասաք ի Ալֆա. բայց 26 աւուր ճանապարհ Յ տեղ ջուր կայ որ ուխտերն կխմեն և ոչ մարդիկ. ջուր վերառաք. ամէնն չօլ է. ոչ բոյս կայ և ոչ ծառ. ամէնն սպիտակ աւազ է որ ասեն ծով աւազ. և սատակեալ ըղտոց մարմինքն են նշան ճանապարհի Ալֆայ է երկիրն Թուրքաց, Մարացոց իշխանութիւն են: Ալֆայու է օր չօլով եկաք ի Դաւա, ջուր վերառաք Գուա Ճայու Լ օրն հասաք ի Մար շէնութիւնք: Ի Մարայ Հապաշատան գնալն ծովով գնացաք և ի գալն ցամաքով եկաք. ի թուին Հայոց Ռճիէ սեպտեմբերի Ժէ Մարու եկաք, և ի Թուին Հայոց ՌճիԹ սեպտեմբերի Իէ Մար դարձաք, ի Մարու ծովով եկաք ի Ալիկոնայ երկիրն զրանաուզին զոր տէր Աստուած ամփոթձ և երկար կեանք պայծառ պահեցէ, ի պարժանս ամենայն քրիստոնէից և ի գթութիւնս տառապեալ Հայոց աղգին պանդխտնոց ամէն:

Ա. Ալպոյաճյան, Վայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հայկչեստան, էջ 3—11:

№ 11

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵԲԻ ՔՅՈՄՈՒՐՁՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՊԵՏՐՈՍ ԱԳՈՒԼԵՅՈՒՆ

Կ. Պոլիս, 1682 թ.

Նրուագիմի ձեռ. № 1058, էջ 29ա—30ա

Արքեպիսկոպոսի Ազուլեաց Տեսուն Պետրոսի աստուածարան վարդապետի

Ըղձալի էր մեզ ողջագորել գնամակ սիրող պատուելի, որում արժանացուցեր, և զմեծ իմն աշխատանս անտեսութեան լաւարտ սծելոյր զգոհարանութիւն ընծայեցեր այնմ, որ լաղողէ զամենայն ամենայնի, և ազգեցեր մեզ սիրելեացդ խնդալ ընդ խնդացողդ, զի օրհնեցաւ պսակ տարւոյ քաղցբութեան կամաց Տեսուն ի ձեռն քոյին մեծի ճգնողական համբերութեան: Դու ըստ Որդւոյն Աստուծոյ տարազու ի ստո-

բին կողմ հրկրի խոնարհեալ զարմացուցեր անտեսութեամբդ՝
շիջուցեալ կոտորեալ զամենայն արհեստ որսանաց նորին
սրտին ծրարելոյ ըստ որում համեմատելի է ասել. Ո՞ւր է
մահ լաղթութիւն քո և խալթոցն որոգայթարանին: Դու և
ըստ Բանին Աստուծոյ մարմնագրեցութեան ի փորձութիւն
կամակորին մտեալ, զբաժակն արբեալ հոգիածնին հօրդ կա-
մակցութեամբ տեսեր զդառնակակիծ մահն մատաղատնկին,
այլ վախճանն այն վախճան պարզեւաց անօրինեաց: Դու ըզ-
պաշտելին Հոռոմցոց լաւուր օժմանէ կախկալուցութեան զո-
րին մինչև ցայս վայր քարշեալ ծածկեցեր ի տեսինէ աչաց-
որպէս Թագէտսիւ առ Արդարաւ անաստուածութեան ձուլա-
ծոյք ամփոփեցաւ և արարածք Արարչին ամենից երկրպա-
գոս զոյ մարթացաւ: Դու ըստ քաջ որսողացն՝ զառիւծոյն
կենդանոյ զորոգայթ հրոյ ցուցեր զաղօթս՝ որ առ ընդունօղն՝
և զպարան համբերութեան յերկարեցուցեր և զկոյս գեղեց-
կութեան զարդու խոնարհութեանդ՝ գուռգայինն այն բարք
զիջանիլ հնազանդիլ քեզ անանդութեամբ: Դու ըստ Արտա-
շեսին Արշակունւոյ զՀելլենացւոցն պաշտելիսն ասոնեալ տա-
նէր ի Հայս, որոյ զինի վախճանին զաղաղակ բարձեալ զրէին
զաղերս որդւոյն թէ՛ Շնորհակ արարեալ մեզ թողցես զաս-
տուածսն ի Միջերկրեայս և մի հեռացուցես զոնէ ի մէնջ ի
Պորին Հայս: Դու զի ծանօթս ի վախճանմանէ Տեառն Փի-
լիպպոսի մինչև ցայս վայր խրոխտալով խրամատէր զկարգ
և զկրօն և զանուն լաղթող ցուցեալ ըստ կամացն...
Դու լուար զաստղ ալեկտուար, որ ի Բերիա մեզ տեսաւ
ՁՃԱՌԷ (= 1665) Հայոց թվին, ըստ որում լալանեցաւ վի-
շապն Սպանիացոց լաշխարհի, որ քարշէր զմասն աստեղաց
բանականաց բնակչաց լանլի ազ յորովայնին, ընդ որ մարտս
զինուք և բարանիւք տուեալ վասն անյաղթելի մնալոցն. ապա
հնարեցին զեղս նորա թողլութեան մաղթանս բազմադիմիա
առ ամենալուրն վերստաքել ի սեռն սալից հանեալ զանպի-
ժեցին, որ էր ապացոյց թողլութեան զեղոյդ աղօթից համ-
բերութեան, զոր քարշեցեր ընդ քեւ նուաճեալ: Դու քեզէն
լուար ի Պուրսա լընթրիս ծերունի Ասորւոյն՝ զիւրովին

բարբառեալ ասէ. Արեւիկանք զամենայն գեղեցկութիւն
ընչից քարշեալ տարան լԱրեւիս և արդ տեսեալ զգեղեցիկ
կաթողիկոս Հոռոմցոց, կամին և զայն քարշել տանել լԱրե-
ւիս: Ըստ նախագուշակ իւրում բանի էր կամ եպերումն ընդ
նոսս զրդել ի ջան՝ զի մի թողուցուն զինքն ի ձեռաց: Դու
զհնար Երուսաղէմին և զիզմիււնոյ՝ ի Հոռոմ զնալն փութալ՝
և Պուրսայու զքաղաքացիս պատճառելով տեսեանդ ի բաց-
զայն որ ի Մանաստրո արարեալ՝ յորժամ սփոփէի զքեզ
եզրակացուցանել զբանս զարձեալ զեղով համբերութեան, գո-
չէր ասելով. Ես ձեր հարցն էի Նդիագար, եւ արդ ի ձէնջ ոչ
ոք հարցանէ ցիս՝ թէ լո՞ երթաս. եւ ի մէջ հանդիսի ինձ
տայր նախատինս, եւ զգրելն իմ կաթողիկոսն էջմիածնի ի
նամակ ըստ նորա խնդրոյ՝ զժրացեալ ծալէր և պահէր զթուղ-
թըն, և փոխեալ այլոց զարձեալ գրէին կաթողիկոս Երուսա-
ղէմի, վասն որոյ ասելի է թէ՛ Մի՛ մոռանալք զձայն ձերոց
պաշտօնէի: Որ քե կամակցէի զիտացեալ մեր լԱստուածուստ
զատագովութիւնդ՝ կամակցէի ի Պուրսա և ի բերելն լարքա-
լարանս. և մինչ ի Ղաւախ ձգէր զաւջըն ի լիսս օգնել ոք ի
զարձուցանել և ձգէր զոտոսն ի կախ և ձգէր ապա զլոյսն ի
Կարին և յայդր ևս՝ մինչև եմուտ ի ներքս: Արդ ոչ ոք քեզ
նմանեցաւ, թէպէտ շրթամբք միաբանէին և ոչ սրտիւք. զի
ոմանք զՄովսիսին փոքրահոգութեան սակի և ոմանք զՍա-
հակին երկաքնակութեան, որ ցուցեր թուղթն վասն նորա
գրեալ, ոմանք զԴաւթին ձեռնբերչութեան ցոփութիւն պատ-
ճառեալ, և այլք զջատագովութեանդ սկզբնաւորութիւնդ, որ
այդուստ յուրաստ լինէին, զի մի լաշողեսցին պատին և
անունն այն քեզ: Այլ կամեցան զորա կամալ լակամալ. ամե-
նայն ոք զիւրն հնձելոց է՝ զոր ցանէ. և զու ըստ աշխատա-
նացդ ընդունելոց ես զանապական պարզեսն: Եւ դա զոր
խնդրէն՝ էառ զկարգ և զանուն և զտեղի. արդ ընդէ՞ր լիշէ
զՕսմանցոց երկիր, զոր զայնքան փառսն մեք մեզէն քաջու-
թեամբ ստացաք, ասէր. և նախատէ զքաղաքացիս թէ Չկա-
րացին զիս արգիլել. ընդէ՞ր յոգոց հանէ. միթէ՞ վասն այլ
ևս ոչ կարելոյ ապուելոյ և գաղելոյ. ընդէ՞ր լալ, միթէ՞ զըղ-

ձախան զմտաւ ամեալ տազնապի: Արդ տեղն է վանիցն և տնօրինողին Աստուծոյ կամքն յալղմ վարի վարեալ էաժ: Լաւ զդուրթեամբ ալսուհետե հոգ տարջիք զմա ի պահպանութիւն մինչև ցմահ, զի կարծիք ունիմ՝ նկրտիլ ձգտիլ յալղմ կողմ փախստեան: Յանկալի եղև ինձ գրել նոր կրօք դանձա Յակոբ կաթողիկոսի, զի երթիցէ յօրհնութիւն գերեզմանին՝ երգել մեր անգ ի պատիւ մեռելոյն և ի փառս կենդանոյն, զոր ոչ ոք ընկալաւ, ըստ որում ասացեր. Անմիա է՝ եթէ չկրթիցէ ի գերեզման նորուն: Յանկալի լինէր ինձ գրել ամենալն բարունեացդ ըստ կարգի զոր խնդրեցին անձինք ձեր: Ահա ելէ՛ք ընդ ասաց, երգեցէ՛ք ընդ ընկերս զՕրհնեալն հեկեալն շնորհաւորելով: Տեսեր զապերախտութիւն և զապաշնորհութիւն զոցս զոր արարին վասն Աստուծաշնչին իմոյ, իմ հինգ հարիւր ուզելով և զոքս չորս հարիւր տալով. ի քաղաքս երեք հարիւր յիսուն կտրեցին և ի Գաւազն գլխստան ևս բարձին թէ Տէր Գրիգորին հարկիս ասնեմք և մեծարանք, և քրտնեալ նեղսրտեալ դառնանալի ի պահանջելն զաբիժ ի ձեռաց խոց, որոց ասլի և բարով մնալ ևս ոչ ասացեալ խորամանկիցդ ի քաց դառնալի: Եւ այլն հնովք և նորովք բաւականացի բազում տեղեկութեանդ: Արդ որ ինչ իմ չէր արժանաւորութիւն վասն հաւատարմութեան ձերոց մերոց մեռելաց, և մինչ զմեծութիւնդ չև ևս տեսեալ՝ զորդեակն իմ թղթով ի քեզ յանձնեցի ի գալն լիզմիւտին. և արդ յանձնեալ է դարձեալ քեզ և ձերոցդ մեծաւ թախանձանօք ի քաղցրութիւն մարդասէր կամաց ձերոց ըստ ժամանակին ձրել, զի հատուցումս փոխարինին որ խոստացաւն կատարելոց է ամենայնի, ամէն:

«Օրագրութիւն Երեմիա Զէլէպի
Քէօմիւրճեանի», էջ 430—433:

Սույն բնագրի հրատարակութեան համար հիմք ենք առնում Երեվանի Պետ. Մասննագրարանի № 4618 ձեռագիրը, էջ 173ա—175ա (= Ա օրինակ): Իսկ համեմատութեան համար օգտագործում ենք երկու տպագիր օրինակներ, որոնք թեև միևնույն աղբյուրից են հրատարակվել, բայց ունեն մի քանի տարբեր ընթերցումներ: Այդ օրինակներն են՝ ա) Արարատ, Թիֆլիս, Ա տարի, 1850/51, էջ 99—101 (= Բ օրինակ), և բ) Յաւաջ, Փարիզ, 7 հոկտ. 1934 թ., № 2619 (= Գ օրինակ): Մեր հիմնական՝ Ա օրինակի որոշ աղավաղումներ և լեզվական բացահայտ անկանոնություններ ներկայացնող կետերը մենք ուղղում ենք ըստ Բ և Գ օրինակների և այդպիսի դեպքերում Ա օրինակի ընթերցումներն իջեցնում ենք տարբերակագրվածների մեջ, միաժամանակ և ինչ-ինչ մասեր յրացնելով ըստ Բ և Գ օրինակների: Այսպիսով մենք տալիս ենք և՛ կանոնավորված բնագիր, և՛ միաժամանակ պահում ենք մեր հիմնական օրինակի հանված ընթերցումները՝ տարբերակագրվածների շարքում: Իսկ Բ և Գ օրինակների տարբերակագրվածներից նշում ենք միայն կարևորները: Բնագրում փակագծերով արված հավելումները մեր կողմից են:

Պատմութիւն Վէրսալիայ քաղաքին Ֆրանկացի¹:

Ի թվին Հայոց ՌՃԼԲ (1132), փետրվար ամսոյ Բ (2) աւուրն, ևս Բաղիշեցի Մահտեսի² Շահմուրատս դնացի ի թագաւորանիստ քաղաքն Վէրսալիայ, տեսալ զթոթմունչի Յովանէս վարդապետն, Սիսիանցի Զաքարիա վարդապետն, Հալապցի Դաղարոսի³ որդի Զուլէփն⁴, Արզրումցի Յովանէսի որդի Գրիգորն, Դագանչեցի⁵ Մուրատն, Ոսկան վարդապետի քվեր որդի Սողոմոնն: Եւ և տեսաք զՖրանկսիզու թագաւորն, զԿիւնն, զորդին և զհղբալսն, զնղբոր հարսն և՞ զվէլիրն: Տեսաք զսէրալներն և զայլ ամենայն սալթանաթն⁷ սէրալին. զհեղեցիկ շինուածք՝ ոսկեղէն և արծաթեղէն և ճալահիւրեղէն. Ը (8) կամար մէկ մէկի վերայ, արծաթեղէն և թուրլու թուրլու ամարա-

¹ ԲԳ չիր պատմութիւն... Ֆրանկացի:— ² Ա մահոկեսի:— ³ Ա հալապցի զագարոսի:— ⁴ ԲԳ յովանէփն:— ⁵ ԲԳ զագանճի: ⁶ Ա չիր է:— ⁷ Ա սանդանաթն:

թով: Եւ մին երկայն սրահ, որ է խաղալու տեղ, որ կէսն շինած էր և զկէսն նոր կու շինէին՝ որ վեց միլիոն խարճ կու գնալը, որ իւր դափուն էր, որ ամենայն երկրի վերայ մաթհանելոյ տեղ կայ: Թախմին արարաք որ ԺԶ (16) միլիոնի զարդ կայր¹:

Այն² տեղէն գնացաք ի պախչան: Առաջին նարտվանն կայր Ե (5) հավուզ ջրով իլին (sic), և հավուզների մէջն թուրլու թուրլու ծաղիկ շինովի պղնձէ ոսկեջրած, լաջակողմեանն այնպէս, ձախակողմեանն այլ այնպէս: Այնոր ներքեն թաքրար տեսաք այլով Ե (5) հավուզ մեծ՝ ջրով իլիք (sic), մէջ ջրին ծովային ձի և մարդիկ, որ բերաններուն ջուր կու փչէր, և հավուզների բոլորն գորտներ, մէլմուններ և ամենայն ազգ կենդանիք, որ ջուր կու փչեն: Եւ այնոր ներքեն հավուզ մի այլ կայ բոլոր և մեծ, որ Դ (4) բոլորն Դ (4) եղանակն է, և ամենայն եղանակի իւր կենդանիքն է, որ բերաններն ջուր կու փչեն: Եւ այնոր ներքեն կայ երկայն ծով մի, որ մէջն կայ ԺԷ (17) նաւ մեծ և փոքր՝ ոսկով զարդարած, թօփով և առանց թօփի. զայս գրածներս սարայէն կու բռնես մինչի ներքին կողմն:

Իսկ լայս կողմս և այն կողմն կայ անպատմելի արարմունք. ԼԶ (36) դուռն ունի երկաթէ, լամէն դուռն մէջ ԼԶ (36) թուրլու շինուածք ունի, որն³ երկաթի, որն քարի, որն մարմարի, որն պղնձէ, ամէնն ոսկով վարդադած: Որչափ ծովային, որչափ օդային, լեռնային, դաշտային, և որչափ Աստուծոյ ստեղծուածք որ կայ՝ թուրլու թուրլու թուրլունք ւանասունք, գաղանք, սողունք, լողունք, զամէնն շինած է, ամէնու բերնէն ջուր կու թռչի: Այսքան շինուածիս մեծութիւնն Կ (60) միլ⁴ է, որ ամէնն շինուածով լի է: Գ (3) միլն մին ազած է. Զ (6) ազածն մին մանգիլ է: Այս Կ (60) միլ⁵ տեղն ամէնն շինուածք է, գետնի դօշամէն ամէնն արճիճ է, արճիճի գինն ԽԵ (45) միլիոն է, որ ԽԵ (45) միլիոնն կանէ Օսման-

ցու ԶԹ (6,000)⁶ քէսան. այս ներսի շինուածքն է: Թող զդրսի շինուածքն, որ Բ (2) այնչափ է: Եւ ի թագաւորի սէրայն Բ (2) թաւլայ կայ, որ սէրայի դիմացն է. թաւլայ տակն տիվանխանայ է. ՄԵ (55) միլիոն է. թող զմիջինն⁷ և զաթրաֆն: Ելանք անտի՝ գնացինք ի դուշխանան. տեսանք անհուն թռչունք՝ ազգ և ազգ կերպ թռչունք: Կայր քաքուլաւոր հաւ մի, որ ԶԺ (600) դուռուշի էր. որ այն հաւն օրն դուռուշ մի խարջ ունէր: Կայր օրտակ մի, որ ներքի շանէն հօխայ մի ջուր կու տանէր: Սիրամարգ շատ տեսանք: Կայր կով մի՝ Թ (9) ոտք ունէր, և ուսն որպէս ըղաու էր: Տեսանք սպիտակ ագուս մի, որ թագաւորին մասխարան էր, մարդոյ պէս կու խօսէր և շան պէս կու հաչէր: Բազայ, թաւուզ դուշի, Հնդստանայ⁸ կատու, Սպանիո սամսար, ջրի շուն, Զէրէթի կատու, ջրի կով, Հապաշի ոզնիկ, տավայ դուշի և այլ կերպ կերպ կենդանիք, որ ոչ էաք տեսալ՝ տեսաք. ոչ լեզվով պատմել կու գալ և ոչ գրով իմացնել, ոչ ասել⁹ կու գալ և ոչ գրել:

Դարձեալ այսչափ ջրերս⁵ որ հաւուզներն լիք են, ամէնն ճԻԶ (126) հավուզ էր. այն մէկ հավուզն որ նաւեր կու բանին վերան, է (7) միլ է⁶. ամէնու ջուրն քաշովի է, որ զիշեր ու ցերեկ Կ (60) ձի Բ (2) դուրապով համաշայ ջուր կու քաշեն. որ էն ջրի մէկ հօխէն կէս դուռուշ խարջ ունի:

Դարձեալ տեսաք զթագաւորի հաց ուտելն, որ ինքն և կինն ի միասին կու նստին. թագաւորն լաջ դիհն, և կինն ի ձախ դիհն. տիվանխանի լաջ դիհն՝ թագաւորի տղայն և իւր կինն. թագաւորի դիմաց՝ եղբայրն և իւր կինն. ձախ դիհն՝ հօրեղբոր որդին, և կամ հօրեղբոր աղջիկն: Իսկ թագաւորն՝ սեղանի վերին դիհն կու նստի, Դ (4) կողմն սեղանին որչափ մեծամեծք կան՝ վէզիր (premier ministre), փերիլոլ (pairs?), մարքիզ (marquis), շինթիլոմ⁷ (gentilshommes), կախսկոպոսք, և այլ մեծամեծք շուրջ զսեղանոյն կու կանգնին, թէ կամի՝ կու խօսի ընդ նսաս:

¹ Ա չիք զարդ կայր:— ² Ա չիք այն:— ³ Ա որ:— ⁴ ԲԳ ք միլ:— ⁵ ԲԳ ք միլ:

⁶ ԲԳ 90000:— ⁷ Ա միջին:— ⁸ Ա հընտստանայ. Գ հնդստանայ:— ⁹ Ա տեսանել:— ⁵ ԲԳ չիք ջրերս:— ⁶ ԲԳ շրջապատն շատ ընդարձակ է փխ. է միլ է:— ⁷ Ա լինթիլոմ. ԲԳ ճինթիլոմ:

Եւ կերակուրն որ կու բերեն, լառաքն սկսանի շրի կե-
րակուր, միս խաշած, լետոյ խորոված միս, յետոյ մեծ թըռ-
չունք, լետոյ փոքր թուչունք, լետոյ շաքարամով լէմիշթալ,¹
լետոյ շաքարամով չոր, դեղեցիկ շարպաթներ, լետոյ լէմիշ²,
լետոյ վերջքն պանիր. եւ ամենայն կերպ ուտելեացն լինի
աւելի քան զԾԵ (55) կամ Կ (60) թուրլի:

Իսկ Վերսալիայ քաղաքն է մեծ եւ վայելուչ տեղ, որսի
տեղ. եւ չորս կողմն է լեռն. եւ ինքն է դաշտ եւ բարեձեւ. և
ունի³ գեղեցիկ շունուածք, եւ մեծամեծ սարայններ, զոր Աս-
տուած վայելիլ տացէ թագաւորին եւ ամենայն զաւակաց
նորին, ընդ երկայն աւուրս, ի փառս Աստուծոյ եւ ի պար-
ծանս⁴ ամենայն քրիստոնէից եւ ի ցնծութիւն տառապեալ
ազգիս Հայոց:

Եւ տեսաք զՄիւսոյ⁵ թաքիէնն որ զՍախան փլոյց⁶, մին
հայեւոր կարմիր մարդ. մոնսինեօր⁷ Գօֆիինն որ տղայ է եղեր
իւրն: Այս վերոյ գրեալ հափուզին եւ⁸ շատիրվաներոյն շրե-
րուն տեղն՝ ամէնն ալ զինի է լցեր. թէ՛ հափուզներն. եւ
թէ՛ զազրբներն. եւ թէ՛ այն մեծ հափուզն որ ժէ (17) կամի
կայ վերան, զայն ալ լցեր է գինով, եւ թանայէ՛ արեր է
բովանդակ երկրին, ամենեքեան եկած են՝ մեծ եւ փոքր, արք
և կանայք, ծերք եւ տղայք, է (7) օր կերած և խած են⁹
լիով, երկրին ամենեցուն պատիւ էր արեր. այնչափ խած
էին, զեւ շատ գինի ի տեղն էր մնացեր. տեսէք որչափ հիա-
նալի եւ զարմանալի բան է:

Կրկին փետրվարի երեքուժ օրն ժ.Ա. (11) ժամուն թա-
գաւորի եղբայրն եւ իւր կինն տարան զիս ի սարայն իւրեանց,
կամեցան զիմ պատկերիս կերպն քաշելոյ, նա եւս զիւր սա-
րայններն և զիւր խաղիւնայքն եւ զամենայն շինուածքն եւ
ալ ինչ որ¹⁰ կայր՝ ցոյց ետուր մեզ, որ ես էի եւ իմ թար-

¹ ԲԳ էմիշտոց:— ² ԲԳ չիք գեղեցիկ... յէմիշ:— ³ Ա չիք ունի:—
⁴ ԲԳ չիք ամենայն զաւակաց... ի պարծանս:— ⁵ ԲԳ զմիւսէօ
(տեղուք պակասում է):— ⁶ ԲԳ չիք թաքիէնն... փլոյց:— ⁷ Ա մուսիէ
օր. Բ մինէ օր. Գ սինեօր:— ⁸ Ա հափուզին և շինուածներոյն եւ:—
⁹ Ա կերան և խմեցին:— ¹⁰ Ա զոր:

ճիմանն Հայապցի¹ Զուզէփն²: Յորժամ զարձանք³ լետ, եւ
սկսանք խոնարհիլ թագաւորի եղբորն եւ կնկան, եհարց իմ
թարճիմանին, թէ հաւանեցա՞ւ մեր զորպիսութիւնն. մեք
պատասխանեցինք, թէ Աստուած զքո եղբոր թագաւորու-
թիւնն եւ զքո բարձրութիւնն հաստատուն և անփորձ⁴ պա-
հեցէ աստ եւ ի հանդերձելուսն:

Եւ թէ մի ըստ միոջէ գրէինք՝ քան զչափն աւելի ձանձ-
րութիւն էր լսողացն եւ ընթերցողացն: Եւս առաւել զմեր
տեսած բանն, միայն թէ մեր տեսածն աչօք, թէ չէ լեզուօք
պատմել չի գար. աչօք չտեսողն չի աւատար:

Յրանկսիզու երկիրն ժԹ (19) արհայիսկոպոս կայ,
ձԶ (106)⁵ քորեպիսկոպոս կայ. ԾՌ (50,000) աւաղերէց կայ.
Թող զալ քահանայքն՝ որ ժ (10) անգամ⁶ ձՌ (100,000)
քահանայք կան տափթարով:

